ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Է

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ОТЦЫ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

7

ВАРДАН АЙГЕКЦИ

1. **НАСТАВЛЕНИЯ СВЯЩЕННИКАМ И НАРОДУ**

2. **НАСТАВЛЕНИЯ**

ARMENIAN CHURCH FATHERS

VARDAN AYGEKTSI

1. TEACHING TO PRIESTS AND PEOPLE

2. TEACHINGS

СВ. ЭЧМИАДЗИН - 2008 - ST. ETCHMIADZIN

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Է

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

Ա. ԽՐԱՏ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Բ. ԽՐԱՏԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2008

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Վ - 301

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ
Վ – 301 Ա. Խրատ քահանաներին և ժողովրդին: Թարգմ. գրաբարից՝ Գևորգ աբեղա Սարոյանի և Մկրտիչ աբեղա Պռոշյանի:

Բ. Խրատներ: Թարգմ. գրաբարից՝ Շահե քահանա Հայրապետյանի. - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, 288 էջ:

Ներկա հրատարակությունն ընդգրկում է Վարդան Այգեկցու «Խրատների» երկու գրքույկները, որոնք տպագրվել են 2001 (Մայր Աթոռ Ս. Էջմիածին) և 1999 թվականներին («Գանձասար» աստվածաբանական կենտրոն):

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-75-85-1 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Վարդան վարդապետ Այգեկցու «Խրատ բոլոր քահանաներին և ժողովրդին» գրքույկը Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հրատարակել է երկու անգամ[1] և ցայսօր հետաքրքրությունը Վարդան վարդապետ Այգեկցու «Խրատների» հանդեպ չի նվազում: Ներկա երրորդ հրատարակությունը, բացի «Խրատ քահանաներին և ժողովրդին» գրքույկից, ընդգրկում է նաև նրա «Խրատները»[2], որը տրամադրել է մեզ «Գանձասար» աստվածաբանական կենտրոնը և սույն հատորում այն ներկայացված է արդի արևելահայերենի ուղղագրությամբ:

---

[1] Տե՛ս «Խրատ բոլոր քահանաներին և ժողովրդին, գրաբարից աշխարհաբարի վերածեցին Գևորգ աբեղա Սարոյանը և Մկրտիչ աբեղա Պռոշյանը, Ս. Էջմիածին, 2001 թ.: Բ հրատարակությունը՝ 2005 թ.:

[2] *Վարդան Այգեկցի*, Խրատներ, «Գանձասար» աստվածաբանական կենտրոն, աշխարհաբարի է վերածել Տ. Շահե քահանա Հայրապետյանը, Երևան, 1999:

ԽՐԱՏ
ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ
ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Վարդան Այգեկցին՝ որպես մատենագիր և քարոզիչ, իր դարաշրջանի նշանավոր եկեղեցականների փաղանգում ուրույն տեղ է գրավում: Նա մեզանում առավել հայտնի է որպես առակագիր և խրատաբան, քան իբրև աստվածաբան: Իր գրական գործունեությամբ նա իր մեծ նախորդի՝ Մխիթար Գոշի ավանդների շարունակողն է: Միջնադարից Այգեկցու անունով մեզ են հասել առակների բազում հավաքածուներ, որոնք միջնադարյան գեղարվեստական արձակում «Ժողովածոյք Վարդանայ» անվանումով են հանդես գալիս: Ժամանակին նրա առակներն ու խրատները բանասիրական բազմակողմանի ուսումնասիրությամբ հրատարակել է անվանի հայագետ Ն. Մառը[1]: 1998 թ. Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետը հրատարակեց Այգեկցու «Արմատ Հաւատոյ»[2] դավանաբանական կոթողային աշխատությունը, իսկ 1999 թ. «Գանձասար» աստվածաբանական կենտրոնը՝ Պաղտին իշխանի պատվերով գրված «Խրատներ»[3] ժողովածուն, սակայն մինչև օրս անտիպ են մատենագրի մի շարք խրատներ ու դավանաբանական բնույթի գրություններ:

Վարդան Այգեկցին ծնվել է Ասորիքի կենտրոն Դլուք (Տլուք)

---

[1] Տե՛ս ***Н. Марр,*** Сборник Притч Вартана..., ч. I-III, С.-Петербург. 1894-1899.

[2] ***Վարդան Այգեկցի***, Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ, քննական բնագիրը՝ Տ. Շահե քահանա Հայրապետյանի, ներածությունը՝ Հակոբ Քյոսեյան, Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետ, 1998:

[3] ***Վարդան Այգեկցի,*** Խրատներ, «Գանձասար» աստվածաբանական կենտրոն, աշխարհաբարի է վերածել Տ. Շահե քահանա Հայրապետյանը, Երևան, 1999:

գավառում՝ Հալեպին մոտ Մարաթա հայաբնակ գյուղում, ինչպես ինքն է իր մասին վկայում. «*... ողորմելի Վարդանս, որ ի Մարաթոյ Վերնոյ*»[4]: Նրա ծննդյան ստույգ թվականը ճշտված չէ. համարվում է, որ ծնվել է ԺԲ դարի կեսերին: Այգեկցու ծննդյան թվականը ճշտելու փորձ է արել Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից Պողոս վարդապետ Անանյանն իր հրատարակված «Խրատք Վարդանայ Վարդապետի Այգեկցւոյ»[5] ժողովածուի առաջաբանում: Վերջինս, հիմնվելով Այգեկցու մի հիշատակության վրա, ըստ որի 1230-ական թվականներին նա արդեն 61 տարեկան էր, ենթադրում է, որ Այգեկցին ծնվել է 1170-ական թվականներին:

Վարդան Այգեկցու կյանքին առնչվող բեկումնային նշանակություն ունեցող մի շարք իրադարձություններ հիմք են դարձել, որ նա հանդես գա մի քանի անվանումներով. Մարաթացի, Ամթեցի և Այգեկցի: Վարդանն իր նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, այնուհետև մեկնել է Միջագետք՝ Կիլիկիայի Սև կամ Սուրբ լեռներում գործող Արքակաղին վանքում ուսանելու: Այնտեղ կրթվելու տարիներին եղել է նույն վանքի միաբան: Վարդապետական աստիճան ստանալուց հետո իրեն նվիրել է հովվական ծառայության՝ շրջիկ քարոզչի հանգամանքով, ինչպես ինքն է դա վկայում իր մասին ծերության հասակում երիտասարդ կրոնավորներին ուղղած մի խրատում.

«Նոյնպէս և ես, ով որդեակք, ի մանկութենէ մինչև ի ծերութիւն շրջեցայ ի մէջ աշխարհի և տեսի բազում մեղս մեծամեծս և անչափ լուայ ծածկաբար ի գործողացն զչարս»[6]*: «Անչափ լուայ ծածկաբար ի գործողացն զչարս»* արտահայտությունն Աբեղյանին ենթադրել է տալիս, որ Այգեկցին իբրև խոստովանահայր է լսել դրանք, մի պարագա, որը նրա բարձր կարողությունների և հոգևոր կոչման հանգամանքն է փաստում: Նա, ինչպես միջնադարի մյուս հոգևոր հայրերը, ունեցել է իր *«բնիկ ժառանգությունը»*[7], այսինքն՝ իր հոգևոր խնամքին հանձնված հոտը՝ *«Կիւրիսոյ երկրում»*, *«Տլքոյ գաւառում»*՝ կենտրոն ունենալով իր հայրենի Մարաթան: Ի դեպ Տլուք գավառն այդ շրջանում, ինչպես նախկինում, հոգևոր և քաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող կենտրոնատեղի էր, իբրև այդպիսին այստեղ էր գտնվում կաթողիկոսական Ծովք բերդը: Այգեկցին իր քարոզչական գործունեությունն սկսում է նախ Ամիդից (որտեղից ստանում է Ամթեցի անունը), ապա անցնում է Տլուք: Այգեկցու՝ շրջիկ քարոզչի հանգամանքը վկայում է նրա վարդապետելու ձիրքի մասին, ինչը նպաստում է նրա վարդապետական համբավի տարածմանը:

Սակայն հետագայում ինչ-ինչ պարագաներ առիթ են դառնում նրա հալածական լինելուն, որի հետևանքով որոշ ժամանակ պանդխտում է և երկու տարի էլ նեղություն կրում հիմնական բնակավայր գտնելու համար: Հ. Անասյանը ճշտում է. *«Հիշյալ հալածանքը տեղի է ունեցել 1205-1209 թվականների ընթացքում և ամենայն հավանականությամբ այն կարող է արդյունք լինել*

[4] Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր թիվ 8356, 151բ:

[5] Տե՛ս ***Պողոս վարդապետ Անանեան,*** Վարդանայ Վարդապետի Այգեկցւոյ Խրատք, Վենետիկ, 1956, էջ 9:

[6] ***Н. Марр,*** Сборник Притч Вартана…, ч. I, ст.297.

[7] Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8356, 151բ: Նաև՝ ***Н. Марр***, Сборник Притч Вартана…, ч. I, ст. 306. Հ. Անասյանն իր «Վարդան Այգեկցին որպես համերաշխության գաղափարախոս» հոդվածում («Էջմիածին», 1969, հուլիս-օգոստոս, էջ 52) գրում է. «Բնիկ ժառանգություն» ասելով պետք է հասկանալ ոչ թե այն սեփականությունը, որ հայ հոգևորականը ժառանգում էր նույնպես հոգևոր կոչում ունեցող իր նախնիներից, ինչպես հակված էր կարծելու Ն. Մառը (***Н. Марр***, Сборник Притч Вартана…, ч. I, ст. 294) այլ սովորական իմաստով, հայրենի տուն՝ հայկական կալված, ինչպես էր, օրինակի համար, նույն Դուլք գավառում գտնվող Ծովք դղյակը՝ Գրիգոր Պահլավունի և Ներսես Շնորհալի եղբայրների համար (հմմտ. ***Ղ. Ալիշան,*** Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 95-97): Բայց չի բացառվում, որ Այգեկցին նաև հոգևոր հովիվ եղած լինի իր բնիկ ժառանգության (հայրենի տան) շրջաններում, որոնց բնակիչներին նա անվանում է «հոգևոր որդեակք իմ»»:

Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ»-ով ծավալած պայքարի, որն իր շատ կողմերով վերաբերում էր նաև հայ-ասորական միջավայրին և ըստ ինքյան ուղղված էր նաև այնտեղ տիրող ասորական ազդեցության դեմ, հետևաբար նաև այդ միջավայրում դիրքեր ունեցող հայ տարրերի շահերի դեմ[8]:

Վարդան Վարդապետը 1210 թ. հաստատվում է Այգեկի անապատում: Այդ վանքը հիմնադրվել էր ԺԲ դարի վերջին քառորդի սկզբներին՝ Սև լեռների Դոսխ (Տոսխ) կոչված ձորում: Իր վերջին հանգրվանից էլ Վարդան Վարդապետն ստանում է Այգեկցի անվանումը, որով էլ հայտնի է հայ մատենագրության մեջ:

Այս ժամանակ նա մտերմիկ հարաբերություններ է հաստատում թագավորազն իշխան Պաղտինի (Բալդուին) հետ: Այս Պաղտինը հավանաբար Ընկուզուտի բերդակալն էր, որը հիշատակվում է 1198 թ. Լևոն Բ-ի թագադրության հանդեսին ներկա եղած իշխանների թվում[9]: Հ. Անասյանը մեր հեղինակի *«Վասն անիրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց»* գրվածքից եզրակացնում է, որ Լևոն Բ-ի թագադրության հանդեսին ներկա է եղել նաև Այգեկցին: Ապա Հ. Անասյանը, վերոհիշյալ գրվածքից ելնելով, գտնում է, որ Այգեկցին դարձյալ պետք է լինի Սմբատ Սպարապետի տարեգրության մեջ նույն թագադրության հանդեսին պաշտոնական ներկաների մեջ հիշատակվող *«Տէր Վարդան՝ արքեպիսկոպոս Լամբրոնին և առաջնորդ Սկևռու»* կոչված անձը[10]: Տվյալ շրջանի թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական կյանքի բնագիավառներում նրա ներկայությունը կարծես պարտադիր հանգամանքի արժեք է ձեռք բերում:

[8] Տե՛ս ***Յ. Անասեան,*** Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ, «Բազմավէպ», 1968, թիվ 7-12-ի բացառիկից, Վենետիկ, Ս. Ղազար, 1969:

[9] Հմմտ. ***Սմբատ Սպարապետ,*** Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 11:

[10] Տե՛ս ***Հ. Անասյան,*** Վարդան Այգեկցին և «Արմատ Հաւատոյ» ժողովածուն, «Էջմիածին», 1972, մարտ, էջ 42: Նաև՝ ***Սմբատ Սպարապետ***, Տարեգիրք, էջ 110-111:

Վանքի խաղաղ մթնոլորտն ու ժամանակի պահանջը Այգեկցու համար ստեղծագործելու առիթ են դառնում: 1212 թ. Պաղտին իշխանի պատվերով նա գրում է խրատների մի ժողովածու, որի մասին հետևյալ հիշատակությունն է թողել. *«Ի չորրորդ ամի գալստեան մերոյ ի Մարաթոյ ի սուրբ լերինն յԱյգեկս. և եդի ի գիրս, զոր գրեցի ճառս ԻԲ՝ ի խնդրոյ թագաւորազն իշխանին, որ կոչի Պաղտին»*[11]: Այստեղ նա գրական թղթակցության մեջ է մտնում ժամանակին իրեն աշակերտած Անտիոքի Միքայել եպիսկոպոսի հետ՝ նրան ուղղելով խրատական հինգ թղթեր:

Այնուհետև Այգեկցին իր ստեղծագործական աշխատանքը շարունակում է Սսի արքեպիսկոպոսների նստավայր Դրազարկում:

Իր կյանքի վերջին շրջանում Վարդան Այգեկցին այցելում է Երուսաղեմ՝ Տիրոջ սրբավայրերը պատվելու: Սուրբ տեղեր կատարած նրա ուխտագնացությունը տեղի է ունեցել 1229 թ. հետո, պատմական մի ժամանակահատված, որը ապահովու-

[11] Տե՛ս ***Н. Марр,*** Сборник Притч Вартана..., ч.I-III, С.-Петербург, 1894-1899, ст. 387: Հմմտ. ***Յ. Տաշեան,*** Ժողովածոյք առակաց Վարդանայ. նիւթեր պատմութեան Հայոց միջնադարեան մատենագրութեան, ըստ հայագէտ Ն. Մառի, Վիեննա, 1900, էջ 56: Նաև՝ ***Վարդան Այգեկցի,*** Խրատներ, «Գանձասար», Երևան, 1999:

Հայր Պողոս Անանյանը հայտնում է հետևյալ տարակուսանքը. «Թէ ի՛նչ էր այս խրատներու նիւթը՝ որոշ չի գիտցուիր, քանի որ այդ ամբողջութիւնը պարունակող ձեռագիր մը դեռ գտնուած չէ: ...Քանի մը տարի վերջ, Վարդան Դրազարկին մէջ նոյն խրատներու ուրիշ խմբագրութիւն մը կը շարադրէ՝ կապելով զանոնք տասը վաճառականներու և ութ որոգայթներու առակին հետ» («Տե՛ս ***Վարդանայ Վարդապետի Այգեկցւոյ*** Խրատք, Ս. Ղազար, 1956, էջ 11):

Սակայն սույն խրատների աշխարհաբար թարգմանությամբ «Գանձասար»-ի հրատարակության վերջում կարդում ենք Վարդան Այգեկցու հիշատակարանը, որտեղ գրում է. «Եւ սկսեցինք այս գործը և աւարտեցինք աստուածաբնակ և ցանկալի Այգեկ անապատում...

Սա հայոց թուականի ՈԿԱ (1212) տարին էր» (***Վարդան Այգեկցի***, Խրատներ (աշխարաբար), «Գանձասար», Երևան, 1999, էջ 214), հետևաբար այս խրատների առաջին խմբագրությունը մեզ հասել է, ուր ինչպես և պետք է լիներ, բացակայում են «Տասն վաճառականք և ութը որոգայթք» առակները: Թե ի՞նչ է եղել սույն «Խրատների»-ի՝ Այգեկցու կողմից Դրազարկում կատարված երկրորդ խմբագրություն, որի գոյության մասին վերը վկայում էր Պողոս վրդ. Անանյանը, մեզ հայտնի չէ. արդյո՞ք կա սույն «Խրատներ»-ի ժողովածուի՝ Այգեկցու կողմից կատարված երկու խմբագրություն:

թյան տեսանկյունից բարեպատեհ էր, քանի որ 1229 թ. տասնամյա պայմանաժամկետով Երուսաղեմը հանձնվեց քրիստոնյաներին, խաչակրաց վեցերորդ արշավանքի առաջնորդ Ֆրեդերիկ Բ-ին: Երուսաղեմում եղած ժամանակ Այգեկցին Սրբոց Հակոբյանց միաբանության խնդրանքով գրում է մի շարք աղոթքներ[12]:

Սպառելով Այգեկցու կյանքի և գործունեության մասին մեզ հասած տեղեկությունները՝ նշենք, որ վերջինիս մահվան թվականը բանասիրության մեջ մինչև օրս հայտնի չէ: Ն. Մառը ընդհանուր կերպով ասում է, որ Վարդան վարդապետ Այգեկցին 1230 թ. հետո էլ դեռ ապրում էր[13]:

Խրատների սույն հրատարակությունում խորագրերից մեկն այսպիսին է՝ *«Դարձեալ ասէ սուրբ Վարդան»:* Այլև Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 8356 ձեռագրում (ընդօրինակված 1322 թ. Կիլիկիայի Կարմրիկ անապատում) գրիչն իր կրկնակի հիշատակարաններում գրում է. *«Որ արժանի արար զանարժան ծառայս իւր կատարել զգիր քարոզութեանն սուրբ վարդապետին Վարդանայ, որ ի Մարաթոյ» (էջ 130բ): «Որ արժանի արար զողորմելի մեղաւորս զՍտեփաննոս տանել ի կատարումն զաստուածեղէն գիրս սուրբ վարդապետին Վարդանայ, որ ի Մարաթոյ» (էջ 142բ):* Ապա գրիչը Վարդանի գործերից հետո կրկին հիշատակագրում է. *«Զայս ի Վարդանայ վարդապետի ձեռացն ի գրածէն եմ գրել, և Քրիստոսի փառք յաւիտեանս» (էջ 157ա):*

Ինչպես նկատել է Պողոս վրդ. Անանյանը[14], այս վկայություններից երևում է Վարդան Վարդապետի սրբության համբավը: Նրա խրատներն էլ ցույց են տալիս, որ նա մի սրբակյաց վարդապետ է եղել՝ մտահոգ իր ժողովրդի և իր կարգակից հոգևորականների ուղիղ և մաքուր վարքով: Առաքելաջան եռանդը նրան մղել է քարոզելու և հաճախ իր քարոզածները գրի առնելու, որպեսզի կարողանա օգտակար լինել ապագա սերունդներին:

Մատենագրական վաստակը

Վարդան վարդապետ Այգեկցուց մեզ են հասել հետևյալ մատենագրական երկասիրությունները[15]:

ա. Պաղտին իշխանի պատվերով գրված *«Խրատների»* ժողովածուն[16]:

բ. *«Խրատ ամենայն քահանայից և ժողովրդեան»*, որն էլ ներկայացնում ենք աշխարհաբար թարգմանությամբ, Պողոս վրդ Անանյանի կազմած բնագրից[17]:

գ. Անտիոքի Միքայել եպիսկոպոսին ուղղված դավանաբա-

---

[12] ***Վարդանայ Վարդապետի*** Գիրք աղօթից, Կ. Պոլիս, 1734:

[13] Ոմանք նկատում են, թե Հովհան Երզնկացին նրան «Սուրբ հայր մեր» է կոչել, և կարծում են՝ Երզնկացին աշակերտել է Վարդան Այգեկցուն (***Ս. Սիմոնեան,*** Նկատողութիւններ Վարդան Այգեկցի նորայայտ ձեռագիրներու վրայ, «Անահիտ», Ը, 1937, թիւ 3-4, էջ 77-87): Հայտնի է, որ Երզնկացին, Վարդան Այգեկցու խրատներից քաղելով, գրել է իր «Խրատ հասարակաց քահանայից և ժողովրդոց» (Անթիլաս, 1984, աշխարհաբարի է վերածել Անուշաւան վրդ. Դանիէլեանը): Ուստի, եթե իսկապես Երզնկացին աշակերտել կամ տեսել է Այգեկցուն, ապա նա պետք է 1250-ական թվականներին ողջ լիներ, քանի որ, ըստ Պողոս վրդ. Անանյանի ենթադրության, Երզնկացին ծնվել է 1245 թ. (տե՛ս «***Վարդանայ Վարդապետի Այգեկցոյ*** Խրատք», Ս. Ղազար, 1956, էջ 9-10):

Սակայն Հովհաննես Երզնկացի-Պլուզը՝ «Խրատ հասարակաց քահանայից և ժողովրդոց»-ի հեղինակը, ոչ թե աշակերտել է Վարդան Այգեկցուն, այլ Վարդան Արևելցուն, և նրա ծննդյան թվականը դրվում է 1220-1230 թթ. (տե՛ս ***Յովհաննէս Երզնկացի,*** Ուսումնասիրութիւն և բնագրեր, Երևան, 1958: Նաև՝ «Գանձասար», Զ, 1996, էջ 421), թեև նրա հեղինակած խրատների վերնագրի («Խրատ հասարակաց քահանայից և ժողովրդոց») և Այգեկցու սույն խրատի ժողովածուի վերնագրի («Խրատ ամենայն քահանայից և ժողովրդեան») միջև ընդհանրություններ կան:

[14] **Վարդանայ Վարդապետի Այգեկցոյ** Խրատք, Ս. Ղազար, 1956, էջ 9-10:

[15] Վարդան վարդապետ Այգեկցու երկասիրությունների մատենագրական ցանկը կազմելիս մեծապես օգտվել ենք ***Նորայր եպս. Պողարյանի*** «Հայ Գրողներ» գրքից (Երուսաղէմ, 1971, էջ 276-280):

[16] ***Վարդան Այգեկցի,*** Խրատներ, «Գանձասար» աստվածաբանական կենտրոն, Երևան, 1999:

[17] **Վարդանայ Վարդապետի Այգեկցոյ** Խրատք, աշխատասիրութեամբ Պողոս վարդապետ Անանեանի, Ս. Ղազար, 1956:

նական բնույթի հինգ գրություններ, որոնց ընդհանուր վերնագիրն է *«Խնդիրք և հարցումն Տեառն Միքայելի Անտիոքու եպիսկոպոսին ի մեղաւորէս Վարդանայ»* (անտիպ)[18]:

դ. *«Տասն վաճառականք և ութ որոգայթք»* (անտիպ)[19]:

ե. *«Մեկնութիւն խորհրդոյ «Տասն վաճառականացն»»: «Ծագումն անճառ...»* (անտիպ)[20]:

զ. *«Բանք և խորհուրդ կատարման տասն թուին»:*

«Ահա, բարեպաշտք և աստուածասէրք...» (անտիպ)[21]:

է. *«Բանք վասն տասն համարոյ...»: «Բարեբանեալ ես հոգի հայրական...»:* (անտիպ)[22]:

ը. *«Վասն դժոխոցն և պատմութիւն վասն անքուն որդոցն»* (անտիպ)[23]:

թ.*«Վասն մարդեղութեան Բանին Աստուծոյ»* (թերևս սա նույնն է, ինչ Ն. եպս. Պողարյանի նշած *«Ծաղկաքաղ վկայութիւնք ընդդէմ երկաբնակաց»*-ը, անտիպ)[24]:

ժ. Նորընծա կրոնավորներին ուղղված երեք խրատներ *«Առ մանկագոյն կրօնաւորս»* վերնագրով (անտիպ):

ժա. *«Խրատ ի յայտնումն բարւոյ և չարի»* (անտիպ)[25]:

ժբ. *«Վասն անիրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց»* և *«Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն»* խորագրերով աշխատությունները (տպագրված)[26]:

ժգ. Երուսաղեմում Սրբոց Հակոբյանց միաբանների խնդրանքով գրված *«Գիրք աղօթից»*-ը (տպագրված)[27]:

ժդ. *«Վասն դարձի և զղջման և ապաշխարութեան»* (անտիպ)[28]:

ժե. *«Խրատ վասն հաւատոյ»: «Զաստուածութիւնն անքննելի և անհասանելի ուսուցանեն...»* (անտիպ)[29]:

ժզ. *«Խրատ վարուց առաքինութեան»: «Աստուած բարի է և լոյս...»* (անտիպ)[30]:

ժէ. *«Խրատ վասն հաղորդութեան»: «Վասն Քրիստոսի պատարագին...»* (անտիպ)[31]:

ժը. *«Ցաղագս անարատ սիրոյ»: «Ով որդեակ իմ...»* (անտիպ)[32]:

ժթ. *«Խոստովանութիւն մեղաց և խայտառակութիւն անձին»: «Ով դուք ընտրեալք և պիտանիք...»* (անտիպ)[33]:

ի. *«Գովեստ ներբողական ի սուրբ առաքեալքն Քրիստոսի Յակոբոս և եղբայր Նորին Յոհաննէս և յերկոտասանսն...»: «Հրաշափառագոյն և գերապայծառ է...»* (անտիպ)[34]:

իա. *«Գիրք առակաց ասացեալ սուրբ վարդապետին Վարդանայ ի պէտս հոգւոյ և մարմնոյ և պիտանի»* (անտիպ)[35]:

---

18 Սրբոց Յակոբեանց մատենադարան (այսուհետ՝ ՍՅ), ձեռ. № 1187, էջ 57-114:

19 ՄՄ, ձեռ. № 8356 ձեռագիրը պարունակում է՝ «Տասն վաճառականք և ութ որոգայթք», «Բանք վասն տասն համարոյ», «Բանք և խորհուրդ կատարման տասն թուին» և «Պատմութիւն վասն անքուն որդոցն» աշխատությունները (էջ 1ա-130բ և 144ա-149ա):

20 ՄՄ, ձեռ. № 8356, էջ 1-12:

21 ՄՄ, ձեռ. № 8356, էջ 121-130:

22 ՄՄ, ձեռ. № 8356, էջ 110-121:

23 Այգեկցին այս նյութերի մասին բազմիցս գրել է տարբեր խմբագրություններով: ՍՅ 1690, էջ 213-248, ՍՅ 1426, էջ 78-88-107, ՍՅ 173, էջ 842-848, ՍՅ 256, էջ 134-154:

24 ՍՅ, ձեռ. № 2331, էջ 261-508:

25 ՍՅ, ձեռ. № 1187, էջ 114-130:

26 Տե՛ս ***Յ. Անասեան,*** Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ, Վասն անիրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց, Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն (բնագրեր), Վենետիկ, Ս. Ղազար, 1969 (արտատպված՝ «Բազմավէպի» 1968, թիվ 7-12 բացառիկից):

27 ***Վարդանայ Վարդապետի*** Գիրք աղօթից, Կ. Պոլիս, 1734:

28 ՍՅ, ձեռ. № 1690, էջ 181-212:

29 ՍՅ, ձեռ. № 1281, էջ 1-76:

30 ՍՅ, ձեռ. № 1281, էջ 77-103:

31 ՍՅ, ձեռ. № 1278, էջ 46-61:

32 ՍՅ, ձեռ. № 2331, էջ 7-20:

33 ՍՅ, ձեռ. № 1399, էջ 538-550:

34 ՍՅ, ձեռ. № 154:

35 ՍՅ, ձեռ. № 3189, էջ 43, պարունակում է 16 առակ, իսկ ՍՅ, № 1444 ձեռագիրը՝ 66 առակ:

իբ. Եվ վերջապես Այգեկցու վարդապետական հմտությունն արտահայտող *«Արմատ Հաւատոյ»* (տպագրված)[36] ժողովածուն՝ գրված 1205 թ.: Վերոհիշյալ գործը մեզ է հասել բազմաթիվ ընդօրինակություններով: Այն նվիրված է հայ եկեղեցու դավանությանը և նրա կարգերի պաշտպանությանը՝ *«ընդդէմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց»:* Այլ խոսքով՝ հիշյալ ժողովածուն քաղկեդոնականության դեմ ստեղծված գրական մի հուշարձան է, որը տվյալ դարաշրջանի եկեղեցական-պատմական իրավիճակի բնութագրման համար կարող է աղբյուրագիտական նշանակություն ունենալ:

***

Ավարտելով Այգեկցու կյանքի և գրական գործունեության սույն բնութագրականը՝ նշենք, որ մեր կողմից ձեռնարկված խրատների սույն թարգմանության բնագիրը կազմել է հայագիտության մեջ մեծ ավանդ ունեցող վենետիկյան Մխիթարյան միաբաններից Պողոս վարդապետ Անանյանը՝ հիմք ունենալով Վենետիկի ձեռագրատանը պահպանվող Ոսկեփորիկի երկու ժողովածուներ (թիվ 57 և 986), որոնցից առաջինը ԺԵ-ԺԶ դարից է, իսկ երկրորդը՝ ԺԴ-ԺԵ: Նա այս խրատներից մի քանիսի հեղինակային հարազատությանն առնչվող երկբայական խնդիրը պարզաբանել է Լազարյան Ճեմարանի թիվ 1192 և Բեռլինում պահպանվող թիվ 88 ձեռագրերի օգնությամբ, որոնցում, ի տարբերություն վենետիկյան ձեռագրերի, հեղինակի Վարդան անվան կողքին հաճախ նշվում է նաև «Այգեկցի» մակդիրը:

[36] ***Վարդան Այգեկցի,*** Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ, քննական բնագիրը՝ Տ. Շահե քահանա Հայրապետյանի, ներածությունը՝ Հակոբ Քյոսեյանի, Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետ, 1998:

***

Աշխարհաբար թարգմանությունն իրականացրել ենք ըստ Պողոս վրդ. Անանյանի կազմած բնագրի: Որոշ խրատներ, որոնք դրված էին ենթավերնագրերի տակ, ներկայացնում ենք առանձին վերնագրերով: Կրկնվող հատվածները մեկտեղված են:

Սույն ներածական խոսքում օգտակար ճշգրտումներ կատարելու համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակիցներին՝ առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պողոս Խաչատրյանին և կրտսեր գիտաշխատող Ավետ Ավետիսյանին:

Արման սարկավագ Սարոյան
(այժմ՝ Գևորգ աբեղա Սարոյան)
Հայկ սարկավագ Պողոշյան
(այժմ՝ Մկրտիչ աբեղա Պողոշյան)

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ԲՈԼՈՐ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Արարիչն Աստված Իսրայելի մեջ ղևտացիներին ժառանգության բաժին չտվեց, այլ նրանց բաժինն Իր խորանը և Ուխտի տապանակը եղան: Եվ ժողովրդի վրա քահանաներ կարգեց նրանց՝ ժողովրդից տասանորդ վերցնելու և անարատությամբ ու սրբությամբ նրան ծառայելու՝ հրամայելով վայելել նրա եկամուտներից (տե՛ս Թվեր ԺԸ 21-24): Եթե քահանաները մեղանչում էին, Աստված Ինքն էր նրանցից վրեժ առնում՝ նրանց տանջելով, հանդիմանելով և նախատելով:

Վերջին ժամանակում այսպես արեց նաև Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոսը, Ով առաքյալներին, նրանցից հետո հայրապետներին ու քահանաներին վերակացու, հովիվ և տեսուչ կարգեց Իր ժողովրդի վրա, որին Իր արյամբ գնեց մահացու մեղքերի և դժոխքի ծառայությունից: Եվ առաջնորդներին ու քահանաներին պատվիրեց սուրբ և անարատ լինել տգետ ժողովրդի մեջ և բարի օրինակ՝ տկարներին չգայթակղեցնելու համար, ինչը նախապես նաև ղևտացի քահանաներին պատվիրեց: Այս պատճառով աղաչում եմ ձեզ, քահանաների՛ դասեր՝ իմ եղբայրներ, կրոնակիցներ և Աստծո խոստացած բարիքների ժառանգորդներ.

Նայեցե՛ք ձեր կարգին ու աստիճանին և արիացե՛ք, պատրաստ և արթո՛ւն եղեք մարդկանց մեջ, որովհետև դուք համեմող աղ եք (տե՛ս Մատթ. Ե 13), որ համեմում եք մարդկանց անհամությունը, և լույս եք (տե՛ս Մատթ. Ե 14), որ մարդկանցից հալածում եք խավարը: Իսկ եթե դո՛ւք եք մեղքերով խավարում, ո՞վ կլուսավորի ձեզ, և եթե անհամանում եք, ոտնակոխ եք լինում:

Նայեցե՛ք Քրիստոսին ու Նրա բոլոր սրբերին, որոնց աթոռին նստեցիք, և նրանց նման խոնարհ, հեզ, համբերող, երկայնամիտ ու անոխակա՛լ եղեք, և ապա՛ Քրիստոսը կհավանի ձեր քահանայությունը:

Որդյակնե՛ր, առաքյալների և հայրապետների կողմից գրված է, որ քահանայություն կա, որ Աստծուց է. Աստծունն են հեզը, խոնարհը, անոխակալը, համբերողը, ողորմածը, սուրբը, աղոթասերը, կարեկիցն ու պարկեշտը, մեղավորներին քարոզողը և ժողովրդի մեջ բարի օրինակ հանդիսացողը, և քահանայություն էլ կա, որ սատանայից է. սատանայինն ու նրա դևերինն են շնացողն ու պիղծը, հպարտն ու ոխակալը, չարանախանձն ու ատողը, լեզվանին ու բարկությամբ իզուր նզովողը, ծույլն ու հարբեցողը, որկրամոլն ու փողասերը, ագահը, գրգռողն ու խռովարարը, որոնցից թող փրկի Քրիստոսը ձեզ, մեզ և բոլոր քահանաներին: Որովհետև ով չզղջացող սրտով այսպիսին լինի և Քրիստոսին պատարագի, Հուդայի և խաչողների բաժինը կժառանգի և սատանայի հետ անշեջ հրում այրվելով՝ անվախճան կտանջվի:

Քանզի ինչպես որ մարդկանց առջև մեծ է այն պատիվը, որը մեզ Աստված տվեց և որը նաև հրեշտակները տենչացին, այդպես էլ սոսկալի ու դառն է մեր տանջանքն այն կյանքում, եթե Աստծո կամքով ուղիղ չենք ընթանում: Եվ եթե ճշմարիտ ու բարի օրինակով եք գործում՝ խոսքով ու վարդապետությամբ, և մեղավորին չարից ետ դարձնում, դուք Աստծո բերան եք կոչվում (տե՛ս Երեմ. ԺԵ 19) և կրկնակի պատիվ ժառանգում առաքյալների ու մարգարեների հետ: Որովհետև Քրիստոսը ձեզ տեսուչ կարգեց, որպեսզի պատվիրեք, զգուշացնեք և խրատեք, իսկ եթե սա չեք անում, Քրիստոսը ձեզանից է պահանջում մեղավորների արյունը (տե՛ս Եզեկ. Գ 17), որոնց համար խաչվեց: Եթե դուք մեղքերի մեջ ցոփանում եք, ինչպե՞ս կարող եք մեղավորին խրատել, հանդիմանել կամ ուսուցանել, քանզի Քրիստոսը, առաքյալներն ու մյուս սրբերը նախ իրենք էին բարին գործում և ապա նույնն ուրիշներին քարոզում. և նրանք հոժարությամբ լսում ու հանձն էին առնում [բարիք գործել]:

Այն քահանան, որը գնում է կախարդի, գուշակի և աստղահմայի մոտ և հավատում նրանց սուտ խոսքերին, այլևս թող չպատարագի Քրիստոսին, ինչպես որ սուրբ հայրապետները սահմանեցին Նիկիայում: Նույնպես, եթե գողանում է, շնանում, երդվում և կամ որևէ գիր կամ ծրար վերցնում նրանցից, նա իր անձը դևերին է կապել, որովհետև քահանաներդ ամենակալ Տեր Աստծո պատգամաբեր, Քրիստոսի լեզու և առաքելանման եք կոչվում, որ ժողովրդին անդադար քարոզում եք Աստծո օրենքն ու կամքը և ուրախացնում Աստծուն:

Եղբայրնե՛ր, նայեցե՛ք առաջին քահանաներին, ովքեր իրենց անձերը դրեցին հանուն ժողովրդի, և դո՛ւք էլ այդպես վարվեք ըստ ձեր կարողության, որովհետև չար է այս ժամանակը, և անիրավ մարդկանց մեջ եք ապրում, ինչպես որ Աստված ասաց մարգարեին. «Զգո՛ւշ եղիր, մարդո՛ւ որդի, որովհետև կարիճների մեջ ես բնակվում» (հմմտ. Եզեկ. Բ 6): Քանզի ձեր փոքր մեղքը ծանրացնում են, իսկ իրենց չարը թեթևացնում: Այս պատճառով վա՜յ մեզ, ո՜վ իմ որդյակներ, որովհետև Քրիստոսը մեզանից մեր չար գործերի դիմաց բազմապատիկը կպահանջի և չարաչար ու դառը տանջանքների կմատնի:

Եվ դո՛ւ, ժողովուրդ, քո առաջնորդներին ու քահանաներին դատավոր ու քննիչ մի՛ եղիր, որովհետև դա քեզ բնավ չի պատշաճում և Աստծո կողմից էլ չպատվիրվեց, և Քրիստոսի դատաստանն ու դատավորական աթոռը մի՛ հափշտակիր, որովհետև Նա է քահանաների քննիչն ու դատավորը, Ով դատաստանի օրը մի մազը որպես լեռ է քաշելու մեր եղունգներից: Քեզ հրամայվեց քահանաներին լսել և նրանց խոսքե-

ին ու քարոզությանը հնազանդ լինել, ո՛չ թե նայել նրանց գործերին կամ մտահոգվել ու նրանց քննել: Այդ պատճառով աղաչում եմ քեզ, Աստծո՛ ժողովուրդ, եպիսկոպոսներին պատվեցեք ինչպես Քրիստոսին, և քահանաներին՝ իբրև Աստծո առաքյալների ու պատգամաբերների, անթերի ծառայե՛ք նրանց և ամբողջապես կատարե՛ք Աստծո Եկեղեցու հանդեպ պարտքը՝ սահմանված Եկեղեցու կողմից, որովհետև դա է Աստծո առաջին բաժինը ձեր վաստակից և եկամուտներից, որ հոժարությամբ տալիս եք Աստծո եկեղեցիներին: Եվ վա՜յ նրան, ով Աստծո Եկեղեցուն զրկում է, որովհետև զրկում է Աստծուն և իր ննջեցյալների հոգիներին, քանի որ Եկեղեցին հոգևոր մայր և ծնող է, իսկ սուրբ Ավազանը՝ արգանդ, որով Աստծո որդիներ դարձանք և ազատվեցինք սատանայի ծառայությունից: Դրա համար մենք պետք է առավել սիրենք Եկեղեցին, որը մեր հոգևոր մայրն է, քան մեր մարմնավոր մորը, որովհետև քահանայի միջոցով, Եկեղեցով և Խաչով են սահմանված մեր բոլորի մահն ու կյանքը՝ մկրտությունն ու պսակը, թաղումը, Աստծո սքանչելագործությունների ու մարդեղության բոլոր տոնակատարությունները: Եվ այս բաների պատճառով մի՛ դատեք Աստծո քահանային, այլ թողեք Աստծո՛ւն: Որովհետև առանց քահանայի չեք կարող քրիստոնյա լինել, և չի իրականանում ձեր քրիստոնեությունը: Պսակի, մկրտության և խոստովանության ժամանակ Սուրբ Հոգին քահանայի միջոցով է շնորհ պարգևում: Իսկ ո՞վ գիտի, թե սուրբը քահանա չի հանդիպում. նույնիսկ հանցավոր քահանան է իր կարգի բերումով և անհրաժեշտության պատճառով պսակում, մկրտում, հաղորդում ու խոստովանեցնում, և Աստված ձեզ շնորհ ու թողություն է տալիս, իսկ նրան ըստ նրա գործերի պատժում:

Ահա ձեզ որպես օրինակ ոսկե և երկաթե մատանիները. [երբ նրանցով] մոմի վրա կնիք են դնում, [երկու դեպքում էլ] թագավորի պատկերը նույնն է երևում մոմի վրա:

Բայց պատարագը սուրբ քահանան պիտի մատուցի, որ Աստված հաշտվի ողջերիս ու ննջեցյալների հետ, որովհետև անարժան քահանայի մատուցած անարժան պատարագի պատճառով Աստված առավել է բարկանում աշխարհի վրա, քան բոլոր մեղքերի պատճառով: Նույնպես և նա, ով չզղջացող սրտով, մեղքերով լի հաղորդվում է Աստծո Որդու Արյանն ու Մարմնին, մարդկային փառքի ու գովասանքի համար կամ էլ ահի և ամոթի պատճառով, Քրիստոսին խաչողների հետ է դասվում և նրանց հետ տանջվելու է, որովհետև հանդգնություն գործեց և ոտնահարեց Աստծո Որդուն:

Այս պատճառով աղաչում եմ քահանաներիդ և ժողովրդիդ, որ անարժանորեն հաղորդվելուց և Քրիստոսին պատարագելուց փախչենք այնպես, ինչպես կրակից, որովհետև բոլոր մեղքերը մեր անձին են վերաբերում, իսկ նա, ով նաև սա է գործում, Աստծո [դեմ է գործում] և աստվածասպան դառնում:

Կիրակի օրը պատվեցեք բարեգործությամբ, որովհետև հարության և ազատության օր է. քանզի առաջին օրը կիրակին էր, երբ Աստված սկսեց ստեղծել աշխարհը, Մովսեսը կիրակի օրն Աստծո ժողովրդին՝ Իսրայելին, անցկացրեց Կարմիր ծովով, և Քրիստոսը, Ով Հայր Աստծո սրտի ծնունդն է, կիրակի օրը մեռելներից հարություն առավ:

Իսկ ով կիրակի օրը Պատարագի արձակումից առաջ կերակուր է ուտում, և խիստ չէ անհրաժեշտությունը, իհարկե, եթե [ուտողը] հիվանդ, մանուկ կամ ծննդական չէ, այդպիսին պոռնիկների հետ տանջվելու է, որովհետև արհամարհեց կիրակին և Աստծո Որդուն:

Իսկ քահանան պարտավոր է ջանք թափել առավոտյան կատարելու Պատարագը, որովհետև ի վիճակի է [դա անելու] շաբաթ և կիրակի օրերին, որպեսզի ինքը չպատժվի

Աստծուց: Եվ այն մարդը, որ մոտ է [ընակվում] եկեղեցուն, պարապ է, մեծ հարկադրանքի տակ չէ և առողջ նստած է [տանը], բայց չի գնում եկեղեցի ու չի աղոթում սուրբ Պատարագի առաջ, նա պոռնիկների հետ տանջվելու է, քանի որ Պատարագի ահավոր Խորհուրդը ոչինչ համարեց: Իսկ նրանք, ովքեր հեռվում էին և չիմացան ու չեկան Պատարագին, չեն պատժվի:

Ուրեմն իմացե՛ք, որդյակնե՛ր, որ մեծ բարիք ու անբավ շահ է հոգու և մարմնի համար Պատարագի գնալը, այդ կարճ ժամանակահատվածում Աստուն աղոթելը և թշնամիների ու սիրելիների համար թողություն խնդրելը, ինչպես որ Ստեփանոսն էր խնդրում իրեն քարկոծողների, և Փրկիչը՝ Իրեն խաչողների համար: Բայց եթե [մեկը] հպարտ և ոխակալ սրտով է աղոթում, Քրիստոսը չի ընդունի նրա աղոթքը:

Դարձյալ՝ հասկացի՛ր, Աստծո՛ ժողովուրդ, որ ինչպես որ մեր քահանայությունն է կորուստ և ոչ թե շահ, եթե մենք չարն ենք գործում, այդպես և քրիստոնեական հավատքը քեզ շահ և օգուտ չէ, եթե չարն ես գործում: Ասում են Աստված ու Նրա սրբերը. քանզի Քրիստոսն ասում է. «Նա՛ չէ, որ կմտնի Իմ Հոր արքայությունը, ով Ինձ Տեր և Աստված է խոստովանում, որովհետև դևերն [էլ] խոստովանեցին և խոստովանում են Ինձ Աստված, այլ նա, ով Ինձ խոստովանելու հետ մեկտեղ կկատարի նաև Իմ Հոր կամքը (հմմտ. Մատթ. Է 21, Հակ. Բ 19). իսկ Իմ Հոր կամքը խոնարհությունն ու անոխակալությունն է, որ ողորմությունն ու կարեկցանքը, սրբությունն ու աղոթքը, պարկեշտությունն ու սրտում մեղք չպահելը»: Նաև նույնն ասում է Քրիստոսի սուրբ առաքյալ Հակոբոսը. «Հավատքն առանց գործերի մեռած է» (Հակ. Բ 26):

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՎ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քահանաները հինգշաբթի՝ մեծ խորհրդի օրը[1], փառքի Տիրոջը մահվան մատնեցին՝ համաձայն այս խոսքի. «Արդարի հոգին որսացին և անմեղի արյունն էին դատապարտում» (Սաղմ. Ղ Գ 21), իսկ ուրբաթ օրը խաչ հանեցին արարածների Արարչին՝ Քրիստոս արքային:

Ձորեքշաբթի օրը Հերովդեսը գլխատեց Քրիստոսի մեծ կարապետին՝ Հովհաննեսին՝ ճշմարտության ճրագին, ձայնին ու խոսքին, փեսայացած Խոսքի բարեկամին, և այս օրը [չարագործները] չարաչար մահվամբ հեռացան աշխարհից:

Ձորեքշաբթի օրը օձի բերանից խավար ելավ ու խավարեցրեց լուսաբեր դրախտը, որովհետև [դրախտի] ծառերը, տերևներն ու պտուղներն ավելի լուսավոր էին, քան արեգակը: Եվ երբ Արարողը եկավ դրախտ ու ձայնեց. «Ո՞ւր ես, Ադա՛մ» (Ծննդ. Գ 19), բոլոր ծառերը երկրպագեցին Տիրոջն ու առավել պտղաբերեցին, քան նախկինում: Սակայն Տերն Ադամին արտաքսեց փառակենցաղ դրախտից, և նրա հետ խավարը տարածվեց տիեզերքի չորս ծագերով մեկ, որի մասին նաև բարձրաբարբառ Եսային՝ աստվածաբան մարգարեն է աղաղակում. «Խավարի և մահվան ստվերների մեջ նստած ժողովրդի վրա լույս ծագեց» (հմմտ. Եսայի Թ 2): «Նստելն» [այստեղ անհուսություն է նշանակում, որովհետև ասաց, թե խավարի մեջ են նստած և ո՛չ թե ընթանում են:

Ձորեքշաբթի օրը Մեծ քահանան, գայիսոնը[2] բարձրաց-

[1] Նկատի ունի Վերջին ընթրիքը՝ Ոտնլվայով ու Հաղորդության խորհրդի հաստատմամբ հանդերձ, որոնք հիշատակվում են Ավագ հինգշաբթի օրը:

[2] *Գայիսոն՝* նիզակ, գավազան (ՆՀԲ):

նելով, երկնքում կանգնեցրեց լուսատուներին՝ [ասելով]. «Թող արեգակը կանգնի Գաբաւոնի դիմաց, իսկ լուսինը՝ Ելոնի ձորի» (հմմտ. Հեսու Ը 18, Ժ 12): Քանի որ օրը երեկոյանում էր, դրանք կանգնեցրեց այնքան ժամանակ, մինչև որ վանեց թշնամուն. քանզի երբ լուսինն ու արեգակը կանգնեցին, կեսօր եղավ, և գիշերվա խավարը թշնամիների վրա իջավ:

Դարձյալ՝ չորեքշաբթի օրը Քրիստոսը մեծ զորական Գաբրիելին առաքեց սուրբ Կույսի մոտ՝ «Ուրախացիր, ով շնորհընկալ»-ն ավետելու (տե՛ս Ղուկ. Ա 28). ինչպես օձը չչնջաց նախամոր ականջին, այդպես էլ Գաբրիել հրեշտակապետը երկրորդ Եվային [ավետեց]: Նա մահ ու կորուստ էր սովորեցնում, իսկ սա «Ուրախացիր, ով շնորհընկալ»-ն էր ավետում: Ադամն իր կնոջը «կյանք» անվանեց, որովհետև Քրիստոսը՝ Կյանքը, նրա դուստրից էր ծնվելու: Եվ ինչպես օձը բերանը բացելով խավար տարածեց, նույնպես և երբ փառքի Տերը բացեց բերանը, համասփյուռ լույս ծագեց տիեզերքի չորս կողմերով մեկ, ինչի մասին հոգետես Եսայի մարգարեն բարձր ձայնով ասում է. «Լուսավորվի՛ր, լուսավորվի՛ր, Երուսաղեմ, քանզի հասել է քո լույսը» (Եսայի Կ 1): Երուսաղեմը «խաղաղություն» է թարգմանվում, որի մասին Հովհաննեսի հայրը՝ Զաքարիան, ասաց. «Լույս ծագեց նրանց վրա, ովքեր խավարի մեջ էին նստած» (Ղուկ. Ա 79): Իսկ սուրբ Սիմեոն Ծերունին՝ թարգմանիչը[3], ասում է. «Որպես լույս հայտնվեցիր հեթանոսներին և փառք՝ Իսրայելի Քո ժողովրդի համար» (հմմտ. Ղուկ. Բ 32): Դավիթն ասում է. «Տե՛ր, Քեզնից է կյանքի աղբյուրը, և Քո երեսի լույսով [ենք տեսնում լույսը]» (Սաղմ. ԼԵ 10), և դարձյալ՝ «Լուսավորի՛ր իմ աչքերը» (հմմտ. Սաղմ. ԺԲ 4), նաև՝ «Քո երեսի լույսը ծագեց մեզ վրա» (Սաղմ. Դ 7):

[3] Ըստ ավանդության՝ Սիմեոն Ծերունին յոթանասուներկու թարգմանիչ դպիրներից էր, ովքեր Եգիպտոսի Պտղոմեոս Եղբայրասեր (Ն. Ք. 283-246 թթ.) թագավորի հրամանով Հին Կտակարանի գրքերը եբրայերենից հունարեն թարգմանեցին:

Քանզի Հոր երեսի լույսը Քրիստոսն է, իսկ տիեզերքի լուսատուն՝ փրկչական ու կենսաբեր խաչը, որի մասին նաև սուրբը ավետարանիչն է հուշում՝ ասելով. «Եվ ապա երկնքում Մարդու Որդու նշանը պիտի երևա» (Մատթ. ԻԴ 30): Քանզի տիեզերքում բարձրանալու է լուսաբեր խաչը, և բոլոր արարածները լուսավորվելու են նրա լույսով, ինչպես որ Ինքը Քրիստոս Փրկիչն ասաց. «Ես որպես լույս եկա աշխարհ. ով Ինձ մոտ է գալիս, խավար չի տեսնի» (հմմտ. Հովհ. ԺԲ 46): Քանզի ստեղծեց առաջին լույսը՝ արեգակը, և նրան ցերեկվա լուսատու դարձրեց, իսկ լուսինն ու աստղերը՝ գիշերվա լուսատուներ, ապա դրանք երկնքի հաստատության մեջ դրեց՝ երկրին լույս տալու և ցերեկվա ու գիշերվա վրա իշխելու, ինչպես որ աստվածային օրենսդիր Մովսեսն ասաց. «Աստված տեսավ, որ լույսը բարի է» (Ծննդ. Ա 4), նաև Դավիթն է ասում. «Քոնն է ցերեկը, և Քոնն է գիշերը, և լույսն ու արևը Դո՛ւ հաստատեցիր» (Սաղմ. ՀԳ 16):

Իսկ հինգշաբթի՝ մեծ տոնի օրը, Փառքի Տերը մեծամեծ խորհուրդներ է կատարում: Ինչո՞ւ հինգշաբթի օրը. քանզի նախաստեղծներն ա՛յդ օրը ոտքով ընթացան դեպի ծառը՝ պտուղը ճաշակելու: Այդ պատճառով էլ Տերը [նույն օրը] լվաց աշակերտների ոտքերը: Իսկ ինչո՞ւ ոտքերը և ոչ թե ձեռքերն ու գլուխը: Որպեսզի այդ օրը Զոհը մատուցի և Իր Մարմինն ու Արյունը բաշխի բոլոր արարածներին, որպեսզի նաև նախահոր գարշապարը մեղքից սրբի ու զորություն տա Իրեն հուսացողներին՝ ըստ այս խոսքի. «Ահա ձեզ իշխանություն տվեցի կոխոտելու օձերի, կարիճների և թշնամու ամբողջ զորության վրա» (Ղուկ. Ժ 19), քանզի ոտքերը դնում էին հիվանդների վրա և բժշկում:

Դարձյալ՝ համբարձման ժամանակ աշակերտներին Ձիթենյաց լեռը հանեց ու Իր ձեռքերը բարձրացնելով՝ օրհնեց նրանց որպես եպիսկոպոսների ու կաթողիկոսների, և բավական չհամարեց միայն ոտքերի լվացումը, այլև Իր աջի զո-

ությունը քահանաներին փոխանցեց, որպեսզի ում վրա որ դնեին ձեռքերը, տային Սուրբ Հոգին:

Դարձյալ՝ այս օրը պատարագ մատուցեց և Իր Մարմինն ու Արյունը բաշխեց բոլո՛ր արարածներին և ո՛չ թե միայն առաքյալներին: Զորացրեց [նրանց] աչքերն ու ոտքերը և Իր աջի զորությունը քահանաներին փոխանցեց, որովհետև քահանայի աջը, որով նրանք կարող են բժշկել հիվանդների հոգիներն ու մարմինները, ավելի բարձր է, քան երկինքը:

[ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ]

[....][1] Այլ պատճառ էլ կա, որ Քառասնորդական պահքի օրերին փակում են եկեղեցու դռները[2] և սպասավոր[ներ]ից ու պատարագողից բացի ուրիշ որևէ մեկը չի մնում [ներսում]: Քանի որ նաև մարդն է Աստծո եկեղեցի, ուստի [Տերը] պատվիրում է մեզ փակել մեղքերի բոլոր դռները և միայն մի դուռ թողնել, որ ճշմարտության ճանապարհն է՝ հույսը, սերն ու հաստատուն հավատքը, խոստովանությունն ու ողորմածությունը: Որպեսզի երբ ճշմարիտ Քահանայապետը մեռելներից հարություն առնի, մեզ էլ անվախճան հարություն շնորհի, որովհետև ինչպես որ Ինքը հարություն առավ մեռելներից, այնպես էլ մենք ենք Նրա հետ հարություն առնելու և հավիտյանս թագավորելու:

Այնուհետև հարության ավետիսն ենք հնչեցնում բոլորի ականջներին, թե՝ «Մեծ ավետի՛ս ձեզ. Քրիստոսը հարություն առավ մեռելներից և ձեզ էլ Իր հետ հարություն պարգևեց»: Ապա բացվում են եկեղեցու դռները, և ամբողջ ժողովուրդը համարձակությամբ եկեղեցի է մտնում, որովհետև ազատվել է [ապաստանի] քաղաքներից (տե՛ս Թվեր Լ.Ե 11, Հեսու Ի) և փրկվել պատուհասներից:

Արդ, ո՛վ իմ սիրելի եղբայրներ, լսե՛ք այս ամենը և ձեր անձերն Աստծո համար պատրաստեցե՛ք՝ հեռանալու բոլոր մեղքերից և ընթանալու ամենայն արդարության ետևից, սերը, հույսը և Աստծո երկյուղը հաստատելու ձեր հոգիներում, ընթանալու խոստովանության ետևից, որը երկնքի դուռն ու արքայության ճանապարհն է, որովհետև Մեծ պահքի մեջ մտնելիս ձեզ այս է պատվիրում սուրբը մարգարե Եսային[3]՝ ասելով «Լվացվեցե՛ք, մաքրվեցե՛ք» (Եսայի Ա 16), այսինքն՝ [ձերբազատվեք] մեղքերից ու ապականություններից:

Դարձյալ՝ ասում է. «Նախ դու խոստովանիր քո անօրենությունները, որ արդարացվես» (Եսայի ԽԳ 26), նաև սուրբը մարգարե Դավիթն է ասում. «Ասացի, թե կխոստովանեմ իմ մեղքերը, և Դու թողություն կտաս իմ բոլոր մեղքերին» (Սաղմ Լ.Ա 5): Նաև Կյուրեղ Մեծն է ասում. «Եթե բազում անգամ էլ մեղանչես, ապա ե՛տ դարձիր և խոստովանի՛ր քո հանցանքները»[4], քանզի խոստովանությամբ շատերն արդարացան, ինչպես որ հիշատակված օրինակներ ունենք [ՁԶ] սաղմոսում: Քանզի Բաբելոնն ու Ռախաբը մեծ մեղքեր ունեցող կանայք էին, բայց խոստովանության միջոցով ոչ միայն արդարացան, այլև Աստծո դուստրեր անվանվեցին, և նրանց անուններն էլ մարգարեի ասած այդ սաղմոսի մեջ գրվեցին. «Հիշի՛ր Ռահաբն ու Բաբելոնը, որոնք ճանաչում են ինձ»[5] (Սաղմ. ՁԶ 4): Եվ բազում չգրված վկայություններ կան, ըստ որոնց՝ խոստովանությունը մեղավորին սրբել է ու արդարացրել, որով և մեր նախնիներից շատերն արդարացան: Խոստովանությունը պոռնիկին կույս

[1] Ինչպես երևում է, այս քարոզը սկզբից թերի է:

[2] Այժմ Քառասնորդական պահքի օրերին փակվում է միայն խորանի վարագույրը:

[3] Մեծ Պահքի առաջին երկուշաբթի օրն ընթերցվում է Եսայի մարգարեի խոսքը (Ա 16):

[4] Տե՛ս *Կյուրեղ Երուսաղեմացի,* Կոչումն Ընծայութեան, ճառ Բ:

[5] Հեղինակը «Հեսուի» գրքում հիշված Ռախաբ պոռնիկին նույնացնում է սաղմոսի (ՁԶ 4) Ռահաբի հետ, որը, սակայն, Եգիպտոսին տրվող մի անուն էր:

է դարձնում, չարագործին մաքրում ու լուսավորում, մարդկանց հրեշտակների դասերում կանգնեցնում, որովհետև խոստովանությունն ու ողորմությունը միմյանց լծակից են, ինչպես երկու լծակցված եզները:

Դարձյալ՝ պետք է նաև կատարել այն, ինչ Քրիստոսը սահմանեց աղոթողի համար. «Մտի՛ր քո սենյակը, փակի՛ր քո դռները և ծածո՛ւկ աղոթիր Հորը» (Մատթ. Զ 6): Այստեղ «սենյակ» է կոչում մարմինն ու սիրտը և պատվիրում աղոթելիս բոլոր մարմնական խորհուրդները մտքից հեռացնել:

Իսկ եթե որևէ աշխարհիկ քրիստոնյա, որը գիշերը կամ ցերեկը, առավել ևս կիրակի օրը, որ տերունական օր է, լսում է ժամհարի ձայնը և չի գնում եկեղեցի, որը երկնքի արքայության դուռն է, չի տեսնում քահանայի երեսը և չի լսում Աստծո պատվիրանները, այդպիսին չի տեսնելու չորեքկերպյան կենդանիների վրա բազմած փառքի Տիրոջը: Արդ, նա, ով կիրակի օրը չի տեսնում քահանայի երեսը և չի խոստովանում իր հանցանքները, Աստծուց փրկություն չունի:

Մարգարեներից շատերն այս [պահքը] պահեցին և աստվածային բարիքներին արժանացան:

Քառասուն օր բոլորն էլ պահում էին: Իսկ ինչո՞ւ քառասուն օր: Քանի որ Աստված Ադամին ստեղծելուց քառասուն օր հետո դրախտում դրեց, այս պատճառով է սկիզբը քառասունից սկսվում: Քանզի [նաև] երբ սաղմը կնոջ մեջ է, քառասուն օր մանուկն իր մոր որովայնում անկենդան է, իսկ երբ քառասուն օրական է դառնում, այնժամ կենդանության հոգի է ընդունում. ահա [նաև] այս պատճառով է սկիզբը քառասունից: Բայց իգական սեռի մոտ այսպես չէ, որովհետև էգն ութսուն օրերի ընթացքում է մարդու [բոլոր] մասերով կազմավորվում և ապա կենդանության հոգի ընդունում: Արու մանուկը, քանի որ մոտ է լեղապարկին ու լյարդին, արագ է գոյանում ու ձևավորվում, բայց էգը հեռու է սրանցից և մոտ է փայծաղին, իսկ փայծաղի բնությունը զով է, որովհետև ծմակում է[6]: Քանզի բոլոր ծառերը, որոնք տաք տեղում են, արագ են հասունացնում պտուղը, իսկ բոլոր բույսերն ու պտուղները, որոնք ծմակում են, ուշ են ընդունում կենդանության հոգին: Եվ ամեն ինչ քառասունի վրա հաստատվեց: Այս և՛ս իմացեք, որ Քրիստոսը քառասուն օր պահք պահեց:

Քառասուն ասվեց, սակայն [Մեծ Պահքը] քառասունութ [օր է], քանզի մեծ մարգարե Մովսեսը քահանաների համար վեց քաղաք հատկացրեց (տե՛ս Թվեր Լ,Ե 11), նրանից հետո մեծ քահանա Հեսուն քահանաների համար ևս քառասուներկու քաղաք հատկացրեց (տե՛ս Հեսու Ի), որոնք Մովսեսի հատկացրածի հետ քառասունութ են լինում, և սրանք պահքի օրերն են խորհրդանշում: Քահանաների քառասունութ քաղաքները ճշմարտության օրինակ են, քանզի բոլոր [ակամա կամ դիպվածաբար] մարդ սպանողները, երբ փախչում էին, ապաստանում և փրկվում էին [ապաստանի] այն քաղաքում, որին պատահում էին, և նրանք, ովքեր սպանվածների տերերն էին, իրավունք չունեին նրանց մոտենալու (տե՛ս Հեսու Ի 5):

Իսկ երբ քահանայապետը մեռնում էր, սուրհանդակ էին ուղարկում բոլոր քաղաքները՝ [ասելու]. «Քահանայապետի մահվամբ ազատեց ձեզ» (տե՛ս Թվեր Լ,Ե 28), և ապա նրանք համարձակությամբ դուրս էին գալիս [ապաստանի] քաղաքներից՝ չերկյուղելով իրենց սպանել [կամեցողներից], քանզի այսպիսին էր Մովսեսի օրենքը. «Աչքի փոխարեն աչք, և ատամի փոխարեն ատամ: Եվ ով որ մարդու արյուն հեղի, փոխարենը պիտի նրա արյունը հեղվի» (հմմտ. Ելք ԻԱ 24, Ղևտ. ԻԴ 17): Ուստի մահապարտները, ովքեր այս քաղաքներում էին ապաստանել, չէին համարձակվում դուրս գալ, [մինչև որ] քահանայապետի մահվամբ ազատվում էին:

[6] Սույն տեսակետը առկա է նաև Մատթեոս վարդապետ Ջուղայեցու «Մեկնութիւն Ղուկասու աւետարանին» աշխատությունում, Մաշտոցի Մատենադարան, ձեռագիր 1345, էջ 10-11:

Արդ, քառասունութ քաղաքները քառասունութօրյա պահքն են խորհրդանշում, և նրանք, ովքեր ապաստանում էին դրանց մեջ, մեզ էին խորհրդանշում, որովհետև մեր հոգիները սպանող մեղքերից մեռած էինք և ազատվելու համար ապաստանեցինք այս քաղաքում: Եթե այս քաղաքից դուրս գտնվենք, հրեղեն սուրը կգտնի ու կսպանի մեզ, իսկ եթե այս քաղաքում մնանք, ճշմարիտ Քահանայապետը կմեռնի մեզ համար և Իր ճշմարիտ մահվամբ կազատի մեզ: Մեզ նկատի ունենալով է Սողոմոնն ասում. *«Իր տունն իմաստությամբ շինեց» (Առակ. ԻԴ 3):* Քառասունը չորս տասից է բաղկացած, իսկ տասը թիվը տասը զգայարաններն[7] է խորհրդանշում: Եվ քառասնորդական պահքի միջոցով աստվածային բարիքներին պիտի արժանանանք:

Վերջին օրերին փառքի Տերը գալով կենսաբեր խաչով ավերեց դժոխքը և ասաց. «Անիծյալ է նա, ով կշինի դժոխքը, որը Ես ավերեցի»: Մեծ էր Մովսեսը և Հիսուսի օրինակն էր, ինչպես որ ինքն է վկայում. *«Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածը ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի, նրա՛ն կլսեք» (Բ Օրենք ԺԸ 15),* [ինչն] Աստծո Որդու գալստյան մասին է ասում: Մի մարգարե ասում է. *«Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի» (Եսայի Է 14),* Դավիթն էլ ասում է. *«Տերն իմ Տիրոջն ասաց՝ նստիր Իմ աջ կողմում» (Սաղմ. ՃԹ 1),* նաև՝ *«Տերն ասաց Ինձ. «Դու Իմ որդին ես»» (Սաղմ. Բ 7):* Եվ մի այլ տեղում ասում է, թե սա եկավ որպես *«ճշմարիտ Քահանայապետ ըստ Մելքիսեդեկի կարգի, և Տերը նրա աջ կողմում է» (հմմտ. Սաղմ. ՃԹ 5):* Նաև մեկ այլ մարգարե ասում է. *«Որպես անձրև թող իջնի հնձած խոտի վրա» (Սաղմ. ՀԱ 6):* Սրբերից ոմանք [էլ] ճանապարհներով քարոզեցին Աստծո Որդու գալն ու սուրբը Կույսից մարմնանալը, իսկ Կույսի մասին նախապես քարոզեցին և ասացին. *«Ճշմարտությունը երկրից բուսավ, արդարությունը երկնքից երևաց» (Սաղմ. ՁԴ 12):*

Արդ, բազում խոսքեր են պետք, որպեսզի վախճանին հասնենք: Սակայն պետք չէ անտեսել սուրբը Կույսին, որովհետև նա եղավ բոլոր բարի բաների պատճառը: Թեպետև կնոջով մահն աշխարհ մտավ, բայց և կնոջից ծնվեց մեր կյանքը՝ Քրիստոսը: Ադամն իր կնոջը «կյանք» կոչեց, որովհետև մեր կյանքը՝ Քրիստոսին ծնեց, քանզի սուրբը Կույսը Եվայի դուստրն էր: Առաջին մորից՝ անեծք ու քրտինք, իսկ սրանից՝ Կյանք ու Անմահություն, առաջին մորից՝ փշաբեր ու տատասկաբեր երկիր, իսկ սրանից՝ զանազան բարիքներով զարդարված երկիր, նաև՝ Եդեմական դրախտ: Նրանից մարդասպան Կայենը ծնվեց, իսկ սրանից՝ կյանք տվող Որդին՝ Հիսուս Քրիստոսը, Ով ողջ տիեզերքին կյանք և ուրախություն շնորհեց: Նրանից՝ խավար, իսկ սրանից՝ համապայծառ լույս ու մայր չմտնող արեգակ, որովհետև սուրբը Կույսն արևելք և արևմուտք անվանվեց, ինչպես որ մարգարեն է ասում. *«Արևելքից մինչև արևմուտք Տիրոջ անունը թող փառավորվի» (հմմտ. Սաղմ. ՃԺԲ 3):*

[7] Նկատի ունի հինգ մարմնավոր (տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք և շոշափելիք) և հինգ հոգևոր (միտք, զգայություն, երևակայություն, տրամախոհություն, կարծիք) զգայարանները:

Սուրբ Ստեփանոս Սյունեցին «Չորս ավետարանների համառոտ մեկնություն»-ում ևս խոսում է մարմնավոր և հոգևոր հինգական զգայությունների մասին, սակայն առանց դրանք թվելու (Ս. Էջմիածին 1997, էջ 49-50):

Սուրբ Գրիգոր Տաթևացին, «Հարցմանց» գրքում խոսելով զգայությունների մասին, գրում է. «Զօրութիւնք հոգւոյն բաժանին ի ներքին զգայութիւնքն և յարտաքին: Եւ է՛ արտաքին զգայութիւնքն «ե». որ է մասնական զգայութիւն. այսինքն՝ է տեսանելիքն, լսելիքն, հոտոտելիքն, ճաշակելիքն և շօշափելիքն: Իսկ ներքինն, որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, յիշողութիւն, որ է միտք...» (Կ. Պոլիս, 1729, էջ 249):

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ՀՈԳԻՆ ԱՎԱՆԴԵԼՈՒ ՕՐՎԱ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՀՈԳՈՒ ԱՍՏՎԱԾԱՇԵՆ ՏԱՃԱՐ ՄԱՐՄԻՆԸ ՔԱԿՏՎՈՒՄ Է, ԵՎ ՀՈԳԻՆ ՈՒ ՄԱՐՄԻՆԸ ՄԻՄՅԱՆՑԻՑ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ

Արդ, յուրաքանչյուր մարդ այսպես պետք է խորհի և ասի, թե առավոտը եկավ, և մենք ոչինչ չշահեցինք, գալիս է գիշերը, և դատարկ ձեռքով գնում ենք: Դարձյալ՝ չգիտե՞ս, որ [ինչպես] ասվում է, այս մարմնում բնակվում ենք իբրև օթևանի մեջ, լուսաբացն անցնում է որպես երազ, իսկ երեկոն՝ որպես ստվեր: Արդյոք չգիտե՞ս, թե վախճանի օրն ինչպես են հոգիներն այլայլվում մարմնում և ջանում խուսափել ահեղակերպ տեսիլքներից՝ [փորձելով] իրենց մարմնով ծածկվել, ինչպես վարագույրի ետևում: Ո՜հ, ինչ ահավոր և սոսկալի է այն օրը, երբ գալիս են աննյութ հոգին նյութեղեն մարմնից բաժանելու: Այդ ժամանակ [մարդը] պառկում է մահճի վրա՝ տագնապելով հոգու աստվածաստեղծ տաճարի քակտման համար, և նկատում է լուսավորներին՝ [հրեշտակներին]: Հետո լույսը նվազում է, և կամաց-կամաց տկարանում են մարմնի աչքերը, նրանից վերանում են իմաստությունը, և նվազում է նրա ամենակարող ուժը: Թերանում է նրա լեզվի խոսքը, հիմարանում միտքը՝ [զրկվելով] իմաստությունից, և խելագարվում մարմնական մտածումներից: Վերանում են հոր գութը որդու նկատմամբ, որդունը՝ հոր, մոր գութը՝ դստեր, դստերը՝ մոր: Սիրում է կյանքը և չի կարող տեսնել այն, մոռանում է այս աշխարհի վայելչությունը: Նրա նկատմամբ գորովով են լցվում սիրելիները և ձայն տալիս նրան, սակայն նա անկարող է պատասխանել: Գորովագին մորմոքում է մայրը դստեր վրա, և հայրը՝ որդու, դողում են, փարվում ու համբուրվում, բայց մեռնողի չունչն ու հոգին [հետզհետե] ելնում են: Լաց են լինում նրա վրա, սակայն փույթ չէ նրա համար, որովհետև սպասում է հրեշտակը, և նա դողում է նրա կերպարանքից. կորցնում է իր քաղցրությունը, իրեն ցանկալի բաներն [այլևս] ախորժելի չեն, քրտինքի շիթեր է հորդեցնում, ահեղակերպ [տեսիլներից] այլակերպվում են նրա աչքերը, դեղնում նրա դույնը: Գալարվում և ճմլվում են ընտանիքի անդամների սրտերն ու աղիները նրա համար, բայց չեն կարողանում օգնել, որովհետև հետ չի կանգնելու [հոգին] պահանջողը: Մորմոքում են նրա համար, բայց ամեն ինչ անօգուտ է, որովհետև ճար չկա այդ ժամին, և անողորմ է այդ պահը. նա կարկամած դրված է շատերի առջև. չունչը՝ կենդանի, բայց տեսքը՝ մեռյալի:

Որդյա՛կ, ահա այս ամենը կրում են մեր առջև, և մենք դա ոչինչ չենք համարում. միմյանցից գողանում ենք, միմյանց զրկում և բամբասում: Այս ամենը տեսնելով՝ [այս աշխարհում] մեզ անմահ ու հավիտենական չկարծենք և Աստծո պատվիրանը հարկադրանք չհամարենք, այլ մարդկանց առջև սակավ առ սակավ կատարենք, որպեսզի նրանցից չպախարակվենք և Աստծուց չտանջվենք՝ հետ կանգնելով Նրա սուրբ պատվիրաններից, որոնք ավանդվեցին մեզ փրկության և լուսավորության համար: Որովհետև [Սուրբ] Գիրքն արդարի մասին, որն ընկնում է մեղքի մեջ, [ասում է]. «Դարձի՛ր, աղոթի՛ր ու զղջա՛ և կվերականգնես քո նախկին պատիվը» (հմմտ. Սիրաք ԺԷ 21-28, Եսայի Ա 16-18, Եզեկ ԺԸ 21-23, 32), **ինչպես տեսանք Դավիթ մարգարեի [օրինակով], ով սաստիկ ցանկության մեջ ընկավ և ազատվեց ապաշխարության ջերմեռանդ արտասուքով** (տե՛ս Բ Թագ. ԺԱ-ԺԲ 13, Սաղմ. Ծ), **և դրանից հետո ամբողջական պահվեցին [նրա] թագավորությունն ու մարգա-**

բեական [շնորհը]: Աչքով մեղանչեց ու շնացավ, իսկ լեզվով քավեց ու փրկվեց, քանզի խոստովանեց և հետ չդարձավ առաջին փսխածին ու չպղծվեց (հմմտ. Առակ. Ի.Զ 11):

Անկեղծ խոստովանությունը աղտեղությունը պայծառացնում է ինչպես ոսկի: Առանց ապաշխարության խոստովանությունից սատանան զորանում է: Խոստովանությունը զղջման դուռ է, ապաշխարության մայր, արդարության գլուխ, մեղքերի պարտություն ու կործանում: Խոստովանությունն ապաշխարության առիթ է, ընկածներ կանգնում և հենվողների համար՝ գավազան: Խոստովանությունը սրբում է մեղքերը, մաքրում անմաքուրներին: Խոստովանությունը փրկում է ահավոր գեհենից և բացում դրախտի դուռը: Խոստովանությունը բացում է երկինքը և մտցնում Աստծո մոտ: Խոստովանությունն ապաշխարողներին հրավիրում է և մոլորվածներին հետ բերում: Խոստովանությունը մոլորվածների համար ճանապարհ է և խավարածների համար՝ լույս: Խոստովանությունը գայթակղվածների ապավենն է և հնազանդվողների համբերությունը: Խոստովանությունը սաղմոսներով խոսք է Աստծո հետ և հոգիների համարձակություն: Քանզի մեծ և հրաշալի է խոստովանության խորհուրդը, որովհետև սուրբ Ավետարանում գրված է, որ նա, ով խոստովանեց՝ արդարացավ, ով խոստովանեց՝ կենդանացավ, ով խոստովանեց՝ մկրտվեց, ով խոստովանեց՝ Եկեղեցուն արժանացավ, ով խոստովանեց՝ զղջաց, ով խոստովանեց՝ մաքրվեց մեղքերի աղտից, ով խոստովանեց՝ նմանվեց Եկեղեցուն, ով խոստովանեց՝ ցնծությամբ Աստծո եկեղեցի մտնելուն արժանացավ, ով եկեղեցու դռանը խոստովանեց՝ մաքրվեց մեղքերից և հոգով զորացավ, ով խոստովանեց՝ արժանի դարձավ Տիրոջ կենարար Մարմնին ու Արյանը հաղորդվելուն: Խոստովանողի աղոթքը Սուրբ Հոգով է լցված, խոստովանողն իր հանցանքները մաքրում է, որպեսզի մաքրվելով Աստծո Որդի կոչվի: Խոստովանողի հոգին արեգակի պես պայծառ է, նրա վարձքն Աստծո եկեղեցում Աբրահամի և Իսահակի հետ է, նրա ընծաները չեն արհամարհվի, այլ սուրբ կկոչվեն և օրհնված կլինեն: Խոստովանողի հիմքը հաստատուն կլինի, խոստովանողի հույսն Աստված է: Խոստովանությունն ամաչեցնում է թշնամուն՝ սատանային: Խոստովանությունը հրեշտակների բնակարան է, երկնավորների զարդ և քերովբեների պատիվ:

Խոստովանեցե՛ք, [գոնե] քառասուն օրը մեկ հաղորդվեցե՛ք[1] *և Աստծո տաճար ու Սուրբ Հոգու օթևան կկոչվեք: Խոստովանողի մահվան օրը հրեշտակները պատրաստ սպասում են, հազարավորներ ու բյուրավորներ սպասարկում են նրա հոգուն: Խոստովանողը հանդերձյալ կյանքում Աստծուց կյանքի ջուր է խմում և մահվանից դեպի կյանք փոխվում,*

[1] Բնագրում՝ «քառասնէ ի քառասուն հաղորդեցէք»: Հատկանշական է, որ մեր եկեղեցում հաղորդվելուն «չափ ու քանակ» չի սահմանվել (այլ է՝ երբ կարելի է հաղորդվել, և երբ՝ ոչ), այս է վկայում Հովհան Մանդակունին իր «Վասն ի խորհուրդն մերձենալոյ» ճառում. «Զէ ինչ յանդգնութիւն սուրբ սրտիւ բազում անգամ մերձենալ, զի առաւել ևս կեցուցանես և նորոգես զոգիդ. իսկ անարժանութեամբ և խղճիւ թէ յամենայն ժամանակս կենաց քոց մի անգամ մերձեսցիս, կորուսեր զոգիդ» (Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք, ի Վենետիկ, 1860, էջ 170):

Այլև, շարունակելով իր ճառը, խոսքն ուղղում է երկար ժամանակ չհաղորդվածներին. «Եւ արդ զայս ամենայն իմացեալ մի՛ արժանաւորութեամբ հեռասցուք ի սուրբ խորհրդոյն յերկար ինչ ժամանակս, և մի՛ անարժանութեամբ յանդգնեալ հպեսցուք յահեղ խորհուրդն սրբութեան, զի պատիժք ահեղք անարժանիցն մնան...» (նույնը՝ էջ 173):

Արշակ Տեր-Միքելյանը, «Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու քրիստոնէական»-ում խոսելով Հաղորդության խորհրդի մասին, նկատի ունենալով Հովհան Մանդակունու վերոհիշյալ ճառը, ասում է. «Սուրբ հայրապետն ասում է, որ ոչ թե միայն քառասունքը պահելով պէտք է հաղորդուիլ Զատկին և պատճառել, թէ անկարող ենք պատրաստ պահել անձը և հաղորդուիլ, այլ պէտք է տարուայ մէջ քանիցս հաղորդուիլ (Ծննդին, Զատկին, Ս. Խաչի տօնին) և աշխատել սուրբ կենալ: Ի՞նչ օգուտ է մի օր բժշկուիլ և ապա հիւանդանալ...» (Տփխիս, 1900, էջ 430):

Նկատի ունենալով այս ամենը, քանի որ չի սահմանվել, թե քանիցս հաղորդվել, եկեղեցին այսօր ևս ասում է. «Տարվա մեջ գոնե այդ օրերին (Ծննդին, Զատկին, Ս. Խաչի տոնին) հաղորդվեք», ուստի հարկ համարեցինք «քառասնէ ի քառասուն հաղորդեցէք»-ը թարգմանել՝ «[գոնե] քառասուն օրը մեկ հաղորդվեցեք»:

որովհետև նրա վրա լույս է ծագում: Ըստ կարգի՝ խոստովանողը հրեշտակների դասերում է, լուսեղեն խորաններում և սրբության մեջ է հանգստանում, որովհետև հոգին մարմնից ելնում է, «ինչպես փեսան, որ ելնում է իր առագաստից» (Սաղմ. ԺԸ 6), և հաղորդություն ունի Աստծո փառքի հետ: Խոստովանության միջոցով բացվում են երկնքի դռները, և [խոստովանողները] առաջին օթևաններին են հասնում, հրեշտակների գնդերը նախ ընկերակից [հրեշտակին] են փառավորում, ապա հոգուն՝ համագո Աստվածության հետ: Երանի՜ խոստովանողին, ով սա գտնում է: Երկրորդ աստիճանում փայլում են հրեշտակների զորքերն իբրև վայելուչ այգի և ի պատիվ հոգու՝ նրա աջ կողմում են երևում: Արդարը ցնծում է, ինչպես թագավորը, որն իր առջև խփված վրան ունի՝ ամեն տեսակ բարիքներով լցված սեղանով:

Ո՜վ խոստովանություն, որ արժանացրիր ինձ Աստծուն տեսնելուն: Շատ մեծ է խոստովանողի պատիվը: Խոստովանությունը փակված աղբյուր է, խոստովանությունը կենդանության ջուր է, խոստովանությունն անմահության աղբյուր է: Խոստովանությունը քաղցածներին հաց է և ծարավածներին՝ ջուր: Խոստովանությունը մեղքերի աղտեղությունը սրբող է, անմաքուրներին մաքրող, տանջանքներից ազատող, ահավոր գեհենից փրկող և դրախտի դռները բացող: Խոստովանությունը բացում է երկինքը և Տիրոջ առջև մտցնում, ապաշխարողներին հավաքում, մեղքերից հրավիրում ապաշխարության, մոլորյալներին կանչում և դեպի երկնային քաղաքն առաջնորդում: Խոստովանությունը մոլորվածների առաջնորդն է, խավարածներին՝ լույս, մեգի մեջ եղողներին՝ ճառագայթ, մանուկների դաստիարակ և անհույսների համար լույս օրինակ: Խոստովանությունը եկեղեցու զարդ է, քահանաների քարոզ, սպասավորների պսակ, հարսանքավորների զգեստ ու հարսանիքի մուտքը բացող: Խոստովանությունը

կենդանությունը լրման է բերում, խոստովանությունը մահվան դռնից փրկում է, աստվածային սեղանին հրավիրում, Տիրոջ Մարմնով կերակրում, պատվական Արյունը խմեցնում և տրտմածներին ուրախացնում: Խոստովանությունն ապաշխարության դուռ է, հանցանքների քավիչ և իրեն ընդունողներին մաքրագործող, թագավորներին պիտանի, աղքատների կողմից ընդունելի: Խոստովանությունն ազգի մեծամեծների համար լույս է, իշխանների պատսպարան, պառնիկների քավարան և ավազակների պաշտպան: Խոստովանությունը հավաքում է մեղավոր մարդկանց, քաղցր գործեր է վաստակում, դառնությունը քաղցրացնում և բոլոր առաքինությունները զարդարում:

Արդ, ինչպե՞ս գովեմ խոստովանությունը, որովհետև որտեղ հանցանք կա, առանց սրա չեն ազատվում. թեկուզ բյուրապատիկ առաքինություններ գործեն, միևնույն է, ոչինչ չեն շահի. և ինչպես ինձ է թվում, չկա մեկը, ով մեղքեր չունենա, իսկ առանց խոստովանության մեղքերը չեն քավվում՝ թե՛ մեծ և թե՛ փոքր: Լսի՛ր, թե ինչ է ասում Որոտման որդին. «Եթե ասում ենք՝ «Մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում, և ճշմարտություն չկա մեր մեջ: Իսկ եթե խոստովանում ենք մեր մեղքերը, հավատարիմ է Նա և արդար՝ մեր մեղքերը ներելու և անօրենությունները մաքրելու համար» (Ա Հովհ. Ա 8-9): *Նաև Հակոբոսն է ասում.* «Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք, որպեսզի բժշկվեք» (Հակոբ Ե 16): *Խոստովանությունը հոգու մխիթարությունն է, ինչը կտեսնեն ննջեցյալները և կուրախանան ութերորդ օրը*[2], *հոգիները կիմանան և [Նրա]*

[2] «Ըստ ս. Գրիգոր Աստվածաբանի՝ յոթը խորհրդանշում է այս կյանքի յոթը դարերը, իսկ ութերորդը՝ հանդերձյալ կյանքի անվախճան Օրը» (տե՛ս սուրբ Գրիգոր Տաթևացի, Քարոզ Սուրբ Հոգու գալստեան մասին, Երևան, 1995, էջ 2): Ըստ եկեղեցու որոշ հայրերի՝ աշխարհի արարումից մինչև աշխարհի վերջը՝ Տիրոջ երկրորդ գալուստը, կազմում է 6 ժամանակաշրջան (դար, դարագլուխ, երբեմն՝ ինչպես այստեղ՝ օր): Յոթերորդ ժամանակաշրջանը կամ օրը մեռյալներինն է, իսկ ութերորդը՝ հարուցյալներինը (տե՛ս Գ. Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, ՌՃՀԸ (1729) թ., էջ 467):

առաջ ուրախությամբ կփայլեն, երկնավորները կօրհնեն երկրավորներին և խոստովանության միջոցով կբացվեն լուսեղեն դռները: Խոստովանողներն ու հաղորդվողները երանելի են և Քրիստոս արքայի հարսն ու փեսան:

Ո՛վ խոստովանություն, որ ինձ արժանի դարձրիր Քրիստոսին տեսնելու, որովհետև տեսա ահեղ Փառքի խորհուրդը և ահավոր Հոգին, քանզի կարողանում էի տեսնել Աստծուն, իսկ երկնային հրեշտակներն ասում էին. «Մի՛, երկնչիր, որովհետև խոստովանության միջոցով Աստծո որդի կոչվեցիր»: Խոստովանողն արժանի է դառնում Աստծուն տեսնելու, Ով սերովբեների համար անտեսանելի է:

Ո՛վ խոստովանություն և ողորմություն, որ պայծառ եք, ինչպես արեգակը: Խոստովանությունը մարդու համար գեղեցկություն է և զարդ: Խոստովանությունն անթառամ պսակ է: Խոստովանողը հրեշտակների նման է դառնում և միավորվում Սուրբ Հոգու հետ: Ով խոստովանեց, նա արդարացավ, [ինչպես որ] Քրիստոսն ասաց. «Նա Իմ մեջ կբնակվի, և Ես՝ Նրա մեջ» (Հովհ. Զ 57): Ով խոստովանում է, հավտյանս կենդանի կմնա: Ով խոստովանում է, դատապարտության դատաստան չի տեսնի: Ով խոստովանում է, անանց հուրը նրան չի այրի: Ով խոստովանում է, անքուն որդերը նրան չեն ուտի, և անողորմ հրեշտակները նրան չեն տանջի, այլ Սուրբ Հոգով զարդարված ու փառավորված է և անբաժանելի Սուրբ Երրորդության հետ միավորված: Հրեշտակներն օրհնում են խոստովանողին, որովհետև նա Աստծո որդի կոչվեց:

Ո՛վ խոստովանություն, որ վերին Սիոնում լուսեղեն տաճար ունես, ուր բազմած է Սուրբ Երրորդությունը, և [որտեղ] խոստովանողը լուսեղեն խորան ունի: Խոստովանությունը խորտակում է սատանային, խոստովանությունը դաշտերի պահապան է, ամպերի բարձրանալու ժամանակ՝ քամու փչում: Խոստովանությունն աղաչանքների հույս է:

Խոստովանությունը քաղցր ցող, ցորեն, գինի և լիություն է տալիս մարդկանց:

Որդինե՛ր և ժողովուրդ, նայեք և տեսե՛ք խոստովանության խորհուրդը և ողորմե՛ք ձեր հոգիներին: Անհնարին է, որ մարդը տանջանքներից ազատվի կամ իր մեղքերին թողություն գտնի առանց խոստովանության: Եվ մենք գիտենք մեր ննջեցյալներին, որ խոստովանությամբ և ապաշխարությամբ հեռացան այս աշխարհից, ուստի պետք է մշտապես նրանց հիշատակը կատարենք, աղքատներին հանապազ ողորմություն տալու և սուրբ Պատարագի միջոցով հաշտեցնենք բարեգութ Աստծուն՝ գթածին ու ողորմածին, անոխակալին ու բարեգութին, երկայնամիտին ու մարդասերին, բոլոր մարդկանց հանցանքները ներողին, երբ ողորմություն են հայցում Ողորմածից. որովհետև այստե՛ղ պետք է հառաչել ու լալ, աղաչել ու մեղքերի թողություն խնդրել մեր և օտարների համար և վերջին օրը մեր Քրիստոս Աստծուց մեր մեղքերի համար քավություն ստանալ:

Ո՛վ որդյակներ, մի՛ ոտնահարեք Աստծո պատվիրանները, որոնք ես՝ ծերս ու ալեհերս, պատվիրում եմ ձեզ. հանուն Աստծո ճշմարտությա՛մբ ապրեք քրիստոնեական հավատքը և մնացեք Քրիստոս Աստծո սիրո մեջ, մի՛ հապաղեք խոստովանել ձեր մեղքերը և [ձեր] հանցանքների համար թողություն խնդրել, քանզի մոտեցել է մեր Քրիստոս Աստծո գալուստը:

Նրան փա՛ռք հավիտյանս. ամեն:

ԴԱՐՁՅԱԼ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆՆ ԱՍՈՒՄ Է

Խոստովանությունը հաստատվել է Հին [Ուխտի] ժամանակ, իսկ Նոր Ուխտում խոստովանությունը փառավորյալ խորհուրդ է կոչվում: Բոլոր եբրայեցիներն ուսյալ էին, ինչպես մարգարեն է ասում. «Ամեն մեկն իր եղբորը չի ասելու, թե՝ «ճանաչիր Տիրոջը», քանզի ամենքը՝ նրանց փոքրերից մինչև մեծերը, ճանաչելու են Ինձ» (Երեմ. ԼԱ 34), որովհետև բոլորը գիտեին Օրենքի պատվիրանները: Բոլոր հանցանքների համար մեկ առ մեկ՝ հորթերով, նոխազներով զոհեր էին սահմանված, որովհետև ով մեղք էր գործում, դրա [համապատասխան] զոհն էր մատուցում տաճարում (տե՛ս Ղևտ. Դ-Է): Զոհերը քահանայի միջոցով էին մատուցվում, և մեղանչածը քավություն էր ստանում: Իսկ նա, ով զոհ չէր մատուցում տաճարում, հայտնապես խայտառակվում էր: Ահարոնը վկասակիր պատմուճան հագած քահանայապետ էր, որի պատմուճանի վրա տասներկու ցեղերի անուններով տասներկու ակնաքարեր կային. և որ ցեղից որ թաքցնում էին մեղքերի զոհը և չէին տանում տաճար, քահանայապետի պատմուճանի վրայի համապատասխան ակնաքարը խամրում էր: Եվ ժողովելով այդ ցեղին՝ ջուր էին մատուցում իբրև հանդիմանություն, իսկ մեղապարտներին կրակով այրում էին: Իսկ ինչո՞ւ տաճարում բոլո՛ր չէին քահանայի միջոցով զոհ մատուցում: Որովհետև ամենքն ուսյալ էին, և հորթի ու նոխազի [մատուցումը] նրանց մեղքերն էի հայտնում, այդ պատճառով ամաչում էին [զոհ մատուցելուց], և հետո, երբ Աստված հանդիմանում էր փորձանքներով, հայտնապես աղաղակում էին: Իսկ ովքեր [զոհը] մատուցում էին, չուտափույթ կերպով փրկություն էին ընդունում: Մշտիկը թաթախում էին արյան մեջ և [դրանով] ցողում մեղավորին (հմմտ. Սաղմ. Ծ 9, Եբր. Թ 19), նույնպես և կրակով այրված փորոտիքն էին սրսկում մեղավորի վրա (տե՛ս Թվեր ԺԹ 1-10):

Արարիչը, տեսնելով ժողովրդի՝ [Օրենքի հետ կապված] տարակուսանքները, մարդասիրությունից առաջնորդվելով, եկավ, որպեսզի վերացնի Օրենքի ծանրությունը՝ համաձայն կանխասաց մարգարեի խոսքի, ուր ասվում է, թե բնավ պիտանի չէ մեղքերի համար [մատուցված] զոհը (տե՛ս Սաղմ. ԼԹ 7 ևն): Նախկինում առանց արյան հեղման թողություն չէր լինում մեղավորներին, իսկ այժմ [Տերը] հրամայեց խոստովանել հանցանքները քահանային և քահանաներին [թողություն տալու] իշխանություն տվեց. «Ինչ որ մի անգամ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում» (հմմտ. Մատթ. ԺԶ 19), **որովհետև՝** «Երկինք ու երկիր պիտի անցնեն, բայց Իմ խոսքերը պիտի չանցնեն» (Մատթ. ԻԴ 35): Քանզի խոստովանությունն արքայության դուռն է:

Արդ, մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, որ այս ամբողջ փրկությունը հրաշագործեց, մեզ Իր Աստվածության համար բնակարան ու տաճար դարձրեց և խոստացավ մեզ հետ լինել մեր կյանքի բոլոր օրերում, նույն Ինքը՝ Տեր Աստված, բոլոր սրբերի բարեխոսությամբ ու աղոթքներով, Իր ծնողի՝ սուրբ Կույսի հայցմամբ, Քրիստոսի նախավկա սուրբ Ստեփանոսի արյան հեղմամբ, մեծ Կարապետի՝ Հովհաննես Մկրտչի խնդրվածքներով ու աղոթքներով, սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Քրիստոսի վկայի հառաջմամբ, սուրբ առաքյալների, մարգարեների, բոլոր մարտիրոսների և համընդհանուր սրբերի աղոթքներով թող ամբողջ աշխարհին խաղաղություն տա, քահանաներին՝ ուղղափառություն և անդորրություն՝ [Քրիստոսի] հոտը հոգևոր սիրով հովվելու համար, և թող [շնորհի] Դատաստանի ահեղ ու մեծ օրը պարզերես համարձակությամբ ու զվարթաղեմ կանգնել Քրիստոս հովվապե-

տի առջև: Թող Տեր Աստված հավատացյալ թագավորներին պարգևի պատերազմների մեջ հաղթություն, բոլորի նկատմամբ խնամակալություն, հակառակորդների սրտերում ահ ու երկյուղ [դնի], թագավորների սուսերները զորացնի նրանց թշնամիների թիկունքների վրա և մեր իշխաններին էլ թող քաջություն [տա], զորություն և հայրական գութ ու սեր իրենց իշխանական վիճակի և հպատակների նկատմամբ:

Թող դաշտերին պտղաբերություն, քաղցր ցող, բույսերին ու ծառերին բերքառատություն առաքի, թող Իր ամրածածուկ աջով պատսպարի [մեզ] բոլոր փորձություններից, և մեր Տեր Աստծուց թող բոլոր ննջեցյալների մեղքերին ու հանցանքներին թողություն լինի, իսկ մեզ՝ մեղավորներիս էլ՝ ողորմություն:

Նրան փա՜ռք հավիտյանս. ամեն:

Արդ, ո՛վ եղբայրներ, ըստ Փրկչի հրամանի՝ ամենքդ փութացե՛ք խոստովանել ձեր մեղքերը, ապաշխարել և թողության [խոսքեր] լսել քահանայի բերանից, որպեսզի Քրիստոսի ահավոր ատյանի առջև արձակված լինեք [ձեր մեղքերի] կապանքներից: Մի՛ նայեք քահանային իբրև լոկ մարդու, այլ իբրև Աստծո հրեշտակի, որովհետև նա է Տերունական խորհրդի ու Աստծո ահավոր սեղանի սպասավորը, Աստծո և մարդկանց միջև միջնորդը՝ խոստովանության միջոցով [մարդկանց] Աստծո հետ հաշտեցնելու համար: Որովհետև Աստծուց օտարացածներին քահանան է մոտեցնում, ինչպես որ անառակ որդին, դեմ-հանդիման կանգնելով, հառաչանքով ընկնում է հոր ոտքերը և ասում. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի և քո առջև» (Ղուկ. ԺԵ 21), և հայրը ծնողական անհիշաչարությամբ ընդունում է նրան, գորովալից սիրով համբուրում և չի հիշում նրա ապերախտությունը, այլ մատանի է դնում նրա մատը, կոշիկ [հագցնում] նրա ոտքերին և կերակրում նրան Տերունական սեղանի վրա գտնվող անմահական Հացով ու

կենարար Բաժակով: Դա է այն, որ կոչվում է պարարտ եզ և անարատ գառ՝ միշտ մորթված և կենդանի այսինքն՝ դա Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունն է:

Ո՛վ եղբայրներ, լսեք և մտապահե՛ք ձեր մահվան ահավոր ու սոսկալի օրը: Մինչև ցավերի նեղելը, երբ այդ օրը [մարդիկ] քնած են լինում, զրկվում են Աստծո պարգևներից, որովհետև ամեն օր, երբ արեգակը մայր է մտնում, հրեշտակը երկրից երկինք է գնում և Աստվածության առջև տանում մարդու աղոթքները, դրանք սփռում և ասում. «Տե՛ր, ժառանգը, որին Դու ստեղծեցիր ըստ Քո պատկերի և նմանության, ահա իբրև անասուն ընկած է իր անկողնու վրա, բերան ունի և չի խոսում, շրթունք ունի և չի բարբառում և փառք չի տալիս Քո սուրբ անվանը»: Արդ, *«Երանի՛ այն ծառային, որին Տերը, երբ գա, արթուն կգտնի. ճշմարիտ եմ ասում ձեզ, նրան իր բոլոր ինչքերի վրա [վերակացու] կկարգի» (հմմտ. Մատթ. ԻԴ 46-47, Ղուկ. ԺԲ 43-44, 38):*

ԴԱՐՁՅԱԼ ՔԱՐՈԶ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՆ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՑ

Դարձյալ մի այլ քարոզ և պատվեր՝ Վարդան վարդապետից [ուղղված] Աստծո ծառաներիդ, քահանաներիդ և Աստծո ընտրյալ հոտիդ, որին Իր արյունով գնեց Քրիստոսը, այժմ ապրողներիդ և մինչև ժամանակների լրումն աշխարհ եկողներիդ: Ցանկանում եմ տեսնել ձեզ, բայց չեմ կարողանում՝ գերեզմանում հող լինելուս պատճառով, այնուամենայնիվ հոգով ձեր մեջ եմ, և այս գրվածքով խոսում եմ ձեզ հետ՝ մինչև յոթերորդ-ութերորդ սերնդի ծնվածներիդ հետ: Դուք էլ աղաչեք Աստծուն ինձ համար, որ [Դատաստանի] ահավոր օրը արժանի լինեմ ձեզ ուրա-

խությամբ տեսնելու Քրիստոս դատավորի առջև: Եվ դարձյալ՝ գերեզմանում հող դարձած ոսկորներովս աղաչում եմ ձեզ, Աստծո ճշմարի՛տ ծառաներ, և խնդրում Աստծո Որդու արյան համար, մի՛ անտեսեք իմ աղաչանքները, որովհետև [դա] ձեզ համար շատ հեշտ է, իսկ ինձ համար անեզրական շահ և մեծ երախտիք: Եվ խնդրանքս այս է. [թող] քահանան ի սեր Աստծո հիշի իմ անունը սոսկալի և մեղսաքավիչ աղոթքների մեջ և անմահ Գառին՝ Հիսուս Քրիստոսին պատարագելու ժամանակ, իսկ [որևէ] մարդ իմ անունից Աստծուն մի քիչ ողորմություն տա ինձ համար՝ աղքատների և խեղվածների միջոցով, որպեսզի չամաչեմ ահավոր ու մեծ աշխարհաժողով ատյանում և չբոցակիզվեմ անշեջ գեհենում կամ էլ անքուն որդեր կոչվող հրեղեն վիշապների ժանիքների մեջ, որոնց բերանից կրակի գետ է հոսում իմ չար և անօրեն գործերի պատճառով, որոնցով մեղանչեցի Աստծո և նրա հրեշտակների առաջ, գիտությամբ և կամովին, ինչն այժմ խոստովանում եմ ձեր և Աստծո առաջ:

Արդ, ամենքի բարի Հայրը էակից և ծոցածին Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի արյամբ ու չարչարանքներով, մահվամբ ու հարությամբ թող ջնջի մեղքերը նրա, ով մեղքերով լցված և դառնացած հոգուս կարժանացնի հիշվելու, [այլև] նրա ծնողների ու ազգականների մեղքերը և չար աշխարհից թող փրկի նրանց, որովհետև հաղթվեցի փառասիրությունից և Միակի փառքը չփնտրեցի, գովվեցի աշխարհից և ծաղրվում եմ Քրիստոսի ատյանում:

Նրան փա՛ռք հավիտյանս. ամեն:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ԶՐԿԱՆՔ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դարձյալ պատրաստ և զգա՛ստ եղեք, փախե՛ք ամեն կարգի զրկանք պատճառելուց, առավել ևս գողությունից, որովհետև սատանան գող և զրկող կոչվեց, Աքարն (տե՛ս Հեսու Է 1) ու Գեեզին (տե՛ս Դ Թագ. Ե 20-27) գող կոչվեցին, Հուդան՝ նույնպես (տե՛ս Հովհ. ԺԲ 6), այդ պատճառով էլ բոլոր գողերն ու զրկողները նրանց հետ պիտի դատապարտվեն և անզերծանելի հուրն ուղարկվեն:

Վա՜յ մեզ՝ ողորմելիներիս, ո՛վ իմ որդյակներ և դուստրեր, որովհետև բոլոր մեղքերի և չար գործերի համար Աստծո սրբերի կողմից ապաշխարության կարգ սահմանվեց, բայց զրկողների համար բնավ կարգ կամ ապաշխարություն չսահմանվեց, այլ պետք է գողացվածը վերադարձնեն նրան, ումից վերցրել են, կամ էլ մեկի դիմաց չորսը հատուցեն. այս է զրկողների կարգն ու ապաշխարությունը, ինչպես որ Զակքեոսն ասաց մեր Տեր Հիսուս Քրիստոսին. «Եթե որևէ մեկին զրկել եմ, քառապատիկը կհատուցեմ» (Ղուկ. ԺԹ 8):

Եվ երբ Գրիգոր Աստվածաբանի մոտ հարուստ մարդիկ գալիս էին մկրտվելու, նա ասում էր նրանց. «Նախ ձեր տներից հանե՛ք ձեր պատճառած զրկանքների արդյունքները, ապա՛ եկեք մկրտվելու, այլապես եթե մկրտվեք և վերադառնաք, ձեր տներում կենդանի կգտնեք ձեր մեղքերն ու պատճառած զրկանքների արդյունքները, որոնք սուրբ Ավազանը չքավեց»:

Տեսեք նզովքի ենթակա անօրենության շահը, որովհետև մոլոր ախտով անամոթացած՝ հարուստին աղքատացնում է, իսկ աղքատին մերկացնում, արցունքներից դրամ ժողովում և ցնծում անօրեն շահի բազմապատկվելուց:

Ո՛վ անօրէն չար վաշխ, որը մահվան որոգայթ է ստացողների համար, որովհետև վաշխը չար օձի վարդապետությունն է: Վաշխը դևերի գյուտն է, թշնամու սերմը, տանջանքների առհավատչյա, գեհենի ճանապարհ, այն զրկում է արքայությունից և մարմնի ապականիչն ու հոգու սպանիչն է: Արդ, փախե՛ք այս աստվածամարտ ախտից, խավար ուսուցչից, մարդասպան մորից: Վա՜յ նրան, ով իր դրամը տոկոսով է տալիս և իր մեղքերի վրա մեղքեր կուտակում, որովհետև տոկոսն իբրև օձ փաթաթվում է նրան և նրա որդիներին, մինչև նրանց չորրորդ և հինգերորդ սերունդները, և նրա բաժինն ու ժառանգությունը սատանայի հետ է պատրաստված:

Վա՜յ նրան, ով կտրում է մշակի վարձը կամ զրկում որբին ու տնանկին, որպես դատաստանի արդյունք՝ նրա բաժինը դժոխքն է և աղջամղջային խավարը: Վա՜յ նաև նրանց, ովքեր թանկ են վաճառում և մեղանչում չափ ու կշռի մեջ, և ովքեր կաթին ու գինուն ջուր են խառնում ու ծախում. գեհենի հուրն է նրանց բնակության և հանգրվանի վայրը: Այդ պատճառով էլ աղաչում եմ, պատրաստ և զգո՛ւյշ եղեք մեծ ու փոքր զրկանքներ պատճառելուց, որպեսզի մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ ժառանգեք անանց բարիքներն ու երկնային արքայությունը: Քանզի անթիվ և անհամար է զրկողների ցեղը երկրի վրա՝ մեծամեծների և փոքրերի, որովհետև ով աղքատ է, զրկում է իր կարողության չափով և նենգում ընկերոջն ու իշխանին՝ չզղջալով իր գործերի համար. իսկ եթե նա մեծության է հասնում, [դառնում է] աշխարհի ավերման ու խռովության [պատճառ]: Ահա շատ աղքատներ գող, զրկող և փողասեր են կոչվում, որովհետև կամք ու ցանկություն ունեն [այդպիսին լինելու], տքնում են, սակայն, չեն կարողանում, և չի պատահում այն, ինչը կամենում են: Իսկ շատ մեծամեծներ և հարուստներ չեն անվանվում ագահ և փողասեր, որովհետև մշտապես փախչում են զրկանքներ պատճառելուց, ագահությունից և գողությունից՝ լինելով կարեկից, ողորմած, իրավադատ, ինչպես Աբրահամը, Հոբը և շատ ու շատ ուրիշներ, ովքեր գովվեցին բոլորի լեզուներով և երկու կյանքով էլ փառավորվեցին, որոնց նաև մենք մեր Աստծով լինենք նախանձավոր, որովհետև Աստծո համար ամեն ինչ հնարավոր է:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ԿԱԽԱՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսուհետև փախե՛ք կախարդությունից, ո՛վ իմ որդյակներ, որովհետև ամեն կախարդ սատանայի սիրտն ու հոգին է և ձեռքի գրով ուրացել է Աստծուն ու ծածկաբար պաշտում է սատանային, քանի որ այս է կախարդների սովորությունը: Եվ ամեն հեշտասեր կախարդ է անվանվում, որովհետև խաբված է [Սուրբ] Գրքերը չգիտի, գնում է այնտեղ ուր կախարդություններ են անում, և խաբվում նրանց առասպելաբանությունից, որովհետև [նրանք] պարծենում են դիվային հպարտությամբ ու ասում. «Աստծով և Նրա բոլոր սրբերով են մեր գործերն ու հրաշքները», և սրբերի անուններով էլ կոչում են դևերին: Եվ սատանային են որդեգրում նրան, ով իրենց մոտ է գալիս: Իսկ ով հավատում է նրանց սուտ ու խաբող խոսքերին և որևէ թուղթ, դեղ, ծրար կամ կախարդության հանգույցներ վերցնում թե՛ հարցուկից, թե՛ հմայողից, թե՛ աստղագուշակից, թե՛ վիճակ գցողից և թե՛ հատիկներով գուշակողից, և դրանք կապում իր վրա՝ օգնության ու փրկության համար, նա սատանային և դևերին է կապում իր անձին և օտարանում Քրիստոսից, Նրա Հոգուց և Հայրական շնորհից: Եթե քահանան է սա անում,

թող երբեք չհամարձակվի Քրիստոսին պատարագել, ինչպես որ գրեցին և նզովեցին Նիկիայում հավաքված սուրբ հայրերը:

Իսկ եթե աշխարհականներն են սա անում, ապա նրանք Աստծուն ուրացող են և դևերին խոստովանող, ինչ պատճառով էլ դևերը երազներով խաբում, ուրախացնում կամ էլ զարհուրեցնում են նրանց:

Բայց եթե առ Աստված դարձի է գալիս, թող քահանան նրան տանի եկեղեցու դռան կամ էլ խաչի առաջ և առանց մկրտելու միայն հրաժարեցնի սատանայից, և նա նորից դավանի Աստվածությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Եվ այսպես պետք է վարվել յուրաքանչյուր մարդու հետ, ով մեծամեծ մեղքեր է գործում՝ սպանություն, ուրացություն, անասնապղծություն, որն ավելի չար է, քան տղամարդու հետ հարաբերվելը՝ սոդոմացու գործը: [Այսպես պետք է վարվել նաև] շնացողի հետ, որ ծածուկ շնանում է, և պոռնիկի, որ հանդգնությամբ պոռնկանում է, քանի որ ծածուկ մեղքը շնություն է կոչվում, իսկ այն անամոթը, որ հանդգնում ու հայտնապես է չարություն գործում, պոռնիկ է և այդպես էլ կոչվում է, այսինքն՝ չար է, լիրբ և Աստծուն հակառակ: Քանզի այդ մեծամեծ մեղքերը զրկում են մեզ սուրբ Ավազանի լույսից և լուսեղեն պատմուճանից՝ հեռացնելով Աստծուց և մոտեցնելով սատանային:

Ո՜վ իմ որդյակներ, սրա համար էլ պետք է [մարդկանց] հրաժարեցնել սատանայից և նորից դավանել տալ Աստծուն: Սակայն այս մեծ բարին մոռացան և չեն անում քահանաները ու գիտունները: Նաև նա, ով աստղերով ծննդաբանում, բախտ ու ճակատագիր է ասում, ստուգապես կախարդի հետ գեհենի մեջ կայրվի, ինչպես նաև նա, ով լուսնով օրը բարի կամ չար է ասում, լեզվակապ անում, տղամարդուն ու կնոջը կապում, այլև նա, ով դիվաշունչ թարախագործ փաթեթներ, երազատու ձեռնածություն և հատընկեցություն է անում: Սրանցից թող փրկի ձեզ Քրիստոսը, և Սուրբ Հոգին թող ձեզ իմաստություն տա, որ ամեն բան հանուն Հիսուս Քրիստոսի անեք: Ինչպես որ ասում է Պողոս առաքյալը, *«հինն անցավ»*, որը դիվաշունչ էր, *«և ամեն ինչ նոր եղավ»* Քրիստոսով և Նրա Հոգով *(Բ Կորնթ. Ե 17)*:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ԼԵԶՎԱՆԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԶԳԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այսուհետև սանձելով կապե՛ք ձեր բերանները, ի՛մ որդյակներ, որ տղամարդկանց դասից եք, և դո՛ւք, իմ դուստրեր, որ կանանց դասից եք, և ձեր լեզուն, որ ձեր մարմնի մեջ փոքր անդամ է, բայց պատառող է, արյունարբու և ավելի չար գազան, քան առյուծն ու վիշապը:

Այդ պատճառով էլ սուրբ Հակոբոս առաքյալն ասում է. *«Ով չի սանձահարում իր լեզուն, զուր է նրա քրիստոնյա լինելը, և անօգուտ ու ընդունայն են նրա բոլոր գործերը» (հմմտ. Հակոբ. Ա 26)*: Քանզի ասում է. *«Լեզուն էլ հուր է, որը զարդարում է անիրավ սատանային» (հմմտ. Հակոբ. Գ 6)*, և նրանց լեզուն առաջին օձի լեզուն է:

Այդ մասին ասում է և Դավիթը. *«Լռեցրո՛ւ լեզուդ չարությունից» (հմմտ. Սաղմ. Լ Գ 14)*. որովհետև լռությունը մեծ առաքինություն է:

Նաև Սողոմոնն է ասում. *«Մահն ու կյանքը լեզվի ձեռքին են» (Առակ. ԺԸ 21)*, որովհետև ով չար և վատ բաներ է խոսում, մեռնում է նրա հոգին, իսկ ով բարի և օգտակար բաներ է խոսում, նրա հոգին կենդանանում է:

Եվ արդարացիորեն է մեծ Պողոսը բամբասողներին ու դատարկախոսներին, բանսարկուներին, խռովարարներին ու շողոքորթներին սպանողների, պոռնիկների և այլ չարագործ-

ների հետ միասին զրկում արքայությունից (հմմտ. Ա Կորնթ. Զ 10) և նրանց՝ անշիջանելի հրին [արժանացողներին], խավարաբնակներ կոչում:

***

Արդ պետք է, որ ինչպես եպիսկոպոսն է իր թեմին լսել տալիս նզովքի խոսքերը, քահանան էլ տարին տասն անգամ դրանք [հայտնի] ժողովրդին, որպեսզի երկյուղածները զարհուրեն, ետ կանգնեն մեղավորներից և մոտենան Քրիստոսին, իսկ անդարձները նզովվեն, որպեսզի այլևս օրհնություն նրանց տուն չմտնի, ո՛չ պսակ, ո՛չ կնունք և ո՛չ էլ նրանց ննջեցյալների համար աղոթք [արվի], և իրենք էլ թող քրիստոնյա չկոչվեն, որովհետև հակառակ կանգնեցին Քրիստոսին և Նրա պատվիրաններին: Մեռնելիս թող չհաղորդվեն և ոչ էլ քահանայով թաղվեն, մատաղ և պատարագ թող չլինի այդպիսիների համար: Աստվա՛ծ թող ողորմի նրանց, որովհետև նրանք իրենց չողորմեցին: Հովիվները և՛ իրենց ոչխարներին են ճանաչում, և՛ օտար, իսկ երեցն իր բանական հոտի ոչխարներին չի ճանաչում, թե ով է Աստծունը և ով՝ սատանայինը: Թող ընտրեն կատարյալ քրիստոնյաներին: Այս է ընտրության ձևը, որ Աստծո առաջ խոստում են տալիս և այն կատարում. այլևս հայհոյանք չեն տալիս և չեն ապականում օրհնաբանող բերանը, օտար անկողինը չեն պղծում և գողություն չեն անում, որն աններելի անասելի մեղք է, սուտ չեն երդվում, որը հենց Տերն արգելեց, թե՝ «Այոյից և ոչից ավելին չարից է» (հմմտ. Մատթ. Ե 37), չեն խաբում ո՛չ մեղքերով, ո՛չ վաճառքով և ոչ մի մարդու չար բան չեն կամենում՝ ո՛չ սրտով և ո՛չ այն կատարելով: Պահքի մեջ բոլոր անդամներով մաքուր են մնում գողացվածից, ձկից, գինուց, ձեթից և ուտիքի կերակուրներից: Զեն հարբում, որովհետև հարբեցողն ու մարդասպանը միապես են տանջվելու: Եվ

օրը երեք անգամ աղոթում են, կինն ու իր դուստրերը վաթսուն ծնրադրություն են անում և ասում. «Սուրբ Աստվածն» ու «Հայր մերը», գոհանում Աստծո ողորմությունից՝ խնդրանքներ և պաղատանքներ մատուցելով, որպեսզի խաղաղությամբ պահպանի իրենց և փրկի բոլոր հոգեկան ու մարմնական փորձություններից: Եվ քահանան նրանց է քահանայություն անում, ովքեր Աստծո փարախում են մնում, Քրիստոսի ճանապարհով [ընթանում] և [պահում] Քրիստոսի հրամանը, թե՝ «Մի՛ տվեք ձեր սրբությունը շներին և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք, որպեսզի դրանք ոտքի կոխան չանեն» (հմմտ. Մատթ. Է 6) և այլն: Նաև տղամարդն ու իր որդիներն են երեսունվեց ծնրադրություն անում և նույնպես ասում. «Սուրբ Աստվածն» ու «Հայր մերը», օրհնում Աստծուն, փառք տալիս Նրա անվանը, խոստովանում իրենց մեղքերը, խնդրում հանցանքների թողություն և գոհանում Նրանից:

***

«Նզովք»-ը թարգմանվում է բաժանում, և այն մարդը, ով իրեն մեղքերով բաժանում է Աստծուց և այլևս չի զղջում, ըստ Գրքերի բոլոր [խոսքերի]՝ նզովված է: Բայց տխմարները չեն լսել և չգիտեն, որ Աստված ասաց. «Ձեր մեղքերն են պատնեշ դարձել իմ և ձեր միջև» (հմմտ. Եսայի ԾԹ): Եվ մարգարեն ասում է. «Անիծյալ են նրանք, ովքեր խոտորվեցին Քո պատվիրաններից» (Սաղմ. ՃԺԸ 21): Մովսեսը, [ինչպես] գրված է «Երկրորդ Օրենքում», ասում է. «Եթե մնաք Աստծո պատվիրանների և օրենքների մեջ, օրհնյալ կլինեք Աստծուց և հրեշտակներից՝ երկնքում, երկրում և անդաստաններում» (հմմտ. Բ Օրենք ԻԸ 1 և.): Եվ դարձյալ ասում է. «Եթե չպահեք Աստծո օրենքն ու պատվիրանները, անիծյալ լինեք ձեր տանը, նրանից դուրս և ճանապարհին, թող անիծյալ լինեն քո հացն ու ջուրը, որ խմում ես, և թափառական լինես ու չկարողանաս կանգուն մնալ» (հմմտ. Բ Օրենք ԻԸ 15 և.): Մովսեսը հրամայեց Տաղավարահաց տոնին հավաքել ամբողջ ժողովրդին

և նրանց կարդալ օրհնությունն ու անեծքը. և ամբողջ ժողովուրդն օրհնությունից և անեծքից հետո ասում էր՝ ամեն:

Ահա սուրբ Գրիգորի և այլ սուրբ հայրապետների հաստատուն հրամանն է սա, որ տաղավար տոներին նզովվեն հերձվածողները, հայհոյողները, խռովարարները, կախարդները և այլ անդարձ մեղավորները, ինչպես նաև նրանք, ովքեր սոդոմացիների և քանանացիների գործակիցն են: Իսկ բարեգործները փոխանական անեծքի և նզովքի՝ հոգևոր օրհնություն և շնորհներ են ընդունում Աստծուց, որովհետև ողորմած, ամենաբարի և մարդասեր Աստված այս աշխարհը եղականներին[1] տվեց, որպեսզի իրենց հեծեծանքների մեջ հայհոյություն ու մեղք չլինի, որպեսզի ատեն ստախոսին ու գողին, չարակամին և ուրիշի անկողինն ապականողին. այդ էլ մեզ որպես օրինակ հերիք չէ: Արդ, ով օրենքով շուտ է սրբվում իր մեղքերից և իր չար սովորություններից, Աստված նրա նախկին [մեղքերին] էլ է թողություն տալիս, իսկ ով անհավատության և անզղջության մեջ ամուր է մնում, նրա ոչ հոգուն է թողություն լինում, ոչ մարմնին՝ առողջություն և ոչ էլ ունեցվածքին՝ ապահովություն:

Ահա ես՝ Վարդան վարդապետս, քրիստոնյաների ծառան՝ տկար մարմնով, սուրբ Գրիգորի միջնորդությամբ գրեցի Աստծո այն հրամաններն ու պատվիրանները, որոնց մասին Աստված խոսեց Մովսեսի հետ Սինա լեռան վրա, և ուղարկում ենք Աստծո բոլոր հավատացյալ ծառաներիդ: Ով հավատա և ընդունի, նրա մեղքերն Աստծուց կներվեն, իսկ ով չհավատա, չթողնի իր չար սովորությունները և չուրանա սատանային, իր մեղքն ինքը գիտի, Աստծո դատաստանն ու սուրբ Գրիգորը. մենք անպարտ ենք նրա արյունից:

Մարդասեր Քրիստոսին փա՛ռք հավիտյանս. ամեն:

[1] Եղական՝ ստեղծված, արարված. հատկանիշն է՝ անեղ (անստեղծ), որ Աստծուն տրվող մակդիրներից է:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ՇՆԱՑՈՂՆԵՐԻ ԵՎ ԶԱՆԱԶԱՆ ՄԵՂՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վա՛յ շնացողներին, որ ապականում են Աստծո տաճարը և պղծում սուրբ անկողինը: Ուստի աղաչում եմ՝ փախե՛ք շնությունից, ինչպես օձից, որովհետև մեր հույսը՝ Քրիստոսը, դատապարտում է ցանկասիրությամբ նայելը և մտքով պղծվելը (տե՛ս Մատթ. Ե 28), քանի որ մյուս մեղքերը մարմնից դուրս են գործվում, իսկ շնությունը՝ մարմնի ներսում և մարդու ամբողջ գորության մեջ (տե՛ս Ա Կորնթ. Զ 18): Նրան եմ շնացող և հրի ժառանգ անվանում, ով օրինավոր ընկեր չունի և գնում շնանում է: Իսկ ով Աստծո օրենքով ամուսնության ընկեր ունի և գնում շնանում է, լինի այր թե կին, նա ոչ միայն շնացող է, այլև, ըստ Սուրբ Գրքի, «մարդասպան» է կոչվում: Քանզի, իր կամքով թողնելով սուրբը Հացը և անարատ Գինին, գնաց կերավ գարշելի աղբն ու խմեց չան արյուն ու թարախ, որը շնությունն է:

Ո՛վ որդյակ, հազար անգամ թուք քո երեսին, որ թողեցիր կաթը և խմեցիր թարախ. անմի՛տ, ի՞նչ գտար օտար կնոջ կամ տղամարդու մեջ ավելի, քան քոնի, որ թունավորեցիր քո հոգին ու մարմինը՝ դառնալով դևերի բնակարան:

Վա՛յ, որդյակնե՛ր ու դուստրե՛ր իմ: Շնության պատճառով որքա՛ն անբավ արյուն է հեղվում երկրի վրա՝ գաղտնի և հայտնաբար, թունավորմամբ, պիղծ հնարներով և սպանությամբ, կամ որքա՛ն մանուկ լույս աշխարհ չի գալիս մարդկանց վախի և ամոթի պատճառով:

Վա՛յ մեզ, որդյակնե՛ր, որովհետև շնության ցավն ու ցանկությունը մաշեց մարդկային ցեղը և դեռ պիտի մաշի, ինչպես գրում է աստվածային Սողոմոնը (տե՛ս Առակ. Զ 25): Այս պատճառով վա՛յ զարդասեր ու պճնվող կանանց, նաև

նրանց, ովքեր իրենց աչքերն ու երեսները հարդարում են չպարով՝ երիտասարդներին գայթակղեցնելու համար, որովհետև նրանք չեն կարողանալու տեսնել սուրբ խաչի լույսը Փրկչի գալստյան մեծ օրը, և Քրիստոսը չպիտի համբուրի նրանց, ինչպես արդարներին: Եվ հազար անգամ վա՜յ այն կնոջը, ով չար դեղերով ու հնարքներով խափանում է որդեծնությունը և ուրիշներին էլ խրատում նույնն անել: Քանզի հրախառն արյան ծովը և խավարը պիտի անգերծանելիորեն տանջեն նրանց: Եվ յուրաքանչյուր մանկան դիմաց, որի ծնունդը խափանել չար դեղերով, Աստված նրանցից հասուն մարդու արյուն պիտի պահանջի ահավոր ատյանում:

Եկե՛ք, իմ սիրելի՛ որդյակներ և դուստրեր, ձեզ տամ մեծ ուրախության ավետիսը, և դուք իմ՝ ողորմելի Վարդանիս մեղքերի համար ամբողջ սրտով թողությո՛ւն խնդրեք: Քանզի այն տղամարդն ու կինը, որ անարատ են պահում իրենց անկողինը պիղծ խառնակությունից և քահանայի առաջ խոստովանության ժամանակ խոնարհ ու անոխակալ են, եթե տասը կամ քսան որդի էլ ծնեն, վերջին օրը իմաստուն կույսերի հետ կկանչվեն Քրիստոսի կողմից և կդասվեն Նրա աջ կողմում:

***

Դարձյալ՝ ի՛մ որդյակներ, ձեզ տալիս եմ կյանքի նոր ավետիս, որպեսզի ուրախանաք և ինձ՝ ողորմելի Վարդանիս համար մեղքերի թողություն խնդրեք: Եթե ձեզանից վերցնեն սահմանված հարկից ավելին, մարմնավոր և հոգևոր գործակալներն ու դատավորները բռնադատեն, ձեզ իզուր ու հանիրավի հափշտակեն կամ տուգանեն, եթե գողանան ու խաբեն, այդ ամենը պահված է ձեզ համար իբրև կամավոր ողորմություն, և դուք այս բանում մի՛ եղեք անհավատների նման, մի՛ լսեք տգետներին, որովհետև գրված է, թե Աստված ճշմարտապես պահում է զրկանքների հաշիվը

և ամեն ինչում արդարություն գործում: Ուստի Աստված խնդրում և պահանջում է ձեզանից, որ խնդրությամբ ընդունեք [զրկանքները] և օրհնեք ձեզ ատողներին ու հալածողներին, հանեք ոխը ձեր սրտերից և ամեն ժամ ողորմած ու կարեկից լինեք: Սա էլ լավ իմացեք, ի՛մ որդյակներ, որ Աստվածաշունչ գիրքը գովում, փառավորում և Աստծուն անվանակից է կոչում ողորմածին (հմմտ. Ղուկ. Զ 36): Սուրբ Գիրքը և մարգիկ [ասում են], որ տրված մեկ ողորմության դիմաց [Դատաստանի] ահեղ օրը հարյուրապատիկը կտրվի (հմմտ. Մատթ. ԺԹ 29): Իսկ ով անողորմ և անկարեկից է, նա դև է կոչվում, քար ու երկաթ և սատանայի ընկեր: Աստված սիրում է ուրախ սրտով, քաղցր խոսքով, արդար վաստակից տրված ողորմությունը (տե՛ս Բ Կորնթ. Թ 7, Առակ. ԺԴ 21 և), և Աստծո համար աղքատին այսպես տված քո պատառ հացն ավելի մեծ ու ընդունելի է, քան տասը արծաթն ու դահեկանը[1], որ տալիս ես գողացածիցդ և արհամարհում աղքատին. որովհետև վարձն աշխատողին է գնում, իսկ դու դատվում ես և ո՛չ թե օգտվում: Նա, ով իր տան դռան առաջ անարգում է աղքատին, նրա Արարչին է պարսավում, նույնպես և նա, ով նախատում է գաճաճին, տգեղ մարդուն կամ էլ խեղվածին, նրա Արարչին է նախատում, քանի որ ով նախատում է հյուսնի և դարբնի գործը, նա ոչ թե գործը, այլ արհեստավորին է նախատում ու անարգում: Ուրեմն Աստված ողորմության շատին ու քչին չի նայում ու քննում, այլ նայում է միայն սրտին ու կամքին և այդպես ընդունում ողորմությունը: Եվ մեզ համար վկա է երանելի այրի կինը, որ երկու լումայով հաղթեց հարուստներին, ովքեր շատ, [բայց իրենց ավելցուկից] էին գցում գանձանակի մեջ, և գովվեց Քրիստոսից (տե՛ս Ղուկ. ԻԱ 2-4):

Ահա տե՛ս, որ նաև աղքատը կարող է ողորմություն տալ,

[1] Դահեկան՝ ոսկեդրամ միջնադարյան Հայաստանում:

եթե ողորմած սիրտ ու կամք ունի: Աստված քաղցր ու մարդասեր է և նրան, ով հանուն Աստծո մի բաժակ ջուր կտա ծարավյալին (տե՛ս Մատթ. Ժ 42), ով խոսքով կխնայի նեղյալներին ու աղքատներին, ով խոսքով ու գործով կարեկից կլինի թշվառներին ու մեղավորներին և կամ ով հանուն Աստծո բանտարկյալներին և հիվանդներին տեսության կգնա, խոստացավ վարձ տալ՝ [այսպիսի գործերը] ողորմություն համարելով: Ինչպես որ սուրբ հայրերից մեկը տեսավ, թե ինչպես լուսեղեն մի թագուհի փառքով ու պատվով ամպերի վրայով բարձրանում է առ Աստված, և հարցրեց նրան. «Դու ո՞վ ես կամ ո՞ր թագուհին ես»: Իսկ նա պատասխանեց. «Ես երկնավոր Փեսայի դուստրն եմ, որ ամեն ժամ համարձակ մտնում եմ իմ Հոր մոտ, նստում Նրա գիրկն ու համբուրում Նրան, և իմ անունն է Ողորմություն, որ լինում եմ զվարթ սրտով և արդար վաստակից [կատարված]: Իսկ այն մարդուն, ով խոնարհ սրտով և անոխակալ մտքով ինձ իր օգնականն է դարձնում, ես մտցնում եմ իմ երկնավոր Թագավորի՝ Աստծո մոտ»: Եվ սա այն է, որ Քրիստոսն ասաց. «Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. Ե 7): *Մարգարեն էլ ասաց.* «Քո մեղքերը քավիր ողորմությամբ և քո անօրենությունները՝ տնանկներին գթալով» (Դան. Դ 24): *Նաև՝* «Քաղցածներին բաժանիր քո հացը, և այն ժամանակ այգաբացի պես պիտի ծավալվի քո լույսը» (հմմտ. Եսայի ԾԸ 7-8): *Շատ այլ խոսքեր էլ կան, սակայն այսքանը բավական է, որովհետև երկիրը լցվեց Աստծո գիտությամբ:*

ՀՊԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՈԽԱԿԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսուհետ փախե՛ք հպարտությունից և ոխակալությունից, որովհետև սրանք են առաջին չարիքները, որոնց պատճառով ընկավ սատանան և կորստյան մատնեց մարդուն: Յուրաքանչյուր հպարտ ու ոխակալ մարդ սատանայի անմիջապես բնակարանն ու լյարդն է և նրա եղբայրն ու ընկերը:

Որդյա՛կ, հպարտը սատանայի պարանոցն է, ոխակալը՝ նրա սիրտն ու երիկամները, արյուն հեղողը՝ սատանայի ձեռքը, շնացողը՝ նրա ատամները, զրկողը՝ նրա աղիքներն ու փորը, կախարդը սատանայի հոգին է, իսկ հարցուկը, որը վիճակ գցողն է, նրա մարմինն է:

Հպարտն օտարացավ Աստծուց և իջավ անդունդը՝ սադայելի մոտ, ինչպես որ Քրիստոսն ասաց, թե՝ «Բարձրամիտը կխոնարհվի» (հմմտ. Մատթ. Ի Գ 12): *Իսկ ոխակալը հեռու փախավ Ամենասուրբ և անբաժանելի Երրորդությունից, որովհետև իր ամենաբարի գործերը կորցրեց, ինչպես որ ասաց իմ Աստվածը՝ Հիսուս Քրիստոսը.* «Ով իր սրտից չհանի ոխը, Իմ երկնավոր Հայրն էլ պիտի չների նրա մեղքերը» (հմմտ. Մատթ. ԺԸ 35):

Հպարտությունն աներևույթ, անշահ և մեծ կորուստ է, որովհետև սատանայի անդրանիկ որդին է, իսկ ոխակալությունը սատանայի երկրորդ ծնունդն է, իբրև հարդի տակի կրակ և սատանայի ցանկալի որդին: Հպարտն ասաց. «Մոտ եմ սադայելին, որովհետև նախ ինձ ծնեց նա», *իսկ ոխակալն ասաց.* «Ես քո եղբայրն եմ, որովհետև քեզանից հետո ինձ ծնեց»:

Երանի՜ խոնարհներին և անոխակալներին, որովհետև անվանակից են Աստծուն, ինչպես ողորմածները: Հազար բերան վա՜յ հպարտներին և անողորմ ոխակալներին, որովհետև գոր-

ծակից ու անվանակից են սատանային և նրա հետ էլ պիտի տանջվեն: Նա է իսկապես խոնարհ, ով բոլոր մեղավորներից ու վերջին աղքատներից ավելի նվաստ ու խոտան է համարում իրեն: Եվ նա է իրապես անոխակալ, ով սրբում է սիրտն ու միապես աղոթում թե՛ թշնամու, թե՛ բարեկամի և թե՛ իր անձի համար: Իսկ հպարտն ի ցույց մարդկանց է գործում՝ անօգուտ գովասանքի արժանանալու համար, բայց երբ ընկերոջն են գովում նրա առաջ, դրանից ճաքում-պայթում է:

ԽՐԱՏ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Որդյակնե՛ր, այսուհետև ձեր մեջ սե՛րն ընդունեք, որովհետև սերն Աստծո անունն ու գործն է, քանի որ Նա սիրո պատճառով Իր անձը մահվան մատնեց մեզ համար և նույն սերն էլ հրամայեց մեր մեջ պահել խոնարհությամբ ու առանց նենգության: Այս սերն անվանեցին Աստծո բոլոր օրենքների ու բարի գործերի միջև կապ ու զարդ, և առանց այս սուրբ սիրո հնարավոր չէ, որ մարդու բարի գործն Աստծուն հասնի, ինչպես Պողոսն է ասում, թե ով իր սրտում այն ունի, ամենևին չի կարող չար բան խորհել և անել մարդուն (հմմտ. Հռոմ. ԺԳ 10) և միապես է սիրում ատողին ու բարեկամին և միապես է տրտմում սիրելիին, բարեկամին և ատողին հասած նեղության դեպքում՝ իրենը համարելով այն: Այս սուրբ սիրով է [մարդը] լինում ողորմած ու կարեկից, պահեցող ու աղոթող, խոնարհ ու անոխակալ: Որքան նրան չարիք են անում, նա Աստծո սիրով ծածկում է այն, և ինքը բարին է խորհում, խոսում ու գործում սիրելիի նկատմամբ, ինչպես որ հավատքի վեմն է ասում. «Սերը ծածկում է բազում մեղքերը» (Ա Պետ. Դ 8), իսկ Աստվածն էլ Իր սիրով ծածկում ու ջնջում է անոխակալի մեղքերը:

Այդ իսկ պատճառով աղաչում են՝ ձեր սրտերում ընդունե՛ք այն սերը, որպեսզի Աստված ձեր մեջ բնակվի և դուք էլ՝ Աստծո, և ով կամենում է սիրել Աստծուն, նախ պետք է սիրի իր ընկերոջը, և դրանից է ճանաչվում, որ նա աստվածասեր և Աստծո օրենքները կատարող է: Իսկ Պողոսը հույսն ու հավատը մի է ասում և սերը նրանց ընկեր կարգում: Վերջին օրը հույսն ու հավատը պիտի դադարեն և իրենց լրումին հասնեն, քանի որ նրանք, ովքեր առանց տեսնելու հավատում էին, որ կա Աստված և Նա արարիչ ու դատող է, այդ ժամանակ պիտի տեսնեն Աստծուն դեմ-հանդիման և պիտի ստանան խոստացված բարիքը, որն ակնկալում էին և որի համար էլ համբերում էին: Այդ պատճառով էլ Քրիստոսի լեզուն՝ Պողոսը, սերն ավելի մեծ է համարում, քան հավատն ու հույսը, քանի որ Սերն Աստծո անունն է, և Աստված Սեր է: Իսկ հավատը հաստատուն կերպով հավատալն է, որ կա Աստված, Ով Տեր է, Արարիչ և Դատավոր:

Սա պիտի տեսնեն, և հավատալու կարիք [այլևս] պիտի չլինի, և հույսն էլ այն բանի համար, որն ակնկալում էին ստանալ, պիտի հատվի, [որովհետև] մեծ հույսով պիտի ընդունեն և վայելեն:

Իսկ սերն Աստծո առաջ անվերջ ցնծում է, քանզի Աստված սեր է, և Աստծո սերն ավելի է աճում արդարների դասի նկատմամբ, որովհետև պիտի երևա նրանց և միշտ գովելով գգվի, մխիթարի և ուսուցանի անճառելին, ինչպես ասում է իմ Աստված Հիսուս Քրիստոսը, թե՝ «Պիտի բազմացնեմ և ծառայեմ ձեզ» (հմմտ. Ղուկ. ԺԲ 37): Եվ արդարների խումբը ավելի է աճում, որովհետև անլռելի գովությամբ ավելացնում են Աստծո փառաբանությունն ու օրհնությունը:

Արդ, սուրբ և անարատ միշտ Կույս Աստվածածին Մարիամի աղաչանքներով Հայրական Սուրբ Հոգին հաստատուն և մնայուն թող պահի այս բարի սերը, որն Աստծո անունն է,

և թող Աստված ձեր ու բոլոր հավատացյալների հոգիներում բնակվի: Նրան փա՜ռք բոլոր բերաններից. ամեն:

ԽՐԱՏ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻՆ

Ահա օրհնյալ է մարդասեր Աստված, որ երբ Աստծո ողորմությամբ և շնորհով, ջերմ արցունքով ապաշխարում ենք, վերացնում է մեր մեղքերի բիծը: Իսկ սատանան՝ այդ անիծյալ կատաղած շունն ու մահաբեր օձը, որ սիրում է չարերի բոլոր մեղքերն ու գործերը, որոնք նրա ուրախությունն են, կերակուրը, ըմպելիքի և հանգիստը, ագահ է մեղքի մեջ, ինչպես տգրուկը՝ արյան, և երբեք չի ասում՝ բավական է: Անդարձ մեղավորի վրա ավելի է ցնծում, քան բոլոր մեղքերի, որոնք կատարվում են ամբողջ աշխարհում. և վերցնելով իր շնակերպ դևերին, մեղսասեր և ախտակեր իշխաններին՝ գալիս է անդարձ մեղավորի մոտ, և ասում են նրան. «Դու մեր հոգին ու սիրտն ես, անդրանիկ որդին, և վա՜յ է քեզ, քանի որ սիրում ես մեզ և չես դիմում քո Քրիստոսին»: Եվ ցնծալով բնակվում են այնտեղ՝ անդարձ մեղավորի հոգում, կերակրվում նրա սրտից, խմում նրա չար ախտերը և գովելով գգվում նրան՝ ասելով. «Մերն ես, մեզանից անբաժանելի և մեզ հետ էլ պիտի վայելես անշեջ հուրը, մեր գոգին և մեր սրտերի մեջ պիտի պահենք քեզ և որպես պատիվ՝ դժոխքում քո աջ կողմում Նեռին պիտի բերենք, իսկ ձախակողմում Հուդային պիտի կանգնեցնենք, այլև քո եղբայր փարավոնին (տե՛ս Ելք Ա-ԺԲ), Հուլիանոսին[1], Մաքսիմինոսին[2] և նրանց նմաններին»: Եվ այսպիսի «ավետիսներով»

[1] Հուլիանոս՝ հռոմեական կայսր (361-363 թթ.), որը քրիստոնեությունը հալածելու պատճառով պատմության մեջ հայտնի է «Հուլիանոս Ուրացող» անունով:

[2] Մաքսիմինոս Դայա՝ հռոմեական կայսր (305-313 թթ.), քրիստոնեության հալածիչ: 312 թ. կրոնական պատերազմ է սկսում հայերի դեմ և աշխատում նրանց քրիստոնեությունից ետ դարձնել հեթանոսության:

փառավորում են իրենց սիրելիներին և ծառաներին: Ահա՛, իմ որդյակներ, լսեք և հասկացե՛ք, որ այդ է սատանայի պատիվն ու մեծարանքը, որը պատրաստել է անդարձ մեղավորների համար: Եվ մահացու մեղքն այն է, որի մասին ասում է Քրիստոսի առաքյալը, թե ով մեծամեծ մեղքեր է գործում և բնավ չէ կամենում ու չի մտածում է դեպի Աստված դառնալու մասին, չի լսում Սուրբ Գրքին ու քահանաներին, չի հավատում, որ հարություն և հատուցում կան, այլ մահանում է չարի մեջ, հավիտենական մահն է տանում նրան, որն անզերծանելի տանջանքն ու վիշտն է:

Իմ որդյակնե՛ր, որոնց ծնեցի Աստծո երկյուղով, մի՛ հոգացեք և մի՛ ցավեք վերջին օրվա համար, որովհետև օգուտ չկա ձեր այդպիսի քննությունից, քանզի այդ արգելեց Տերն Իր աշակերտներին՝ ասելով. «Ձեզ տրված չէ իմանալ այն ժամերը և ժամանակները, որ Հայրը հաստատեց Իր իշխանության մեջ» (Գործք Ա 7), նաև մի այլ տեղ ասում է. «Ոչ ոք չգիտի, բայց միայն Հայրը» (Մատթ. ԻԴ 36), քանի որ ով մահացավ, դա նրա համար եղավ վերջ, որովհետև այլևս չի կարող ապաշխարել իր մեղքը և ոչ էլ բարիք գործել:

Իմ որդյակնե՛ր, ձեր սրտում մի՛ ասեք, թե կմեղանչեք, կանեք և կիմանաք մեղքի հաճույքը և ապա կապաշխարեք և առ Աստված կդառնաք, ինչպես շատերն արեցին: Իմացե՛ք, որ դա դևերի խորհուրդն ու սերմն է, և դուք մի՛ լսեք նրանց, որովհետև մահը գող է: Ահա մենք էլ տեսանք և լսեցինք, որ շատերը մեռան չար գործերի մեջ և չկարողացան խոստովանել ու «մեղա» ասել՝ դառնալով ողորմելի:

Ո՛վ իմ որդյակներ, սուրբ Ավազանի միջոցով ձեր հոգիները հարսներն են Քրիստոսի: Եվ տեսեք, որ եթե հարսը շնությամբ պղծում է փեսայի անկողինը, ապա փեսան սաստում է նրան՝ հեռու վանելով իր արքայությունից: [Նույնը կլի-

նի], եթե մեղքերով թունավորեք ձեր հոգին, որը Քրիստոսի հարսն է, և այն չլվանաք ու չսրբեք ապաշխարությամբ:

Որդյակնե՛ր, Քրիստոսը ձեզանից է սովորում, թե ըստ ձեր գործերի ինչպես պիտի հատուցի ձեզ՝ ըստ այմ. «Ինչ որ դուք միմյանց անեք, Ես էլ ձեզ հետ համաձայն դրա պիտի չափեմ» (հմմտ. Մատթ. Է 2): Երբ դուք տեսնում եք մի կույս, որ թեպետ գեղեցիկ է և հարուստի աղջիկ, բայց նրա անդամներից մեկը թերի, պակաս կամ էլ խեղված է, ընավ չեք խորհում և չեք կամենում նրան ոչ ձեր և ոչ էլ ձեր որդիների կամ եղբայրների տներն ընդունել: Նույնպես էլ ձեր հոգիների փեսան՝ Քրիստոսը, պիտի անի, որովհետև եթե Մեծ օրը ձեր հոգիներում մեղքերի պատճառով որևէ խեղվածություն կամ ծռություն գտնի, որը մաքրած և առողջացրած չլինեք ապաշխարությամբ, Նա ձեր հոգիները չի համբուրի, որովհետև խեղ եք ու մեղքերով բորոտ, և հարսանիքի ժամանակ ձեզ չի մտցնի անուշահոտ ու լուսավոր հարսանեկան առագաստի մեջ:

Իմ որդյակնե՛ր, գալարվում և եփվում են իմ աղիքները ձեզ համար, ինչպես լինում է որդեսեր մոր հետ: Այդ պատճառով էլ մանրամասն քննում և օրինակներով ձեզ հայտնում եմ Աստծո կամքը, ինչպես նաև բարի ու չար գործերը: Իսկ դուք էլ, իմ դուստրե՛ր և ուստրեր, ձեր ամբողջ սրտով Աստծուց խնդրե՛ք [ինձ համար], որովհետև ես մի այր եմ մեծամեղ, չարասեր ու անառակ և իմ կամքով ու գիտությամբ դուրս ելած Աստծո օրենքից, իսկ սա էլ խոստովանություն է ձեր առաջ: Ահա, իմ հոգևո՛ր որդյակներ, իմացեք և հասկացե՛ք այն, ինչի մասին ասում է աստվածեղեն Գիրքը, թե Աստված ոչ թե ցանկացավ ու հոտոտեց Մովսեսի խունկը կամ Աբրահամի, Իսահակի, Հակոբի, Հոբի, Նոյի և Աբելի մատուցած զոհերը (հմմտ. Եբր. ԺԳ 7-13), որովհետև Աստված անկարոտ է այդպիսի բաների, այլ Նա ցանկացավ և հոտոտեց նրանց հոգիների ու սրտերի սուրբ, աննենգ և մաքուր խորհուրդները և դրանցով ընդունեց նրանց նվերները, ընծաներն ու զոհերը: Դուք էլ ձեր սրտերն ու հոգիներն այսպես սրբեք նախանձից, չարությունից, վավաշոտ ցանկությունից և այլ արատներից ու բծերից, և Աստված կընդունի ձեր հավատն ու բարի գործերը, որոնք անում եք հանուն Նրա:

Արդ, ի՛մ որդյակներ, նույն խորհրդի մասին առակիս օրինա՛կն էլ լսեք ու հասկացեք: Կար մի գեղեցիկ և ցանկալի թագուհի, որին հարյուր մեծամեծ իշխաններ չկարողացան խաբել շնությամբ, ոսկով, մարգարտով և թանկագին քարերով, բայց հետո մի գաճաճ, գարշելի ու սևապատկեր տղամարդ խաբեց նրան և պղծեց շնությամբ: Իսկ թագավորն իմանալով՝ չողորմեց թագուհուն լոկ մի անգամ խաբվելու համար, այլ սաստեց նրան և դուրս քշեց:

ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏ ՆՈՐԸՆԾԱ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

Պետք է, որ նորընծա քահանաները բոլոր առաքինությունները ձեռք բերեն կամովին և հոժարությամբ: Նախ պետք է ժամերգության ժամանակ աստվածավանդ կարգն անթերի կատարել թե՛ առավոտյան և թե՛ ցերեկը. առաջին «օրհնյա»-ից մինչև արձակման օրհնությունը կամ ասելով պետք է կատարել, կամ լսելով, որպեսզի միտքը ամենևին չհեռանա Աստծուց: [Քահանան]՝ իբրև առօրյա երկրագործ, պետք է անբիծ և անարատ մշակի մտավոր անդաստանը, որպեսզի այն պտուղ տա Քրիստոսով: Իսկ եթե ինքը եկեղեցում, բայց միտքը՝ զբոսանքի, բերանը՝ խոսակցության մեջ լինի կամ էլ ոտքը փոխի ժամ առ ժամ, այդպիսիների կարգը պիտի պահվի վերջին օրվա՝ մեր Քրիստոս Աստծո դատաստանի համար: Որովհետև պետք է կամ այստեղ հաշիվ տալ և այնտեղ պսակի արժանանալ, կամ էլ այնտեղ հաշիվ տալ

ու պապանձվել: Երբ ընթերցվում են [Սուրբ Գրքերը], պետք է ուշադիր ունկնդրել՝ մտքով հետևելով ընթերցվող խոսքերին. եթե որևէ տուն կամ փոխ չի ասվում կամ աղավաղվում է, պետք է այդ ամենն իմանալ: Իսկ եթե [քահանան] ինչ-որ բան է խոսում ուրիշների հետ կամ քնում է, կամ էլ անուշադիր լինում, դրանց համար պետք է հետո հատուցի:

Ամեն գուբղային պետք է երեք ծնրադրություն անել, իսկ մինչև կանոնագլուխ ծնրադրություն չկա, նաև ծնրադրել «Օրհնության» ամեն տանը: Երբ գիրքը դնում են, աղաչում եմ, ամբողջապես զգա՛ստ կանգնիր, ծուլության մի՛ մատնիր քեզ՝ մեր կուրության համաձայն: «Հարցից» մինչև գործատունը ծնրադրի՛ր, իսկ հետո՝ ոչ. «Մեծացուցեի» և «Ողորմյայի» ժամանակ ծնրադրի՛ր, իսկ «Տեր հերկնիցի» ժամանակ՝ ոչ: «Փառք ի բարձունս»-ի ժամանակ ատյան գնալով երկյուղածությա՛մբ կանգնիր. այս պահին Աստված մշտապես շնորհներ է տալիս երկյուղածներին: «Երկրպագության» կամ «խաղաղության» պահին պետք է երկրպագել: Կիրակի գիշերը պետք է առավել զգուշությամբ, հոտնկայս և ամբողջ գիշեր հսկումով աղոթել: Սրբերից մեկն ասում էր. «Կիրակի օրը գիշերային հսկումից արձակման ժամանակ ատյանում տեսնում էի Քրիստոսին՝ փառքի աթոռին նստած և պարգևներ բաժանելիս: Ով երեկոյից էր տքնել, նրան ոսկի էր տալիս, ով կեսգիշերից՝ արծաթ, ով առավոտից՝ պղինձ, իսկ ով կեսօրից՝ ոչինչ», նաև այն էր ասում, որ երկյուղածությամբ աղոթողները շաբաթվա հոգևոր պարգևները կիրակի օրն են ստանում:

[Նորընծա քահանան] պետք է երեք տարի պաշտամունքից չուշանա, իսկ եթե կարողանա՝ միշտ. սա ընդհանուրի համար է և կատարյալների, իսկ ում այսպիսի բաներն անկարևոր են թվում, ճշմարտապես թող իմանա, որ ումից այսպիսի բաները հեռացած են, քահանայական կարգն ու կարգավորությունը նույնպես հեռացած են նրանից:

Դարձյալ՝ պետք է, որ նորընծա քահանան կատարի առանձնական աղոթք՝ առավոտյան, վեցերորդ ժամին և երեկոյան ժամից հետո[1], որովհետև աստվածային շնորհն առանձնական աղոթքի ժամին է պարգևվում: Տերը շնորհ է տալիս խոնարհներին, ովքեր ունեն հավատք, հույս և մշտապես սեր՝ Աստծո և մարդկանց նկատմամբ: Քանզի ընդհանրական աղոթքը մարմինն է, իսկ առանձնականը՝ հոգին: Ինչպես մարմինն է առանց հոգու մեռած, նույնպես էլ ընդհանրական աղոթքն առանց առանձնակի չի կարող լինել Աստծո կամքին պիտանի:

Եվ առանձնական աղոթքի ժամանակ պետք է ջանալ արցունքների համար և նույնը պետք է անել ամեն ժամ, որովհետև ամեն բարի գործ, աղոթք և պահեցողություն իբրև ծառ է, որի պտուղն արտասուքն է, քանի որ արտասուքը [Մկրտության] նոր ավազան է. ինչպես Ավազանն է նոր դարձնում, այդպես էլ արտասուքը: Եվ այս [նորոգումն] առավել է, քան Ավազանինը, քանի որ Ավազանը մի անգամ է նորոգում, իսկ արտասուքը՝ ամբողջ կյանքի ընթացքում:

Բաժակի [գինին] այնքան պետք է լցնել սկիհի մեջ, որքան [քահանան] կկարողանա արտասվել, որովհետև Տերն Իր արյան փոխարեն այս անբիծ արտասուքն է հաշվում: Ինչպես սուրբ Ստեփանոս Նախավկան իր մարտիրոսական արյունը խառնեց անմահ Աստծո արյանը և տեսավ անտեսանելին, նույնպես էլ շատերն արցունքներով հասան անճառ փառքի բաղում բարիքներին:

Դարձյալ՝ պետք է, որ նորընծա քահանան առաջին տարին կամավորաբար պահք պահի, քանի որ պահքը մայրն է բոլոր բարիքների, և ամեն բարիք նրանից է ծնվում, իսկ

[1] Ըստ սուրբ Գրիգոր Տաթևացու, անձնական աղոթքը կատարվում է առավոտյան ու երեկոյան ժամերից հետո և կեսգիշերից առաջ (տե՛ս Գիրք քարոզութեան, Ամառան հտ., Քարոզ վասն կարգաց աղօթից, Կ. Պոլիս, ՌՃՂ (1741 թ.) էջ 334):

եթե պահքը երկարացնի, ապա խոստովանահոր պահքով թող անի: Ինչպես ձուկն առանց ջրի մեռնում է, նույնպես և առանց խոստովանահոր ամեն հոգի մահացած է: Որովհետև եթե անգամ բարի էլ լինի [առանց խոստովանահոր] գիտության, [այնուամենայնիվ] պետք է [երեկոյան] խոստովանի անցած օրվա, իսկ առավոտյան՝ անցած գիշերվա համար[1]*, առավել ևս եթե կամենում է պատարագել Արարիչ Աստծուն: Պետք է, որ նորընծա քահանան երեք տարի հրաժարվի ամեն տեսակ ըմպելիքներից, որովհետև մարմնավոր ըմպելիքը զրկում է հոգևոր արբեցումից՝ ըստ այս խոսքի.* «Նրանք պիտի հագենան քո տան լիությունից» (Սաղմ. Լ Ե 9): *Եվ կերակրով հագեցումը խավարեցնում է հոգին ու միտքը, իսկ կերակրի և ըմպելիքի պակասությունը լուսավորում է դրանք:*

Պետք է ջանք թափելով վեմ դառնալ և ապա շինել Աստծո եկեղեցին, լույս լինել անշեջ Լույսի համար և ապա լուսավորել ամբողջ խավարը, աղ լինել Քրիստոսի հետ և ապա ամբողջ անհամությունը համեմել: Ինչպես քահանան տաճարից խորան է բարձրանում, այդպես էլ պետք է ամբողջ ընթացքը փոխել՝ մարմնավոր ճանապարհից հոգևոր ճանապարհը ելնել, հեռանալ մարդկանցից՝ Աստծուն մոտ լինելու համար: Պետք է անծանոթ լինել մարմնավոր բաներին՝ անեղ Աստծուն և Նրա կամքին ծանոթ և գիտակ լինելու համար: Պետք է միմյանց առավել լավը համարել, քան սեփական անձը, եղբոր նկատմամբ մահու չափ սեր ունենալ, խոնարհությունը սիրով ընդունել, ինչպես Աստծուն, հպարտությունից փախչել, ինչպես սատանայից և շնորհ ու սեր ստանալ՝ միշտ և հանապազ փառավորելու Հորը, Որդուն [և Սուրբ Հոգուն. ամեն]:

---

[1] Վանքերում օրը երկու անգամ կատարվող խոստովանության հնավանդ կարգի մասին տես նաև «Թաթուլի խրատներում». **Շնորհք արք. Գալստեան**, Հայազգի սուրբեր, Երևան, 1997, էջ 152, ինչպես նաև **Գր. Տաթևացի,** Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740 թ., էջ 319:

ԽՐԱՏՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Վարդան Այգեկցին ԺԲ-ԺԳ դդ. հայ արդյունավոր աստվածաբան մատենագիրներից է, որի վաստակը տակավին ամբողջությամբ հայտնի չէ հայ գրականության պատմությանը: Նա հայտնի է եղել որպես առակագիր, կրոնա-բարոյական քարոզների և ճառերի հեղինակ[2], ինչպես նաև «Արմատ հաւատոյ» դավանաբանական գործի կազմող ու ստեղծող, որի հեղինակային ճշտման համար հայագիտությունը պարտական է Յակոբ Անասյանին[3], հեղինակ է նաև բազում աղոթքների ու մաղթանքների[4]:

Նա ծնվել է Մարաթայում, որը գտնվում էր Ասորիքի Դլուք (Կիլիկյան ուղղագրությամբ՝ Տլուք) գավառում: Այս շրջանում կային Մարաթա անունով մեկից ավելի բնակավայրեր. Վարդանն էր «ի Մարաթոյ Վերնոյ»[5]:

Ինչպես իր հիշատակարաններից մեկում ինքը՝ Այգեկցին է նշում, հիշյալ Մարաթան իր «բնիկ ժառանգութիւնն էր»: Բնիկ ժառանգություն ասելով պետք է հասկանալ ոչ թե այն սեփականությունը, որ հայ հոգևորականը ժառանգում է նույնպես հոգևոր կոչում ունեցող իր նախնիներից, ինչպես հակված էր կարծելու Ն. Մառը, այլ սովորական իմաստով՝ հայրենի տուն՝

---

[2] **Հ. Յ. Տաշյան**, «Ժողովածոյք առակաց Վարդանայ. Նիւթեր պատմութեան Հայոց միջնադարեան մատենագրութեան ըստ հայագէտ Ն. Մառի», Վիեննա, 1900:

[3] **Յակոբ Ս. Անասեան,** «Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ», բնագրեր «Վասն անիրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց», արտատպուած «Բազմավէպի» 1968 թ. 7-12 բացառիկէն, Վենետիկ 1969: Ինչպես նաև հեղինակի մեկ տասնյակին մոտեցող հոդվածները նվիրված «Արմատ հաւատոյ»-ին:

[4] Գիրք աղօթից արարեալ **Վարդանայ Վարդապետին**, Կոստանդնուպոլիս, 1734:

[5] Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 8356, թ. 151բ:

հայրենական կալվածք, ինչպես էր, օրինակ, նույն Դլուք գավառում գտնվող Ծովք դղյակը Գրիգոր Պահլավունի և Ներսես Շնորհալի եղբայրների համար[6]: Չի բացառվում, որ Այգեկցին նաև հոգևոր հովիվ եղած լինի իր բնիկ ժառանգության տարածքում, որտեղի բնակիչներին նա անվանում էր «հոգևոր որդեակք իմ»:

Նա ուսանել է Արքակաղինում, այնուհետև՝ 1210 թվականին, գնացել և հաստատվել է Սև կամ Սուրբ լեռների վրա գտնվող Այգեկ վանքում:

Հայտնի է, որ նրա գործերի մի մասը գրվել է նրա՝ Այգեկում եղած ժամանակ, իսկ մեծ մասի գրության ժամանակն անհայտ է:

Իր կյանքի նախաայգեկյան շրջանում էլ նա ունեցել է մատենագրական և հանրային լայն ու արդյունավետ գործունեություն: Դրա վկայությունն է «Արմատ հաւատոյ»-ն, որն ավարտել է 1205 թվականին:

Վարդան Այգեկցու կենսագրությանը վերաբերող տեղեկությունները մինչև այժմ սկսվում էին միայն 1212 թվականից, երբ նա Այգեկի անապատում ավարտել է խրատների իր այն ուրույն խմբագրությունը, որ կազմել էր թագավորազն իշխան Պաղտինի պատվերով: Այս Պաղտինը հավանաբար Ընկուզուտի բերդակալն էր, որը հիշատակվում է 1198 թվականին Լևոն Բ-ի թագավորության հանդեսին ներկա եղող իշխանների թվում[7]:

Այգեկցու խրատների հիշյալ խմբագրության լավագույն օրինակներից է Մաշտոցի անվան Մատենադարանի № 9266 ձեռագիրը, որը հիմք է ծառայել ներկա թարգմանության համար: Թարգմանությունն իրականացնելիս նկատի ենք ունեցել նաև ՄՄ № 1880 (Երուսաղեմ, 1768 թ., 116ա-187ա) և № 638 (Կ. Պոլիս, 1771 թ., 8ա–96բ) ձեռագրերը, որոնք մանրազնին բաղդատվել են հիմքի հետ:

№ 9266 ձեռագիրը ընդօրինակված է ԺԷ դարում, Կոստանդնուպոլսի Սուրբ Գևորգ Զորավար եկեղեցում. «Արդ գրացաւ սայ Վարդանգիրքս ի քաղաքն Բուզանդիա, որ է մայրաքաղաք[ն] [Կոստ]անդինուպա[ւ]լիս, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգեայ Զաւրաւորին»: Գրիչը չի նշում իր անունը, այլ միայն գրում է. «Անիմաստ և անարժան սուտ դպիր անուամբ միայն կոչեցեալ...»: Ստացողն է Ամիրը: Հիշյալ ճառերից բացի ձեռագիրը պարունակում է նաև Քոսա Բասնեցու և Մարտիրոս Արզրումեցու տաղերը: Ճառերում սուրբգրային և հայրախոսական գրականությունից արված մեջբերումները հաճախ ուղղակիորեն չեն համապատասխանում բնագրերին: Այս առիթով հեղինակը հիշատակարանում գրում է. «Եւ որո[շ] չափ հասու եղև միտք մեր, ողորմութեամբ Աստուծոյ ժողովեցաք յօրինացն Աստուծոյ և եդալ ի սմա: Եւ այս յոյժ ծանր եղև մեզ, զի երկու ամ է, որ ի [թափառ]ումն աշխարհի էաք և ոչ յընթերցոյն գրոց, քանզի բուռն է կարիք մարմնոյ, յորժամ պակասէ: Զի հալածական եղաք ի բնիկ ժառանկութենէ մերմէ ի յերկրէն Կիւրիսոյ և ի գաւառէն Տլքոյ և եկայք յԱյգեկս, և Աստուած ի բարի յաջողեաց զամենայն գործս մեր և զպէտս մարմնոյ»:

Այստեղ է, որ հեղինակը սկսում և ավարտին է հասցնում իր գործը. «Իսկ ի հին ուսմանէ յիշեալ հաւաքեցի զսա: Եւ յորժամ սկըսաք ի սա և կատարեցուք զսա՝ յաստուածաբնակ ցանկալի անապատս յԱյգեկս ընդ հովանեաւ աստուածընկալ և հրաշազան սրբոցս՝ Սուրբ Սիոնի և Սուրբ Կարապետի»[8]:

Երկու տարի թափառական լինելով՝ Այգեկցին չի կարողացել համապատասխան գրականություն ընթերցել և ինչ էլ որ

---

[6] Հմմտ. **Հ. Ղ. Ալիշան**, «Շնորհալի և պարագայ իւր», Վենետիկ, 1873, էջ 95-97: **Բաբգէն ծ. վ. Կիւլեսերեան,** «Ծովք, Ծովք-Տլուք և Հոոմ Կլայ», Վիեննա, 1904, էջ 13-16 և 41-44: **Հ. Ս. Անասյան** «Վարդան Այգեկցին որպես համերաշխության գաղափարախոս», Էջմիածին, 1969, Է-Ը, էջ 52:

[7] Հմմտ. **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 11:

[8] ՄՄ, ձեռ. № 9266, թ. 200բ-201ա:

կարողացել է, «ի հին ուսմանէ յիշեալ հաւաքեցի», - վկայում է նա:

Վարդանի այս գիրքն սկսվում է «Ուղիղ դաւանութիւն Սրբոյ Երրորդութեանն գոհացողական բանիւ աղաչանք-աղերսանօք հանդերձ յաջողել զգործս մեր անթերի և կատարեալ ուղղութեամբ հասանիլ առ նա» ներածականով, որին հաջորդում են իշխանի և Վարդանի՝ միմյանց հղած նամակները, ապա սկսվում է բուն գիրքը, որը բաղկացած է քսանի հասնող խրատական ճառերից: Գիրքն ավարտվում է ամբողջ աշխարհի համար Աստծուն ուղղված աղոթքով և հիշատակարանով:

Խոսելով ճառերի լեզվական առանձնահատկության մասին, կարելի է նկատել, որ եթե «Արմատ հաւատոյ» երկը շարադրված է դասական գրաբարով՝ քաղված լինելով Սուրբ Գրքից և հայրաբանական գրականությունից, ապա խրատաշարը, որն Այգեկցին գրել է Պաղտին իշխանի պատվերով և հովանավորությամբ, շարադրել է «ռամկօրէն» լեզվով: Կիլիկիայի հայկական թագավորության պալատական շրջանակների ավանդական մի սովորության համաձայն ամեն օր մի հոգևորական ներկայացել է պալատ և «ռամկօրէն» զրուցել թագավորների և իշխանների հետ՝ դաստիարակի, գուցե և խոստովանահոր ու պետական խորհրդատուի հանգամանքով: 13-րդ դարում Կիլիկիայում եղած դոմինիկյան միաբանության անդամ Բուրկարդուս դե Սանտե-մոնտեն իր «Ուղեգրութեան» մեջ այս մասին արձանագրել է հետևյալը «... թագաւորական տան անդամները, իշխանները և բոլոր ազնուականները սիրով են լսում Աստուծոյ խօսքը: Դրա համար է, որ ամէն օր ժամը 3-ին մի վարդապետ կամ վանական գալիս է թագաւորի ու իշխաններից իւրաքանչիւրի ամրոցը, դրանց միշտ մօտենում է իշխանն ինքը մենակ կամ զաւակների ու տնեցիների հետ միասին: Վանականները դնում են առաջները որևէ գիրք և կարդում նրանց ներկայութեամբ ռամկօրէն (in vulgari), որովհետև ուրիշ լեզու չգիտեն, կամ թէ բացատրում նրանց դոցա բնագիրը, և եթէ աշխարհականները որևէ տեղ կասկած ունեն, առաջադրում են հարցեր և ստանում վանականներից դրանց մեկնաբանութիւնը սրբոց ցուցմունքների համաձայն»[1]:

Սրա մասին է վկայում նաև ներկայացվող խրատաշարը:

Պետք է նկատել, որ դոմինիկյան միաբանության ներկայացուցիչը միտումնավոր կամ սխալ է ընկալել տվյալ երևույթը՝ հայ թագավորի և իշխանների մասին ասելով, թե՝ «Ուրիշ լեզու չգիտեն»: Այս մասին առավել հստակ պատկերացում ենք կազմում՝ կարդալով Վարդան Այգեկցու խրատաշարի հետևյալ տողերը. «Եւ զայս ամենայն քաջ գիտեն ամենեքեան և ուսեալք են յաստուածեղէն Գրոց մեծամեծք և փոքունք, բայց մեք կրկին յիշեցուցանեմք ոչ խրթին թաքուն և ծածուկ բանիւ, սեթևեթել զբառսն ճարտասան իմաստիւք, որ լսողացն անաւգուտ լինի, որք պէտս ունին: Այլ պարզ և յստակ բանիւ պատմեսցուք, որ զտգէտք և գեղջուկ ռամիկք, յորժամ լուիցեն, իմանան և աւգտեսցին ի սմանէ, քանզի Աստուած ընդ այս ուրախանայ և բերկրեալ ցնծայ»[2]:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ հեղինակը նպատակ ուներ Աստվածային գիտության լույսը հասցնել նաև «տգէտք և գեղջուկ» ժողովրդին: Մեկ այլ տեղում նա դիմում է իշխանին՝ ասելով. «Անմեղադիր լեր, զի գեղջուկ բառով և բանիւ գրեցաք զսա: Գիտեմ, որ դու իմաստուն ես և զնուրբն կամիս և զուղ[ղ]ուկ բանն և խորինն, բայց ես կարի պարզեցի զբառ սորա, որպէսզի տգէտքն լսիցեն և աւգտեսցին ի սմանէ, և զի մի՝ ձանձրասցին լսողքն»[3]: Ելնելով քսանմեկ ճառերի հարուստ և բազմազան բովանդակությունից, արծարծված հարցերի

[1] «Արարատ», 1914, նոյեմբեր, էջ 1016:

[2] ՄՄ, ձեռ. № 1880, թ.119բ: Սույն հատվածը բացակայում է ձեռ. № 9266-ում:

[3] ՄՄ, ձեռ. № 9266, թ. 189ա:

բնույթից ու արժեքից՝ կարելի է հեշտությամբ եզրակացնել, թե այս ճառերը որքան հետաքրքիր և օգտակար են եղել:

Ճառերում հիշատակվում են Գրիգոր Աստվածաբանի, Կղեմես հայրապետի, Բարսեղ Կեսարացու, Կիպրիանոսի, Դիոնեսիոս Աղեքսանդրացու և այլոց անունները: Պատմահայր Խորենացու «Պատմությունից» էլ է Այգեկցին անում բազում մեջբերումներ՝ չհիշելով հեղինակին:

Նա քաջ ծանոթ է պարականոն գրքերին, որոնցից բազում մեջբերումներ է անում: Անտիկ գործիչներից Այգեկցին հիշում է Պյութագորասի, Տիմոթենեսի, Արիստոտելի, Կղիտարքոսի, Թեոդիմոսի անունները:

Սակայն հղումների հիմնական աղբյուրը Սուրբ Գիրքն է, որից նա կատարում է բազում ուղղակի և անուղղակի մեջբերումներ:

Այս ամենով հանդերձ Այգեկցին ներկայանում է որպես ինքնատիպ մի հեղինակ, որը հարազատ է առաքելական ավանդությանն ու կանոններին և մնում է Հայ Եկեղեցու հավատարիմ զինվորն ու մեծ ջատագովը:

Շահե Քահանա Հայրապետյան

ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ ՏԻԵԶԵՐԱԼՈՒՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՂ ԴԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՐ ՁԵՌՆԱՐԿԱԾ ԳՈՐԾԻՆ ՍԱՏԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. Սուրբ Երրորդության ուղիղ դավանություն գոհաբանական խոսքով և աղաչանք-աղերսանքով՝ մեր գործերի հաջողության և անթերի ու կատարյալ ուղղությամբ [նպատակին] հասնելու համար

Մեր այս հոգևոր ձեռնարկության սկզբում ամեն բանից առաջ կատարյալ հավատով, անթերի մտքով, անկեղծ սիրով, գոհացական երգով և քաղցր ձայնով օրհնենք, փառավորենք և բարեբանենք բոլորի կողմից օրհնված և ամենաբարի, համագո և անբաժանելի Ամենասուրբ Երրորդությանը՝ բոլոր ստեղծվածների Արարչին ու Ստեղծողին, անմատույց Լույսին, ամեն մի մտքից գերազանց Ճառագայթին, ուր չկա նվաստություն ու մեծություն, ծերություն ու մանկություն, ավագություն ու կրտսերություն, այլ Երեք կատարյալ Անձեր՝ միացած Մի անբաժանելի Բնության մեջ, մի կամք և մի Աստվածություն, մի թագավորություն և մի զորություն:

Անսկիզբ և անպատճառ Հայրը ծնեց իր անսկիզբ Բանին՝ մշտնջենավոր և անբաժան Որդուն, ըստ այն խոսքի. «Իմ որովայնից (այսինքն՝ սրտիս էությունից ու բնությունից) արուայակից առաջ ծնեցի Քեզ»[1], *Որն էլ պատկերն ու կերպարանքն է աներևույթ Հայր Աստուծո, ամեն բանով նման և հավասար Իր Ծնողին:*

Սուրբ Հոգին բխումն է Հայր Աստծու էությունից ու բնությունից և ըստ Գրքի. «Նրա բերանի Հոգին է»[2], *մշտնջենավոր*

[1] Սաղմ. ԾԹ 3

[2] Սաղմ. ԼԲ 8

է, անսկիզբ, ամեն ինչում և ամբողջովին հավասար Հորը և Որդուն:

Եվ է ճշմարիտ Հայր Աստված, Որը [չի գոյացել] որևէ մեկից, և Միածին Որդին, Որը ծնված է Հորից և այլ ոչ մեկից, և Ճշմարիտ Հոգին, Որը ելնում է Հորից և տրվում է Որդու միջոցով, Որոնց էլ երկրպագելով՝ պաղատում ենք, որ Իրենց անպատմելի շնորհների վտակները բխեցնեն մեր հոգուց ու մտքից, որ անբան իմաստակներին անգամ բանական է դարձնում՝ ըստ Տիրոջ բարձրագույն հրամանի, որ ասում է. *«Ով Ինձ հավատում է, նրա ներսից [կենդանի ջրերի] գետեր պիտի բխեն»*[3]*:*

Նաև փափագելով աղերսենք լույսի Հորը՝ կրկնելով մարգարեի խոսքը. *«Մեր հոգևոր ձեռնարկության գործերը ուղղի՛ր և հաջողեցրո՛ւ»*[4] *և ամեն ժամ պահապան ու օգնակա՛ն եղիր մեր տկարությանը, ո՛վ անբաժանելի Սուրբ Երրորդություն, որպեսզի Քո ուղիղ դավանությամբ բարի և մաքուր վարքով ապրենք աշխարհում և ննջենք գերեզմանում, իսկ վերջին օրը արթնանանք Քո զորությամբ և արժանանանք դասվելու սուրբերիդ երամին, նաև անմարմինների բանակի հետ՝ անսպառ ուրախություններին և անլռելի ձայնով օրհնենք համագո և անբաժանելի Ամենասուրբ Երրորդությանդ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Բ. Թագավորազն և քրիստոսակիր մեծ իշխան պարոն Պաղտինի նամակը՝ ուղղված ի պատասխան գերիմաստ Վարդան վարդապետի թղթի

Սուրբ և արդյունավոր Վարդան վարդապետի քրիստոսակիր անձին և Քրիստոսից հետո մեր հույսին.

ո՛վ եղբայր, ես՝ Պաղտինս, ընթերցեցի պատվական ու ողջունաբեր նամակդ, և շատ ուրախացանք քո բարի ու հոգեշահ խրատներով, որ ուղարկել ես մեզ բարի գործերի համար, և հոժարությամբ ընդունեցինք, իբրև Աստուծո հրամաններ: Եվ այնպես ուրախացանք, կարծես ողջացած տեսանք մեր հարազատ ննջեցյալներին՝ սուրբ քահանա Բարսեղին, մեծ իշխան Սմբատին և մեր պանծալի նախնի աստվածահաճո Բարսեղ եպիսկոպոսին: Առավել ուրախացանք գրքի համար, որ առաքեցիր մեզ, որովհետև այն հավատի արմատ է և ամբողջովին Սուրբ Երրորդության գանձարան, որով լուսավորվեցինք հոգով ու մարմնով և ավելի հստակ իմացանք մեծ և աստվածային խորհուրդների մասին: Նաև ա՛յս իմացիր, որ Աստծուց ձեզ պես ընտրյալ գիտնականներին ուղղված մեծ հրաման կա, որ անընդհատ հիշեցնեք մեզ Աստուծո պատուիրանները, որպեսզի երկրավոր հոգսերը և իշխանության զբաղվածությունը չխաբեն մեզ, և կարողանանք մնալ արդարության շավիղներում և հոգ տանել Աստուծո իրավունքների համար: Եվ մարդասեր Աստծուց հայցում ենք, որ ձեր սուրբ աղոթքներով ձեր խրատական խոսքերը շահեկան դարձնի մեր լսելիքին՝ ըստ Իր լուսավորող պատգամների. *«Սերմանվեց լավ ու պարարտ հողի վրա և բուսնելով՝ հարյուրապատիկ պտուղ տվեց»*[5]*:*

Աղաչո՛ւմ եմ ձեզ, որ մեզ և մեր ննջեցյալներին անմոռաց պահեք ձեր մաքրափայլ աղոթքներում և մեզնից անպակաս անեք ձեր բարի ու հոգեշահ խրատները: Նաև առաքեք մեզ Աստուծո օրենքները գրավոր, որպեսզի լինեն մեզ մոտ և լուսավորեն մեր հոգին ու միտքը, և Քրիստոսն էանա մեր մեջ:

[3] Հովհ. Է 38

[4] Սաղմ. ՁԹ 17

[5] Ղուկ. Ը 8

Գ. Նույն Վարդանի թուղթը. գովաբանական խոսք իշխանի խոնարհության մասին

Ո՛վ բարձրապատիվ, մեծագահ և թագավորազն, Աստծուց մեզ ընձյուղված պանծալի բողբոջ, աստվածազոր Պաղտի՛ն իշխան, ես՝ հողս Վարդան, լցվեցի անճառելի ցնծությամբ ու գոհություն վերառաքեցի Աստծուն, որ շնորհել է քեզ հեզ ու խոնարհ հոգի՝ ուրախանալու Աստուծո օրենքներն ու բարձրագույն հրամանները լսելիս, որ փոքր-ինչ հիշեցրի ձեզ գրավոր կերպով:

Քո իսկ նամակից ճանաչեցի հեզությունդ, որ կատարյալ ես հոգևոր իմաստությամբ, քաջատեղյակ Աստուծո օրենքներին, գիտես Նրա կամքը, կարող ես ուրիշներին ուսուցանել և կարիք չունես մեզնից կամ մեկ ուրիշից սովորելու, որովհետև Եսայի աստվածաբան մարգարեն ասում է. «Լցվեց երկիրը Տիրոջ գիտությամբ, նման առատ ջրերին, որ լցրեցին համատարած ծովը»[1]: *Եվ եթե հինգ կամ յոթ տարեկան երեխաներն անգամ գիտեն Աստուծո հրամանները, ապա ուր մնաց, թե ծերերը կամ ձեզ նման իմաստուն իշխանները: Նաև տեսնում ենք, որ արժանավոր և անարժան տեղերում լսվում ու քարոզվելով ավետարանվում են Աստուծո օրենքները, այնքան որ աստվածգիտությունը առատացավ և տարածվեց աշխարհի չորս կողմերում: Իսկ հիմա քեզ համար կատարվեց այն գիրը, որ ասում է.* «Բացատրի՛ր պատճառը իմաստունին, և նա ավելի իմաստուն կլինի, և խրատի՛ր արդարին, և նա կսիրի քեզ»[2]:

Որքա՜ն բարի է մարդու համար, որ ստացել է [Աստուծո] գիտությունը և պահում է այն: Հիրավի մեր Տեր Հիսուս Քրիստոսը գովաբանեց խոնարհությունը, որն Ինքն իրագործեց և նույնն էլ մեզ հրամայեց անել: Դու էլ ձգտեցիր նմանվել նրան, ով քաջատեղյակ և հմուտ է Նրա անեզրական բարիքներին ու երանությանը, ով խոնարհությունը գանձած է պահում երկնքում: Դրա համար էլ դու հեզությամբ այն հանձն առար, որովհետև խոնարհ և ընդունելի խոսքերդ, որ կային հեզահայաց քո հրովարտակում, արթնացրին ինձ աշխարհիկ դեգերումների քնից, իսկ քո աստվածային խնդրանքը, որ հրամայեցիր Աստուծո օրենքները գրավոր հանձնել ձեզ, հարստացրեց ինձ աստվածային հոգևոր գանձով:

Քանզի նախքան քո խոնարհ և վեհ նամակն ստանալը՝ գիշերային քնի անուրջներում տեսա, որ կանաչասաղարթ վարդենիների բողբոջած ծայրերից լուսափայլ մարգարիտներ էի հավաքում ու ծրարելով՝ պահում: Եվ սա թույլ տվեց մոռանալ մեր տգիտությունը, որովհետև մեր կարողությունը հույժ անբավարար ու անպատշաճ էր՝ ձեռնարկելու այս աստվածային գործը, որովհետև չունեմ կատարյալ գիտության կարողություն ու հանճարի իմաստություն: Բայց դարձյալ Աստծուն վստահեցի և Նրա խնամածությանն ապավինեցի՝ գրի առնելու Աստուծո օրենքները, որոնց դուք էլ քաջատեղյակ եք, և հանձնելու ձեր մեծագահ իշխանությանը, որ դրանք մնան ձեզ մոտ ի շահ ձեր անձի և հօգուտ ունկնդիրների: Սակայն մի՛ ձանձրացեք Տեր Աստուծո օրենքները կրկին լսելուց՝ ասելով. «Քաջածանոթ եմ Աստուծո պատվիրաններին. ինչի՞ համար դրանք լսեմ»: Արդ, ստույգ իմացի՛ր, որ չար սատանան է դրդում խորհելու ու ասելու նման բաներ, որ խավարով լցնի մեր հոգին, որովհետև լավ գիտի, թե որքան ավելի շատ լսենք Աստուծո հրամանները, այնքան ավելի կլուսավորվենք հոգով:

Թեպետև մեկն է արեգակը, բայց ամեն օր ցանկություն ունենք տեսնելու արևածագը՝ բնավ չձանձրանալով նրանից: Այդպես էլ պետք է միշտ ցանկանանք լսել Տեր Աստուծո օրենքները, որոնք ամփոփված են աստվածեղեն Գրքերում:

[1] Ես. ԺԱ 9

[2] Առակ. Թ 9

Քանզի գրասերը աստվածասեր է կոչվում և է: Հիրավի գրված է. «Երանելի է այն այրը, որի շուրթերից չի հեռանում Աստուծո օրենքը»[1], որովհետև Աստված Ինքն էլ չի հեռանում նրանից: Գրված է նաև. «Քո պատվիրանները սիրեցի առավել, քան Արաբիայի ոսկին և տպազիոնը»[2]: Դարձյալ՝ «Քո խոսքերն ինձ համար քաղցր են առավել, քան մեղրախորիսխը»[3]: Ինչպես նաև՝ «Քո խոսքերն իմաստնացնում և լուսավորում են երիտասարդներին»[4]: Իսկ Տերն Ավետարանում գոչում է. «Այն խոսքը, որ Ես ձեզ ասացի, հոգի է և կյանք»[5]: Եվ գիտես, որ կան աստվածային պատգամներ, թե՝ «Միայն հացով չէ, որ ապրում է մարդը, այլ ամեն խոսքով, որ ելնում է Աստուծո բերանից»[6]. նաև բոլոր Աստվածաշունչ Կտակարաններն Աստուծո բերանի խոսքերն են:

Լսել եմ, որ գրասեր ես, ո՛վ աստվածասեր Պաղտին իշխան, և աղաչում եմ, որ չձանձրանաս հոգեպատում գրքերի խոսքերն ունկնդրելիս, որովհետև երանելի է նա, ով սիրում է Աստուծո Գրքերը, որովհետև նրա մեջ է բնակվում Սուրբ Երրորդությունը: Երանելի է այն մարդը, ով սիրով ու մեծ ցանկությամբ է ընթերցում աստվածեղեն Գրքերը, որովհետև նրա շուրջը պարում են հրեշտակները, նրան շրջապատում են առաքյալներն ու մարգարեները, հայրապետներն ու բոլոր սուրբերը, և նա միշտ խոսում է նրանց հետ Գրքերի միջոցով, իր աչքի առաջ տեսնում է բոլոր արդարների երանությունն ու հանդերձյալ աշխարհը: Եվ եթե դու էլ այդ աստիճան գրասեր լինես, ո՛վ քրիստոսասեր իշխան, ապա քո իսկ բարեգործությամբ երկար ժամանակ կպահպանվես Աստուծո Աջով, հոգով և մարմնով բազում տարիներ խաղաղ կապրես

[1] Առակ. Գ 16

[2] Սաղմ. ՃԺԸ 127

[3] Սաղմ. ԺԸ 11

[4] Սաղմ. ՃԺԸ 130

[5] Հովհ. Զ 64

[6] Մատթ. Դ 4, Բ Օր. Ը 3

աշխարհում, ինչպես նաև կգովաբանվես Աստուծո և մարդկանց կողմից աշխարհից հեռանալու՝ վախճանիդ օրը, իսկ ահավոր դատաստանին ահագնահայաց Դատավորի առաջ աջակողմյան դասում քո ողջ ննջեցյալների հետ միասին կարժանանաս լուսավոր ու անճառելի բրաբիոններին և անթառամ պսակներին արքունի հայրական տան բարի ծառաների հետ, որտեղ անսպառ հարսանիք և զանազան օթևաններ [են պատրաստված] նրանց համար, ովքեր մաքրվեցին հոգով և առանց ախտերի դուրս եկան աշխարհից: Նրանք նախապես կապված էին և կրկին անխզելի կապով միացան անստվեր լույս Հիսուս Քրիստոսին, Որն անեղ ու աներևույթ Աստուծո պատկերն ու կերպարանքն է, երեսի լույսն ու զորությունը, Որը միշտ փառավորված է Հոր անսահման կատարելության և Սուրբ Հոգու անհասանելի մեծության հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Դ. Վերին Երուսաղեմի և արդարների անճառելի խնդության ու հանգստի մասին

Բե՛ր քո աստվածապատկեր միտքը, ո՛վ աստվածանման իշխան, և Հոգու սիրով անխզելիորեն կապի՛ր աստվածային խոսքերին: Բարձրացի՛ր հոգովդ աշխարհիկ դեգերումներից, արագորեն զարթնի՛ր իշխանության խաբուսիկ փառքի քնից, որովհետև Դավիթ մարգարեն մեծ ցավով գոչում է և ասում. «Մեծությունն ու փափկությունը ես լույս էի կարծում, սակայն այն խավար էր թշվառիս շուրջը, որը չգիտեի»[7]:

Արդ, ե՛կ հոգու թևերով մեղվի պես հանդարտ թռչենք դեպի աստվածեղեն Գրքերի մարգագետինները, որոնք գտնվում են Աստուծո Հոգու ջրերի դալար վայրերում, այն-

[7] Սաղմ. ՃԼԸ 11

տեղից քաղենք աստվածային խոսքերի նուրբ ծաղիկները, կապենք մեր մտքի բազուկներին ու թևերին, բերենք դնենք Աստուծո մեղվանոցներում և ամբարենք մարդկանց մտքի բջիջներում՝ ի շահ մեր անձերի և հօգուտ Ադամի ողջ սերունդների, որպեսզի ամենքս դառնանք Աստուծո մեղվանոցներ, մեր Կենարարի քաղցրահամ խորիսխը բերողներ:

Բայց նախ պետք է իմանալ հետևյալը. թե հանդերձյալ կյանքը, որը պիտի գա, առավել մոտ է, քան անցած ժամանակը, որը մեզնից առաջ էր: Որովհետև կրճատվեց ժամանակը, և ժամանող Դատավորը հասավ մեր դռանը: Դրա համար պետք է սկզբում քննենք այն, որ պիտի գա, և ուր պիտի գնանք այստեղից, այսինքն՝ թե ինչ են հանդերձյալ աշխարհն ու մշտնջենավոր հանգիստը, որ պահված են Աստուծո ընտրյալների համար: Եվ ապա այնտեղից ետ գանք և քիչ-քիչ քննենք մինչև մեր ժամանակը, որում ապրում ենք:

Առաջին գիրքը, որ առաքեցի ձեզ, իր մեջ ամփոփում է հավատքի հաստատումն ու Հայաստանյայց Սուրբ և Ուղղափառ Եկեղեցու կարգը: Իսկ այս աստվածաբնակ գրքույկում գրի կառնենք շատից քիչը, որ սովորեցինք աստվածային Գրքերից.

հանդերձյալ աշխարհի և անսպառ կյանքի մասին, ինչպես նաև՝

հոգիների մասին, թե ինչպիսիք են,
բարի գործերի մասին, թե որոնք են,
դժոխքի մասին, թե ինչ է,
չար գործերի մասին, թե որքան են,
տասը կատարյալ թվերի մասին,
Տիրոջ գալստյան ու Նրա դատաստանի մասին,
Նեռի ու դառը ժամանակների մասին,
ծուլության ու մեր ժամանակներում մեղքերի հանդգնության մասին,

աղոթքի մասին ի պետս աշխարհի:

Զնայած այս ամենը լավ գիտեն և ուսանել են աստվածային Գրքերից բոլորը՝ և՛ մեծերը, և՛ փոքրերը, սակայն մենք կրկին կհիշեցնենք [այն] ոչ թե խրթին, թաքուն ու ծածուկ խոսքերով, բառերը ճարտասանական իմաստներով պաճուճելով, այլ պարզ ու հստակ խոսքերով պիտի պատմենք, որ անօգուտ չլինի լսողներին, որոնք դրանց կարիքն ունեն, որ երբ տգետ չինականներն ու գեղջուկները լսեն, հասկանան ու օգուտ ունենան սրանից, որովհետև Աստված նման դեպքում է ուրախանում և ցնծում բերկրելով:

Արդ, ժամանակն է արագաթև արծվի պես բարձրանալ վեր՝ դեպի օդի վերին շերտերը: Ելնենք անձրևի, կարկուտի և ամպերի շարժման գոտիների, մոլորակ աստղերի և կենդանակերպերի ընթացքի խորանների միջով, արեգակի շրջանի, լուսնի շավղի ու խավարամած օդի միջով մինչև արեգակից վեր գտնվող ջրային կամարը, որն օվկիանոսից բարձրացավ Արարչի հրամանով և պրկված է ինչպես խորանաձև մի փեղկ: Այն վարագույր է հանդիսանում ընդդեմ հրեղեն եթերի, որպեսզի վերին հուրը չայրի ու չմոխրացնի բոլոր արարածներին: Եվ վեր բարձրանալով ջրային կամարից, որ սարերի պես դեզ-դեզ կուտակված են բարձունքում, մտնենք հրեղեն եթեր ու բարձրանանք լուսեղեն երկինք:

Այնտեղ կտեսնենք Աստուծո երկնավոր անմարմին հրաբուն անթիվ զորքերի դասերը: Եկեք շրջենք նրանց միջև, ընթանանք նրանց փողոցներով ու դիտենք նրանց հրապարակները, խորաններն ու կայանները, ինչպես նաև քննելով՝ ճանաչենք նրանց կարգերն ու օրհնված փառաբանությունները:

Ահա՛, սիրելի՛ս, [մտքով] բարձրացանք երկինք և մտանք անճառելիների մոտ: Արդ, մի պահ միտքդ պահիր այստեղ և նայիր երկրավոր կյանքի ունայն զբաղմունքներին. ապա

միայն կարող ես տեսնել, թե որտեղ են երանությունները:

Արդ, սա է հոգեղեն հրեղենների բնակարանը, սա է Աստուծո անմարմին զորքերի գավառը, սա է երանելիների երկիրը, սա է Վերին Երուսաղեմը, սա է Աստուծո բարձրագույն լեռը՝ ամուր Սիոնը, և Վերին ու Նոր Երուսաղեմը, այսինքն՝ Սուրբ Քաղաքը, որը ցանկալի է բոլոր ընտրյալ սուրբերին: Այնտեղ է բազմաչարչար ու կատարյալ սուրբերի բնակարանը:

Նա է մայրը Պետրոսի ու Պողոսի, ինչպես նաև նրանց, ովքեր նմանվողներ կլինեն նրանց:

Արդ, անմարմինների դասերը, որոնք բնակվում են Աստուծո Վերին քաղաքում՝ Նոր Սիոնում, գրքերում յոթ դաս նշվեցին, սակայն այլ տեղերում ինը դաս սահմանվեցին: Ոմանք ասացին, թե գոհարների պես շարված՝ կամարաձև շրջապատում են Աստուծո աթոռը՝ մեկը մյուսից հետո և մեկը մյուսից ավելի հեռու: Մեկ ուրիշն էլ ասաց, թե սանդուղքի աստիճանների նման մեկը մյուսից բարձր է, իսկ ամենավերևում՝ անմատչելի լույսի խորանում, հաստատված է Աստուծո անձեռակերտ և սոսկալի աթոռը:

Անմարմինների զորքերը բաժանված են երեք խորաններին մեջ, ամեն մի խորանում երեք դասեր են: Առաջին խորանում են գտնվում սերովբեները, քերովբեները և բազմաչյա աթոռները, որոնց վրա բազմում է բարձունքների զարմանագործ Թագավորը, նրանք մեկը մյուսից առավել մոտ են Աստծուն: Միջին խորանում են գտնվում տերությունները, զորությունները և իշխանությունները՝ մեկը մյուսից ավելի խոնարհ: Վերջին խորանում են գտնվում պետությունները, հրեշտակապետներն ու հրեշտակները:

Հրեշտակների ստորին դասերը առավել մոտ են մարդկանց, քան մյուս անմարմին զվարթունները: Ինչպես երկնքի լուսատուների, այնպես էլ երկնային զորքերի մեջ կան

մեծեր և փոքրեր: Հրեշտակները մարդկանց են հասցնում Աստուծո հրամանները. ինչպես գործում էին մարգարեների, առաքյալների դասի և բոլոր սուրբերի հետ, ուր առաքում էր նրանց Աստված, այդպես է նաև այժմ: Ըստ Գրքերի՝ նրանցից Աստուծո հրամանով Ադամի սերունդների համար պահապաններ կան: Եվ մարդու կողմից գործված ամեն մի արարք՝ թե՛ չար և թե՛ բարի, ամեն օր արևամուտին հրեշտակը, ակնթարթորեն բարձրանալով երկինք, պատմում է Աստուծո առաջ՝ գրած ներկայացնելով մարդու ամենօրյա գործերը, խոսքերն ու խորհուրդները, և դարձյալ գալիս է պահպանելու մարդուն: Դրա համար էլ Տերը բարձրագույն հրամանով նշեց. «Ինչպես լսեմ, այնպես կդատեմ ձեզ»[1]: Եվ՝ «Մի՛ արհամարհեք աղքատներից որևէ մեկին, որ ձեզնից նվաստ են թվում, որովհետև նրանց հրեշտակները մշտապես տեսնում են Իմ Հոր երեսը, որ երկնքում է»[2]: Հրեշտակներն են, որ միշտ հորդորում են մարդկանց ամենայն բարիք գործելու, ինչպես օրինակ՝ գիշերը կողդ խթելով՝ արթնացնում են աղոթքի: Նրանք զգջում են արթնացնում մեր հոգում և մեր աչքերից բխեցնում Աստուծո շնորհների ջերմ արտասուքը, ինչպես նաև հիշեցնում անճառելի հանգստի ու անտանելի չարչարանքների մասին, հիշեցնում են մեր գործած բոլոր չարիքները, որ արտասվելով ապաշխարենք: Նաև ջանում են ամեն ինչով և ամեն ինչում օգնել մարդկանց: Նրանք տրտմում են մեղքը տեսնելիս, ուրախանում բարու հետ միասին, փարվում են արդարներին, իսկ մեղավորներից փախչում են՝ ըստ Գրքերի:

Ինչպես որ մեծապատիվ իշխաններն ավելի մոտ են թագավորին, քան մյուսները, նմանապես էլ սերովբեներն ավելի մոտ են Աստվածության լույսին, որը փայլատակում է Երրորդության աթոռի շուրջը: Եվ Երրորդության լույսն ու

[1] Հովհ. Ե 30

[2] Մատթ. ԺԸ 10

նախախնամությունը ծագում են նախ սերովբեներին և ապա միայն ըստ կարգի անցնում մյուսներին, ինչպես պատուհանի ապակու միջով անցնող լույսը, այն նույնպես անցնելով՝ իջնում է անդունդները և նախախնամելով՝ անսասանելի պահում արարածներին:

Սերովբեների օրհնաբանական երգն է. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, զորությունների Տե՛ր»[1], միջին խորանինը՝ «Օրհնյալ է Տիրոջ փառքն իր տեղում», իսկ ներքևի խորանի օրհնաբանությունն է՝ «Ալելուիա»: Եվ այնքան քաղցրահունչ ու զարմանալի է նրանց երգը, որ եթե հողեղեններից մեկը լսի այն, իսկույն շունչը կկտրվի: Ինչպես մի իմաստուն աստղերի մասին ասաց. «Օդում ընթանալիս այնպիսի քաղցր ձայն էին արձակում, որ եթե մեկը լսեր, շնչասպառ կլիներ»:

Եվ Աստված հրեշտակապետներին պահապաններ կարգեց աշխարհի և տարերքների՝ օդի և ամպերի, ծովի և գետերի, աղբյուրների և վտակների, լեռների և դաշտերի, թռչունների և ձկների, անասունների և մարդկանց վրա: Եվ երբ Աստված մեղքերի պատճառով բարկանում է աշխարհի վրա, հրամայում է հրեշտակապետին՝ արհավիրք բերել աշխարհին՝ լինի մարդկանց կամ անասունների տարաժամ մահ, երաշտ, բույսերի ու պտուղների, ձկների, գետերի ու աղբյուրների նվազություն և այլ պատահարներ, որոնք լինում են աշխարհում, նման այն թագավորին, որն իր գործակալների միջոցով է կատարել տալիս իր հրամանները: Ըստ Հովհաննես ավետարանչի, որն ասում է. «Աստուծո աթոռից հրաման ելավ, որն ահա տեսա, և հրեշտակապետը քանդեց կնիքներից մեկն ու սկավառակից, որն իր ձեռքին էր, հրախառն ցասում հեղեց երկրի վրա. ցամաքեցին աղբյուրներն ու գետերը, պակասեցին ծովի ձկները»[2]: Այսպե՛ս էլ իմացիր՝ բոլոր նեղությունները, որ մեղքերի պատճառով գալիս են աշխարհի

[1] Ես. Զ 3

[2] Հայտն. ԺԶ 1-5

վրա, տարերքները պահպանող հրեշտակապետների ձեռքով են կատարվում:

Նրանք անքուն աչքով ու անլռելի բարբառով օրհնաբանում են Աստվածությանը: Աստուծո աթոռի բուրմունքը և աթոռը շրջապատող փառքերի լույսն է նրանց կերակուրն ու ըմպելիքը, ուրախությունն ու հանգիստը, որ աչակերտները տեսան և հոտոտեցին Թաբոր լեռան վրա, և զարմանալի անուշահոտությունից նրանց պատեց ցանկալի մի թմրություն:

Հրեղենների բազմություններին թիվ ու հաշիվ չկա, ինչպես նաև չկա լեզու, որ կարողանա մեզ պատմել նրանց կայանների, հարկերի կամ գավառի մասին, որովհետև նրանց մեջ է բնակվում Աստված:

Սիրելի՛ս, ահա այն խորանը, որի սյուները չշարժվեցին և չեն շարժվի, և պիղծերն ու անմաքուրները չեն կարող ոտք դնել Նրա աստվածակոխ հրապարակներն ու փողոցները: Արդ, սա է ցանկալի բարձրագույն Սիոնը, սա է Նոր Երուսաղեմը, սա է անմահների քաղաքը, սա է մաքրազարդ կատարյալ անդրանիկների ժողովարանը: Այս մասին է գրում ավետարանիչը. «Նայեցի բարձունքներին, և ահա Սիոն լեռան վրա՝ Գառան առջև, կային լուսազարդ պատմուճաններով քառասուն հազար կույսեր, որ աղաղակելով գոչում էին. «Օրհնյալ ես Դու, Աստուծո՛ Գառ, որ հանում մեզ զոհվեցիր խաչի վրա և Քո իսկ արյունով ժողովեցիր մեզ բոլոր ազգերի ու ժողովուրդների, սերունդների ու լեզուների միջից և մեզ Քո մեծության պաշտոնյաներ ու փառաբանիչներ կարգեցիր»[3]: Տեսա նաև Աստուծո քաղաքը Վերին Երուսաղեմում և Աստվածության անձեռակերտ աթոռը. բարձրագույն էր նրա պարիսպը և կառուցված լուսավոր պատվական ակներից՝ զմրուխտից, տպազիոնից, հասպիսից և բյուրեղից, որոնք Աստծուն հաճելի սուրբերն ու ընտրյալների դասերն են: Այն տասներկու դուռ ուներ,

[3] Հայտն. ԺԴ 1-5

ամեն դռան փեղկը՝ մեկական լուսավոր մարգարիտ, որոնք առաքյալների ու մարգարեների դասերն են: Որովհետև նրանք եղան ավետյաց կյանքի դռներ և քարոզիչներ, և արդարները նրանց միջոցով մտան Վերին Երուսաղեմ: Քաղաքի կենտրոնում էր Աստվածության անձեռակերտ աթոռը, որի վրա բազմած էր զարմանագործ Աստված: Եվ Աստված էր այդ քաղաքի լույսը, շենը և հարկը: Եվ ահա տեսա, որ Աստուծո աթոռից սառնորակ գետ էր բխում. դա կենդանարար Սուրբ Հոգին էր: Գետը հոսում էր քաղաքի հրապարակների ու փողոցների միջով, և նրա այս ու այն ափին կային կենդանի ծառեր, որոնք արդարների դասերն էին, որ ներծծում էին կենդանարար Սուրբ Հոգու շնորհները և ասում էին. «Ահա անցան աշխարհի առաջին ձևերն ու գործերը, և սկսվեց նորը, որը մշտնջենավոր կյանքն է, արդարների աննկարագրելի հանգիստն ու Հոր լույսի անմահության առագաստը»[1]: Օ՜ երանելի կյանք ու անճառելի ցնծություն, որ առաջին խորանին հաջորդող միջին խորանն է, ուր արդարների դասերն են մտնում՝ ժառանգելով այն, ըստ այն խոսքի. «Լցրե՛ք ընկածների տեղերը»: Այնտեղ չկա աղաղակ ու տրտմություն, վիշտ ու նեղություն, ցավ ու հեծություն, սուգ ու արտասուք[2], որովհետև չկան մարմնական կարիքներ, ոչ էլ ախտեր և մեղքերի տեսակներ, այլ տիրում են միայն զարմանալի ուրախությունն ու անբաժանելի բերկրանքը: Սա հեզերի երկիրն է, սգավորների մխիթարությունը, նեղվածների հանգիստն ու քաղցածների կերակուրը, սա ողորմածների գանձարանն է, սա աղքատների ու խոնարհների արքայությունն է ու անհաս թագավորությունը: Բոլոր արդարները տեսան այն հեռվից, սիրով կապվեցին, մեծ փափագով հույժ ցանկացան և իրենց այս աշխարհի պանդուխտներ ու նժդեհներ անվանեցին: Եվ բոլոր ժամանակներում հոգու տենչանքով կանչում էին ու ասում. «Ո՜վ Տեր, երբ եմ գալու», և՝ «Հավատում եմ, որ կտեսնեմ», նաև՝ «Հանի՛ր այս բանտից» և՝ «Ազատի՛ր ծառայիդ»[3] և նման շատ այլ խոսքեր: Արդ, այն կյանքի համար սպանվեց Աբելն ու գովաբանվեց: Այդ քաղաքի համար ընտրվեց Սեթն ու մխիթարվեց: Այս խորհրդին էր, որ հավատաց Ենովսը և սփոփեց ինքն իրեն, նաև Ադամից հետո յոթերորդը՝ Ենովքը, այս լուսազարդ խորանների սիրո համար սրբվեց, նվիրվեց, հաճելի եղավ [Աստծուն] և ժառանգեց այն, ինչի մասին խորհեց: Ի սեր անճառելի առագաստի Նոյը հինգ հարյուր տարի կուսությամբ նահատակվելով՝ նվիրվեց [Տիրոջը]: Այն քաղաքում բնակվելու համար Աբրահամն ու Ղովտը պանդխտեցին, Իսահակը մեծ հույսով նվիրաբերվեց, Հակոբը տոկաց հալածանքին, Հովսեփը քաջարիությամբ ողջախոհ դարձավ, Մովսեսը դիմացավ դժվարություններին ու վախճանվեց, Հեսուն կուսությամբ համբերեց. պատերազմելով կռվեց դեջ ախտերի, ասես ահագին առյուծագլուխ վիշապի դեմ: Նույն կերպ ջանացին նաև Եղիան ու Հովհաննեսը. հանուն երանական և անսպառ հարսանիքի՝ թունալից, մորմոքող ու վրնջացող ախտերն հալածեցին և կապելով՝ սանձեցին, դատավորները չարչարվեցին, Սամվելը համբերեց, Դավիթը, Եզեկիան ու Հովսիան մաքրությամբ աղոթեցին, Եսայի մարգարեն սղոցվեց, Երեմիան քարկոծվեց, Եղիան հալածվեց, Եղիսեն հաճելի եղավ Աստծուն, Հովհաննեսը գլխատվեց: Եվ որպեսզի մենք էլ հաղորդակից լինենք անճառելի կյանքին ու անեզր բարիքներին, Հոր Բանը և բարձունքների Տերը, ամենի Ստեղծողը խոնարհվեց և ծնվեց կույս և սուրբ արգանդից, բոլորին Կերակրողը և Մաքուրը կերակրվեց Կույսի մաքուր կաթով, արարածների մեջ Անբավելին ծրարված պատվեց խանձարուրում, ահավորներից Ահավորը չարչարվեց, Սոսկալին

[1] Հայտն. ԻԱ 1-27, Հայտն. ԻԲ 1-3

[2] Հայտն. ԻԱ 4

[3] Սաղմ. ԽԱ 3, Սաղմ. ԻԶ 13, Սաղմ. ՃԽԱ 8, Ղուկ. Բ 29

թքի արժանացավ, կիզող Հուրը մերկ խաչ բարձրացավ, Կենսատուն մարմնով մեռավ, Անբովանդակելին պատանվեց կտավով, ամփոփվեց և ծածկվեց գերեզմանում: Ինքը ոչնչի կարիք չուներ. այս ամենը մեզ համար կամովին տնօրինեց: Հարություն առավ, համբարձվեց ու անմահ հարսանիք խոստացավ մեզ: Սուրբ առաքյալներն ու բոլոր ընտրյալներն, այս տեսնելով, իմացան և լսեցին Քրիստոսից և իրենց մարմինները սպանեցին չարչարանքով. Պետրոսն ու Անդրյասը խաչվեցին, Ստեփանոսը առաջինը քարկոծվելով սպանվեց, Պողոսը գլխատվեց, Մատթեոսը ողջակիզվեց, Թովմասը, Թադեոսն ու մյուս [առաքյալները] սրով կամ գանահարվելով վախճանվեցին, Տիմոթեոսը քարկոծվեց, Իգնատիոսը մանր աղացվեց, յոթանասուն աշակերտները որպես կախարդներ հայհոյվեցին ու վախճանվեցին դառը մահով: Հայրապետները նեղություններ կրեցին ու չարաչար խոշտանգվեցին, վարդապետներն ու քահանաներն անսահման տառապանքներով մաշվեցին, մարտիրոսները զանազան կտտանքներով անբան արարածների պես կոտորվեցին, քերթվելով՝ քերվեցին ու դառնատեսիլ հրով կիզվելով՝ պատարագվեցին, սուրբ կույսերն ու քաջ մենակյացները պատերազմեցին բազմագլուխ ախտերի դեմ:

Արդ, այս ամենը նրանք կամովին հանձն առան անվախճան կյանքի ու անպատմելի հանգստի համար, որովհետև այն բարիքների Տերն ու Առաջնորդը պարզ ու բացահայտ ձայնեց. «Դե վե՛ր կացեք, գնանք այստեղից»[4], և՝ «Դուք այս աշխարհից չեք, որովհետև այլ աշխարհից եք եկել ու հայտնվել»[5]: Բայց անճառելի հանդիստը, անվախճան կյանքն ու զարմանալի ճոխությունը, որն Աստված տալու է սուրբերին արքայության մեջ, աստվածատես Մովսես մարգարեն նմանեցրեց մեղրի ու համեղ կաթի՝

[4] Մարկ. ԺԴ 42, Հովհ. ԺԴ 31

[5] Հովհ. ԺԵ 18, Հովհ. ԺԴ 31

ասելով. «Երկիրն, ուր մտնելու եք, կաթ ու մեղր է բխում»[6]: Նաև սուրբ առաքյալներին հետևող Երենիոսը ցանկացավ երկրավորներիս այլաբանորեն ցույց տալ սուրբերի անքննելի խոնարհությունը հանդերձյալ կյանքում. «Քանզի,- ասաց, - լցված է քաղցրահամ ողկույզներով, հասուն ու համեղ ճշով և անսպառ առատությամբ»: Այս մասին է խոսում մեր Տերը. «Որտեղ Ես եմ, այնտեղ էլ Իմ պաշտոնյան կլինի»[7], և՝ «Փոխադրվեցիք մահվանից կյանք»[8], նաև՝ «Կտեսանեք Իմ փառքը»[9], և՝ «Իմ Հայրը կսիրի ու կմեծարի ձեզ»[10], և՝ «Ես գոտի կկապեմ քո մեջքին և կպատվեմ քեզ»[11], այսինքն՝ կուսուցանեմ, թե ինչպիսին է Իմ Հոր և Հոգու խորհուրդը: Մեր կենարար Տերն այս ամենը բարի կատարեց: Ինչ որ այժմ, ինչպես առաքյալն է ասում, քիչ գիտենք[12], այն ժամանակ դեմ-հանդիման կտեսնենք: Եվ միայն այդ ժամանակ կլինի արդարների ուրախությունն ու ցնծությունը, որովհետև նորոգվելով՝ կկենդանանան Աստվածության բուրմունքից և սերովբեների հետ միասին կերգեն: Քանզի այն, ինչ աչքը չի տեսել, ականջը չի լսել ու մարդու սրտի մեջ չի ընկել (որովհետև աշխարհում չկա այդպիսի բարիք), այն է պատրաստել Աստված նրանց համար, ովքեր սիրեցին Իրեն[13]: Բայց հատուցումը կլինի ըստ գործերի, որ սուրբերը կատարեցին աշխարհում: Նրանք, ինչպես աստղերը երկնքում, մեկը մյուսից պայծառ են, և թվում է, թե սրանք են նրանց բազում օթեվանները, կամ այն է, որ այժմ կասեմ: Արդ, Վերին Երուսաղեմը բնակատեղին

[6] Ղևտ. Ի 24, Թիվք ԺԳ 28

[7] Հովհ. ԺԲ 26

[8] Հովհ. Ե 24

[9] Հովհ. ԺԵ 24

[10] Հովհ. ԺԶ 27

[11] Ղուկ. ԺԲ 37

[12] Ա Կոր. ԺԳ 9

[13] Ա Կոր. Բ 9

է կատարյալ բարեգործների, որոնք հարյուրավորներն են: Դրախտը հանգստավայրն է կույսերի, որոնք ունեն ողորմության յուղը և հոգու և մարմնի խոնարհություն. սրանք վաթսունավորներն են: Եվ աշխարհը նորոգվելով կդրախտանա և կլինի այն ամուսնացածների հանգստավայրը, որոնք միայն որդեծնության նպատակով պարկեշտությամբ մնացին աշխարհում, որոնք նաև մնացած գործերում էին առաքինի. սրանք երեսունավորներն են:

Նախնիների կողմից գրված է, թե ծերունիները, որոնք կույս Հովհաննես ավետարանչի մոտ էին, լսեցին, թե ինչպես ասաց իրենց. «Կար ժամանակ, երբ մեր Տերը խոսում էր արդարների անճառելի հանգստի մասին և մարմնավորներիս օրինակներ էր ցույց տալիս ու պատմում հույժ զարմանալի բարիքների մասին, որ լինելու էր հանդերձյալում: Սակայն Հուդա Իսկարիովտացին թերահավատ գտնվեց Տիրոջ խոսքերի նկատմամբ, և Տերն ասաց նրան. «Նրա համար չես հավատում Իմ անսուտ խոսքերին, որովհետև չես կամենում հոժարամիտ ժառանգորդ լինել ճշմարիտ բարիքների, որ խոստանում եմ ձեզ»»:

Սակայն իմացի՛ր նաև այս, ո՛վ քրիստոսասեր Պաղտին իշխան, որ Հովնաթանի նման, որ Դավթի նկատմամբ [լցված էր] բարի ցանկությամբ ու հոգեխառն սիրով, կապեցիր իմ միտքը. որ թեպետև արքայության մեջ մեծ ու փոքր է հանգիստը, որ Աստված տալիս է սուրբերին ըստ նրանց թափած քրտինքի, բայց լի է այնքան անասելի բերկրանքով, որ եթե մեկը դույզն-ինչ արժանանում է դրանց, անգամ օվկիանոս ծովից վերցրած մի կաթիլի կամ անհուն անձրևի մի շիթի չափ, այնպես է ցնծում և ուրախությամբ զվարճանում, որ մտքում համարում է, թե Աստուծո [պարգևած] բովանդակ հանգիստն ու ողջ ուրախությունները, նաև ընտրյալ արդարների բոլոր փառքերն իրեն տրվեցին: Որովհետև այնտեղ

չկա նախանձ ու չարակնություն, մախանք ու ատելություն, մահ կամ որևէ մեկից երկյուղ և մարմնական կարիքներ: Եվ ըստ առաքելական խոսքի. «Անհայտանում, ընկղմվում ու ծածկվում է այս ապականացու ու մահկանացու մարմինը Աստուծո այն կյանքում»[14], նաև ըստ Գրքի. «Այնժամ Աստված բնակվում է նրանց մեջ»[15]. [Աստված] միշտ հայտնվում է արդարներին ըստ նրանց արժանավորության, որքանով որ կարողացան մաքրել իրենց միտքը: Ինչպես հայելին, որն հղկվելով որքան սրբվում է, [այնքան] ավելի պայծառ է ցույց տալիս մարդկային պատկերն ու տեսքը, նույն կերպ էլ Աստված էր երևում մարդարեներին, որովհետև նրանք իրենց մտքի մաքրությամբ արժանի եղան աստվածտեսության: Այստեղ է, որ կատարվում է ընտրյալներին ուղղված տերունական խոստումը՝ «Երանի՜ նրանց, որ մաքուր են սրտով, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն»[16] ըստ իրենց կարողության: Եվ [Աստված] կմխիթարի նրանց ու գգվելով կհամբուրի, ինչպես մայրն իր մանկանը, և կկատարվի գրվածը, որն ասում է. «Աստուծո խորանն այն ժամանակ կլինի մարդկանց մեջ. նրանք կդառնան նրա ժողովուրդը, իսկ Նա՝ նրանց Աստվածը»[17]: Իսկ նրանք այն անվախճան կյանքում կթագավորեն Նրա հետ անսահման ժամանակներ, ըստ այն խոսքի. «Տեսա, որ ննջեցյալները հարություն առան երկրի հողից, և Բարձրյալի կողմից թագավորություն տրվեց սուրբերին, և նրանք, մշտնջենավոր կենդանությամբ Աստուծո հետ թագավորելով, կվայելեն հանգստությամբ և կմիանան լուսեղենների զորքին», և ըստ Տիրոջ բարձրագույն հրամանի. «Կլինեն ինչպես հրեշտակները երկնքում»[18]՝ արքայության

[14] Բ Կոր. Ե 4

[15] Ա Հովհ. Դ 5-16

[16] Մատթ. Ե 8

[17] Հայտն. ԻԱ 3

[18] Մատթ. ԻԲ 30

մեջ, ամեն ինչում լիացած, առանց ախտի և կլուսափայլեն ավելի պայծառ, քան արեգակը: Եվ ինչպես գրված է. «Սիրով ու անձկալի գորովով առաջին արդարը կճանաչի վերջին արդարին» (իսկ սա առավել է, քան որդիական ու եղբայրական սերը, որ ունենք այս մարմնավոր կյանքում), ինչպես Հովհաննեսը ճանաչեց մեր Տիրոջը Հորդանան գետում, և կամ ինչպես Տիրոջ առաքյալները ճանաչեցին Մովսեսին ու Եղիային Թաբոր լեռան վրա:

Եվ լուսափայլ աղավնիների նման երամ-երամ կբարձրանան Հոր լույսի անմահական առագաստը ու պարելով կցնծան անվախճան հարսանիքում: Ճախրելով լուսավոր ու թեթև մարմնով՝ կշրջեն սերովբեների ու փայլակնացայտ բազմաչյա քերովբեների միջև և, մեծ համարձակությամբ թևածելով, կգնան նրանց լուսափայլ հրապարակներն ու փողոցները և ճառագայթարձակ լույսով կփայլեն, պարելով կխառնվեն նրանց անթիվ բազմությունների խմբերին: Եվ նրանք ուրախությամբ կցնծան, հույժ կգովեն արդարների բոլոր դասերին և բաղձալի սիրով կհամբուրեն նրանց՝ ինչպես հուրը հրի հետ միանալով ու բաժանվելով: Եվ կասեն սուրբերին. «Դուք իրապես արժանի եք երանության, որովհետև արհամարհեցիք անցավորը և սիրեցիք այս մշտնջենավորը»: Եվ ավետելով նրանց՝ կասեն. «Ուրախացե՛ք մեզ հետ, մե՛ր սիրելիներ, ցնծալով խայտացե՛ք, գործակիցնե՛ր ու երբայրնե՛ր, որովհետև այժմ արձակվեցիք կապանքից արձակված պես և նմանվեցիք կանաչագեղ սեզի վրա գտնվող լուսակեզ գառնուկների: Ահա՛, սիրելինե՛ր, այժմ եղանք մի Եկեղեցի և Աստուծո մի ժողովուրդ, ինչպես նախկինում, երբ ձեր հայր Ադամը լուսազարդ կերպարանքով գտնվում էր դրախտում և դեռ չէր խաբվել օձից: Հիմա անահ ու աներկյուղ ցնծալով՝ ծա՛փ զարկեք, որովհետև չկան խաբող օձն ու պատրող կինը, չկա նաև մեկը, որ զարհուրեցնի կամ սարսափեցնի ձեզ: Ուստի ցնծացե՛ք խնդալով ու լցվե՛ք բազում բերկրանքներով, որովհետև ձերն է այս անախտ ու պայծառաթագ սուրբ հարսանիքը, և անսահման է այս վայելքը: Ձեզ են պատկանում Հոր առագաստներն ու լուսավոր անուշաբույր խորանները: Ձերն են պայծառ բրաբիոնները, որոնք գտնվում էին արքայական տանը՝ կազմված ձեր իսկ ճգնությամբ ու քրտինքով: Ձերն են զարմանագործ հարսնարանի զանազան բազմոցներն ու հանգստյան գահերը՝ պաճուճված մարգարտաշար զարդերով ու ընդելուզված հրաշակերպ հորինված տասներկու ակնաքարերով, որոնք Ահարոնի վակասի վրա էին, և որոնք դուք ինքներդ կերտեցիք վշտերով ու տառապանքներով: Այդ դուք եք սուրբ և ճշմարիտ հարսները, որ սուրբ սիրով կապվեցիք ձեր Քրիստոս Փեսային ու գիշերով գնացիք Նրան ընդառաջ և Նրա հետ մտաք Նրա խորանները: Հիրավի սիրեց ձեզ գթությամբ ու չարչարվեց ձեզ համար: Հիրավի պսակեց ձեզ ու համբուրեց ձեր մաքուր երեսներն Իր աստվածային բերանով և Իր ահավոր գրկում կգգվի ու կհանգստացնի ձեզ անախտ, աստվածային անկողիններում:

Ահա՛, սիրելինե՛ր, կարճ տևեց ձեր տառապանքը, քրտինքը, չարչարանքն ու համբերությունը, որ կրեցիք աշխարհում, սակայն անբավ են բարիքները, անհատնում՝ ցնծությունն ու հանգիստը, որ ստացաք: Արդ, աներկյուղ ժամանեցեք, քանզի անսպառ, մշտնջենավոր և աննախանձ է Տերը, որ տվեց ձեզ նախապես խոստացած Իր պարգևները»: Ընտրյալ արդարներն անմարմիններից կլսեն այս ամենը և կտեսնեն անսահման բարիքները: Այն ժամանակ ձայնելով կհավաքվեն նրանց անթիվ գնդերը, կհիանան սքանչանալով ու զարմացած կաղաղակեն՝ ասելով. «Օրհնյա՛լ ես, արդարադատ ու իրավարար Տեր, որ հանգիստ տվեցիր Քո տառապյալներին: Բայց, ավա՛ղ, նայեցինք աշխարհի գործերին ու

ոտք դրեցինք նրա սուտ և մեղքերով լցված վայելքների մեջ: Եվ մեր սակավ վաստակի և քրտինքի փոխարեն մեզ պարգևեցիր այս անհաս ու անհատնում ուրախությունները: Եթե ճշմարտապես ուսանեինք այս, ապա կատեինք աշխարհն ու չարչարանքով կսպանեինք այս մարմինը՝ սանձելով նրա բոլոր ախտերն ու ցանկությունները: Ծանոթ էինք Քո խոստմանն ու բարիքներին, սակայն չէինք ակնկալում այս ամենը, որ շնորհեցիր մեզ: Հավատում էինք քո խոստմանը, որովհետև մեծ է, բայց ո՞վ կսպասեր այս անճառելի, անեզր ու երանելի հանգստին, որ վեր է ստեղծվածների մտքից և անտեսանելի՝ բոլորին»: Եվ արդ, այսուհետ չկան մարմնական ախտեր ու հոգսեր, և միշտ անլռելի երգով աննինջ օրհնաբանություն են մատուցում Աստվածությանը, և ժամ առ ժամ անսպառ աճում է նրանց սերն ու ցանկությունն առ Աստված: Եվ որովհետև Աստված անհատնելի ու անճառելի սեր է, նրանք էլ սիրեցին Նրան, և մշտապես աճում է Աստվածության հանդեպ նրանց սերը, իսկ Աստվածության սերն ու գութն էլ հավերժ նրանց վրա է:

Եվ արդ, Աստուծո շնորհով գիտենալով այս ամենը՝ ատենք աշխարհը, որովհետև այն սուտ է, սպանենք մարմնական ախտերն ու պիղծ ցանկությունները, անեզրական բարիքների հիշատակն անջնջելի պահենք մեր մտքում ու սկիզբ դնենք բարի գործերի՝ ըստ մեր կարողության: Եվ արդարության գործերով սիրենք բարձրյալ Աստծուն, որ Նա էլ մեզ սիրի այս աշխարհից ելնելուց հետո և արժանացնի երկնային արքայությանը մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ, Որ օրհնյալ է Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Ե. Հոգիների մասին, թե ինչպես են ապրում, և կամ ինչպիսին է նրանց հանգիստը

Ա.Հավասիկ մի փոքր քննեցինք, [թե ինչպիսին է] արդարների հանգիստը, որ նրանց համար պահված է արքայության մեջ, որն էլ պիտի ժառանգեն աշխարհի վախճանին: Ե՛կ այժմ տեսնենք, թե ինչպես են ապրում ննջեցյալների հոգիները, և կամ ինչպիսին է նրանց վիճակը, որովհետև բազում սուրբ հայրեր շատ բաներ ասացին այստեղից գնացածների մասին: Եվ արդ, երբ ինչ-որ դիպվածից, որոգայթից, կամ էլ պես-պես ցավերից մարդ հանկարծամահ է լինում, նրա պահապան հրեշտակը վերցնում է նրա հոգին և բարձրանում երկինք, ուր համբարձվեց մեր Տերը և մեզ համար ճանապարհ հարթեց, որը նախօրոք փակել էր Ադամը: Իսկ արեգակից վերև՝ մինչև ջրամած կամարը, դառնագույն խավար է. այնտեղ բնակվում են չարատեսիլ դևերը: Եթե [ննջեցյալի] հոգում նրանք տեսնում են մեղքերի նշան կամ գիր, որոնք գործել տվեցին մարդուն, գալիս են ընդառաջ և ջանում են հոգին հափշտակել հրեշտակից՝ հույժ նեղելով նրան: Իսկ հրեշտակը թույլ է տալիս, որ փոքր-ինչ նեղեն՝ ասելով. «Ինչո՞ւ գործեցիր դրանց կամքով», իսկ հետո սաստում է հրե գավազանով, որից հալածվում են դևերը: Հրեշտակը մեղապարտի հոգուց՝ ինչպես թունավոր, շարավակույտ, թարախակալած, ժանտահոտ մարմնից, գարշում է և տրտում դեմքով նայում նրան, իսկ արդարի հոգին վերցնում է ուրախ կերպարանքով և զվարթերես համբուրում նրան, ինչպես մայրը՝ մանկանը: Եվ հրեշտակների գնդերը ընդառաջ են գալիս: Գալիս են նաև դևերը և իրենց լիրբ չարությամբ ջանում են նեղել արդարների հոգիները, թեպետև նրանց մեջ չեն տեսնում իրենց նշանները: Բայց հրեշտակի կողմից գանահարվելով՝ տրտում հալածվում են: Եվ այս սոսկալի ու անծանոթ ճանապար-

հի նեղությունների ու տառապանքների պատճառով, որոնք պատահում են հրից և դևերի խավարից վեր գնացողներին, որովհետև ահագնու է ճանապարհը ու անընտել, Աստվածածինն արտասվելով աղոթեց և հրեշտակին, որն ավանդել էր կամենում նրա մաքուր հոգին, ասաց. «Զեմ գա քեզ հետ, մինչև չգա Նա, Ով ստեղծեց ինձ՝ Հիսուս Քրիստոսը, Որն ինձնից մարմնացավ»:

Նաև կույս Հովհաննեսը՝ Քրիստոսի սիրելի աշակերտն ու սուրբ ավետարանիչը, բազում պաղատանքներով ու արտասուքով աղոթք մատուցեց Աստծուն, որ իրեն փրկի նեղ ու դառը ճանապարհից՝ ասելով այսպես. «Թող ընդարմանան չարի իշխանները, հալածվի հուրը, վերանա խավարը» և այլն:

Ապա վա՜յ մեզ՝ եղկելիներիս. ի՜նչ է վիճակվելու մեզ՝ մեղքերով շաղախվածներիս: Քանզի եթե սուրբերն անգամ երկնչեցին, զարհուրեցին, ինչպես դժոխքից, ու աղոթեցին Աստծուն նեղ ու դառնատեսիլ ճանապարհի համար, ապա տե՜ս, թե մեզ որքան է պետք արտասուքներով պաղատել Աստծուն:

Եվ տանելով հոգուն՝ երկրպագել են տալիս Աստվածության աթոռին և արդարներին քիչ հեռու են դասում մեղավորներից: Եվ նրանք Աստուծո հրամանի մեջ են՝ ըստ Գրքի. *«Արդարների հոգիները Աստուծո ձեռքին են, և չարը չի մոտենա նրանց»*[1]: Թեպետ նրանք մարդկանց աչքում մեռած համարվեցին, սակայն անասելի խաղաղության մեջ են՝ ըստ Տիրոջ հրամանի, որ ասում է. *«Մահվանից կյանք տեղափոխվեցիք»*[2]:

Եվ երբ հոգին բաժանվում է մարմնից, ինչպես չար կապանքից, յոթնապատիկ իմաստնանում ու թեթևանում է, որովհետև ազատվեց: Եվ անհոգ է, անխռով ու աներկյուղ,

[1] Իմաստ. Գ 1

[2] Հովհ. ԺԵ 24

զարմանալի հանգստության, խաղաղության և անզբաղ զգայության մեջ, ինչպես ասացին երանելի մանուկները, որոնք Եփեսոսում հարություն առան մեռելներից: Ուրեմն հիրավի Հովհաննես ավետարանիչը արդարի մահն առաջին հարություն կոչեց: Որովհետև նա, ով վախճանվում է հավատով ու բարի վարքով, համարվում է, թե հոգին հարություն առավ, որովհետև ազատվեց մարմնական ախտերից, թեթևացավ ու անհոգ եղավ մեղքերի ահից: Եվ այն պահին, երբ հոգին դուրս է գալիս մարմնից, գիտակցում է, որ ազատագրվեց, տեսնում է հրեշտակներին ու ճանապարհը: Նաև իմանում է, որ կան ազգեր ու նրանց [պահապան] հրեշտակներ, տեսնում ու իմանում է նաև, թե ինչ է ժառանգելու վերջին օրը, սակայն չի կարողանում իմանալ, թե ինչպես են աշխարհում կենդանի ապրողները, որովհետև չի կարող վերադառնալ աշխարհ ըստ Գրքի. *«Հոգին, որը դուրս է գալիս մարմնից, այլևս չի վերադառնում»*[3]: Սուրբ հայրերի բազում քննություններից սովորեցինք, որոնք ասացին. «Աստուծո սիրելի մեծագույն ընտրյալ սուրբերից մեկն անգամ չի կարող վերադառնալ մեզ մոտ»: Իսկ Աստված, որ խոստացավ ու սիրում է նրանց, լսում է մարդկանց, որոնք սուրբերի միջոցով աղաչում են Իրեն, և փրկում նրանց սուրբերի բարեխոսությամբ: Եվ Իր ողորմությունն ու նախախնամությունը, կամ էլ հրեշտակին սուրբերի նմանությամբ երևեցնում ու, արագ հասնելով, օգնում է նրանց, ովքեր խնդրում ու աղաչում են Նրան: Աստված այս անում է ի պատիվ սուրբերի, նրանց կրած չարչարանքների համար, որոնք սիրեցին Իրեն: Եվ սա աշխարհի համար մեծագույն շահ ու օգուտ է: Թող մեզ վկա լինի սուրբ և մեծ հայրապետ Նիկողայոսը. երբ նա դեռ մարմնով ապրում էր այս աշխարհում, շատ անգամ էր երևում տարբեր երկրներում և օգնում ծովում կամ ցամաքում իրենից օգնություն

[3] Սաղմ. ՀԵ 39

հայցողներին, սակայն ինքը չէր իմանում և չէր էլ շարժվում իր բնակավայրից: Ահա՛, սիրելի՛, հայտնի է, որ Աստված նրա աղոթքներով լսում էր խնդրողներին և հրեշտակին կամ Իր նախախնամությունը նրա կերպարանքով երևեցնում ու փրկում էր նրանց: Այժմ էլ՝ ըստ Հովհաննեսի. «Կան սուրբերի հոգիներ, որոնք Աստուծո սեղանի հովանու ներքո են»[4]: Մի՛ խաբվիր, մինչև Քրիստոսի Գալուստը ո՛չ արդարները պսակ ունեն, և ո՛չ էլ մեղավորները՝ տանջանք, բայց կան մարդիկ, որոնք տգիտաբար ասում են, թե՝ ունեն: Բայց այժմ էլ սուրբերը տեսնում են այն պատիվը, որն իրենց տալու է Աստված, և պաղատում են նրան. «Տո՛ւր մեր վարձը և անօրեններից ա՛ռ մեր վրեժը»: Իսկ Աստված, ուղարկելով մխիթարության լուսազարդ պատմուճանը, ասում է նրանց. «Համբերե՛ք մի փոքր, մինչև դան ձեր ծառայակիցները, և հասնի վախճանը, որպեսզի նրանց ու ձեզ միաժամանակ պսակազարդ փառավորեմ ըստ ձեր վաստակի, որովհետև այս է Ինձ հաճելի, և Իմ ընտրյալների թիվը չի լրացել»: Եվ այս մասին ստույգ իմացավ անճառելիների տեսնող Պողոսը և ասաց. «Առաջին արդարները մեծ հավատով և հաստատուն հույսով իրենց քրտինքով վաստակեցին, սակայն չստացան ավետիս, այսինքն՝ հատուցում: Եվ Աստուծո կողմից այս է, որ լավագույն է համարվում, որ առանց մեզ չհասան լրումին, այսինքն՝ պսակին», ինչպես որդեսեր հայրը, որն համեղ խորտիկներ է պատրաստել իր որդիների համար և չի դնում սեղանին, երբ հանդից վերադառնում են որդիներից մեկը կամ երկուսը, այլ սպասում է, մինչև բոլորը հավաքվեն, ապա միայն սեղանին է դնում անուշահամ կերակուրները բոլորի առջև:

Իսկ մեղավորները տեսնում են դառը տանջանքներ, որոնք պահված են նրանց համար, և արտասվելով՝ պաղատում են Աստծուն և ասում. «Մի՛ կանգնեցրու հանդիսավոր

[4] Հայտն. Զ 9

Ատյանում և մի՛ իրագործիր խորհրդավոր դատաստանը, այլ ների՛ր մեզ, Մարդասե՛ր»: Մինչ այդ արդարները ցնծում են և համարում, թե ստացել են իրենց հատուցումը, որովհետև տեսնում են բարի պսակն ու գիտեն, որ Աստված այն կտա իրենց: Մեղավորները ցավագին դողում են տանջանքների ահավոր սպառնալիքներից և չարաչար ու անմխիթար սուգով արտասվահեղ կոծում են նախքան այն ստանալը, որովհետև տեսնում են բազմակերպ տանջանքներն ու գիտեն, որ դրանք պահված են իրենց համար: Ինչպես այն թագավորը, որ երկու մշակի նետեց միևնույն բանտը և երեկոյան մարդ ուղարկեց և հայտնեց. «Առավոտյան՝ արեգակի ծագելուն պես, ձեզնից մեկին չարաչար կսպանեմ սրատելով, իսկ մյուսին թագավորությանս հավասար պատվի կարժանացնեմ»: Թվում է՝ նրանցից մեկը մինչ առավոտ մահվան ահից բազում անգամ կմեռնի և կհամարի, թե ինքը մեռած է, և մեծ ողբով կպաղատի Աստծուն, որ չծագի արեգակը, որն իրեն մահ է բերելու: Իսկ մյուսը կցնծա ողջ գիշեր, և սաստիկ խնդությունից քուն չի մերձենա նրան, և կհամարի, թե արդեն պատվի է արժանացել թագավորի հետ և պաղատանքով անընդհատ ընկնելով Աստուծո առաջ՝ կաղաչի, որ հալածվի գիշերվա խավարը, ու արագորեն ծագի արեգակը՝ բարի ավետաբերն ակնկալվող թագավորության: Ահա՛ ճշմարիտ մի օրինակ արդարների ու մեղավորների մասին:

Սակայն, ո՛վ քրիստոսասեր իշխան, նաև ա՛յս իմացիր, և ստույգ այդպե՛ս է, որովհետև կան շատ մարդիկ, ովքեր սուրբ Պատարագով և աղքատներին տրվող ողորմությամբ, ինչպես նաև սուրբերի աղաչանքներով իրենց ննջեցյալներին հանում են դժոխքից, որովհետև Աստված անոխակալ է և ողորմած և սովոր է այլոց աղերսներով փրկել ուրիշներին, ինչպես մոր աղերսներով փրկեց դստերը և բերողների հավատքով անդամալույծին բժշկելով՝ առողջացրեց:

Ահա՛ տեսնում ենք, որ իշխանների կամ թագավորնե-
րի բանտից մահապարտներն աղաչանքներով ու փրկագնով
ազատվում են: Արդ, եթե մարդ արարածը լսում է աղաչանք-
ներն ու ողորմում է, ապա Աստված որքան ավելի է լսում
աղաչանքները՝ [մատուցված] սուրբ Պատարագի և աղքատ-
ներին ողորմություն տալու միջոցով: Եվ քաղցր գթությամբ
ողորմում է և ազատում հոգին դժոխքից ու տանջանքներից:

Դրա համար և դու, ո՛վ քրիստոսասեր իշխան, անմոռաց
հիշի՛ր քո ննջեցյալներին և խնա՛մք տար նրանց ողորմու-
թյամբ ու Պատարագներով, որովհետև ննջեցյալների ակն-
կալությունն ու հույսն Աստված է, ինչպես և մեր, որով-
հետև չկա որևէ մարդ, որ կարողանա առանց մեղքի դուրս
գալ այս աշխարհից: Քանի որ ննջեցյալները մինչև յոթ սե-
ռունդ մնում են՝ պաղատելով Աստծուն և ակնկալելով, որ
իրենց ազգից հայտնվի բարի, սուրբ և ողորմած մի մարդ
կամ սուրբ քահանա, որը կլանա Պատարագներով և ողոր-
մությամբ ազատել իրենց տանջանքների սպառնալիքներից,
որոնք պատրաստված են իրենց համար: Իսկ ննջեցյալների
հիշատակը, որը կատարում ենք ողորմությամբ, Պատարա-
գով և աղոթքով, հրեշտակը տանում է և դնում ննջեցյալնե-
րի առաջ, որից նրանք հույժ զվարճանում և ուրախանում
են: Թող մեզ վկա լինի այն մանուկը, որը մնաց Կղեմես հայ-
րապետի գերեզմանում, և երբ ժողովուրդը կատարեց տոնը
և գնաց, ծովը ծածկեց եկեղեցին ու մանկանը: Մանկան մայ-
րը կիրակի և շաբաթ օրերին քահանային տանում էր նաշիհ,
գինի և ձեթ, որպեսզի Պատարագի ժամանակ ննջեցյալների
հետ միասին հիշատակի մանկանը: Իսկ մանկան պահապան
հրեշտակը գալիս, քահանայի ձեռքից վերցնում էր այդ ամե-
նը և տանում դնում երեխայի առաջ: Նա էլ վերցնելով՝ ու-
տում, խմում և բավարարվում էր այսքանով մինչև հաջորդ
շաբաթ:

Բայց ննջեցյալների հիշատակը արժան չէ կատարել գր-
կանքներից, տուգանքից, առևտրից և կամ էլ գողությունից
ստացված միջոցներով. ավելի լավ է այդպիսի բան չանել,
որովհետև Աստված կբարկանա, չի ողորմի և չի ընդունի ըն-
ծան: Այլ պետք է կատարել արդար վաստակից կամ սեփա-
կան իրավացի ու արդար հասույթից, որը մուտք է գործում
գավառից ու շենից: Եվ Աստված մեկին հարյուրապատիկ
կպարգևի ու շատ կուրախանա, թեպետև քո ննջեցյալներն
են և ոչ թե՝ օտար:

Քանզի գիտեմ, երբ տեղից տեղ էի շրջում մեր երկրում,
հանդիպեցի բարեսեր կրոնավորների, որոնք անհիշատակ ու
ընդհանուր ննջեցյալներին բազում ծախսերով հիշատակում
էին Պատարագներով ու ողորմությամբ: Եվ Աստված մեծ ու-
րախությամբ ընդունում է այն և մեկի փոխարեն հարյուրը
պարգևում: Ինչպես որ հոգին մեծ է, քան մարմինը, նմանա-
պես էլ առավել է վարձքը նրա, ով ողորմություն է անում
հոգու համար և ոչ թե մարմնի: Եվ արդ, այս իմանալով՝
անմոռաց հիշենք ննջեցյալներին, որքան որ մեր կարողու-
թյունն է, որովհետև Աստված ուրիշների միջոցով էլ մեզ հա-
մար կպատրաստի: Եվ Աստված թող ծագեցնի Իր փառքի
ու գիտության լույսը քո հոգում, որ հոգ տանես քո և քո
ննջեցյալների հոգիների համար, նաև ատես աշխարհի վա-
յելքներն ու սիրես Աստուծո փառքը, անմոռաց պահես քո
աչքերի առջև Աստծուն ու Նրա ահազդու Ատյանը, արդար-
ների հանգիստն ու մեղավորների տանջանքները, ինչպես
նաև բարին գործես այս կյանքում և հասնես երկնքի անճառ
արքայությանը Աստուծո բոլոր սիրելիների հետ քո ննջե-
ցյալներով հանդերձ մեր Քրիստոս Աստուծո շնորհներով, Ով
օրհնյալ է միշտ Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և
հավիտյանս հավիտենից. ամեն:

Զ. Բարի գործերի մասին, թե որոնք են և որքան

Որովհետև փոքր-ինչ քննեցինք Վերին Երուսաղեմի և հոգիների կյանքի մասին աստվածային Գրքերում ամփոփվածը, թե նրանք ինչպես են մնում մինչև հասարակաց հարության օրը, այժմ հասել է ժամանակը, ո՛վ վսեմափայլ քրիստոսազոր իշխան, որ քննենք նաև, թե ինչ են բարի [գործերը], որոնց մասին ասված է Սուրբ Գրքում, և որոնք արքայության են արժանացնում դրանք գործողին, որպեսզի պահպանվի խոսքիս ամբողջական կարգը: Թեպետև բոլորը՝ թե՛ ծերերն ու երեխաները և թե՛ քարոզողներն ու վարդապետները, ծանոթ են Աստուծո օրենքներին և Նրա բարի պատվիրաններին:

Արդ, առաջին բարին Աստված է՝ անսկիզբ ու անվախճան, որ ոչէից գոյացրեց բոլոր արարածներին: Բոլորն էլ բարի են աստվածային Գրքերի վկայությամբ. «Տրված բարիքներն ու կատարյալ պարգևները ի վերուստ են իջնում՝ լույսի Հորից»[1]: *Եվ՝ «Ողորմության շնորհիվ ստեղծեց բոլոր գոյացությունները»: Դրա համար էլ մարգարեները, նահապետներն ու սուրբ առաքյալները, որքան հասու եղան Հոգով, բարի անուններ ասացին Աստուծո մասին՝ արդար, ողորմած, հեզ, երկայնամիտ, քաղցր, բարերար, սուրբ, հստակ, ճշմարիտ, ստույգ, գթած, Տեր, համբերող, կամարար, իշխան, Սաբաովթ, և այլ բազում բարի անուններով Սուրբ Գրքերում կոչեցին Աստծուն: Եվ մեր իսկ օգտի համար ասվեց այս, որ ճանաչենք մեր Արարչին ու Նրա ողորմած կամքը: Բայց ինչպես Ինքն անճառ է, այնպես էլ անհաս են Նրա բարիքները: Իսկ մեր իմացած ու գործած բարիքները Աստուծո բարիքների համեմատությամբ այնպիսին են, ինչպես չարը՝ բարու, կամ էլ խավարը՝ լույսի հանդեպ, որոնք վկայված են Սուրբ Գրքերում: Իսկ այժմ ոչ թե քննենք Անճառելին, այլ մեր կարողության չափով տեսնենք, թե որոնք են այն բարիքները, որ գովաբանվում են Սուրբ Գրքերում: Արդ, առաջին և բարձրագույն բարին այն է, որ մարդը հավատա, թե Աստված ստույգ ճշմարիտ Աստված է, Արարիչ բոլոր ստեղծվածների, անսկիզբ է, անվախճան ու ամեն ինչում անճառելի, սրանից հետո ակնկալի հարություն, դատաստան և բարու և չարի հատուցում: Եվ սրանից հետո միայն, եթե բարիք գործի, այն կընդունի Աստված, որովհետև առանց հավատքի գործերը անօգուտ են մարդու համար, ինչպես առանց հիմքի ոչ ոք չի կարող աշտարակ կառուցել, նաև աստվածային Գրքի վկայությամբ.* «Հավատն առանց գործերի մեռած է»[2]: *Որովհետև դևերը նույնպես հավատում ու սարսում են Աստծուց: Ինչպես մեր Տերն է ասում.* «Շատերն Ինձ կասեն այն օրը. «Տե՛ր, Քո անունով դևեր հանեցինք, մարգարեացանք ու քարոզեցինք», իսկ Ես կասեմ նրանց. «Հեռացե՛ք Ինձնից, որովհետև չեմ ճանաչում ձեզ բարի գործերում»»[3]:

Եվ արդարև, մարդը ճանաչվում է բարի գործերով, եթե նա հավատք ունի և աստվածապաշտ է: Իսկ երբ մեկը անհույս մնում է մեղքերի մեջ և չարիք գործում, նրան բոլորն անաստված են կոչում:

Դրա համար մենք պետք է անկեղծորեն հավատանք Աստծուն, որ ստույգ ճշմարիտ Աստված է և բոլորի Դատավորը: Եվ այսուհետև քաջությամբ ջանանք առաքինության բոլոր գործերում, որպեսզի հետո կարողանանք երկու թևերով, այսինքն՝ հավատով ու բարեգործությամբ, բարձրանալ և ելնել առ Աստված: Քանզի արծիվը չի կարող մի թևով երկինք բարձրանալ: Այդպես էլ մարդս է կոչվում արծիվ թագավորական, որովհետև պատկերակից է Աստծուն ու հո-

[1] Հակ. Ա 17

[2] Հակ. Բ 26

[3] Մատթ. Է 22, 23

գով՝ հավասար հրեշտակներին: Ուստի ամուր լինենք սուրբ հավատքի և առաքինության գործերի մեջ: Եվ մեր հոգին, որ թագավորական արծիվն է, մաքուր պահենք հավատքով ու գործերով, որպեսզի կարողանանք երկու թևով բարձրանալ առ Աստված ու արժանանալ Աստուծո անբավ բարիքներին Սուրբ Հոգու շնորհներով, Որն օրհնված է Հոր և Որդու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Է. Աղոթքի մասին, որովհետև հույժ ընդունելի է Աստծուն

Արդ, արիությամբ և առանց ծուլության արվող աղոթքն անսահման բարիք է Աստուծո առջև, որովհետև գրված է. «Դատաստանի օրը ծույլերի ու պղերգների առջև կփակվի Աստուծո առագաստի դուռը»: Մեզ վկայություն թող լինի այն, որ բազում սուրբեր, բնակվելով լեռներում ու ծերպերում, որևէ բարի գործ չարեցին, այլ միայն աղոթքով ու սրբությամբ մտան լույսի առագաստ: Նաև առաջին մարդուն՝ Ադամին աղոթքի համար չափ չդրվեց, այլ միայն պահքի, որովհետև հայտնի է, որ Ադամն անդադար աղոթքի մեջ էր, ինչպես անմարմինները, որովհետև Արարիչն Իր օրհնության ու փառաբանության համար ստեղծեց հրեշտակների զորքերին, նույնպես էլ առաջին մարդուն, որ հայտնի լիներ Իր անսահման մեծությունն ու ողորմությունը. և Նրա թագավորությունը ստեղծվածների կողմից օրհնաբանելով՝ գովվում ու փառավորելով՝ երկրպագվում էր: Որովհետև առաջին մարդը դասակից էր հրեշտակներին, տեսնում էր Աստուծո փառքը, կառչած էր մնում Նրա հիշատակությունից և կենաց դրախտում երկրպագելով փառաբանում էր Նրա Աստվածությունը: Մեզ ևս անհրաժեշտ է անդադար աղոթել, որովհետև մեր Տերը սահմանեց՝ ասելով. «Արթո՛ւն կացեք և ամենայն ժամ աղոթեցե՛ք»[1]: Եվ կրկին Ավետարանում գրված է. «Հիսուսը բարձրացավ լեռը՝ աղոթելու»[2]: Նա ոչնչի կարիք չուներ, այլ մեզ համար էր անում այդ, որ սովորենք Իրենից: Առաքյալն ասում է. «Հաճա՛խ աղոթեցեք»[3], իսկ մարգարեն գոչում է. «Գիշերվա մեջ արթնացա ու օրհնեցի Քեզ, Տե՛ր, որովհետև արդարադատ ես»[4]: Աղոթքն այնպիսի բարիք է, որ մարդուն կցորդ ու հավասար է դարձնում հրեշտակներին:

Աստված խիստ հարկադրանքով մեզնից փառաբանություն և երկրպագություն է պահանջում, ինչպես թագավորները՝ իրենց զորքերից: Հիրավի, ամեն բարեգործությունից առաջ մեզնից, ինչպես նաև բոլորից, խնդրում է աղոթք և երկրպագություն: Տե՛ս, թե որքան մեծ է աղոթքի օգուտը, որովհետև Աստծուն ուղղված աղոթքի միջոցով, սուրբերի բարեխոսությամբ շատ որոգայթներ ու պատուհասներ են խափանվում: Դևերն էլ են հալածվում աղոթքով. ինչպես Տերն է պատվիրում. «Աղոթեցե՛ք, որ փորձության մեջ չընկնեք»[5]: Սուրբերի վարքերից երևում է, որ բոլորն էլ աղոթեցին: Սակայն ժամանակը չի բավականացնի՝ հերթով ցույց տալու, թե որ սուրբն ինչ աղոթք արեց, որովհետև նրանք շատ են, բայց հիշելով մի քանիսին՝ կճանաչենք նաև մնացածներին:

Եվ այսպես՝ Մովսեսն աղոթեց Սինա լեռան վրա, Դանիելը, Եզեկիելն ու երեք մանուկները՝ Բաբելոնում: Աբրահամը, Իսահակը, Հակոբը, Սամվելը, Դավիթը, Եզեկիան, Եղիան և մնացած մարգարեներն ու բարի թագավորները նույնպես աղոթեցին: Հայտնի է, որ առաքյալները, ինչպես նաև հայրապետներն ու բոլոր մարտիրոսները, աղոթում էին անդադար,

[1] Մատթ. ԻԶ 41

[2] Մարկ. Զ 46

[3] Հռոմ. ԺԲ 12, Կող. Դ 2

[4] Սաղմ. ՃԺԸ 62

[5] Ղուկ. ԻԲ 46

իսկ հրեշտակները մեծ ցանկությամբ միանում էին նրանց՝ Աստծուն ուղղած օրհնաբանություններին:

Այս էլ իմանանք, որ նա, ով աղոթելիս մարմնավոր փառք, մեծություն կամ հարստություն է խնդրում Աստծուց, այնպիսին բարկացնում է Աստծուն և չի հաշտեցնում: Նա նման է այն ապուշ կտրած խելագարին, որը գնաց ողորմած թագավորի մոտ և, արհամարհելով պայծառ ոսկին ու լուսավոր մարգարիտը, ժահահոտ աղբ խնդրեց նրանից: Այս պատճառով էլ Տերն ասաց. «Աղոթելիս հեթանոսների պես շատախոս մի՛ եղեք»[6]: *Քանզի նրանք հարության հույս չունեն և այս կյանքի մասին են միայն հոգում ու խնդրում: Իսկ դուք արքայություն փնտրեք, որովհետև երկնավոր Հայրը գիտի ձեր մարմնավոր պետքերը և ձեզ համար կպատրաստի կերակուր, զգեստ և անհրաժեշտ ամեն բան:*

Աղոթելու մեջ կա նաև այլ մեծագույն խորհուրդ: Այսպես, ով փարթամանում է՝ իր ունեցվածքը միայն իր մարմնի կարիքների համար ծախսելով, չունենալով սեր ու ողորմություն, այսպիսին կդատվի անողորմների հետ: Նմանապես Աստուծո կողմից պիտի դատապարտվի նա, ով միայն իր համար է աղոթում, ինչպես նաև պիտի պատժվի նա, ով գիտություն ունի և չի ուսուցանում ուրիշներին, չի խրատում տգետներին, այլ միայն ինքն իրեն է ուղղում դեպի բարին: Չկա մի բարիք, որ կարողանա ուրախացնել Աստծուն այնպես, ինչպես այն, որ ընդհանուրին են բարիք գործում, որովհետև Աստված Ինքն էլ բարեգործն է բոլորի՝ մեծամեծերի և փոքրերի, արդարների և մեղավորների՝ [պարգևելով] օդ, լույս, անձրև ու ջուր, ինչպես նաև սուրբ Ավազանի շնորհներ ու հավատք: Նմանապես Աստված կամենում և ուրախանում է, երբ մենք աղոթում ենք ամբողջ աշխարհի համար՝ արդարների ու մեղավորների, կենդանիների ու ննջեցյալների,

[6] Մատթ. Զ 7

հեռավորների ու մերձավորների, առավել ևս նրանց համար, ովքեր չարիք են կամենում կամ գործում մեր նկատմամբ: Աղոթքի միջոցով հանենք քենն ու ոխը մեր մտքից և հետո միայն Աստծուց մեր հանցանքների թողություն խնդրենք: Արդ, սա է ընդունելի և Աստուծո կամքին հաճելի աղոթքը: Ով ըստ իր կարողության այսպես է անում, ինչպես և նա, ով ողորմած է և իմաստուն խրատով մեղքերից հեռացնում է մեղավոր ու տգետ մարդուն, նմանվում է Աստծուն: Եվ արդ, մեծ հույս է ներշնչում աղոթքի վիճակը, որովհետև աղոթքով մարդ զրուցում է Աստուծո հետ և հավասարվում հրեշտակներին: Առավել ևս այն ժամանակ, երբ ջերմ, արծաթափայլ արտասուքը բխելով՝ իջնում, լվանում է աչքերն ու մորուքը և միևնույն ժամանակ ջնջում մարդու ներսում եղած մեղքերի շարավը: Եվ սիրտն սկսում է փղձկալ, ճմլվել և բորբոքվել Աստուծո սիրո կրակով: Ապա միտքը, համբառնալով առ Աստված, տեսնում է հանդերձյալ աշխարհն ու արդարների հանգիստը, հիշում է մարդկային ցեղի կործանումը, երբ զրկվեցինք հայրենի ժառանգությունից, մտաբերում է նաև իր անձի մեղքերն ու հանցանքները, նաև բոլոր մեղքերը, որոնք գործվում են աշխարհում: Սիրելի՛, ահա երկրորդ Ավազանը, ահա աղոթքի քաղցր ճաշակումն ու ցանկալի թմրությունը. այն նման է սերովբեների թմրությանն ու քաղցր ճաշակմանը, որն ունենում են Աստվածության բուրմունքից: Ո՞վ կդիմանա այն երանելի պահին, երբ Աստուծո այս շնորհներից մի նշույլ հանդիպի կամ պատահի իրեն: Երկինքն իր լուսատուներով և աշխարհն իր բարիքներով չեն կարող հավասարվել այդ վայրկյանին: Ուստի, աղաչո՛ւմ եմ՝ չծուլանանք, այլ արիաբար աղոթենք միշտ՝ օր ու գիշեր, քուն թե արթուն, քայլելիս թե նստած ժամանակ, առավոտյան թե երեկոյան, աշխատելիս թե հանգստանալիս, այսինքն՝ միշտ օրհնենք և փառաբանենք Աստծուն, որովհետև, ո՞վ գիտե, գուցե աստ-

վածային այդ շնորհներից մեզ էլ պատահի մի ցանկալի պահ, երբ ջերմ արտասուքը կլվանա մեր հոգու վերքերի թարախը և լույսի յուղ կդառնա մեր լապտերներում:

Բայց դարձյալ՝ առավել ևս ճանաչենք այն բարձրագույն խորհուրդը, երբ Պատարագի ժամանակ սուրբ հացը, բարձրանալով Սեղան, ճշմարտապես դառնում է Աստուծո Մարմին, իսկ գինին՝ սուրբ Արյուն: Այնժամ առավելապես պետք է զգուշանալ, քաջանալ և արիությամբ աղոթել Աստուծո Որդու՝ խաչի վրա անմահ զենման առջև, որը տեղի է ունենում սուրբ Պատարագի ժամանակ: Պետք է բանալ հոգու աչքերը, տեսնել և իմանալ, որ հացն ու գինին, որ դրված են քահանայի առջև՝ սուրբ սեղանի վրա, այն Մարմինն է, Որն անճառելի կերպով անշփոթ միացավ Կույսի որովայնում Բան Աստուծո հետ, Աստվածացավ, և Բան Աստված նույն Մարմնով խաչ բարձրացավ մարդկային ցեղի համար, տարածեց աշխարհաստեղծ Իր բազուկները և խոցվեց աստվածային կողից, «Էլի՛, էլի՛»[7],- ձայնեց Հորը, և աշխարհի հիմքերը դողացին, սարսեցին ու թաքնվեցին սանդարամետները, և ննջեցյալները, հարություն առնելով, մտան Երուսաղեմ և իրենց ծանոթներին ասացին. «Ավա՜ղ և վա՛յ Երուսաղեմի հիմքերին, որովհետև հավիտյան Անմահին խաչեցիք»:

Արդ, այս ամենն աչքիդ առջև՛ ունեցիր և արթո՛ւն պահիր խորհուրդներդ, ընդունի՛ր, թե այսօր այդ Օրն է, եկեղեցին Երուսաղեմն է, բեմը՝ Գողգոթան, այս քառանկյուն սեղանը՝ քառաթև սուրբ Խաչը, հացն ու գինին, որ դրված են բաժակի մեջ, Ինքը՝ Աստված է՝ մարմնով խաչի վրա: Ով առանց երկբայելու հավատա այս ամենին, Աստված կընակվի նրա մեջ, իսկ նա՝ Աստուծո մեջ: Եվ այդժամ Պատարագի սուրբ խորհուրդի առջև ով հոգևոր որևէ խդրանքով դիմի, առավել շատ կստանա Աստծուց և Նրա խաչելության շնորհներից, քան բազում ժամանակ աղոթելով: Պետք է ներկա՛ լինել մինչև սուրբ Պատարագի ավարտը, նաև մասնակցե՛լ այն աղոթքներին, որոնք կատարվում են գիշերային սուրբ ժամերգության ժամանակ:

Սակայն մարդասպան ու գող սատանան, իմանալով, թե ինչ անճառելի պարգևներ է տալիս մեզ Աստված Պատարագի միջոցին արվող աղոթքներով, ջանում է ճանճրացնել, ծուլացնել և թույլ չտալ մեզ գնալ այնտեղ աղոթելու: Եվ այդ կարճ ժամանակահատվածում գրգռում ու հորդորում է մեզ մարմնական զբաղվածության ու անպետք գործերի, որպեսզի զրկի Աստուծո Որդու զենման անճառելի խորհրդից և արհամարհել տա Քրիստոսի խաչելությունը:

Գրված է նաև. «Նզովյա՛լ է այնպիսին, ով չափահաս է տարիքով և առողջ է մարմնով և շաբաթ կամ կիրակի օրերին Պատարագի արձակումից առաջ կերակուր է ճաշակում»: Մեծագույն չարիք է նաև, երբ առանց անհրաժեշտության, սոսկ ծուլության պատճառով են այդպես անում: Արդ, որքան հնարավոր է, դիմանանք Պատարագի ժամանակ և աղոթենք Խաչյալին, որպեսզի որևէ այլ գործի և կամ փոքր-ինչ շահի պատճառով չզրկվենք աստվածային սուրբ և անմահ զենման անասելի բարիքներից: Աստվածային Գրքերն ասում են. «Մահացածների ոսկորներն, ինչպես նաև Աստուծո ձեռքում գտնվող հոգիները, սուրբ Պատարագի ընթացքում ներծծելով Քրիստոսի անապական Արյան ցողը, դալարում են»: Ահա՛ պատճառն այս է, որ աղոթում ու աղաչում եմ՝ չծուլանանք և Պատարագի ավարտից շուտ չհեռանանք, որպեսզի չզրկվենք Աստուծո անսահման շնորհներից: Այլապես կգա մեր կյանքի թշնամի սատանան և տագնապեցնելով՝ նեղսրտության մեջ կգցի, թույլ չի տա մեզ փոքր-ինչ համբերել ու արժանանալ Աստուծո անբավ պարգևներին:

[7] Մատթ. ԻԵ 46, Մարկ. ԺԶ 34

Ասվում է, թե՝ «Ինչպես այն մարդը, որ սերմանում է ցորեն, հնձելով՝ հավաքում, իսկ հետո խելագարված այրում հրով, նույնպես էլ գիշերային պաշտամունքն իզուր անցավ, որովհետև տանը մնաց առանց որևէ լուրջ պատճառի, չգնաց Պատարագի և դեգերեց մինչև արարողության ավարտը»: Անճառելիների տեսնող Պողոսն ասում է. «Եթե մեկն արհամարհեր Մովսիսական օրենքը, ապա մահվան կդատապարտվեր կրակով կամ քարկոծմամբ»[8]: Իսկ հիմա ինչպիսի՞ պատժի է արժանի նա, ով արհամարհում է Աստուծո Որդուն, թեպետ այդ քամահրանքը տգիտությունից է: Քանզի եթե իմաստությամբ խորհեր ու գիտությամբ ճանաչեր, թե Ո՞վ է պատարագվում, կամ ի՞նչ պատճառով է զենվում Անմահը, ապա այդ կարճ ժամանակամիջոցում թույլ մարմնով ու մեղկ խորհրդով չէր մնա չար զբաղմունքի մեջ ու չէր զրկվի Աստուծո շնորհներից: Իսկ սա առավել չար մեղք է: Շատերը կան, որ պարապ ու անգործ են և չեն հաճախում [Պատարագի], շատերն էլ գալիս են, և երբ քահանան ընթերցում է Ավետարանը, դուրս են գալիս՝ կարծելով, թե ավարտվեց Պատարագի արարողությունը, չիմանալով սակայն, որ քահանան դեռևս Պատարագի խորհուրդի մեջ չի էլ մտել: Եվ երբ ասվում է «Հավատամքը», առանց որևէ լուրջ պատճառի թիկունք են դարձնում Խաչյալին: Ապա քահանան սկսում է Խորհուրդի կատարումը, իսկ նա ունայն հեռանում է՝ կարծելով, թե մասնակցեց աղոթքների և Աստուծո Որդու զենման ճաշակմանը: Եվ դրանից հետո քահանան շրջվում է և խաչակնքում եկեղեցում և եկեղեցու դռան մոտ՝ գավիթում հավաքված ժողովրդին և աղաչում մարմնով խաչված Աստծուն, որ եկեղեցում գտնվողներին հաղորդակից դարձնի Իր Խաչի չարչարանքներին և դռան մոտ աղոթողների խնդրանքները կատարի: Իսկ նա, ով ավելի վաղ հեռացավ և փոքր-ինչ չհամբերեց, զրկվեց այս բարիքներից: Հիրավի մեր կենարար Տերն ու Առաջնորդն ասաց. «Ով մինչև վերջ համբերի, նա կապրի»[9]:

Արդ, եթե արքան կամ իշխանը որևէ գործով զբաղված կամ կանգնած լինեն, ոչ թե նստած, ո՞վ կհամարձակվի նրանց ներկայությամբ անամոթաբար նստել:

Ահա՛ քեզ օրինակներ, ո՛վ ողորմելի թշվառական, հիմար և անմի՛տ մարդ, որովհետև Քրիստոս խաչվում է քեզ համար, իսկ դու նստած ես անհոգ. անմահ Թագավորը՝ մարմնացյալ Աստված, չարչարվում է, և լույսի Ճառագայթը կենսագործում է արարածներին, իսկ դու կամավոր նստած ես խավարում: Բոցեղեն սերովբեներն ու բազմաչյա քերովբեները սարսափած դողում են և պար բռնած՝ քաղցր ձայնով փառավորում սուրբ սեղանի վրա մարմնավորված Աստծուն, իսկ դու երազ կամ ստվեր ես համարում ահագին Խորհուրդը:

Ո՞վ կարող է ասել չար վիշապի խաբեության չափի մասին, կամ՝ թե քանի-քանի մեղքերով է կամենում հիմարացնել ու զրկել մեզ անճառելի և երանելի կյանքից: Եվ արդ, հայելով՝ խղճանք մեր անձը և բացենք մեր հոգու աչքը՝ ըստ առաքյալի խոսքի. «Բարի վարքով հաշտվենք Աստուծո հետ»: Աղոթենք անդադար, որովհետև սա է անուշահոտ խունկը, որ ծխվում է Աստուծո առաջ ոսկե բուրվառով, որն էլ հաճելի է Աստծուն: Աղոթքով միշտ բախենք Արարչի գթառատության դուռը, և Նա կբացի Իր անմահ առագաստի դուռը: Աղոթքը սանդուղք է երկրից մինչև երկինք, լույս է խավար ճանապարհին, մնայուն պաշար է մշտնջենավոր կյանքի համար: Ուստի ջանա՛նք սուրբ մտքով արիաբար աղոթել այս կյանքում, որպեսզի սրանից հետո արժանանանք անպատում բարիքներին ու հավիտենական կյանքին մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ, Որով և

[8] Եբր. Ժ 28

[9] Մարկ. ԺԳ 13

Որի հետ էլ օրհնյալ է ամենակալ Հայրը, կենդանարար ու ազատող Սուրբ Հոգին այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Ը. Պահեցողության մասին, թե որքան բարի և ընդունելի է Աստծուն

Եվ արդ, մարդկանցից ո՞վ կարող է իմանալ և ճառել, թե որքա՜ն բարի է պահքը Ադամի որդիների համար, եթե սիրում են այն: Միայն Աստծուն է հայտնի այն մեծությունն ու շահը, որ պահքից լինելու էր մարդուն: Այս պատճառով էր, որ Ադամին տվեց առաջին պատվիրանը՝ ասելով. «Մի՛ ճաշակիր ծառի պտղից»[1]: Քանզի դրախտում Ադամը հրեշտակների պես սակավապետ էր, և նրա կենակիցը պահքն էր: Բայց Ադամը չհավատաց Աստուծո պատվիրանին, որովհետև չգիտեր, թե որքան բարի բան է պահքը, և ճաշակելով պտուղը՝ արտաքսվեց կենաց դրախտից: Եվ միայն Ադամից հետո յոթերորդը՝ Ենովքը, իր նախաստեղծ հորից լսելով. «Ուտելիքն ինձ զրկեց լուսեղեն փառքերից ու դրախտից», զարմացավ և որդեծնությունից հետո երկու հարյուր տարի իրեն հեռու պահեց մրգերից ու այլ ցանկալի կերակուրներից, ինչպես նաև ընդհանրապես չհամարձակվեց նայել երկինք և Ադամի փոխարեն մտավ դրախտ: Այս պատճառով էլ աստվածային Գրքերով մեզ հրամայվեց պնդությամբ պահել, որ մտնենք երկնքի երանությունը, որից զրկվեց Ադամը կերակուրի պատճառով: Բայց նրանք, ովքեր ծառա են փորին ու որովայնին, տերունական ու առաքելական խոսքն ընդունում են ի կորուստ իրենց անձերի, որովհետև չգիտեն, թե Տերն ինչ հանգամանքներում ասաց. «Կերակուրը չէ, որ պղծում է մարդուն»[2], իսկ առաքյալն էլ ասաց. «Ուտելիքը չէ, որ մեզ կանգնեցնելու է Աստուծո առջև»[3]: Եվ այս խոսքերով կործանում են շատերին, որովհետև ըստ լսելիքի և ախորժակի մորմոքի հեշտությամբ քարոզելով՝ ընկղմում են տգետներին ու որովայնամոլներին առասպելախառն զրույցների մեջ: Այսպիսի որովայնապաշտների մասին է գրում սուրբ առաքյալը. «Ողբալով դիմում եմ Քրիստոսի Խաչի թշնամիներին, որոնք աստվածացրին որովայնը ու իրենց փառքն համարեցին որովայնի արտաթորանքը և ամոթի գարշահոտությունը»[4]: Եվ առաքյալը դիմում է որովայնամոլներին ու հեշտաքարոզ վարդապետներին, որոնք հեշտությամբ թյուրում էին այն ամենը, ինչ լուսավորում էին սուրբ առաքյալները՝ անվանելով նրանց «շներ ու չար մշակներ»[5]:

Անսահման չարիք է որովայնամոլությունը: Նայի՛ր և տե՛ս, ո՛վ մարդ, թե ինչպես կործանվեց Ադամը, և մի՛ հեշտացիր և մի՛ կործանիր ուրիշներին: Միթե՞ դու ավելին գիտես Աստծուց, որ Ադամին ասաց. «Մի՛ կեր»[6], կամ ավելի ես ուսանել, քան բոլոր սուրբերը, որոնք պատվիրեցին մեզ պահել քաջությամբ:

Արդ, սուրբ մարգարեները պահեցին և արժանացան հրեշտակների տեսությանը: Հանուն Աստուծո պահեցին նաև առաքյալները և ապա արբեցին Սուրբ Հոգու բխումով: Հետևի՛ր Եղիային, Մովսեսին և Հովհաննեսին, թե նրանք ինչպես տեսան Աստծուն՝ ուտելո՞վ, թե՞ պահելով: Սովորիր հայրապետների, մարտիրոսների և միանձանց վարքից, որովհետև պահքն էր նրանց պարիսպն ու ամրությունը: Եվ այս բանը քաջ գիտեն ամենքը: Իսկ ով նայելով տերունա-

[1] Ծննդ. Բ 17

[2] Մարկ. է 18

[3] Ա Կոր. Ը 8

[4] Փիլիպ. Գ 18, 19

[5] Փիլիպ. Գ 2

[6] Ծննդ. Բ 17

կան խոսքին, թե՝ «Կերակուրը չի պղծում մարդուն»[7] կամ առաքյալի ասածին, թե՝ «Կերակուրը չէ, որ մարդուն կկանգնեցնի Աստուծո առջև»[8], սակայն չընկալելով խոսքերի իմաստը, թե ինչ նպատակով ասվեցին, միայն խոսքի արտաքին կողմին է նայում, տգիտաբար քարոզում է և ասում. «Կերակուրը չի պղծում մարդուն»[9], վկայաբերելով Քրիստոսի խոսքը, թող ուտի մուկ, մեռելոտի, զազրատեսակ աղբ և համարի, թե ինքը Աստուծո անարատ ծառան է, որովհետև ունի սիրտ և հաստատուն հավատք և չի խորշում կերակուրներից: Այդ դեպքում առաքյալն ինչո՞ւ գրեց. «Բազում անգամ եղա պահքի մեջ»[10], և Նիկիայի նոր սուրբ ժողովում և այլուր [ինչո՞ւ ասվեց]. «Ով պարարտ կերակուր ուտի աղուհացի և մյուս խորհրդավոր պահքերի օրերին, նզովյա՛լ լինի»: Արդ, միթե՞ բոլոր սուրբերը խելագարվել էին կամ չէին գիտակցում, թե ինչ են պատվիրում մեզ Գրքերով: Քա՛վ լիցի, որովհետև Աստծուց սովորեցին պահքի շահը, որը սահմանվեց Ադամի համար: Եվ ով չլսի պահքերին վերաբերվող հրամանները, կարժանանա այն բանին, ինչին արժանացավ Նրա մայր Եվան: Արդ, ինչպես ծառերն ու բույսերը, որոնք ջրերի եզրերին են, կանաչագեղ, սաղարթախիտ և առատ են պտուղներով, նույնպես էլ մարմինը, երբ չափից ավելի կերակուրներով ու ըմպելիքներով պարարտանալով՝ փքվում է գիրությամբ, չարաչար աճեցնում է պիղծ ախտեր, մորմոքվելով գրգռվում է և առանց երկյուղելու շաղախվում աղտեղությամբ: Եվ ոչ միայն մտաբերում է կանանց, որը բնության օրենքով է նախատեսված, այլև ձեռնամուխ է լինում տղամարդկանց և անասունների հետ զուգավորվելու ախտին, որովհետև սա պոռնկական չար դևի գործն է: Սակայն ինչպես բույսերն ու ծառերը ջրի պակասից ցամաքում ու չորանում են, նմանապես էլ մարմինը, որ պարսպված է պահքով, նրա ախտերը, մշտապես նվազելով, ցամաքում են և անուժ դառնում, թեպետև մշտապես հորդորվում են պոռնկական դևի կողմից:

Արդ, արբեցողների տունը դևերի բնակարան ու հանգստավայր է, որովհետև այնտեղ անառակ կանայք լկտիաբար պարում են և վատթար երգերով խնջույք անում: Իսկ պահեցողների տունը հրեշտակների տուն է և սուրբերի հանգստարան, որովհետև այնտեղ սաղմոսերգություններով փառավորվում է Աստված: Ըստ Աստուծո բարձրագույն հրամանի՝ պահքը դևերի հալածիչն է: Պահքը Աստուծո կոչականն է և հրեշտակների ցնծությունը: Պահքը մեղքերի լվացումն է և բարեպաշտություն սերմանողը: Պահքը հոգու պայծառ ջահն է, լուսավոր կանթեղը, մարմնի առողջությունն ու երկարակեցությունը՝ վկայված բժիշկների և փորձված բոլոր մարդկանց կողմից: Պահքը Աստծուց մեզ պարգևված հոգևոր սուր և երբեք չբթացող զենք է՝ ընդդեմ թշնամու: Պահքը հրեշտակների գործն է և Եկեղեցու պանծանքը: Պահքը ամուր աշտարակ և լուսավոր սանդուղք է՝ առ Աստված բարձրանալու համար: Պահքը լայնատարած կամուրջ է, նաև ճանապարհի ելք՝ դեպի երկինք տանող: Պահքն ընտրված է Աստծու, գովված և վկայված բոլոր սուրբերի կողմից:

Ուստի, սիրելինե՛րս, մեզ պետք է պնդությամբ պահք պահել. նմանվելով մեր սուրբ հայրերին՝ սպանե՛նք որովայնն ու մեր իսկ մարմնի մեղքերի անդամները: Սակայն պահոց կերակուրն էլ պարկեշտությամբ պետք է գործածվի, որովհետև շատ կերակուրը նեղում է որովայնը, որը ծանրացած հեծում ու շրջվում է այս ու այն կողմ: Գրված է. «Մի՛ պարարտացրու որովայնդ, [այլ] միայն հացով ու ջրով [բավարարվիր]»: Իսկ Աստվածաբանն ասում է. «Ուտելիս խնայի՛ր

[7] Մարկ. է 18

[8] Ա Կոր. Ը 8

[9] Մատթ. է 18

[10] Բ Կոր. ԺԱ 27

հացը», ինչպես նաև՝ «Շատ փայտ մի՛ դիզիր կրակի վրա և շատ կերակուր մի՛ պատրաստիր գազանի համար, որը մարմինդ է, որ զորանալով՝ պատառ-պատառ չանի հոգիդ և ցանկության հրով չայրի քեզ»: Աստված մարդուն հրամայեց բավականանալ պտուղներով, սերմերով ու բանջարեղենով, սակայն, երբ գործվեց հանցանքը, մարդիկ մեծ ջանքերով ու բազում հնարներով ստեղծեցին համեղ կերակուրներ: Արդ, երբ անասունը գիրանում է, սկսում է պոզահարել իր տիրոջը, որովհետև բազմացել են նրա ցանկությունները: Իսկ մարդու ճարպոտելն ու գիրանալը ստիպում են, որ ախտը բռնադատի նրան, և նա անասուններից ավելի վատթար տնկի պոզերն Աստուծո դեմ: Այս է պատճառը, որ մարգարեն գրում է. «Մի՛ եղեք ձիու պես իգասեր ու աղտեղի»[11]: Դրա համար էլ, երբ Աստված կամենում է խրատել մարդկանց, որոնք լիանում ու գիրանում են բազում կերակուրներից, որ հողն Աստուծո հրամանով պարգևում է նրանց, բերում է երաշտ, սով, սննդի նվազություն ու այլևայլ պատուհասներ, որպեսզի մարդիկ քաղցելով՝ ակամայից դառնան ու հիշեն իրենց Արարչին: Նոյի ապրած դարաշրջանում սոդոմցիների մոտ կերակուրների առատությունն ու պարարտությունն էր, որ այնչափ աճեցրեց ու ծաղկեցրեց ախտը: Ահա՛ այստեղի՛ց ճանաչիր պահքի անսահման շնորհներն ու մեծությունը, որովհետև եթե նախաստեղծ մարդը պահեր և չճաշակեր պտղից, դրախտում կլիներ որդեծնությունը պարկեշտությամբ և մարդու կամքով, որովհետև նրան չէր բռնադատի ախտը, ինչպես այժմ, այլ Աստուծո օրհնության համար կամովին և ոչ ակամա իր անձի փոխարեն կծներ զավակներ և, ապաշխարելով անմահ կդառնար, այնտեղից կվերափոխվեր անմարմիններին անճառելի կյանքը, այսինքն՝ ընկած հրեշտակների տեղը՝ մոտ սերովբեների խորանին: Նաև կուսությունը հոժար կամքով, առանց ջանքի կպահեր դրախտում, որովհետև նրան չէր բռնադատի ախտը, ինչպես հիմա, որ մորմոքում, հեշտությամբ բորբոքում և, ցանկության հրով բոցավառելով, այրում է երիկամները՝ հորդորվելով պոռնկության դևից, վկայությամբ Գրքի, թե՝ «Հուր վառվեց իմ խորհուրդներում»[12]:

Ասածս, որ եթե մարդիկ սնվեին դրախտում, կբարձրանային երկինք, վկայում են կույսերից՝ Եղիան, իսկ ամուսնացածներից՝ Ենովքը: Որովհետև Ենովքը ծնեց որդիներ, և ապաշխարելով՝ անմահ [երկինք] վերափոխվեց, իսկ Եղիան կուսությամբ ճգնեց և անմահ երկինք բարձրացավ: Նույնը քննելով՝ Գամիրքի սյուն Բարսեղը վկայում, իսկ մեծն Գրիգոր Աստվածաբանը գոչում է՝ ասելով. «Եթե մնացած լինեինք դրախտում այնպես, ինչպես Աստված մեզ ստեղծեց, ապա աստվածացած կլինեինք և Աստծուն մերձեցած»:

Արդ, որ բազմահնար է բանսարկուն և խաբող, տե՛ս և ճանաչի՛ր առաջին մարդու անկումից, որովհետև սատանան բնական գեղեցկությունից առավել էր պտուղը փայլեցնում կույս Եվայի աչքի առջև, լլկում էր նրա որովայնը և նեղում ցանկությամբ, մինչև որ սա վերցրեց, կերավ և զրկվեց փառքից: Այսպես որովայնամոլությամբ և արբեցությամբ բանսարկուն նեղում է ամեն մեկին. առավել է գեղեցկացնում կերակուրները, քան հարկավոր է բնական քաղցն հագեցնելու համար, լլկում է որովայնն ու նեղում է մարդուն քաղցրահամ կերակուրների և ըմպելիքների ցանկությամբ՝ դարձնելով անժուժկալ, որովհետև սատանան ունի կերակուրների ցանկություն, բայց մարմին չունի, որի միջոցով կերակրվի: Նա գալիս է իր շնական դևերով, մեր մեջ սերմանում է որովայնամոլություն և ուրախությամբ կերակրվում նրա հյութերից: Այսպես գալիս և կերակրվում է ամեն [տեսակ] աղտեղությամբ ու մեղքերով, որոնք մենք մարմնով գործում

[11] Սաղմ. ԼԱ 9

[12] Սաղմ. ԼԸ 4

ենք աշխարհում: Եվ այս անսահման չարիքը, որը գործել է տալիս սատանան, քաջ ծանոթ էր անճառելիների տեսնող Պողոսին, որն այդ մասին ասում է. «Կերակուրը՝ պորտից և պորտը՝ կերակուրից»[1], իսկ Աստված կխափանի թե՛ այս և թե՛ այն:

Եվ արդ, որովհետև այսքան մեծ կործանման հասցրեց պղտի ճաշակումը, և այսպիսի մեծ բարիքների առիթ է պահ-քը, Աստուծո սիրելինե՛ր, եկեք ջանանք քաջությա՛մբ պահել և ամենայն ժամ նրանո՛վ պսակենք մեր ճակատը, այն որպես առաջին պարիսպ կանգնեցնենք ընդդեմ պոռնկության չար դևի և նրանո՛վ հալածենք չարիքն ու մարմնական բոլոր ախ-տերը: Անսասա՛ն լինենք պահքի խորհուրդի ժամանակ՝ այս կյանքում չարչարելով և ցամաքեցնելով մեր մարմինը, հե-ռանալով ցանկալի կերակուրներից և չափավորը մեզ բավա-րար համարելով, որպեսզի անխոնջ կենցաղավարությամբ և հրեշտականման կյանքով ապրենք այս աշխարհում, իսկ հանդերձյալում, որ գալու է, արժանանանք անպակաս լիու-թյանը և անճառ միությանը, մշտնջենավոր ուրախությանը և անկարոտ կյանքին բոլոր ընտրյալ արդարների հետ ամենա-կալ Հոր շնորհներով ու ողորմությամբ, Միածին Որդու գթա-սիրությամբ և Սուրբ Հոգու խնամքով և առաջնորդությամբ, որ օրհնված և փառավորված են այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Թ. Աղքատության և խոնարհության մասին

Կամավոր աղքատությունը շատ գովելի է: Տերը Ավետա-րանում երանելի է համարում նրանց, ովքեր հեռանում են աշխարհից և նրա բոլոր ախտերից և նմանվում են անինչք և անվարձ Աստուծո Որդուն: Ինչպես վկայված է Գրքում,

[1] Ա Կոր. Զ 13

շատերը դարձան կամավոր աղքատներ: Եվ որովհետև ծանր է աղքատության բեռն ու լուծը, ինչպես երկաթե հնոց, այս պատճառով է ասվում, թե ավելի լավ է աղքատանալ, քան աղքատներին կերակրել: Բայց բոլոր աղքատներին չէ, որ Տերը երանելի է համարում, այլ կամավոր աղքատներին և նրան, ով հեռանում է բոլոր մեղքերից: Որովհետև շատ աղքատներ կան, որ գարշելի մեղքերով աներկյուղ ապրում են աշխարհում և աղքատացել են անհագ շնության, անառակ արբեցության պատճառով և կամ էլ գողեր ու ավազակներ էին, և իշխանների ու թագավորի գործակալները կողոպտե-ցին նրանց, և նրանք մնացին մեղքերի մեջ առանց զղջումի: Ահա՛ եղկելիներ և ոչ թե երանելիներ: Որովհետև շատերն են, որ սաստիկ տանջվում են այստեղ, իսկ այնտեղ ավելի շատ պիտի տանջվեն: Նույնպես և ոչ բոլոր մեծատուններն են, որ պիտի տանջվեն, թեպետ Տերն ասում է. «Վա՛յ ձեզ, մեծատուննե՛ր, որովհետև ձեր մխիթարությունն ընդունեցիք»[2], և դարձյալ, թե՝ «Մեծահա-րուստը դժվարությամբ կմտնի արքայություն»[3]: Սակայն շատ մեծատուն-ներ կմտնեն Աստուծո արքայություն, եթե լինեն բարեսեր, ողորմած, անկաշառ, իրավադատ, խոնարհ, չզրկեն ուրիշնե-րին, գողերին ընկեր չդառնան ու չշնանան, լինեն խնամող հայր որբերին և այրիներին և բոլոր նրանց, ովքեր գտնվում են իրենց հովանավորության ներքո: Դարձյալ ասվում է, թե Տերը երանի տվեց այն աղքատին, որը խոնարհ է հոգով, որովհետև անեզրական է այն բարիքը, որ խոնարհությունից է լինում, քանզի Աստուծո գործն է՝ ըստ այնմ, թե՝ «Մեզ հա-մար աղքատացավ»[4], այսինքն՝ Մեծատունը խոնարհվելով՝ ծնվեց Կույսից, լվաց աշակերտների ոտքերը և նույն խոնարհու-թյունը սովորեցրեց մեզ, որ այդպես վարվենք մեր եղբայր-

[2] Ղուկ. Զ 24

[3] Ղուկ. ԺԸ 25

[4] Բ Կոր. Ը 9

ների հետ: Ինչպես նաև Իր անբավ խոնարհությունը դրեց ընդդեմ սատանայի անմիտ հպարտության, քանզի հպարտը նման է սատանային, իսկ խոնարհը նման է Աստծուն, որի համար էլ Տերն ասում է. «Ով խոնարհվի, կբարձրանա»[5], ինչպես Ինքը խոնարհվեց հայրական աթոռից: Իսկ ով հպարտանա բարձրամտությամբ, ինչպես սատանան, նրա նման կիջնի դժոխքի հատակը: Եվ դարձյալ ասվում է, թե ճշմարիտ և Աստծուն հաճելի խոնարհությունն այն է, որ երբ անտեղի բամբասում են մեկին, դատապարտում ու ասում. «Մեղքեր ես գործել», նա հանձն է առնում հոժարությամբ և հավանություն է տալիս ուրախությամբ:

Դարձյալ՝ հեզությունը չափազանց մոտ և կցորդ է խոնարհությանը, որովհետև հեզ է կոչվում նա, ով համբերում է եղբոր դառը բարկությանը: Այսպիսիք էին Մովսեսն ու Դավիթը, որոնք հեզ կոչվեցին: Ինչպես նաև Տերն ասաց. «Հեզ (այսինքն՝ խոնարհ) եմ սրտով»[6]: Նաև ներողամիտն ու համբերողն են կոչվում հեզ իրենց խոնարհամտությամբ, որն իրագործեց Տերը, նաև՝ Նրա բոլոր սուրբերը: Արտաքին իմաստասերներից մեկի վկայությամբ՝ հեզը նա է, ով համբերում է բամբասանքներին ու արհամարհանքներին, չի վիճում, հանդարտ է և քաղցր վարքով, արհամարհում է մահը, հաստատուն է ու հանգիստ: Հիրավի Տիրոջ կողմից երանություն տրվեց նրան, որովհետև այստեղ գովվում է մարդկանց կողմից, իսկ այն կյանքում կժառանգի անմահների երկիրը: Ասածս վերաբերում է նաև բարվոք սգավորությանը, որը մարմնի կամ ունեցվածքի հափշտակման ու հարազատի մահվան համար չէ, որովհետև Տերն երանելի է համարում այնպիսի սուգը, որը մեղքերի քավության համար է, երբ [մարդը] դառն արտասուքով և բազմակոծ ապաշխարանքով հիշում է իր մեղքերը,

[5] Մատթ. ԻԳ 12

[6] Մատթ. ԺԱ 29

ինչպես Դավիթը, Մանասեն և Պետրոսը, և հույժ մղկտալով՝ սգում է, երբ տեսնում է սուրբը Ավազանի ծնունդներից որևէ մեկին մեղքից կործանվելիս: Դարձյալ՝ մտաբերելով նախաստեղծի անկումը՝ լալիս է չարաչար մեծ սգով, թե մարդը չարի խաբեությամբ ինչպիսի մեծ փառքերից զրկվեց և ընկավ այս անսահման տառապանքների գիրկը: Արդ, այս բարիքներին մերձ ու եղբայր է խաղաղության գործը, որը բարձրագույն բարիք է. Տիրոջ կողմից [երանելի համարվեց խաղաղարարը]: Եվ սա ստույգ Աստուծո գործն է, որովհետև խաչի վրա Իր իսկ արյունով խաղաղություն կնքեց Հոր և մարդկային ցեղի միջև: Այս էր, որ երգում էին հրեշտակների անմարմին դասերը. «Փա՛ռք Աստուծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղություն»: Արդ, ամեն ոք, ով խաղաղարար և խաղաղասեր է, Աստուծո որդի է կոչվում, որովհետև Աստուծո Որդու գործն է կատարում, իսկ նա, ով խռովարար է, խռովասեր, մարդկանց դրդում է խռովության ու ցավագին կռվի, սատանայի որդի է, որովհետև սատանայի գործն է կատարում:

Եվ որ անբավ բարիք է խաղաղությունը, նայի՛ր և տե՛ս, որ թագավորները, որոնք ունեն աշխարհի բոլոր բարիքները, սակայն խաղաղություն չունեն, չեն կարողանում խնդալ ուրախությամբ: Բայց նախ մարդ իր հոգում և մարմնում պետք է հաստատի խաղաղություն և ապա միայն կկարողանա տալ այլոց: Նախ մարմինը պետք է դարձնել հոգուն ծառա, իսկ հոգին՝ տեր ու թագավոր մարմնին: Զափի մեջ պահել մարմինը սակավ կերակուրներով ու պարկեշտ զգեստներով՝ միայն որպես գրաստ հոգու բեռնակրության համար, որպեսզի կարող լինի բարին վաստակել հոգու պետքերի համար: Զպետք է գիրացնել մարմինը, բազում ախտերով իշխան դարձնել տիրապատկեր հոգուն և ինքն իրեն միշտ խռովել: Արդ, ով այսպես է անում, նա է խաղաղարարը, որին երանի տրվեց Աստուծո բերանով: Եվ նա այնժամ միայն կարող է այլոց

խաղաղություն պարգևել՝ հեռացնելով չար խռովությունը, որի շնորհիվ ըստ իր կարողության կկոչվի Աստուծո որդի:

Արդ, խաղաղությանը գալիս և միանում են անոխակալությունն ու անհիշաչարությունը, որոնք նույնպես Աստուծո գործերն են, որ Ինքը կատարեց և ապա մեզ սովորեցրեց կատարել: Քանզի մեր նախաստեղծ հայր Ադամն ու նրա որդիները անչափ մեղքեր գործեցին Աստուծո առջև, որովհետև թողեցին Նրան ու Նրա հրամանները և հավատացին թշնամուն՝ սատանային, և նրա խոսքերը պաշտեցին: Սակայն Տերը ոխ չպահեց և չհիշեց մարդկային ցեղի չար մեղքերը, այլ հենց նրանց համար խոնարհվեց անճառելի փառքից և մարմնավորվեց, մարդկանց որդիների գործած չարիքների փոխարեն բարին հատուցեց՝ խաչով ու չարչարանքներով ազատելով մեզ պատվիրանազանցության անեծքներից: Նույնը մեզ պատվիրեց անել և պահանջում է մեզնից, որ երբ մեկը չար խորհի կամ գործի մեր հանդեպ, մենք բարին հատուցենք նրան, որպեսզի ըստ մեր կարողության նմանվենք Աստուծո Որդուն: Ահա՛ [սա է] անեզրական երանությունն ու ամենայն գովության արժանին: Իսկ եթե միշտ հիշում ենք մեր եղբայրների չար գործերը, կուտակված ոխը մթերելով՝ պահում և ուռճացնում, հնարավորության դեպքում վրեժ լուծում և չարի փոխարեն չար հատուցում, ահա, սիրելինե՛րս, գործակից եղանք բանսարկուին, որովհետև կատարեցինք նրա կամքը, քանզի չարն էլ, ոխը մթերած պահելով Աստուծո և մարդկանց հանդեպ, Ադամին դուրս հանեց դրախտից:

Ապա տե՛ս, ո՛վ մարդ, թե որքան մեծ չարիք է, երբ որևէ մեկը բարու փոխարեն չար է հատուցում: Եվ արդ, ամեն ոք թող ճշմարտապես ճանաչի և մտապահի, որ ոխակալը եթե անգամ կատարի բոլոր տեսակի բարեգործությունները և մահու չափ ճգնի, իզուր կլինեն նրա վաստակն ու քրտինքը և անընդունելի՝ Աստծուն: Այս է վկայում նաև Բան Աստուծո

խոսքն ու հրամանը, երբ ասում է. «Եթե չներեք ձեր սրտում եղբոր հանցանքները և չքերեք ոխը ձեր հոգուց, Իմ երկնավոր Հայրը չի թողնի ձեր հանցանքները դատաստանի Օրը»[7]*: Նույն խորհրդով է գրում նաև առաքյալը. «Արևը թող մայր չմտնի ձեր բարկության վրա»*[8]*, որպեսզի չար սատանան չմիանա ձեզ հետ ձեր անկողնում և անչափ չարիքներ խորհել չտա ձեզ ողջ գիշեր: Դա է պատճառը, որ Տերը հրամայեց թողնել պատարագը սեղանի վրա և գնալ հաշտվել եղբոր հետ: Տեսնո՞ւմ ես՝ որքան ահավոր խոսքեր է մեջ բերում, որ ջանաս և նախքան Պատարագին մասնակցելը հաշտվես եղբորդ հետ: Արդ, մեղանչե՞ց ընկերդ քո հանդեպ փոքր-ինչ, չէ՞ որ դու էլ Աստուծո հանդեպ ես բազում մեղքեր գործել. եթե ներես եղբորդ փոքրիկ հանցանքը, ապա Աստված էլ կթողնի քո բազմապատիկ մեղքերը:*

Դո՛ւ գիտես: Դատաստանն այսօր Աստված քո ձեռքն է տվել, և եթե դու քո ծառայակցի հարյուրը չես զիջում, այլ ջանում ես խեղդել նրան, քո Տերն էլ չի թողնի քո հինգ հարյուրն ու հազարը: Դու կամենում ես աստվածանալ և վրե՞ժ լուծել և չե՞ս հավատում, թե Աստված Ինքը կարող է վրեժ առնել: Դու՝ իբրև մարդ, կարող ես ընդամենը մի փոքր վրեժխնդիր լինել, բայց եթե թողնես Աստծուն, ապա Նա՝ իբրև Ամենաբարձրյալ, կարող է վրեժ առնել թե՛ այստեղ և թե՛ հանդերձյալ կյանքում:

Մի՛ բամբասիր և որևէ մեկից վրեժ մի՛ լուծիր: Մի՛ հափշտակիր Աստուծո դատավարության աթոռը, որովհետև Աստված ասաց. «Իմն է վրեժխնդրությունը, քանզի Ես եմ հատուցում»[9]*: Նաև մարգարեն ասաց. «Վրեժխնդիր է Աստված, երբ կատարում է զրկվածների իրավունքները»*[10]*: Ինչպես նաև առաքյալն ասում է.*

[7] Մատթ. Զ 15, 16

[8] Եփես. Դ 26

[9] Եբր. Ժ 30

[10] Սաղմ. ՂԳ 1, 2

«Չարի փոխարեն չար մի՛ հատուցեք, այլ բարու միջոցով հաղթեք չարին: Իսկ եթե քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան»[1]: **Արդ, այս բաներն ըստ մեր կարողության կատարելն է, որ մեզ նմանեցնում է Աստծուն: Դրա համար, աղաչո՛ւմ եմ ձեզ, թողնենք այլոց մեղքերը, որ Աստված էլ մերը թողնի:**

Վերը նշածներիս փառակիցն ու խորհրդակիցը արդարադատությունն է, որը մարդուն նմանեցնում է Աստծուն՝ ըստ Փրկչի հրամանի, որ ասում է. *«Ինչպես լսեմ, այնպես էլ կդատեմ, և Իմ դատաստանն արդար է, որովհետև դատաստանի Օրը չեմ ամաչի ու չեմ պատկառի մեծամեծերից, նաև չեմ ողորմի աղքատին, այլ ըստ գործերի կհատուցեմ»*[2]: **Դրա համար էլ դատավորը կամ իշխանը, ով կոչված է մարդկանց առաջ օրենքն իրագործելու, պետք է նմանվի Աստծուն և ոչ թե խեղաթյուրի դատաստանի իրավունքները՝ կաշառք վերցնելով, որովհետև գրված է.** *«Հուր է կաշառքը, և վա՛յ դատավորին, որն այն իր հանդերձի քղանցքում կծրարի, որովհետև կայրի նրան անհոգելի դատաստանի օրը»:* **Նույն խորհրդով է գոչում Դավիթն ու ասում.** *«Նա, ով իրավունքի դեմ կաշառք չի վերցնում, չի սասանվի տիեզերական հրապարակում»*[3]: **Որովհետև դատավորը չպետք է ամաչի մեծամեծերից և կամ խղճահարվելով՝ ողորմի աղքատին, այլ պետք է արդար դատի՝ ըստ Աստուծո կամքի:**

Սակայն ագահությունն է, որ կործանում է դատավորներին և դարձնում կաշառառու և հավիտենական հրի ժառանգորդ: Արդ, չարագույն և պատառող գազան է այս ախտը, որ առաջնորդներին ու գիտնականներին ավելի է կործանում, քան ռամիկ և անուս մարդկանց:

Ամբակում մարգարեն դեռ իր ժամանակ տեսավ այս ախտը և ձայնեց առ Աստված. *«Ինչո՞ւ այսպես ստեղծեցիր մարդկանց, որ մեծամեծերը կուլ են տալիս փոքրերին ծովի ձկների նման: Քանզի տեսա, որ դատավորը կաշառքի ուժով թյուրեց օրենքը, իսկ Դու ներում ես, որն էլ ինձ ցավալի է: Արդ, հայտնի՛ր ինձ Քո խորհուրդները»*[4]: **Եվ Աստված պատասխանեց նրան. «Թեպետև կարողանաս անձրևի անթիվ կաթիլներն ու ծովի ավազը հաշվել, որն անհնար է, Իմ խորհուրդները չես կարող իմանալ, որովհետև ապագայում պահել եմ մի օր, երբ պիտի դատեմ բոլորին»:**

Կրկի՛ն տես այս չարագույն ախտի պղծությունը, որովհետև գալիս են իշխաններ, առաջնորդներ ու պատվավոր այրեր և իմաստուն խոսքերով խնդրում են դատավորին, բայց նա չի լսում նրանց: Հետո գալիս են ոսկին ու արծաթը, որոնք ոչ ձայն ունեն և ոչ էլ խոսում են, սակայն լուռ, իրենց պայծառությամբ հույժ խոցում և կակղացնում են դատավորի սիրտը: Եվ նա, հավանելով, լսում է անբաններին առավել, քան բանականներին:

Ուստի, աղաչո՛ւմ եմ, զգաստացե՛ք, իշխանն՝ և դատավորնե՛ր, և կաշառակերությամբ մի՛ դանձեք գեհենի հուրը ձեր անձերի համար:

Արդ, ասածներիս, ինչպես խնամքով շարված մարգարտաշարի, գալիս միանում է նաև սրբությունը, որն Աստուծո անկողոպտելի գանձն է՝ այնքան մեծագույն, որ [այն ունեցողին] երանի տվեց Տերը՝ հույժ գովելով. *«Երանի՛ նրանց, որոնք սուրբ են սրտով, որովհետև նրանք կտեսանեն Աստծուն»*[5]:

Սուրբ է կոչվում նա, ով չգիտի, թե իր հոգում կա խղճմտելու որևէ բան, ով չունի ոչ միայն մարմնական, այլ նաև հոգեկան որևէ բիծ՝ մախանք, կամ այլ բան: Իսկ երբ պատահում է՝ չարի խաբեությամբ նա որևէ մեղքի մեջ է ընկնում (որովհետև մարմինը դյուրակործան է), քաջությամբ ջանում է և սրբելով՝ լվանում զղջումով, ապաշխարանքով, խոստովանությամբ և ջերմ արտասուքով, որը երկ-

[1] Հռոմ. ԺԲ 17-20, Ղուկ. ԺՁ 26

[2] Հովհ. Ե 30

[3] Սաղմ. ԺԴ 5

[4] Ամբակ. Ա 13-17, Բ 1-7

[5] Մատթ. Ե 8

բորդ Ավազանն է, Աստծուց մեզ շնորհված մեծ և անբավ պարգև, որի միջոցով սրբվում, մաքրվում է սիրտը և արժանանում Աստծուն տեսնելու տիեզերական Ատյանում՝ ըստ իր սրբության կարողության:

Եվ արդ, ինչպես թագուհու թագին ագուցված տպազիոն քարը կապուտակ և ծիրանակերպ գույների միջև վայելչապես համապատասխանում է խորհրդիս զորությանը, այնպես էլ ասածիս անբաժանելիորեն միանում է պայծառ և պատվական կուսությունը, որը ցանկալի է հրեշտակներին և զարմանալի գործ, պարծանքի անուն է երկրի վրա և Աստուծո հետ ճշմարիտ կապ՝ երկնքում, ահարկու՝ դևերի գնդերի և անհավատալի՝ վավաշոտ ախտաբույծ անօրենների համար: Եվ այնքան մեծ և գերագույն կերպով է փառավորված երկնքում և երկրի վրա, որ նաև Աստված Կույսից մարմնով աշխահ եկավ՝ մարդկանց [փրկելու] համար: Հոր անճառելի Բանը իջնելով՝ մտավ Աստվածածին կույս Մարիամի մաքուր որովայնը, Անբովանդակելին թաղանթապատ ծրարվեց Դավթի դստեր երանական որովայնում և, ակնթարթորեն վերցնելով Կույսի արյունը, Իր Աստվածության հրով ձևավորեց և քառասուն օրում ստեղծեց Մանկանը՝ անշփոթ և անբաժանելի կերպով միացնելով Աստվածությունը մարդկությանը. Բանը մարմին եղավ Աստվածածնի որովայնում՝ հավասար [մնալով] Հորը և [բազմած] փառքի Աթոռին:

Դրա համար էլ, հավատացյալնե՛ր, եկե՛ք երկրպագենք կույս Մարիամին, որովհետև նրա արգանդը առավել սուրբ և բարձր եղավ, քան քերովբեական աթոռները:

Եվ արդ, որովհետև հույժ ծանր է այս իրողությունը և բնականից դուրս, դրա համար էլ Տերը սահման և օրենք չդրեց, այլ ասաց. «Ով կարող է տանել, թող նա տանի»[6]: Որովհետև Ինքն էր մարդկության ստեղծողը և գիտեր այդ ծանրություն: Եվ երբ թվարկեց ներքինիների երեք կարգերը, «այն է, - ասաց, - գովելի, որ երկնքի արքայության համար է»: Ով ճնշում է իր անձը և կուսությամբ նահատակվում ընդդեմ պոռնկական դևի և վավաշոտ հրաբորբոք ախտի, նա մարտիրոսությունից շատ ավելի մեծ սխրանք է գործում, որովհետև չափ չկա պատերազմի օրերին: Այս նկատելով՝ աստվածընկալ սուրբ Պողոս առաքյալը գրեց. «Տիրոջ կողմից կույսերի համար հրաման չունեմ նրանց համար սահման դնելու, բայց ով սիրում և պահում է սա, ես հույժ գովում եմ նրան, որովհետև Աստծունն է հոգում և ոչ թե աշխարհինը»[7]:

Արդ, հնուց ի վեր սկիզբ դրվեց կուսությանը: Եվ նահապետները հույժ ցանկացան նրա պայծառ փառքին, բայց որովհետև կաթնակերներ էին, քչերը մտան այդ ծանր լծի տակ, որովհետև փափկամարմիններ էին և դժվարանում էին մտնել այդ մեծագույն ու տևական պատերազմի մեջ: Իսկ նոր ժամանակներում շատերը ցանկացան նրա գեղեցիկ և լուսավոր անունը, և անթիվ հոգիներ կամավոր մտան կուսության հանդես և հանձն առան այդ ծանր լուծը Խաչի խորհուրդի դառը վաստակով, որովհետև դառնություն ճաշակած այրեր էին և հաստատուն սիրով իրենց Տիրոջ հետ բևեռվեցին խաչին:

Հնում Հեսուն, Եղիան ու Հովհաննեսը կուսությամբ նահատակվեցին, Դանիելն ու երեք մանուկները Բաբելոնի թագավորի կողմից ներքինիներ դարձան, մեծ Նոյը և ցանկալի Հովսեփը կին ունեին, բայց զսպված էին ողջախոհությամբ և Գրքերում կույսերին հավասար փառավորվեցին:

Իսկ նոր ժամանակներում ծաղկեց և հայտնի դարձավ կուսության պսակը, և ոչ ոք չի կարող հաշվել նրանց թիվը, ովքեր պահեցին այն, որովհետև Տերը ծնվեց Կույսից, և շատերը քաջալերվելով՝ մտան կուսության նեղ ճանապարհը.

[6] Մատթ. ԺԹ 12

[7] Ա Կոր. է 25

առաքյալներից Զեբեդեոսի որդիներ Հովհաննեսն ու Հակոբոսը, ինչպես նաև Թովմասն ու մյուս Հակոբոսը ապրեցին կուսությամբ: Ապա առաքյալներին հետևողները և անթիվ միանձինք քաջալերվեցին և սիրով պահեցին այն, որովհետև խաչի վրա ծաղկեց կուսության պտուղը:

Եվ ապա, որպես խաչներ գրոհելով դեպի երկնավոր աղը, նրանցից շատերը սրանով բարձրացան անմարմինների բանակը: Նրանց ազգականներն, այս տեսնելով և իմանալով, հորդորվեցին բարի նախանձով և իրենց ցանկասեր ու ախտակիր մարմնով մտան կուսության ասպարեզը:

Կանանցից շատերն էլ սուրբ կուսությամբ առավել բարձրացան, քան տղամարդիկ, որովհետև սպանեցին մարմնական ցանկությունները և սանձեցին վավաշոտ ախտը, որը կար նրանց բնության մեջ, որովհետև սիրեցին Քրիստոս Փեսային և ցանկացան Նրա սուրբ և պայծառ առագաստը: Եվ նրանցից շատերը փառաբանվեցին այնքան, որ հրեշտակներն անգամ զարմացան, որովհետև նրանք մեծ փափագով ցանկացան Քրիստոսին և կուսությամբ հեղեցին իրենց արյունը Նրա համար:

Աստուծո Բանի՝ Հիսուս Քրիստոսի կույս վկաներ և քարոզիչներ դարձան Փիլիպոսի չորս դուստրերը, զարմանալի Թեկղը, սքանչելի Սանդուխտը և մեր բարձրահամբավ և բեղմնավոր մայրը՝ հրեշտակներին ցանկալի սուրբ Հռիփսիմեն, նրա ընկերները, Վառվառան և Հուլիան, Փեփրոնիան և Եւպրաքսիան և անհաշիվ ուրիշներ: Եվ ստեղծվեցին կանանց ու տղամարդկանց վանքեր ու մենաստաններ: Եվ կուսությունը, որպես ընդհանրական սովորություն, այնքան առատացավ, որ համարվեց մի հեշտ ու անտանջանք գործ: Իսկ մեզ մոտ վերջին ժամանակներս շատերն անխորհուրդ և անտեղի են տրվում այս գործին, որովհետև հույժ ցանկալի է կուսության համբավը, և առանց քննելու կամենում են

կուսական մարմնով հեշտությամբ վայելել, ուտել ու խմել՝ աստվածացնելով որովայնը: Իսկ վերջում, չկարողանալով դիմանալ, կործանվում են չարաչար ախտից և դուրս գալիս միաբանության ուխտից, որը կնքեցին Աստուծո հետ, և կուսության փոխարեն իրենց անձերում այնպիսի զազրատեսակ ախտեր են կրում, որոնք ոչ ոք չի կարող պատմել բերանով:

Բայց կույսը դեռևս նա չէ, ով միայն չի խառնակվում կանանց վավաշոտ մարմնին և իր անձը հեռու է պահում այլ զազրատեսակ խառնակություններից, այլ սուրբ Գրքերում նա է կոչվում կույս և է, որ պայծառ և մաքուր կուսության հետ ունի նաև ողորմություն, որ չխավարի հիմար կույսերի հետ միասին. ունի նաև անոխակալություն և խոնարհություն, պահքերի պարկեշտություն և աղոթքների տքնություն, իմաստուն համբերություն, ինչպես նաև աննենգ սեր Աստուծո և մարդկանց հանդեպ, չի սասանվում անպատշաճ բարկությամբ և չի վառվում ագահությամբ ի սեր արծաթի կամ այլ նյութական բանի, սանձում է մեծ վիշապին՝ լեզուն, և մարում նրա սաստիկ հուրը. քիչ է հոգ տանում երկրավոր բաների մասին՝ ըստ առաքյալի. *«Մենք ունենք կերակուր ու հանդերձ և բավարարվենք այդքանով»*[8], ինչպես նաև միշտ խորհում է երկնավորի մասին, որովհետև *«այնտեղ է գանձվում ամեն ինչ»*[9]:

Ահա՛, սիրելինե՛ր, այսպիսին են ճշմարիտ կույսերը, որոնք կարող են ահավոր հրապարակում անաչառ Դատավորի առջև կրել կուսության անունը: Եվ Նա էլ կպատվի նրանց տիեզերական Ատյանում և արեգակի նման շուշանափայլ կպսակի նրանց ի տես հրեղեն և հողեղեն արարածների: Ուստի, աղաչո՛ւմ եմ, ջանացե՛ք քաջությամբ և արիաբար կռվեցե՛ք վավաշոտ ախտի և պոռնկական դևի դեմ: Եվ որքան հնարավոր է, սուրբ և մաքո՛ւր պահեք կուսությունը ոչ

[8] Ա Տիմ. Զ 8

[9] Մատթ. Զ 20

միայն մարդկանց ցուցադրելու, այլև ծածկատես Աստուծո աչքի առջև: Եվ ոչ սոսկ մարմնով, այլ և՛ մտքով, և՛ խորհրդով պարկեշտ լինենք, նաև աչքը անարատ պահենք, որ Աստուծո առջև կատարյալ լինենք և հանդերձյալ կյանքում արժանի լինենք Աստուծո կատարյալ բարիքներին:

Իսկ երբ ամենայնի Տերը ստեղծեց այր և կին, օրհնեց նրանց որդեծնությունը և ուրախությամբ եկավ նրանց հարսանիքին: Եվ առաքյալը սուրբ կոչեց այր և կնոջ արդար անկողինը, որովհետև նրանք Աստուծո արարչության գործիքներ են, ինչպես սղոցը և ուրագը՝ հյուսնի համար: Եվ Աստված Իր օրհնությամբ այնտեղից է մեզ ստեղծում, որովհետև Աստուծո ստեղծած ոչ մի բան խոտան չէ: Եվ հույժ բարի են Աստուծո արարածները, ով չափավոր է վարվում նրանց հետ:

Քանզի եթե անկողինը սուրբ օրենքով լինի, առանց սոդոմական ախտի, մերձենալը՝ պարկեշտությամբ՝ որդեծնության նպատակով, եթե մյուս գործերն էլ բարի լինեն, երբեմն այր ու կին իրենց կամքով զբաղվեն աղոթքով և հետո միայն գնան միմյանց մոտ, այնպիսի այրն ու կինը կպատվեն Աստուծո կողմից և Քրիստոսին մայր, եղբայր և քույր կլինեն իրենց բարի գործերի շնորհիվ: Ինչպես Տերն է ասում. *«Ով կատարի Իմ Հոր կամքը, որ երկնքում է, նա է Իմ եղբայրը, քույրը, հայրն ու մայրը»*[1]: Այս խորհրդով սուրբերից մեկն ասաց. *«Կո՛ւյս եղեք, կանա՛նք, որ Քրիստոսին մայր լինեք: Զի թեպետև որդիներ ծնեք ըստ Աստուծո սահմանածի, նաև ձեր մյուս գործերն էլ բարի լինեն Աստուծո կամքով, կլինեք մայր և քույր Հիսուս Քրիստոսին»:* Արդ, քանի որ այսպես քաղցր, բարեգութ և մարդասեր է Աստված, ապա մի՛ եղեք անհույս և սաստիկ մեղքերով մի՛ հեռացեք Նրանից, այլ օր ու գիշեր ջանացե՛ք ամենայն բարեգործությամբ: Եվ պարկեշտ ու սուրբ լինենք այս աշխարհում՝ ըստ մեր կարողության, որ-

[1] Մատթ. ԺԲ 50, Մարկ. Գ 35

պեսզի բոլոր սուրբերի հետ հանդերձյալ կյանքին ու անճառելի հանգստին արժանի լինենք մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ. Ում հետ էլ Հորը և Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Ժ. Ողորմության, սիրո և գթության մասին

Եվ արդ, որովհետև աստվածային կերտվածքի սկիզբն այսպես եղավ, ե՛կ, ո՛վ վսեմդ, քննենք Հիսուս Քրիստոսի հիմքի վրա կառուցվող բարձր աշտարակներն ու բոլոր բարի շինվածքների գլուխը՝ սերը, գութը և ողորմությունը: Եվ արդ, սրանք մի են և միապես էլ գովաբանվում են աստվածային Գրքերում: Ինչպես նաև սրանք Աստուծո անուններն են, մի հորից և մի մորից սերված եղբայրներ, իրար նման և միմյանց մերձավոր գործով: Քանզի երբ մեկը կամենում է ողորմություն տալ մեկ ուրիշին, առաջին հերթին շարժվում է նրա գութը և հանդչում աղքատի վրա՝ գութ առաջացնելով նրա նկատմամբ: Եվ ապա սերը, որ ծածկված է հոգու մեջ, հորդորում է նրան ողորմություն գործելու: Իսկ նա, ով գութ չունի, ո՛չ սեր ունի, ո՛չ էլ կարող է ողորմած լինել: Եվ եթե տա էլ, այդ դեպքում վարձք չի ստանա Աստծուց՝ ըստ մեր Փրկչի հրամանի, որովհետև մարդկանց աչքին երևալու համար է կատարում, որ գովաբանվի տեսնողների կողմից:

Գրված է. *«Աստված սեր է»*[2]: Եվ ով աննենգ սիրում է Աստծուն, ընկերոջը և աղքատին, նա բնակվում է Աստուծո մեջ, և Աստված՝ նրա մեջ, և ըստ իր կարողության նմանվում է Աստծուն: Եվ մի այլ տեղ ասում է. *«Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես*

[2] Ա Հովհ. Դ 8

քո անձը»[3]: **Եվ Տերը հրամայում է.** *«Նոր պատվիրան եմ ձեզ տալիս, որ սիրեք միմյանց, ինչպես որ Ես սիրեցի ձեզ և Իմ անձը դրեցի ձեր փրկության համար»*[4]: **Այս է կատարյալ սերը: Քանզի եթե չես կարող սիրել եղբորդ, որին տեսնում ես, ինչպե՞ս կսիրես Աստծուն, որին չես տեսնում: Քանզի մարդիկ ընկերասեր մարդուն աստվածասեր են կոչում: Դրա համար էլ Տերը քաջալերում է՝ ասելով.** *«Եղե՛ք գթասիրտ, ինչպես որ գթասիրտ է ձեր երկնավոր Հայրը»*[5], **իսկ առաքյալն ասում է.** *«Զգեստավորվե՛ք գթասրտությամբ և ողորմությամբ»*[6], **որովհետև Աստուծո Դատաստանին ո՞վ կպարծենա բարձրագլուխ: Եվ դարձյալ ասում է.** *«Եթե բոլորի համար բարիք գործեմ և սեր չունենամ, ապա իզուր եմ ջանում»*: **Նաև սքանչելի Եսային է գոչում.** *«Տա՛ր աղքատին, անհարկին քո տուն գթասրտությամբ, սիրով և ողորմածությամբ տալով նրան քո հավաքած հացի ավելցուկը, և ահավոր Ատյանում նախօրոք կծագի քո լույսը, և չի հանգչի քո լապտերը»*[7]: **Դավիթն էլ գոչում է.** *«Երանի՜ նրան, որ խնամում է աղքատին, որովհետև դատաստանի Օրը Տերը կփրկի նրան անսահման չարից»*[8]: **Եվ Տերը բարձրագույն հրամանով ասում է.** *«Երանի՜ ողորմածներին»*[9]: **Որովհետև երբ անաչառ Ատյանի սոսկալի բեմի առաջ ամեն ոք օգնության կարիք զգա, նա ողորմություն կգտնի՝ մեծ պարծանքով մեկի դիմաց հարյուրը ստանալով: Եվ աղքատները պայծառ ջահերով նրան կշրջապատեն և կգովեն նրան Դատավորի առաջ, որովհետև իմաստուն վաճառականի պես տվեց անցավոր ունեցվածքը և գնեց այս անգին մարգարիտը: Ապա հիրավի հրամայում է Տերը.** *«Ձեզ համար բարեկամներ արեք անիրավ մամոնայից»*[10]. **Աստծուն և աղքատների դասերին տալով՝ երկնքո՛ւմ դիզեք գանձը, որ ապահով մնա գողերից ու ավազակներից:**

«Գիտեմ, - ասում է, - որ հույժ սիրում եք քսակն ու արծաթը և կամենում եք պինդ պահել այն: Ես ցույց կտամ ձեզ պահելու կարգը. աղքատների միջոցով առաքեցե՛ք վեր՝ դեպի Հոր առագաստը՝ *ուր չի կարող մտնել գողը, և ցեցը՝ ապականել»*[11]: **Նա՛ է սիրում իր գանձը, ով հանդերձյալում է պահում այն, և ոչ թե նա, ով թաղեց այն հողի մեջ, իսկ ինքը առանց պաշարի գնաց դատավորի մոտ: Եվ հիրավի Տերն աշխարհի ունեցվածքը** *«անիրավ մամոնա»*[12] **է անվանում, քանզի թողեցինք մեր ժառանգությունը, որ դրախտն էր, և անիրավության պատճառով հափշտակվեցինք անասունների այս աշխարհը: Տերն ասում է. «Սուտ և օտարոտի բաներով եք կամենում ետ գնել ձերը, որն անվախճան հանգիստն է: Դո՛ւք գիտեք, բայց դեռ շատ եք անօգուտ ապաշավելու: Արդ, ձեզ համար բարի անո՛ւն վաստակեցեք, քանի որ աղքատները ողորմածին Աստված են կոչում և ասում. «Այս ինչ բանը Աստված պարգևեց ինձ»»: Գրված է. «Երանի՜ նրան, որ իր հացը ուտում է ամենայն ջրերի վրա»: Ողորմությունն արագաթև արծիվ է, երբ սիրով և գթասրտությամբ է արվում: Քանզի սուրբերից մեկը պատմեց. «Տեսա ահա մի թագուհի, որն իր ձեռքին ուներ լուսավոր ջահ՝ առավել պայծառ, քան արեգակը, և կանաչասաղարթ, տերևառատ և պտղալից ձիթենի: Նա հրեղեն կառքով հրեշտակների դասերի ուղեկցությամբ մեծ համարձակությամբ բարձրանում էր երկինք: Ես բարձր ձայնով հարցրի նրան. «Ո՞վ ես դու, ի՞նչ է քո անունը, ո՞ր թագավորի դուստրն ես դու, որ այդպիսի զարմանալի**

[3] Մարկ. ԺԲ 31

[4] Հովհ. ԺԳ 34

[5] Ղուկ. Զ 36

[6] Կող. Գ 12

[7] Ես. ՃԸ 7-8

[8] Սաղմ. Խ 2

[9] Մատթ. Ե 7

[10] Ղուկ. ԺԶ 9

[11] Ղուկ. ԺԲ 33

[12] Ղուկ. ԺԶ 11

փառքով բարձրանում ես երկինք»: Իսկ նա պատասխանեց. «Ես երկնավոր Թագավորի դուստրն եմ, անունս ողորմություն է. ես մարդկանց՝ աղքատներին տված ողորմությունն եմ: Ինչպես տեսնում ես, ամեն օր արագաթև բարձրանում եմ երկինք՝ Հորս մոտ, և պարծանքով նստում Աստուծո աջ կողմում: Եվ ամեն ժամ մեծ համարձակություն ունեմ Նրա առաջ, առավել ևս՝ դատաստանի Օրը: Եվ եթե դու կամենում ես փրկվել բարկությունից, որ գալու է, ինձ քեզ կենակից և սիրելի հացակից դարձրու, միշտ գրկախառնվիր ինձ հետ և սիրալիր գթասրտությամբ համբուրիր իմ լուսավոր աստվածատիպ պատկերը»:

Գիտե՞ս արդյոք դպիր Եւնոմիկոս մանուկին, որ փորձելով եկավ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մոտ և հպարտությամբ ասաց. «Ո՞վ է իմ ընկերը, քանի որ պատվիրաններդ, որ հրամայեցիր, ես բոլորը պահեցի»: Եվ Տերը չասաց. «Արքայությունում ես», այլ՝ «Հեռու չես արքայությունից (այսինքն՝ արքայության ներսում չես, այլ հեռվում), և քեզ մոտ խորհուրդ կա, որ չես կարող մտնել այնտեղ, քանի որ չես կամենում: Քանզի եթե չունես բոլոր բարիքների գլուխը՝ սեր, գութ և ողորմություն, քո գործած բարիքները նման են անգլուխ կենդանու: Եթե այս ամենը պահեիր քո մտքում, դու չէիր հավաքի ոսկի, արծաթ, նաև այլ փարթամություններ, այլ գթությամբ ու սիրով այս ամենը կբաշխեիր որպես ողորմություն: Եվ արդ, եթե կամենում ես, որ քո բարիքը նպատակին հասնի և կատարյալ լինի, դու գնա՛ և տո՛ւր այն որպես ողորմություն»: Իսկ նա հույժ խոժոռվեց, որովհետև չարը նրան կապել էր արծաթի և այլ փարթամությունների սիրով: Արդ, մեր Տերը գիտեր նրա ժլատ ու տմարդի բարքը և հիրավի ասաց նրան. «Արքայության ներսում չես: Մի՛ կեղծիր, որովհետև Ես սրտագետ եմ և գիտեմ, որ դու և քո նման մեծատունները չեք կարող մտնել արքայություն, քանի դեռ մնում եք ձեր անողորմ բարքերի մեջ: Ինչպես որ ասեղի նեղ անցքով չի կարող մտնել ստվար ու հաստ պարանը, որ ամրացված է մի մեծ նավի նավախելին կամ հոյակապ և մեծ քաղաքի աշտարակներին՝ տարբեր գործերի համար նախատեսված: Եվ դու կարծեցիր, թե Ես մարդկանցից դուրս եկած մի բարի վարդապետ եմ: Եվ ահա մարդկանց մոտ չկա ճշմարիտ և ստույգ բարի, ինչպես և դու չես, որովհետև չէիր կեղծի ստությամբ: Ապա եթե որպես Աստուծո ես Ինձ բարի կոչում, այս է ճշմարիտ և ստույգ բարին, քանի որ իրոք Աստված եմ և ստույգ և ճշմարիտ Բարին»:

Բայց և ա՛յս իմացիր, սիրելի՛ս, որ եթե բոլորը ողորմած լինեին և հյուրասեր, ինչպես Աբրահամը, Ղովտը, Հոբը, Կոռնելիոսը և Այծեմնիկը, աշխարհում չէր լինի աղքատություն, այլ կլիներ մեծ հավասարություն:

Արդ, հիմար կույսերը հաղթեցին պոռնկական դառնագույն, մորմոքող, վավաշոտ ախտին և չար դևին, բայց չմտան արքայություն, որովհետև առատապես ողորմություն չարեցին, այլ փոքր-ինչ:

Հիշի՛ր նաև հարուստին, թե ինչպես էր չարաչար տանջվում, որին հանդիմանեց Աբրահամը և մի կաթիլ ջրի անգամ չարժանացրեց նրան: Ահեղ Ատյանում նույնպես Դատավորը կասի անողորմներին. «Հեռացե՛ք Ինձնից և մտե՛ք սատանայի կրակի մեջ, որովհետև նմանվեցիք նրա անողորմ բարքին և կարող եք հավիտյան միասին բնակվել: Ես ողորմած եմ, իսկ դուք՝ անողորմ. ինչպե՞ս կարող եք դուք բնակվել Իմ առագաստում, քանզի օրենք չէ, որ թշնամիներին բերեմ Իմ առագաստը: Իմ գութը, որը դուռն է Իմ անմահ հարսանիքի, փակվեց ձեր առջև և չտարածվեց ձեր վրա, քանի որ քաղցեցի, և Ինձ ոչինչ չտվեցիք ուտելու» և այլն:

Ո՛վ ողորմելի, որքա՛ն ծանր կլինի այն ժամանակ, երբ տեսնենք ոմանց արեգակնակերպ լուսապսակով Թագավորի

պես ահավոր հրապարակում ճեմելիս, իսկ մեզ՝ ողորմելի-ներիս, խավարամած հրի մեջ մտնելիս: Սա առավել ծանր է, քան տանջանքները: Արդ, աղաչո՛ւմ եմ, չխնայե՛նք մեր ունեցվածքը, որքան կարող ենք, տա՛նք Աստծուն աղքատ-ների ձեռքով, որ չամաչենք այն սոսկալի Օրը: Զհոգանք մեր ձիերի, ջորիների, շների, կանանց և մեր մարմինների համար՝ անտես անելով Քրիստոսին, որ մեր փրկության համար աղ-քատների հետ շրջում է մեր դռների մոտ: Նա քեզ համար մերկ խաչ բարձրացավ, ծաղրվեց, թուք ընդունեց, ծարավեց, խոցվեց, գամվեց. և դարձյալ՝ այսօր սոված և մերկ աղքատ-ների հետ շրջում է մեր դռների մոտ: Եվ արդ, ողորմենք մեր անձերին և չանտեսենք Նրան: Նաև աղքատը, որը մուրում է, կարող է ողորմություն անել, եթե կամենա. և այն Աստված ավելի մեծ է համարում, որովհետև չունեցածից տվեց, քան հարուստինը, որն ավելորդից տվեց: Այն այրի կինը, որը սի-րով երկու խերևեշ գցեց գանձանակը, առավել գովաբանվեց Քրիստոսի կողմից, քան հարուստները, որոնք ավելի շատ գցեցին: Իսկ եթե ընավ ոչինչ չունես, դու լա՛ց եղիր և ապաշխարի՛ր նեղված եղբորդ համար: Մի բաժակ ջուր կա-րո՛ղ ես տալ, կարո՛ղ ես այցելել հիվանդին: Արդ, այս ամենն Աստված կընդունի որպես մեծ ողորմություն, թեպետ և քեզ փոքր է թվում, որովհետև Աստված միայն ըստ կարողության է խնդրում. ում շատ տվեց, շատ է պահանջում նրանից, իսկ աղքատից մի փոքր՝ խոսքով հնազանդվել, ապաշավել, հո-գով և մարմնով սուրբ լինել:

Գիտնականներն էլ կարող են ողորմել խոսքով և գիտու-թյամբ: Եվ ինչպես հոգին մեծ է, քան մարմինը, այնպես էլ ով խոսքով է խրատում և ուսուցանում մեղավորին՝ հանե-լով նրան մեղքից, կոչվում է Աստուծո բերան, և այդ ավելի մեծ ողորմություն է, քան մարմնականը: Դրա համար գիտ-նականը պետք է ջանա, արիանա, քաջանա և մարդկանց

մտքի սեղանին դնի խոսքի և գիտության արծաթը և աճեցնի աստվածային իմաստության քանքարը: Նա չպետք է Աստու-ծո օրենքների չար վաճառական և ծուլությամբ՝ անիրավ մշակ լինի, երբեք չպետք է դադարի խրատելուց և հանդի-մանելուց: Եվ այս պետք է անի ոչ թե մարմնավոր շահի, այլ Աստուծո սպառնալիքների համար, որ շատերը օգտվեն: Նա թող կսկծացնող աղ լինի ծույլերի համար և համեմի նրանց մեղկ և թույլ բնությունը, իր անձը առանց գայթակղու-թյան պահի, լուսատու ճրագ լինի աշխարհի տան մեջ՝ մեղ-քով խավարածների համար, և, ըստ իր կարողության, հանձն առած անվամբ նմանվի Աստծուն:

Եվ ինչպես որ Աստված ամեն բարիք տալիս է մարդ-կանց, խնամում ու խրատում է տգետին և կատարյալ դարձ-նում, այնպես էլ պետք է գիտնականն անի՝ տգետին դարձ-նելով առ Աստված, հույս տալով և մշտապես խրատելով: Եվ Աստված այս ամենը մեծ ողորմություն կհամարի և կվար-ձատրի նրան, որովհետև սիրով և գթությամբ կատարեց: Ուստի ջանացե՛ք, սիրելինե՛ր, և մի՛ դադարեք խրատելուց, թեպետև տգետ և կամ ծույլ մարդիկ վշտացնեն մեզ, որով-հետև վարձքը ըստ վաստակի ու քրտինքի կլինի: Մեր Տիրո-ջը և Նրա ծառաներին էլ ատեցին հանդիմանելու պատճա-ռով և բազում նեղություններ պատճառեցին նրանց: Որով-հետև գրված է. «Դռների մոտ ատեցին հանդիմանողներին և պղծեցին սուրբ խոսքերը»:

Եվ եթե այսպես անենք այս կյանքում, մեր վարձքը Աստուծո կամքով կլինի, և Նրա մյուսանգամ Գալստյան ժա-մանակ Նրա աջակողմյան դասին արժանավոր կլինենք մեր Տեր ու Փրկիչ Հիսուսի Քրիստոսի շնորհներով և մարդասի-րությամբ, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԱ. Խոստովանության, զղջման և ապաշխարության մասին

Եվ ահա հասնելով՝ ժամանեցինք առաքինության գլուխ և մայր խոստովանությանը՝ զղջմամբ և ապաշխարությամբ հանդերձ, որը բարձրագույն աշտարակն է Աստուծո սուրբ Եկեղեցու և հույսը՝ սուրբ Ավազանի բոլոր ծնունդների, որն անափ ցանկալի ու սիրելի է Աստծուն, և Աստված գովում է այն Հին ու Նոր Կտակարաններում: Բոլոր սուրբերը նույնպես աստվածային Գրքերով հորդորում են մեղավորներին՝ ետ դառնալ, ապաշխարել և ընկնել Աստուծո առաջ: Քանզի Աստված շատ է կամենում և սիրով, գթությամբ կանչում է ամեն մեկին և մեղավորի դարձով ցնծում է ուրախությամբ, բայց հույժ տրտմում է, երբ Իր անարատ ձեռքով ստեղծվածը անզեղջ է մնում:

Եվ դարձյալ՝ ո՛վ աստվածաստեղծ իշխան, Աստվածաշունչ գրքերից քննենք նաև այս անեզր երանության ու կատարյալ բարեգործության գեղեցկությունը, որ Աստծուց օտարացածին կրկին ետ է բերում առ Աստված և ժառանգորդ դարձնում Նրա անհաս պարգևներին: Եվ արդ, Աստուծո ստեղծած բոլոր երախտիքներից առավել մեծն ու զարմանալին խոստովանությունն ու զղջման հույսն է: Եվ դու, ո՛վ մարդ, մի՛ հուսահատվիր, եթե շատ են քո հանցանքները, որովհետև քո բազում չարիքներն ու հանցանքները չեն կարող հաղթել Աստուծո ողորմությանը, և առավել համարձակ թող լինեն խոսքերս, որովհետև Աստված անբավելի ու անսահման է մեծությամբ և անճառելի՝ առավելությամբ, քան չար սատանան, որովհետև նրա Արարիչն ու Տերն է, ինչպես նաև առաքելու է նրան անչեջ հրի մեջ:

Նմանապես էլ Աստուծո գութը, ողորմությունն ու մարդասիրությունը առավել բարձր է ու մեծ, քան սատանայի չարությունն ու մեղքերը, որ գործել է տալիս մարդկանց:

Եվ ինչպես փոքրիկ հուրը չի կարող վնասել համատարած ծովը, այնպես էլ աշխարհում գործվող չար մեղքերի բազմությունը, երբ մեղավորը գալիս է զղջման խոստովանությամբ և ապաշխարությամբ, անհայտանում և ջնջվում են Աստուծո ողորմության առաջ: Եվ կամ ինչպես մոմ, որ հալվում է կրակի առաջ կամ էլ ծխի պես, որ ցնդում է: Միայն հավատ ու հույս ունեցի՛ր անձիդ մեջ, դո՛ւրս եկ մեղքերից և թո՛ղ դրանք և ստույգ կերպով հավատա՛, որ Աստված կարող է քեզ ապրեցնել, որովհետև իր Որդուն իսկ չխնայեց իր թշնամիների առաջ: Քանզի առավել փրկում և ուրախանում է, երբ սիրելիներս և բարեկամներս դառնում ենք դեպի Նա: Նայի՛ր և տե՛ս օրինակը և մի՛ հուսահատվիր, ո՛վ մարդ: Աշխարհում չկար այնպիսի մեղք և չար անօրենություն, որ չգործեցին նինվացիները: Բայց երբ զղջացին սակավ օրեր, արտասուքով հանգցրին Աստուծո բարկության հուրը: Մեծն Դավիթը շնացավ և սպանեց, բայց Աստված ընդունեց նրա դարձը, մեղան և արտասուքը: Իսրայելի Մանասե թագավորը սղոցեց մեծն Եսայիին և Աստուծո ժողովրդին բռնությամբ կռապաշտության դարձրեց: Բայց երբ ետ դարձավ և ապաշխարեց Բաբելոնի երկաթե բանտում և զղջմամբ ասաց «Տե՛ր ամենակալը», Աստված ուրախացավ նրա դարձի համար և կրկին անգամ նրան թագավոր դարձրեց Երուսաղեմում:

Տե՛ս նաև Պետրոսի դառն արտասուքը, որը ջնջեց ուրացության թարախը: Նայի՛ր Պողոսի խոնարհությանը, որ անարդ և հալածող կոչեց ինքն իրեն և ամենայն մեղավորաց գլխավոր: Հիշի՛ր նաև մաքսավորին և մի՛ մոռացիր նրա գործը, որ գոչում էր տաճարում. «Աստվա՛ծ, քավի՛ր ինձ՝ մեղավորիս»[1]*: Եվ ջնջվեցին նրա բազում անօրենությունները, և իջավ արդարացած: Վերցրո՛ւ և պահի՛ր ավազակի հավատքը, որը*

[1] Ղուկ. ԺԸ 13

մի խոսքով ջնջեց անսահման մեղքերի թարախը և բացեց դրախտի փակված դուռը: Նրա հետ դու էլ ասա. «Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս Քո արքայությամբ»[2]: Գործի՛ր, ինչպես անառակ որդին, որը թեպետև հույժ հեռացավ Աստծուց և մեծամեծ մեղքերով միացավ դևերին, սակայն հիշելով հոր գութը, վերադարձավ և ասաց. «Հա՛յր, մեղա երկնքի և քո առաջ»[3], իսկ տերն առաջին փառքին արժանացրեց նրան: Գրված է. «Չկա որևէ մեկը առանց մեղքի, եթե մի օր անգամ ապրի աշխարհում», և դարձյալ՝ «Քո առաջ չի արդարանա ոչ մի մարմնավոր արարած»[4]: Թող սա էլ իմանա ամեն ոք, որ թեպետ Աստված մեզ ստեղծեց Իր պատկերով, մեզ համար մարդացավ և չարչարվելով մահացավ խաչի վրա, սակայն ունենք նաև Աստուծո մեծ երախտիքը՝ խոստովանությունն ու ապաշխարությունը, որովհետև այն երկրորդ Ավազան շնորհեց մեզ:

Քանզի Աստված գիտեր մարդկանց մեղսասեր և թույլ բարքը, որ չէին կարող պահել Ավազանի շնորհները: Նա պարգևեց մեզ անխոնջ խոստովանությունը, որովհետև որչափ էլ մեծ է մեղքը, բայց երբ գալիս է զղջման և խոստովանության, այն միայն մեղք է կոչվում և ջնջվում արտասուքով: Իսկ նա, ով խոստովանության չի գալիս, թեպետև փոքր է մեղքը, բայց մահու չափ է և կոչվում է [մեղք] և անվերջ տանջանքների տանում այն ունեցողին: Արդ, եկե՛ք, Ադամի՛ որդիներ, օրհնե՛նք Նրան, Ով մեզ ստեղծեց Իր պատկերով և Ինքը սիրով դարձյալ հագավ մեր պատկերը: Եվ փառավորե՛նք Նրան, որ կրկին անգամ գթա մեզ և ընդունի մեր դարձը:

Եվ արդ, սրտագետ Աստված, եթե գտներ սրտանց զղջում և մեղա սատանայի և կամ Ադամի սրտում և Նոյի ժամանակ սոդոմցիների, փարավոնի և կամ չար Հուդայի մոտ, մեծապատիվ և սիրալիր գթասրտությամբ կընդուներ նրանց, քանի որ անբավ է Նրա ողորմությունը, և այսքան չարիքներ և նեղություններ չէին գա մարդկանց որդիների վրա, և Աստծուն էլ հարկ չէր լինի մարդանալ և չարչարվել մարմնով մարդկային ցեղի համար, որ կամովին հանձն առավ, որովհետև մարդասեր է և ողորմած:

Ահա՛ սա է բարձր աշտարակը, հաստատահիմն ու անսասանելի սանդուղքը, ահա՛ հեշտանցիկ և դյուրին կամուրջը՝ զղջումն ու խոստովանությունը, երբ սրտանց է կատարվում:

Եկե՛ք, Աստուծո՛ սիրելիներ, վերցնենք այն և բարձրանանք առ Աստված, որ միշտ կանչում է մեզ՝ ասելով. «Եկե՛ք Ինձ մոտ, ամենայն մեղքերից տառապածնե՛ր, և Ես կհանգստացնեմ ձեզ»[5]:

Այս մասին գիտեն ամենքը, որովհետև երբ մեղավորը խոստովանում է և դուրս գալիս խոստովանահոր մոտից, թեթևանում է նրա խղճմտանքը, և հանգստանում նրա հոգին, կարծես թե երկաթյա բեռը վերցրին իր թիկունքից: Եվ արդ, ուրախանում է Աստված, և ցնծում են հրեշտակները՝ տեսնելով զղջումը, որ արտասուքով ու խոստովանությամբ է լինում: Նաև զվարճանում են երկրի արդարների դասերը, երբ տեսնում են ապաշխարությունը, որը կատարվում է սրտանց ու անկեղծ:

Ո՛վ դու, մա՛րդ, մի՛ հապաղիր և մի՛ ասա. «Շուտով դուրս կգամ մեղքերից և կդիմեմ Աստծուն»: Մի՛ խորհիր այդ քո մտքում, որովհետև այդ չար դևն է սերմանում քո սրտում, որ ուշացնես և հանկարծակի անհույս մեռնես և նրա հետ այրվես հրում: Եվ դարձյալ՝ ասում է չար սատանան. «Ինչ՛ ստուր պատանեկությունդ և մեղքերով կատարի՛ր իմ կամքը: Եվ երբ հույժ ծերանաս, Աստծո՛ւն ստուր քո անձը և բարվո՛ք ապաշխարիր»: Սակայն դու մի՛ խաբվիր նրա չար

[2] Ղուկ. ԻԳ 42

[3] Ղուկ. ԺԵ 18

[4] Սաղմ. ԺԲ 2

[5] Մատթ. ԺԱ 28

պատրանքներից, որովհետև անհայտ է, և չգիտես, կծերանա՞ս, թե՞ ոչ: Դրա համար գոչում է իմաստունը. «Հիշի՛ր քո Արարչին մանկությանդ օրերին»[6], որովհետև այդ ժամանակ կարող ես ապաշխարել զորավոր մարմնովդ:

Գրում է աստվածային առաքյալը. «Ահա՛ ընդունելի ժամանակը»[7], քանի դեռ մարմնի մեջ ես և տեր ես քո կամքին նախքան ահավոր Ատյանը: Քանի որ Աստված այժմ բազմած է ողորմության աթոռին, և ամեն ոք, որ մեղքին է պարտական, բայց գնում է Նրա մոտ և թողություն ու ողորմություն է խնդրում, ստանում է Նրանից: Իսկ ով ուշացնում է, անզեղջ մահանում, Աստված վերջին օրը նստում է դատաստանի աթոռին և արդար իրավունքով ողորմություն չի անում, այլ հատուցում է ըստ գործերի: Ապա հիրավի գոչում է մարգարեն Աստուծո առջև և ասում. «Մեղավորին մահ չեմ կամենում, այլ նրա դարձը»[8], որովհետև նրա համար մարդացավ: Եվ մեկ այլ մարգարե ասում է. «Խոստովանի՛ր մեղքդ, որ արդարանաս»[9]: Եվ մեկ ուրիշն ասում է. «Անձամբ պատմեցի իմ մեղքերը, որովհետև ներեցին հոգուս վերքերն»[10], ու «Լաց եղա իմ մահճում և թրջեցի անկողինս արտասուքով»[11], և «Ողորմյա՛, Տե՛ր իմ, որովհետև հիվանդացա հոգով»[12]: Նաև՝ «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, ըստ Քո մեծ ողորմության»[13], և՝ «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, քանի որ կոխկոտեց ինձ մարդը, որը թշնամի է»[14]: Եվ դարձյալ՝ «Տե՛ր, ողորմյա՛ մեզ, որովհետև Քեզ հուսացինք», և՝ «Դո՛ւ, Աստվա՛ծ, հույսն ես ապաշխարողների»: Եվ այլ բազում այսպիսի խոսքեր, որոնք հույս են տալիս մեղավորներին և մխիթարում նրանց: Դրա համար Տերն ասաց Պետրոսին. «Եթե քո եղբայրը քո դեմ շատ անգամ մեղք գործի և ասի՝ ապաշխարում եմ, ների՛ր նրան»[15]: Եթե մարդը ների մարդուն, դե տե՛ս, թե Աստված որքան առավել կների նրանց, ովքեր սրտանց դառնան դեպի Նա:

Ահա՛, սիրելինե՛ր, այս ամենը և շատ ուրիշներ, որ կան աստվածային Գրքերում, թող մեզ օրինակ լինեն, որ անզեղջ չմնանք մեր մեղքերի մեջ, որովհետև սիրտը, որ չի զղջում ու ապաշխարում, նմանվում է սատանայի սրտին, որն էլ նման է դարբնի սալին: Որին թեպետև բոլոր սուրբերը կռանի նման աստվածային խոսքերով հանդիմանում և խփում են, բայց բնավ որևէ բիծ կամ հետք չի թողնում նրա վրա: Այսպիսին էին փարավոնի, Հուդայի և Նոյի դարաշրջանի սոդոմացիների սրտերը:

Եվ այնքան հաճելի է ու բարձրագույն խոստովանության և զղջման գործը, որ ոչ միայն Եկեղեցու վարդապետներն ու աստվածային Գրքերը գովեցին այն, այլև արտաքին իմաստասերները վկայեցին և հույժ գովեցին նրան, ով ունի այն: Եվ թեպետ կռապաշտության մեջ էին, բայց այս մասին բարվոք խորհեցին, որովհետև Պյութագորասն ասում է. «Մի՛ ծածկիր մեղքերդ, այլ հանդիմանի՛ր, որ բժշկվես»: Եվ Տիմոթեոսն ասում է. «Ով բժշկից թաքցնում է մարմնի ցավը, չի կարող առողջանալ, նույնպես էլ, ով թաքցնի մեղքերը, չի բժշկվի»: Արիստոտելն ասում է. «Ով հեզաբար խոստովանի իր մեղքերը, կհավասարվի անմեղին»: Եվ Կղիտարքոսն ասում է. «Նույն հարթակի վրա մի՛ դիր կրակը հանդերձի հետ, նմանապես մի՛ պահիր մեղքը սրտիդ մեջ»: Եվ Թիոդիմոսն ասում է. «Մեղքերն են, որ արգելում են աշխարհում Աստուծո բարերարությունը»: Եվ մեկը սրանցից նայում էր

[6] Ժողով. ԺԲ 1
[7] Բ Կոր. Զ 2
[8] Եզեկ. ԺԸ 32
[9] Ես. ԽԳ 26
[10] Սաղմ. ԼԵ 5, 6
[11] Սաղմ. Զ 7
[12] Սաղմ. Զ 3
[13] Սաղմ. Ծ 1
[14] Սաղմ. ՃԵ 3
[15] Ղուկ. ԺԵ 4

մարդկանց գործերին և լալիս՝ ասելով. «Վա՜յ, որ ընդունայն և իզուր ալեկոծվում եք»: Մեկ ուրիշն էլ ծիծաղում էր մարդկային ցեղի վրա ու ասում. «Հիրավի արժանի եք ծաղրանքի, որովհետև խաղում եք երեխաների պես»: Իսկ մեկ ուրիշն էլ սրանցից նայեց մեծագույն քաղաքի վրա և ասաց. «Ա՜յ շեն, ա՜յ շեն, թե քանի տեր է փոխվել քեզ վրա, որն էլ իմաստունը ունայն և սուտ է կոչում, և ավելորդ՝ գործն աշխարհի»: Եվ սուրբերից մեկ ուրիշն ասում է. «Երկիրն այլայլության և փոփոխման տեղ է»: Դրա համար պետք է մտապահել ասածներս և ատել աշխարհն ու նրա կերպարանքը և սիրել Աստծուն և Նրա մնայուն բարիքները և խոստովանել սրտանց մեր մեղքերը, որ Նա թողություն շնորհի, ինչպես որ խոստացավ Իր անսուտ բերանով: Եվ անդադար խնդրենք Աստծուն, որ անտես անի մեր հանցանքները և տա մեզ զղջման հոգի և մարմնեղեն սիրտ՝ լցված ջերմագույն ջրով և խառնված աստվածային հրով, և մեր միջից հանի քարեղեն սիրտը: Որպեսզի բարի ոգով և ջերմ արտասուքով լաց լինենք մեր և մեր եղբայրների մեղքերի համար: Եվ խնդրենք Աստծուց, որ մեզ անմեղ պահի, նաև մեր ննջեցյալներին բոլոր սուրբերի հետ [արքայության] արժանավոր դարձնի մեր Տեր Հիսուս Քրիստոս, Որով և Որի հետ օրհնված է ամենակալ Հայրը, կենդանարար ու ազատիչ Սուրբ Հոգով հանդերձ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԲ. Դժոխքի և նրա չար ու դառը տանջանքների մասին

Եվ արդ, որովհետև Աստուծո շնորհներով [քաղելով] աստվածային Գրքերից, փոքր ի շատե պատմեցինք բարի գործերի մասին, թե որոնք են, որ մեզ Աստուծո մշտնջենավոր ցնծությանն ու պայծառ հանգստյանն են արժանացնում, [այժմ] ժամանակն է, ո՜վ աստվածաստեղծ և բարձրագահ իշխան, աստվածային Գրքերի միջոցով քննել նաև այս, թե ինչ է դժոխքը, և կամ ինչ են նրա չարչարանքները: Չար է դժոխքի անունը մարդկանց լսողության համար, և չար է նրա հիշատակը, քանի որ այն չի օրհնվում նրանց մտքում: Բոլոր արարածները սարսափում են նրանից ու անարգում նրան և նրա ստեղծման [պատճառը]:

Իսկ արդարները ցնծում են, որովհետև չեն երկնչում նրա չարիքից և փառաբանում են նրա Արարչին: Եվ բոլոր աստվածային Գրքերը սաստում են մեզ նրանով, ինչպես երկսայրի դառնագույն սրով: Չար և դառնագույն են նրա տանջանքները, քացախահամ, դաժան հոտով, և լեղի են այն սիրողների քիմքում: Հայր Աստուծո մարգարեները ատեցին այն, իսկ Բան Աստուծո ընտրյալ առաքյալները ոտնակոխ արեցին նրա զորությունը: Մարտիրոսներն ու բոլոր սուրբերը լցվեցին Աստուծո Հոգու շնորհներով և նզովեցին այն:

Եկե՛ք և մենք, ո՜վ Աստուծո սիրելիներ, այս վերջին ժամանակներում երրորդությամբ փրկվածնե՛ր և պահպանվածնե՛ր, լի բերանով թքենք նրա վրա և որքան ցանկանում ու սիրում ենք Աստծուն, փախչենք նրա չարիքներից: Բայց արդ, աստվածային Գրքերում սովորություն կա ամեն նեղ ու խավար վայր դժոխք կոչելու, իսկ թագավորների և իշխանների խոսքի սովորությամբ մահապարտին բանտարկելու տեղն են կոչում դժոխք և խավարի տուն: Նմանապես չար ճանապարհը, մացառուտ ու անհանգիստ վայրն է դժոխք անվանվում: Դժոխք են ասում կաթացող տանը և խավար գիշերին, երբ ուղեկցվում է չար հողմով և հյուսիսային խստությամբ համակված սաստիկ անձրևով: Իսկ աստվածային Գրքերը նաև այս աշխարհն են դժոխք անվանում՝ դրախտի բարվոք վայելքի և ճոխ հանգստի հետ համեմատած, որովհետև Ադամը որպես մահապարտ նետվեց անեծքների այս աշխար-

հը: Դժոխք են կոչվում նաև գերեզմանները, որովհետև չարակերպ է նրանց տեսքը, նեղ և անճուկ: Ըստ գրվածի, որ ասում է. «Ոչ թե նրանք, ովքեր դժոխքում են, կօրհնեն Քեզ», նաև՝ «Ով է, որ կփրկի իր անձը դժոխքից»[1]: Դարձյալ ասվում է. «Դժոխքը երկրի խավարային մի տարածք է՝ լի արհավիրքներով ու ահավոր թնդյուններով, նեղ և հույժ խորը քարակարկառների և մացառուտ ժայռերի մեջ», և՝ «Մինչև Քրիստոսի գալուստը սատանան այնտեղ էր պահում մարդկանց հոգիները»: Եվ դարձյալ ասում է. «Սանդարամետում է դժոխքը, ուր իջավ Սադայելը իր բոլոր չար դևերով հանդերձ»: Եվ դարձյալ՝ «Դառն ու գարշահոտ ծովերի և դաժանակերպ լեռների հույժ խորքերում է դժոխքը, այնտեղ, որտեղ շնական պիղծ դևերը խառնակվում են չարակերպ և գարշահոտ վիշապների հետ: Եվ նրանց չարահոտ գոլորշին բարձրանալով՝ օդի միջոցով տարածվում է աշխարհում և դառն ցավերով հիվանդություն է բերում մարդկանց վրա»: Իսկ մարգարեն Բաբելոնն ու Եգիպտոսը դժոխք համարեց Իսրայելի համար, որովհետև այնտեղ սաստիկ տանջում էին նրանց:

Իսկ Տերն ասաց, որ դժոխքը այս աշխարհից դուրս գտնվող թանձրամած խավար է՝ նման Աստուծո հրամանով Եգիպտոսում պատահածին, որը կատարվեց Մովսեսի ձեռքով: Այն խորագույն տեղ է՝ լի հրախառն խավարով ու ծծումբով, նաև՝ սաստկագույն ու չարակսկիծ սառնամանիքներով: Եվ Տերն հրամայում է այնտեղ հանել ճախակողմյաններին՝ ասելով. «Դո՛ւրս հանեք նրանց դեպի արտաքին խավարը»[2]: Քանզի այս աշխարհը, ուր բնակված է մարդկային ցեղը, դրախտ և Աստուծո տուն է դառնալու: Եվ օրենք չէ, որ մահապարտին թագավորի տանը կամ քաղաքում սպանեն, այլ բնակավայրից դուրս:

[1] Սաղմ. ՁԸ 43

[2] Մատթ. ԻԲ 13

Նմանապես աստվածատես Հովհաննես ավետարանիչը պատմում է իր աստվածացույց և սուրբ տեսիլքում. «Տեսա, և ահա Վերին Երուսաղեմից դուրս ճզմվում էր Աստուծո հնձանը: Այն շատ մեծ էր և հազար վեց հարյուր ասպարեզ հեռու, իսկ արյունը հասնում էր մինչև ձիու սանձը»[3]:

Աստուծո հնձան է կոչվում դժոխքը, որը շատ մեծ է, որովհետև բոլոր մեղավորներին հավաքելու տեղն է: Ինչպես ողկույզն է ճզմվում հնձանում, այնպես էլ հրեշտակների դասերը կճզմեն և կհարվածեն մեղավորներին դժոխքում: Հազար վեց հարյուր ասպարեզը ցույց է տալիս, որ դժոխքը շատ հեռու է արքայությունից՝ ըստ այնմ, որ Աբրահամն ասաց մեծահարուստին. «Մեծ է վիհը մեր և ձեր միջև»[4]: Արյունը խորհրդանշում է չար կսկիծն ու ողորմելի, դառնագույն հառաչանքները, որոնցով աղաչում էին հրեշտակներին: Ձին տանջող հրեշտակն է, իսկ սանձը՝ Աստուծո հրամանը, որ նրանց վրա էր: Եվ այնպիսի դառնագույն ողբերով էին հառաչում մեղավորները, որ հրեշտակները փոքր-ինչ դադար տան:

Գիտուններից և իմաստուններից մեկ ուրիշը, որին Բենիկ էին կոչում, նույնպես պատմեց դժոխքի մասին. այն Աստված ցույց տվեց նրան, և նա գրեց ի շահ լսողների: Ասում է. «Տեսա, և ահա հույժ մեծ մի ծով, որն հրեղեն էր և եռում էր՝ լեռնացած [ալիքների] նման հորձանք տալով անդունդներից, այն բարձրաբերձ բլուրների պես կուտակվելով, վեր բարձրանալով՝ ծածկել էր բոլոր արարածներին: Նրա ահավոր որոտումներից դողում էին անդունդները, և շարժվում էին աշխարհի հիմքերը: Լսվում էին որոտի ու հրեղեն վիշապների ձայներ, նաև նրանց ատամների կրճտոցները, որոնք սասանեցնում էին արարածներին և քանդում իմ ոսկորները: Տեսա, և ահա լեռների նման կրակի բովեր էին դուրս գալիս

[3] Հայտ. ԺԴ 20

[4] Ղուկ. ԺԸ 26

անդունդներից և շրջում հրամած ծովում: Նրանց բերանից բոցերը ցայտում էին գետերի պես և լցվում էին հրամած ծովը: Իսկ հրամած ծովում մյուսներից երիցս մեծ ու դառնատեսիլ մի բով կար, նրա միջից սաստիկ եռալով հուր էր դուրս գալիս՝ խռիվի պես այրելով մնացածներին: Ես, նրա ահից ահ ու դողով համակված, սարսափով լցված, կանգնել էի: Եվ ասացի. «Վա՛յ Ադամի սերունդներին»: Ինձ մոտ կար մեկը, որն ասաց ինձ. «Տե՛ս, մարդո՛ւ որդի, և մտապահի՛ր, ահա ասում եմ քեզ, որ սա է անշեջ հուրը: Այդ բոցերը մեղավորների տանջարաններն են: Իսկ այն մեծագույն բովը, որ գտնվում է հրամած ծովում՝ մյուսների միջև, դժոխքի որոշվայնն է, այնտեղ տանջվում են սատանան իր դևերի հետ միասին և բոլոր մեծագույն մեղավորները, որոնք կատարեցին նրա կամքը ու չզղջացին»:

Եվ դարձյալ՝ նայեցի երկրորդ անգամ, և ահա հրամած ծովը լցվեց հրեղեն վիշապներով, որոնք եռալով կուտակվում էին իրար վրա. նրանք լեռների պես մեծ էին, հուրը գետի նման հոսում էր նրանց բերանից, և նրանց ռունգերից, ինչպես հնոցից, ծուխ էր բարձրանում: Եվ նրանց՝ անդունդից դուրս գալուն պես դողացին աշխարհի հիմքերը, իսկ որոտումներից պատառոտվեցին լեռները: Ինձ հասավ մի ձայն, որն ասում էր. «Տե՛ս, մարդո՛ւ որդի, դրանք հրեղեն որդերն են, որ ծնեցին մեղավորներն իրենց վավաշոտ ախտերով ու գարշելի ցանկություններով: Դրանք աճում են, մինչև կլինի համընդհանուր հարություն, և հրեղեն ծովը կծածկի արարածներին: Երբ մեռելները հարություն առնեն, արդարների դասերը այս հրից կվերցնեն լույսն ու թեթևությունը և կբարձրանան Քրիստոսին դիմավորելու: Իսկ մեղավորները կմնան թանձր մրուրի, նրա այրող զորության ու հրեղեն վիշապների մեջ: Այդ հրեղեն վիշապները, որոնք Սուրբ Գրքում կոչվում են անքուն որդեր, շրջում են. ինչպես որդին՝ մորը, այնպես նրանք կգտնեն մեղավորներին, ովքեր իրենց վավաշոտ ցանկությամբ ծնեցին և զղջմամբ ու արտասուքով չսպանեցին նրանց, ժանիքներով կբռնեն և հավիտյանս հավիտենից կքամեն նրանց: Եթե չես հավատում ասածիս, ահա խոսքիս ամենամեծ վկայությունը. երբ ննջեցյալին դնում են գերեզման, քահանան Սուրբ Գրքից կարդում է նրա վրա. «Ցանկությունը կանցնի, իսկ որդը չի մեռնի»: Ասվածի իմաստն այս է. մարդո՛ւ որդի, ահա մեռար, մտար գերեզման, հող դարձար, անցավ և վերջացավ քո գարշելի ցանկությունը, բայց այն որդը, որը ծնեցիր քո իսկ մեղքով, հրի մեջ է գտնվում և կմնա մինչև քո հարության օրը: Արդ, մեր Տերը հավիտենական անվանեց տանջանքները, լացն ու ատամների կրճտոցը և սրով մեջտեղից հատելը: Եվ այս սաստիկ չարչարանքների մասին ասաց, որ մեղավորները սարսռալի կսկիծից չեն կարողանում խոսել, տեսնել, ճանաչել իրար, ոչ էլ՝ գթալ, որովհետև հուրը լճացած խավար է, իսկ չարչարանքները դառնագույն են: Այնտեղ կան նաև չար դահիճների պես խիստ ու դաժանատես տանջող հրեշտակներ, որոնք հրեղեն գավազաններով անխնա խփում են մեղավորներին: Այնտեղ խստագույն սառնամանիք է, որն հրից առավել խիստ է այրում ու մորմոքեցնում: Այնտեղ է անհանգիստ տարտարոսը, ուր անդադար տարուբերելով՝ միշտ խփում են մեղավորներին: Սա էր, որ տեսավ սերովբեատես Եսային և ասաց. *«Ո՞վ պիտի պատմի ձեզ, թե կրակը բոբոքվել է»*[5], *իսկ մի այլ տեղ՝ «Նրանց որդը չի մեռնելու, և կրակը չի հանգչելու»*[6]: Դժոխքի հատակում [մարդիկ] ըստ [գործած] մեղքերի են տանջվելու. կան, որ փոքր-ինչ թեթև, կան, որ ավելի պակաս, և կան, որ շատ քիչ, սակայն կսկիծն այնքան դառնագույն է, իսկ չարչարանքն՝ այնքան սարսափելի, որ եթե մեկին չնչին չափով

[5] Ես. ԼԳ 14

[6] Ես. ԿՁ 24

անգամ բաժին հասնի, կհամարի, թե բոլոր մեղավորների ողջ մորմոքն ու կսկիծն իրեն են տվել:

[Մեղավորներն] այրվում ու տոչորվում են (այդ մասին է ասում աստվածային առաքյալը. «Ապրում եմ, ինչպես կրակի մեջ»[7]), սակայն մահը չի տիրում նրանց, որովհետև ըստ Տիրոջ խոսքի՝ հավիտենական են նեղություններն ու տառապանքները: Նրանք [այնտեղից] դուրս գալ չեն կարող, այրվում ու խորովվում են միշտ, և մահ չկա նրանց. այս ամենը վկայում են աստվածային Գրքերը: Իրապես վա՛յ մեզ, սիրելինե՛ր, և եղո՛ւկ Ադամի բոլոր սերունդներին, որոնք եկել են, և որոնք դեռ պիտի գան աշխարհ, որովհետև եթե երկնքի և երկրի միջև եղած անսահման տարածությունը լցված լիներ մանանեխի հատիկներով, և մեղավորները նրանց քանակի չափով միայն մնային տաջանքների մեջ և հետո դուրս գային այնտեղից, այնպե՛ս կցնծային ուրախությամբ՝ համարելով, թե բնավ, մի օր անգամ չեն տեսել նրա երեսը: Նրանով ենք առավել եղկելի ու ողորմելի, որ անցավոր կյանքում մի փոքր իսկ մեղանչելով՝ ժառանգելու ենք հավիտենական տանջանքները: Արտաքին իմաստասերները ևս, թեև կռապաշտ էին, բայց խոսքը ձևակերպելով՝ ասացին. «Դժոխքը համատարած ծովի մեջ է, մեղավորները կանխավ կանգնած են այնտեղ՝ ջրերի վրա, և շատ մեծ, ահավոր, լայն, երկսայրի, շատ դառնատես մի սուր մագից կախված է նրանց գլխավերևում: Նրանք անքթիթ նայում են դրա սարսափելի տեսքին և դրա սպառնալիքից չեն համարձակվում խոնարհվել և ջուր խմել, այլ լայնատարած ծովի մեջ կանգնած՝ տոչորվում ու տանջվում են ծարավից»: Ասացին նաև, թե Արամազդը՝ Քրոնոսի որդին, պատրաստեց այն մեղավորների համար: Իսկ նրա արքայության մասին ասացին. «Արամազդի որդին իբրև թագավոր է անհաս գեղեցկություն ունեցող ծաղկավետ հաճելի դրախտում, որը լցված է զանազան ծաղիկների անճառ անուշահոտությամբ, և այնտեղ գնում ու բնակվում են արդարների հոգիները»: Եվ արդ, թեպետև տգիտաբար ասացին այս ամենը, բայց հաջող ձևակերպեցին, որպեսզի ահ գցեն լսողների մեջ:

Բայց դարձյալ՝ իմացեք նաև այս, սիրելինե՛ր, որ աստվածային Գրքերում գտանք և Եկեղեցու իմաստուն վարդապետներից լսեցինք, որ մինչև Աստուծո Որդու գալուստը դժոխքն անհավատությունն ու անհուսությունն էր: Եվ տեղին ու հարմար է խոսքս և ընդունելի Աստծուն ու մարդկանց, որ այն մարդը, որը հույսը չի դնում Աստծու վրա և չունի հավատ, թե կա Աստված և ըստ գործերի հատուցում, հոգով ու մարմնով դժոխքում է գտնվում, անգամ եթե լինի ողջ աշխարհի տերը: Սատանան Ադամից ծնվածներին կապել էր անհուսության և անհավատության դառնատեսակ դժոխքում, մինչև Բան Աստված մեզ համար մարդացավ, [Իր] գիտության լույսը ծագեցրեց մարդկային ցեղի համար և մարդկանց միջից հալածեց անհուսությունն ու անհավատությունը, որոնք չար դժոխք էին և համարձակորեն մեղանչել էին տալիս:

Հիմա էլ կան շատերը, որոնք անհուսության դժոխքում են, դուրս չեն գալիս մեղքերից ու վիշապի չար ժանիքներից և հավատով չեն դիմում Աստծուն: Ահա՛, սիրելի՛, սրանք նման են այն մեղավորներին, որոնց Տերը քարոզեց դժոխքում, երբ խաչից իջավ նրանց մոտ: Նրանք չհավատացին մեր Տիրոջը, բայց Տերը հանեց և ազատեց նրանց, որովհետև քանդեց դժոխքը, իսկ վերջին Օրը կրկին այնտեղ պիտի ուղարկի նրանց, որ կատարվի Դավթի հոգևոր գիրը, որն ասում է. «Մեղավորները կրկին դժոխք կընկնեն, նաև բոլոր նրանք, ովքեր մոռացան Աստծուն»[8]:

[7] Ա Կոր. Գ 15

[8] Սաղմ. Թ 18

Աստուծո՛ սիրելիներ, նայենք ինքներս մեզ բազում անգամ, քննենք մեր անձերը, որ այսպիսի չարիք չպատահի մեզ, որովհետև Տերը խաչով ու սուրբ Ավազանով ազատեց մեզ դժոխքից, ուր դարձյալ կմտնենք մեր պիղծ մեղքերի պատճառով: Աստվածախոս Մովսես մարգարեն այս առիթով ասաց. «Ո՛վ մարդու որդի, քննի՛ր քո անձը. չլինի թե մոռանաս քո Տեր Աստծուն և [ընկնես] չար մեղքերի մեջ»[9]:

Քննենք օրինակներ, որոնք կատարվեցին առաջներում. Հեսուն ավերելով կործանեց Երիքովը և ասաց. «Անիծյա՛լ լինի այն մարդը, ով կվերականգնի այն, որովհետև դա դժոխքի օրինակն է»[10]: Աքաաբի օրերին Ազան Բեդելացին չինեց այն և ընկավ Հեսուի անեծքի տակ:

Այսպես արեց Տերը, որովհետև խաչի վրա Իր չարչարանքներով քանդեց ու հիմնիվեր տապալեց դժոխքը: Մինչդեռ մարդկանցից շատերը մեղքերով ու անօրենություններով դարձյալ կառուցում են այն, կանգնեցնում են նրա աշտարակը և անհուսությամբ, առանց զղջալու նստում են այնտեղ: Այն ահեղ Օրը նրանք կարժանանան Հիսուս Քրիստոսի նզովքին, որ պիտի ասի. «Հեռացե՛ք Ինձնից, անիծյալնե՛ր, դեպի անշեջ հուրը[11], որովհետև Ես Իմ չարչարանքներով քանդեցի դժոխքը, իսկ դուք հեշտացաք մեղքերով և [կրկին] կառուցեցիք այն: Եվ արդ, հեռացե՛ք դեպի ձեր չար շինվածքը»: Այս բոլոր սպառնալիքները ուղղված են անհույսներին, որոնք չզղջացին, և անհավատներին, որոնք արհամարհեցին Աստծուն:

Բոլոր սուրբերը սարսափելի չարչարանքներով սպանեցին իրենց մարմինը, ինչպես օտարի մարմին, ու շատ խնդրեցին Աստծուն, որ փրկի իրենց սառնամանիքներից ու խավարից, կիզող հրից ու անքուն որդերից:

[9] Բ Օր. Ը 11

[10] Հեսու Զ 26

[11] Մատթ. ԻԵ 41

Եղբայրնե՛ր, եկեք մենք էլ նմանվենք Աստուծո սուրբերին և կամովին խոստովանենք մեզ դառնացնող մեղքերը, մեր սրտից հանենք, ներենք մեր եղբայրների հանցանքները և բաղձալի պաղատանքներով ընկնենք Աստուծո առաջ, որ մեզ համար մարդացավ: Եվ Նրա անարատ ծնող կույս Մարիամին միշտ բարեխոս ունենանք Նրա մոտ, որ տա մեզ իմաստության և զգաստության ոգի՝ չմոռանալու այս անվախճան տանջանքները, և պահպանի, որ այս սպառնալիքների ահից սպանենք մարմնի ախտն ու աշխարհի չար ցանկությունները և սրբությամբ ապրենք այս կյանքում՝ միշտ սպասելով Նրա երևալու Օրվան: Եվ դարձյալ՝ ջերմ արտասուքներով և մեծ թախանձանքներով աղաչենք Աստծուն, որ Իր բոլոր սուրբերի աղաչանքներով նաև մեր ննջեցյալներին փրկի դժոխքից ու նրա դառնակերպ տանջանքներից: Եվ արժանացնի մեզ Իր անճառելի հանգստին Իր բոլոր սուրբերի հետ, երբ գա փառավորվելու Իր սուրբերի մեջ և հայտնվելու աստվածայինների մեջ Հոր Բանը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ բոլորի Աստվածը, Որ օրհնյալ ու փառավորյալ է միշտ Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԳ. Մեղքերի մասին, թե որոնք են և որքան

Եվ որովհետև աստվածային Գրքերից փոքր-ինչ իմացանք դժոխքի դառնության ու չար տանջանքների մասին, որոնք անպատմելի են ու հավիտենական, հասավ ժամանակը, ո՛վ քրիստոսասեր և վսեմախոհ իշխան, երբ հարկ է քննել նաև այն, թե որոնք են անօրենությունները, կամ թե որքան են չար մեղքերը, որ գործվում են աշխարհում անօրեն սատանայի դրդմամբ, որ մեղք գործողներին արժանացնում է անվերջանալի տանջանքների:

Արդ, առաջին չարն ու մեղքը ճշմարտապես սատանան է, նա է պատճառը բոլոր մեղքերի և անօրենությունների, որոնք գործվում են աշխարհում: Նա,ինչպես նրա ընկերները, որոնք Աստուծո մոտ են և փառաբանում են Նրան ըստ Նրա կամքի, Աստուծո կողմից բարի ստեղծվեցին: Բայց սատանան անձնիշխան կամքով, որն ուներ, ինքնակամ հոժարությամբ չար դարձավ: Ոչ թե չարը նրան բռնադատեց, և կամ մի այլ տեղից մտավ նրա մեջ, այլ ինքն իրենից բուսեցրեց չարը և ծնող դարձավ բոլոր չար մեղքերին, որոնք գործվում են աշխարհում: Քանզի չարը չունի որևէ էություն կամ գոյություն, որովհետև ստեղծված չէ Արարչի կողմից: Աստվածային Գրքերը վկայում են, որ Աստված ամեն բան շատ բարի ստեղծեց[1]: Եվ դարձյալ՝ «Աստված չստեղծեց մահը»[2], այլ բանսարկուի պատրանքներով մեղքը մտավ աշխարհ, իսկ մեղքի միջոցով էլ՝ մահը: Ինչպես խավարը՝ տարերքների ստվերը, ստեղծված չէ և չունի էություն, այլ արեգակի լույսի պակասից է գալիս և լույսի երևալով՝ փախչում է և անհայտանում, որովհետև չունի էություն, և կամ ինչպես անպատուհան տունը խավար է, բայց լուսամուտ բացելուն պես խավարը հեռանում է և աներևույթ դառնում, այնպես էլ իմացիր, սիրելի՛դ Աստուծո, որ երբ հեռանում է բարին, գալիս է չար մեղքն ու նստում է այնտեղ, սակայն բարու գալուն պես հալածվում են չարն ու մեղքը: Այդպես էլ արեց սատանան. կամովին հեռացրեց բարին ու խոնարհությունն իր մտքից, և նախ եկավ չար հպարտությունն ու նստեց նրա չար սրտում, և նա դարձավ ինքնակամ չար: Խորանի մեջ սերովբեներից հետո էր նա և հպարտությամբ ասաց. «Ինձնից ցածր բոլոր դասերը պետք է փառաբանություն մատուցեն ինձ, և ապա ես՝ Աստծուն»: Նա մարմին չուներ, որ ծածկեր այս չար խորհուրդը, որը բուսեց նրա մեջ (ի տարբերություն մեզ, որ շատ խորհուրդներ ունենք մեր սրտերում, բայց մեր ընկերները չգիտեն այդ մասին), և սերովբեները նայեցին ու տեսան նրա սրտի մեջ բուսած այս չարիքը, որովհետև երևում էր, ինչպես սառույցի կամ ապակու մեջ կողմնակի իրը: Եվ մեծ զորությամբ ձայն տալով միմյանց՝ անթիվ բազմությամբ կուտակվեցին նրա վրա, հրեղեն ահազդու սերովբեները ահեղահրաշ աստվածային մուրճերով խփեցին նրան ու նրա դասակիցներին, որոնք կրում էին նրա խորհուրդները, և երկիր շպրտեցին նրանց: Եվ երկնային զորքերը գոչեցին. «Վա՜յ երկրի վրա բնակվողներին, որովհետև ձեզ մոտ ընկավ չար վիշապը՝ մեր եղբայրների թշնամին ու չարախոսը»[3], ինչպես պատմում է Հովհաննես ավետարանիչը: Այս պատճառով է ողբում սուրբը մարգարեն՝ Աստուծո անունից այսպես ասելով. «Ինչպես աջ ձեռքի մատանի և դրախտի պսակ ստեղծեցի քեզ: Դու անարատ գնացիր Իմ աջ կողմում, մինչև գտավ քեզ քո իսկ չարությունը: Դրա համար էլ երկիր շպրտեցի քեզ»[4]:

Ինչպես ասացինք, նա է պատճառն ու սկիզբը բոլոր չարիքների և դժոխքի: Այս պատճառով էլ բոլոր սուրբերը կոչեցին նրան չարիք, մեղք, անօրենություն, մահ, ապականություն, դժոխք, կորուստ, նաև շուն՝ լրբության, առյուծ՝ չարաչար պատառոտելու, գվարակ՝ խփելու պատճառով և վիշապ, որովհետև մեղքը հեշտությամբ է մոտեցնում մարդուն, տգրուկ կոչեցին նրան, որովհետև չի հագենում մեղքերից, որոնք գործվում են աշխարհում, և չի ասում. «Բավականացա և հագեցա»: Նաև լեռ կոչեցին նրան մեծագույն չարիքների պատճառով, որոնք հաստատված են նրա սրտում: Եվ այլ չար անուններ տվեցին, որովհետև անասելի է նրա չարությունը, և լեզուն չի կարող պատմել նրա անօրինությունները: Եթե նա կարողություն ունենար, կամ եթե Աստված

[1] Ծննդ. Ա 31

[2] Իմաստ. Ա 13

[3] Հայտն. ԺԲ 9

[4] Եզեկ. ԻԸ 17

թույլ տար, նա չարությամբ, որ միայն ինքն ունի, մի օրում կապականեր և կկործաներ բոլոր արարածներին:

Արդ, առաջին չարիքը հպարտությունն է, որը բուսեց Սադայելի ներսում, որով կործանվեց սատանան: Հպարտության միջոցով կործանեց նաև Ադամին ու Եվային, որովհետև հպարտացրեց Եվային, որն էլ կամեցավ աստվածանալ, և գրգռեց նրան ընդդեմ Աստուծո: Նմանապես կկործանվի նա, ով կհպարտանա իր եղբոր վրա:

Բայց դու, ո՛վ մարդու որդի, նայի՛ր քեզ և իմացի՛ր, որ թարախախառն շարավ ես, ժահահոտ աղբի աման ես, գարշելի և գեճ ախտի բնակարան ես, զազրելի մեղքերի անոթ ես, ընդունակ ես ցավերի, հիվանդությունների և բազում վշտերի, մահվան ու ապականության կերակուր ես, ինչո՞ւ ես հպարտանում, ի՞նչ պատճառով ես փքվում, ինչի՞ համար ես պարանոցդ շարժում ախտակից եղբորդ վրա և արհամարհանքով վեր բարձրացնում հոնքդ: Ինչո՞ւ չես նայում գերեզմանին ու չես տեսնում քո եղբայրների, իշխանների ու թագավորների փտած ոսկորները, թե ինչ են և կամ ինչպիսին, ո՞ւր է նրանց փառքը:

Արդ, կան երեք եղբայրներ՝ շատ սիրով կապված միմյանց՝ սատանան, Հուդան և Մուհամեդը: Մեկը՝ հպարտ, որի պատճառով ընկավ փառքից, եկավ Եվայի մոտ և ասաց նրան. «Եթե ուտես այս պտղից, կաստվածանաս»[5], և այս ասելիս հպարտություն սերմանեց նրա սրտի մեջ, և Եվան խորհեց ուտել և Աստծուց առավել բարձրանալ: Եվ վերցնելով՝ կերավ, չարաչար կործանվեց և հեռացավ Աստծուց: Նույն հպարտությունը չարը սերմանեց Ադամի որդիների մտքի մեջ: Եվ ամեն ոք, ով հպարտանում է, հույժ հեռանում է Աստծուց, ինչպես իր մայր Եվան:

Մյուսն արծաթասեր, գող ու ագահ էր, որով էլ մատնեց մեր Տիրոջն ու խաչի վրա մահվան դատապարտեց մեր Կենարարին, իսկ ինքը դարձավ կորստյան որդի, որովհետև խեղդամահ լինելով՝ պատռվեց, և նրա փորոտիքը թափվեց: Եվ Ադամի բոլոր ծնունդները գոչում և նզովում են նրա չար հիշատակը:

Իսկ մյուսը՝ արվամոլ, որը Սոդոմի դժնդակ այգուց խմեց գինին, այն այգուց, որը տնկել էր սատանան: Ինքն արբած թմրեց և խմեցրեց այն կամազուրկ ազգերին, որոնց դուրս բերեց կռապաշտությունից, բայց չհասցրեց նրանց առ Աստված: Ինքը դառնապես կորավ և չարաչար խեղդեց նաև նրանց:

Եվ դարձյալ՝ հպարտության եղբայրներն են ամբարտավանությունը, ամբարհավաճությունը, փառասիրությունը, կեղծավորությունը, մարդահաճությունը և սնափառությունը: Սրանք միմյանց ազգակից ու գործակից են, համասնունդ եղբայրներ ու սատանայի ծնունդներ և դյուրությամբ կործանում են մեծ գիտնականներին, ուր մնաց թե՝ տգետներին ու հասարակ ժողովրդին: Եվ սրանց սկիզբն ու հայրը հպարտությունն է, որովհետև միանման է սրանց գործունեությունը: Քանզի հպարտն ասում է. «Ինձ հետ համեմատած՝ ամեն ոք անասուն է»: Եվ ետ է տանում պարանոցը, վեր բարձրացնում հոնքը արտևանունքների հետ միասին և միշտ դիվանման՝ ցանկանում է երևելի [լինել] մարդկանց աչքում: Բայց կանայք ավելի շատ են խաբվում հպարտության ախտից, ինչպես նրանց մայրն ու պատկերը՝ Եվան, առաջինը խաբվեց. որովհետև հայելու մեջ տեսնում են իրենց գեղեցիկ պատկերն ու զգեստների պայծառ զարդերը, մտովի բարձրացնում են [իրենց անձը], ինչպես լեռ, բայց ընկնելով՝ կործանվում են իրենց մայր Եվայի պես. Կայենի դուստրերից մեկը սովորեցրեց, և նրանք զարդարեցին ու պճնեցին իրենց դուստրերին դևի պես: Այս տեսնելով՝ Աստուծո որդիները,

[5] Ծննդ. Գ 5

որոնք Սեթի զավակներն էին, տոփանքով վավաշոտ ախտով լցվեցին, խառնակվեցին Կայենի դուստրերի հետ, և Տիրոջ Հոգին հեռացավ նրանցից: Սրա մասին է Գիրքն ասում. «Աստուծո որդիները խառնակվեցին մարդկանց դուստրերի հետ»[6]: Մինչ-դեռ ոմանք սխալ հասկացան այս և տգիտաբար կարծեցին, թե աստվածային Գիրքը հրեշտակների մասին ասաց:

Կանայք այստեղից սովորեցին պճնել իրենց ու իրենց դուստրերին՝ [կորստյան] պատճառ դառնալով բոլոր իրենց նայողներին, որովհետև ներկում ու փայլեցնում են իրենց երեսներն ու սևադեղով կամարաձև գծում հոնքերը, մի այլ ծիրանափայլ սևադեղով զարդարում են աչքերը, խորշելի գիսակներով ու թանկարժեք ծամկալներով շքեղացնում են գլուխներն ու ոսկյա կամ արծաթյա շղթաներով զարդարում ոտքերը, ձեռքերն ու ականջները, չար ծառայի կերպարանք են տալիս իրենց անձին, պես-պես գունավոր կերպասներով պաճուճում են իրենց ողջ մարմինը և անպատկառ [տեսք ստանալով]՝ դառնում են դիվանման՝ ի կորուստ իրենց տեսնողների: Այդպես կործանեց Հերովդեսին ու նրա բազմած իշխաններին Հերովդիայի դիվակերպ դուստրը: Այդպես զարդարված կինը հայտնապես ասում է Աստծուն. «Ո՛վ Աստված, որ բազմած հանգստանում ես երկինքների երկնքում, Դու չկարողացար ինձ գեղեցիկ և մարդկանց հաճելի ստեղծել ու զարդարել, դրա համար ես ջանացի և հակառակ Քեզ արարչագործեցի ու զարդարեցի իմ պատկերն ու անձը»: Ամեն ոք թող իմանա այս, որ կնոջ մտքում եղած չար ու պիղծ խորհուրդները, նրա սրտում թաքնված չարիքը տեսնողներին հայտնի են դառնում նրա զգեստից ու տեսքից: Վա՜յ այն կնոջ սատանայական մտքերին, որն առաջինը սովորեցրեց կանանց զարդարվել, որովհետև սատանան իսկապես խառնվեց նրա մտքին: Ամեն մի զարդասեր կին կամակատարն է սատանայի և երկայրի սուր է նրա ձեռքին: Քանզի տեսնելով կանանց՝ տղամարդիկ բնականորեն շարժվում են, որովհետև ստեղծված են նրանց արյունից ու անձից: Յոթնապատիկ խաբվում ու կործանվում են, երբ տեսնում են նրանց արտաքին զարդարանքը: Ամեն մի այր մեղանչում է, երբ տեսնում է կանանց զարդարանքը. Աստված այդ մեղքը կիտելու է կնոջ գլխին, որ զարդարվեց ու մեղքով կործանեց տղամարդուն: Եսային դրա համար իրավացիորեն նախատում է զարդարվող կանանց և ասում նրանց. «Ձեր պես-պես և պայծառակերպ կերպասեղեն զարդերի փոխարեն փոշի կհագնեք և կամաչեք հավիտյան»[7]: Առաքյալը դրա համար է խրատում նրանց ու ասում. «Խոնարհությա՛մբ զարդարեցեք ձեր անձերը, կանա՛նք, սրբությամբ և պարկեշտությամբ, որպեսզի Աստված հավանի ձեզ և բնակվի ձեր հոգում: Եղե՛ք տնարար, որդեսեր, ամուսնուն սիրող, հանդարտ ու աղոթասեր»[8], որովհետև զարդարվելը պոռնիկի գործ է և ոչ նրա, ով արդար և սուրբ անկողնով ծնում է մանուկներ:

Առաքյալը գրում է նաև. «Կանայք պիտի ապրեն որդեծնության համար»[9]: Քանզի առաջին սուրբը կանանց հետ Աստված պիտի դասի այն կնոջը, որը զարդասեր չէ և որդիներ է ծնում արդար և պարկեշտ անկողնով, որի մյուս գործերն էլ բարի են: Եվ եթե կանանց սեռը ուշքի գար և միշտ պարկեշտ լիներ, տե՛ս, թե ի՜նչ անպատմելի երանության և մեծ խնդության կարժանանար, որովհետև կույս Մարիամ Աստվածածինը հայտնվեց նրանց սեռից, կուսությամբ ծնեց բոլորի Արարչին, և կուսությունը մնաց անխախտելի, քանի որ Աստված ծնվեց մարմնով, և կանացի ազգը հատուցեց տղամարդկանց ազգին և հավասարվեց նրանց, որովհետև առաջին տղամարդը՝ Ադամը, առանց կնոջ, կուսությամբ ծնեց ողջ մարդկու-

[6] Ծննդ. Զ 2

[7] Ես. Գ 16-26

[8] Ա Տիմ. Բ 3

[9] Ա Տիմ. Բ 14-15

թյան մայր Եվային, իսկ ամենասուրբ կույս Մարիամն առանց տղամարդու ծնեց կատարյալ Մարդուն՝ բոլորի Աստծուն:

Ամբարտավանն ասում է. «Մարդկանցից ո՞վ է իմ ընկերը, և կամ ո՞վ կարող է ինձ հավասարվել կամ բարձրանալ ինձնից առավել»՝ այն, ինչ ասաց սրա անզգամ հայր հպարտությունը:

Ամբարհավաճն իր մտքում ասում է. «Ինչ որ ասում ու գործում եմ, ա՛յն է ճիշտը», և հպարտությամբ է նայում իր թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր գործերին և շատ է հավանում դրանք: Իսկ այլոց խոսքերն ու գործերը չի համարում, թե մի բան են:

Փառասերն ատում է Աստուծո փառքը և սիրում է աշխարհի փառքը: Աստուծո մասին բնավ չի խորհում, չի խոսում, իսկ Նրա արքայությանն [արժանանալու] համար [ոչինչ] չի անում: Այլ խորհում, խոսում և անում է այն, որով մարդիկ կգովեն և կփառավորեն իրեն, և ուրախանում է նրանց սուտ գովաբանությամբ:

Գալիս և սրանց է միանում կեղծավորությունը, որովհետև կեղծավորը ջանում ու միշտ ծածկում է իր մեղքերը և մարդկանց աչքին ներկայանում որպես բարեգործ, պահեցող, աղոթասեր, ողորմած, բայց նրա միտքը ուղղված չէ Աստծուն ու Նրա բարի հատուցմանը, այլ միայն մարդկանց, որոնք կգովեն իրեն: Հիրավի մեր Տերն ասաց. *«Այդ է նրանց գործերի հատուցումը»*[1]: Ահա՛ վնասակար գայլը, որը, ըստ Տիրոջ խոսքի, ծածկել է իրեն գառան մորթով:

Սրա եղբայրն ու շատ սիրելի գործընկերը մարդահաճությունն է, որովհետև մարդահաճը լսողների ցանկությամբ և կամքով է խոսում ու գործում: Եվ երբ գալիս է ժամանակը՝ խոսելու Աստուծո իրավունքների մասին, ջանում է թյուրությամբ ու փափկությամբ հաճելի լինել լսողներին: Եվ տրտ-

[1] Մատթ. ԺԶ 27

մեցնում է Աստծուն, որովհետև դուրս է գալիս Նրա կամքից, որովհետև չի ընդունում, թե իր առջև է Աստված: Հիրավի է ասում առաքյալը. *«Եթե հաճոյանայի մարդկանց, ապա Քրիստոսին ծառա չէի լինի»*[2]:

Սրան միանում է նաև նորափառությունը, որովհետև այդպիսին կեղծավորում ու մարդահաճո է դառնում և հույժ հեռանում Աստծուց: Նա ջանում է, որ միշտ, ամեն խոսքում ու գործում նորից ու նորից գովեն և փառավորեն իրեն իբրև Աստված, իսկ ինքը ցնծում է՝ ավելի ու ավելի հղփանալով սուտ գովաբանություններից, ինչպես Փրկիչն է ասում. *«Մարդկանցից տրված փառքն ավելի սիրեցին, քան Աստծուց տրված փառքը»*[3]:

Դարձյալ՝ սրանց մերձավոր ու միախորհուրդ է սնափառությունը, որովհետև սնափառը միշտ ջանում է կերպասներով պաճուճել ու ցոփ հանդերձներով հարդարել իր անձն ու տունը: Իսկ հոգին՝ Աստուծո պատկերակցին, չի կամենում զարդարել բարեգործությամբ, այլ աշխարհի սին ու սուտ փառքով: Միշտ կամենում է երևելի լինել մարդկանց և ոչ թե Աստծու [աչքում]: Եվ ջանում է նույնությամբ, ինչպես վերը նշեցինք, որ մարդիկ իրեն գովեն և ստելով ասեն. «Դու ես, և քոնն է», ինչ որ ինքը չէ և չունի: Սիրում է սին փառքը և ատում ճշմարիտը:

Եվ ստությունը գալով՝ միանում է վերը նշված չարիքներին, քանզ սրանք բոլորը եղբայրներ են՝ ծնված հպարտությունից: Քանզի մարդը, որի խոսքերն ու գործերը ամբողջովին սուտ են, փառամոլ հպարտությամբ ամբողջ զորությամբ ջանում է արդար և իրավացի երևալ մարդկանց, որ գովեն իրեն: Եվ միշտ սուտ է խոսում խոսքի բոլոր կերպերում, պարծենում է ստությամբ, և ճշմարտություն չկա

[2] Գաղ. Ա 10

[3] Հովհ. ԺԲ 43

նրա սրտում, որովհետև սուտ է նրա հայրը, որ եկավ մեր մայր Եվայի մոտ և, ստությամբ խաբելով, կործանեց նրան: Եվ ըստ Գրքի՝ «Տերը կործանում է նրանց, ովքեր սուտ են խոսում»[4], և նրան, ով թյուրում ու հեգնում է ամեն խոսք և ուղիղ չի ասում խոսքի միտքը, նաև նրան, ով նենգում ու գողանում է ընկերոջ միտքը և խոսեցնում է, ինչ որ կար մտքում: Քանզի Կիպրիանոսն ասում է ստության դևի մասին. «Բյուրակերպ էր չարիքներով և ստությամբ ջանում էր ու ջանում է միշտ խաբել մարդկանց»: Արդ, գոյություն ունի հպարտության կարևոր գործակիցը, բարեկամն ու սիրելի որդին՝ հերձվածողությունը: Քանզի բոլոր հերետիկոսները, որոնք հերձվածողներ են, հպարտությամբ փառասեր ու անձնահաճ դարձան: Կամեցան նոր օրենքներ սահմանել, մարդկանց աչքում երևելի լինել և փառավորվել աշխարհի սուտ փառքով: Եվ պառակտվելով՝ անջատվեցին Աստծուց ու հեռացան Նրա արդար օրենքներից, որովհետև հերձվածողը հավասար է կռապաշտին և նրա պես հայհոյում է Աստծուն: Ինչպես և Գրիգոր Աստվածաբանն է ասում. «Ովքեր Աստուծո Որդուն սոսկ մարդ են կոչում առանց Բան Աստուծո՝ Կույսի որովայնում կամ խաչի վրա կամ գերեզմանում և կամ ասում են երկու բնություն, երկու կամք և երկու ներգործություն, սրանք հավասար են նրանց, ովքեր երկրպագեցին Աստարտին, գարշելի Քամոսին և Աստղիկին»: Ինչպես պիղծ Արիոսը, որ Որդուն Հորից փոքր ասաց, Մակեդոնը Հոգուն Որդուց նվազ ասաց, Սաբելը Երրորդությունը մի Անձ համարեց, Սիմոն կախարդն ասաց. «Ես եմ, որ իջա երկնքից, և ես մեծ մեկն եմ», իսկ հետո երկու բնություն կոչեց Քրիստոսին և երկու որդի: Նույնն ասացին նաև Նեստոր Անտիոքացին ու Պողոս Սամոստացին, Թադեոս Մամեստիան, որը Մսիսն է, և Դեոդորոսը Կեորիս քաղաքից, Վաղենտիանոսը, Մարկիոնը, Բասիլիդեսը, Եպրոկատեսը, Գորգիանոսը և անթիվ բազում ուրիշներ, որոնք Քրիստոսին երկու բնություն կոչեցին, երկու կամք, երկու որդի և այլ բազում այսպիսի հայհոյություններ խոսեցին, որոնք մեր ժամանակը չի բավականացնի գրավոր հաղորդել, որովհետև աշխարհում Աստուծո Որդու մարմնանալուց ու մարդեղությունից առաջ և հետո սատանան հարյուր վաթսուն հերձված գցեց մարդկանց մտքի մեջ: Իսկ սա էլ պատռելով բաժանեց Աստուծո Եկեղեցին և բազում հայհոյություններ սերմանելով՝ տնկեց Քրիստոսի հավատացյալների մեջ: Քանզի չարը կործանված տեսավ իր թագավորությունը, որ կռապաշտության ժամանակ ուներ, անօրինությամբ ջանաց և չար հերձվածության որոմը սերմանեց ցորենի բարի սերմերի վրա, որ Տերն էր սերմանել մարդկանց որդիների մտքում:

Եվ արդ, աշխարհում գործվող այս բոլոր չարիքների և այլ անթիվ մեղքերի պատճառը եղավ հպարտությունը:

Ուստի, Աստուծո՛ սիրելիներ, մեզ պետք է և պատշաճ է փախչել հպարտությունից, որը սատանայի գործն է, և խոնարհամիտ լինել Աստուծո առաջ. ամեն մեկի մոտ և ամեն մեկին առավել համարենք մեզնից և սրանով իսկ նմանվենք Աստուծո Որդուն, որովհետև այս է Աստուծո կամքն ու հաճությունը: Այս կյանքում հեռանանք վերը նշված մեղքերից և այլ անբավ անօրենություններից, որպեսզի աշխարհից հեռանալիս բոլոր սուրբերի հետ անճառելի բարիքներին ու հանգստին արժանի լինենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով և մարդասիրությամբ, Որն օրհնյալ է ու փառավորյալ Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

[4] Սաղմ. Ե 7

ԺԴ. Որովայնամոլության, արբեցողության, ագահության, արծաթասիրության, անհուսության, ուրացության, անհավատության ու թովչության մասին

Որովայնամոլությունը կատարյալ չարիք է և բազում մեղքերի պատճառ: Այս մեղքի պատճառով է, որ մարդը զրկվեց աստվածային փառքից. որովհետև սատանան կնոջը նախ ասաց. «Երբ ուտես պտղից, կաստվածանաս»[1]: Եվ մեր մայրը՝ Եվան, երբ լսեց աստվածանալու մասին, հպարտացավ: Ապա [սատանան] նրա մեջ սերմանեց որովայնամոլությունը, և սկսեց ճմլել ու անժուժկալությամբ լլկել նրա որովայնը. որքան պտուղն էր գեղեցիկ, առավել ևս այն փայլեցնում էր կնոջ աչքի առաջ: Հետո նրա մտքի մեջ սերմանեց ագահությունը, և նա խորհեց. «Ամեն բանի տերն ու թագավորը ես կլինեմ և կիշխեմ իմ ամուսնու՝ Ադամի վրա, կաստվածանամ և կծնեմ աստվածորդիներ»: Եվ չդիմանալով քաղցին (որովհետև պիղծ դևը նեղում էր նրան)՝ վերցնելով՝ ճաշակեց պտուղը, ու խայտառակ ամոթանքներով մարմինը մերկացավ:

Հոգու և մարմնի այս մեծ չարիքը, որ կա աշխարհում, պտղի մի անգամ ճաշակումը բերեց մարդկային ցեղի վրա, որովհետև շատ վավաշոտ ախտեր ու գարշանքներ սրանից ծնվեցին: Եվ ով ասի. «Խոտելի չէ որովայնամոլությունը», հարկ է, որ մտաբերի, թե որտեղից եղավ Եվայի կործանումը, նաև Մովսեսի ժողովրդին, թե ինչը՞ պատճառ եղավ, որ երկրպագեցին հորթին: Աստվածեղեն Գիրքն ասում է. «Վեր կացան պարելու և զոհելու հորթին, իսկ դրանից հետո կերան, խմեցին ամաղեկացիների բերածը և ելան ու սկսեցին լրբաբար պոռնկել ամաղեկացիների դիվանման զարդարված դուստրերի հետ: Իսկ Տիրոջ հրեշտակապետը նույն պահին նրանցից քսաներկու հազար մարդու սպանեց: Հետո վեր կացավ Փենեհեզը, օրհնությամբ սրբեց, անցկացրեց ցասումը և ինքն էլ արդարացավ Աստուծո առաջ»[2]:

Արդ, որովայնամոլության ախտի մասին այսքանը բավական է, որովհետև պահքի մասին ճառում էլ դրա մասին բազում խոսքեր ու վկայություններ մեջբերեցինք, որ աստվածեղեն Գրքի վկայությամբ չար ախտ է:

Նաև արբեցողությունը հաստատապես դիվական ախտ է և որովայնամոլության եղբայր ու գործակից է համարվում, որովհետև միանման է սրանց գործը. երկուսն էլ գեջ ու վավաշոտ ախտերի հորդորողներ են: Հիրավի բոլոր Աստվածաշունչ Գրքերը անընդհատ պախարակում են այն: Հնում և խավարային ժամանակներում մարգարեն գոչում է ու ասում. «Վա՜յ նրանց, որ գինի են խմում ու ձգտում նրան, որովհետև գինին հենց այդտեղից կայրի նրանց»[3]: Եվ դարձյալ՝ «Քահանաները գինի էին խմում և օծվում յուղով»: Հեղիի որդիներին Աստված կործանեց արբեցողության և ծուլության պատճառով: Իսկ բոլոր ուխտավորները, ինչպես Սամփսոնը, Սամվելը և անթիվ ուրիշներ, հույժ սուրբ էին պահում իրենց անձերը գինուց: Ինչպես Հովհաննես Մկրտիչն աստվածային Գրքում ասաց. «Պահքի օրերին որթատունկի բարիքից մի՛ ճաշակիր»[4], որովհետև գինին ամոթով պատեց մեծ նահապետ Նոյին՝ աշխարհի երկրորդ հորը, և նրա՝ իր որդուն նզովելու պատճառ դարձավ: Գինին հիմարացրեց հռչակավոր Ղովտին և թելադրեց նրան հիմարությամբ չար խառնակություն գործել իր երկու դուստրերի հետ, երբ դուրս եկան Սոդոմից: Ժողովուրդը կերավ, խմեց, ինչպես նշեցինք վերևում, զոհ մատուցեցին հորթին և պոռնկեցին ամաղեկացիների դուստրերի հետ: Անասելի գեջ ախտը Նոյի ժամանակ և Սոդոմում հորդորեց միայն ուտելու և

[1] Ծննդ. Գ 4-5

[2] Ելք ԼԲ 4-6

[3] Ես. Ե 22

[4] Մարկ. ԺԴ 25, Ղուկ. ԻԲ 18

խմելու, որովհետև գրված է. «Ուտում էին և խմում»[5]:

Ո՞վ կարող է պատմել այն չարիքի մասին, որ գործել է տալիս գինին. որովհետև տանում է խելքը, վերցնում իմաստությունն և անգամ անասունից ավելի չարացնում մարդուն: Եվ հիրավի սուրբ առաքյալն արբեցողին ու պոռնիկին մի լծով է կապում և դուրս հանում արքայությունից՝ ասելով. «Պոռնիկները, արբեցողներն ու արվամոլները չե՛ն կարող ժառանգել Աստուծո արքայությունը»[6]: Դարձյալ գրում է. «Մի՛ արբեք գինով, որի մեջ զեխությունն է»[7]: Եվ մեր Տերը հրամայում է. «Ձեր սրտերը մի՛ ծանրացրեք շվայտությամբ և արբեցողությամբ, որովհետև մահվան օրը գողի նման կգա ձեզ վրա. ի՞նչ կպատասխանեք Մարդու Որդուն»[8]: Գրում է նաև իմաստունը. «Պիտի անուն լինեն երգող աղջիկները»[9], այսինքն՝ պիտի ամաչեն ու կորանան վերջին օրը նրանք, ովքեր սիրում են գինին ու գուսանների երգերը: Քանզի գուսանը սատանայի կոչնակն է, որը գինու և չար երգերի միջոցով վավաշոտ ախտերի շարժիչն է: Դատաստանի Օրը անհամար հոգիներ դժոխքի ժառանգորդներ կդառնան գինու պատճառով: Գրված է. «Սգո տուն գնալը խնջույքի տուն գնալուց լավ է»[10], քանզի այնտեղ խայտալով կաքավում են դևերը: Գրված է նաև, որ երբ իշխանական միջավայրում ճաշի ժամանակ մի իմաստասերի գինի են մատուցել, նա, վերցնելով այն, թափել է գետնին և ասել. «Լավ է, որ դա թափվի հողին, քան թե ինձ կործանելով՝ գետնին տապալի»:

Արբեցողությունը կրկնապատիկ մեծ չարիք է, քան դիվահարությունը, որովհետև դիվահարն իր անձն է միայն

[5] Ելք ԼԲ 6

[6] Եփես. Ե 5

[7] Եփես. Ե 18

[8] Ղուկ. ԻԱ 34-36

[9] Ժող. ԺԲ 4

[10] Ժող. է 3

չարչարում ու կոծում, չարիք ու վնաս չի պատճառում ուրիշներին, իսկ հարբեցողը տանջվում է մարմնով, չարչարվում է հոգով, մեռնում մեղքերով, գործում անկարգ խառնակություններ և դառնում շատերի կորստյան պատճառը, եթե ձեռնհաս է լինում: Ամեն բան, եթե չափի սահմաններում է գործվում, պատժի արժանի չէ: Գրված է. «Ով կին ունի, իր կնոջը որդեծնության նպատակով՝ բնության օրենքով է մերձենում և հեռու է սոդոմական չար խառնակությունից, այնպիսին պատժի արժանի չէ: Իսկ ով թողնելով իր կնոջը՝ գնում է ուրիշ կնոջ մոտ և շնանում, շների ու պոռնիկների հետ է դատապարտվում, թեպետ միակերպ են նրա հեշտասիրությունն ու ցանկասեր աղտեղությունը ինչպես իր, այնպես էլ օտար կնոջ հետ»:

Այսպե՛ս իմացիր՝ եթե գինի ամենևին չխմես, լավ է, սակայն եթե ուրախության և սիրո օրերին և կամ մարմնի տկարության, ինչպես նաև մարմնի այլ կարիքների համար չափավոր խմես, չես պատժվի: Բայց եթե շատ խմես, խելագարվես, շվայտանաս ու զեխանաս, կպատժվես Աստծու կողմից, որովհետև մեղքերի սկիզբ դարձավ, ինչպես որ սուրն է: Որովհետև եթե սրով սպանես կատաղի գազանին կամ օտար թշնամուն, որոնք կամենում էին քեզ սպանել, անմեղ ես, իսկ եթե նույն սրով սպանես մի սիրելի անձնավորության և կամ նրան, ով քեզ չար չէր կամենում, ճշմարտապես մարդասպան ես:

Նաև ագահությունն է մեծ կորստյան պատճառ դառնում: Ինչպես Եսայի մարգարեն ագահի մասին գրում է. «Վա՜յ նրանց, ովքեր տանը տուն են կցում և ագարակին ագարակ միացնում, իսկ ընկերոջն արտաքսում են զրկանքներով. թեպետև մեծամեծ շինություններ էլ կառուցեն, ավերակ են դառնալու»[11]: Գրված է. «Իգուր է տագնապում ու ճիգ թափում, դանձ կուտակում՝ հոգին կորցնելով և չիմանալով, թե ով է ժառանգելու այն», ինչպես բազ-

[11] Ես. Ե 8

միջս տեսնում ենք: Նաև ագահությունը, որ անհագություն է, բազում անպատշաճ անգթություններ է գործել տալիս. որովհետև [ագահն] անողորմաբար զրկում է ամեն մեկին, անխղճորեն հափշտակում ուրիշների ունեցվածքը և աներկյուղ գողանում ու սպանում: [Այդ ախտն էր], որ գործել տվեց Հուդային ու Գեհեզին: Քանզի չար արբեցությունն է ագահությունը և ավելի պիղծ է, քան դիվահարությունը: Նաև տզրուկի և չար սատանայի նման բացում է մտքերի բերանը և ջանում կլանել բոլոր գանձերն ու հայրենի ժառանգությունը, եթե միայն հնար կամ կարողություն ունենա. որովհետև ագահի միտքը նման է տզրուկի, որը ծծում է արյունը, փսխում, ապա դարձյալ սկսում անհագությամբ:

Եվ հիրավի գրեց սուրբ առաքյալը. «Ագահությունը կռապաշտություն է»[12], որովհետև [ագահն] անիրավաբար ջանում է ու ժողովում՝ չմտաբերելով Տիրոջ ասածները. «Ի՞նչ օգուտ քեզ, եթե ողջ աշխարհը շահես, սակայն հոգիդ կորցնես»[13]: Եվ դարձյալ ասում է. «Ու՞մն է լինելու ինչ որ ամբարել ես, եթե այս գիշեր հոգիդ քեզնից ետ պահանջեմ»[14]:

Եվ որովհետև անբավ չարիք է ագահությունը, մեծն Կիպրիանոսն ասում է. «Երբ չար կախարդությամբ կռապաշտության մեջ էի, տեսա բոլոր ախտերի և մեղքերի դևերին, որ տեսակ-տեսակ մեղքեր և անօրենություններ են գործել տալիս մարդկանց: Տեսա նաև անհագության դևին, որն ագահությունն է. լայն գլուխ ուներ և երկար բերան: Ետևի կողմից ծծում էր լեռները և կամենում էր կուլ տալ ողջ աշխարհը»:

Արծաթասիրությունն ագահության և կռապաշտության ընկերը, եղբայրն ու գործակիցն է: Միապես չար է նրանց և՛ գործը, և՛ խորհուրդը, որովհետև արծաթի սիրո համար շատերն են անահ գողանում, զրկում ու սպանում, հեռանում հավատքից:

Ահա՛ վատ գինուց հարբելուց բազմապատիկ վատ և դիվահարությունից բազմապատիկ գարշելի խելագարություն: Արծաթի սիրուց գործած չար Հուդայի օրինակը բավական է մեզ, քանզի նա արծաթասիրության պատճառով խաչի և մահվան մատնեց իր Արարչին ու Վարդապետին, Որն եկել էր կյանք տալու ողջ աշխարհին և տվեց անսահման պարգևներ ու շնորհներ: Այստեղից սովորի՛ր, թե որքան չարիք է գործվում աշխարհում այս չարագլուխ ախտի պատճառով: Արդ, բազում էր արծաթը, որը խաբեց Հուդային և կործանեց սատանայի ձեռքով, որը ստորացրեց նրա միտքը և նրան ճանաչել չտվեց իր մեծ կործանումը:

Իսկ մեր ժամանակներում շատերը մի քանի արծաթի, փոքր-ինչ շահի, ասենք՝ մեկ դրամի և կամ հինգ խերևեշի համար չարաչար երդվելով՝ ուրանում են Քրիստոսին ու զրկում շատերին:

Մի իմաստասեր տեսնում է, որ գալիս է ծանր բեռնավորված ջորիներով մի զորեղ մարդ: Նրա այն հարցին, թե՝ «Ի՞նչ է դրա բեռը, և ո՞ւմն է դա», պատասխանում են, որ գրաստը այն ինչ անունով իշխանինն է, վրայի բեռը արծաթյա ու ոսկյա ամաններ և այլ անոթներ են՝ նրա իշխանական ճաշի պետքերի համար: Եվ նա, հոգոց հանելով, ասում է. «Ո՛հ, որդյակնե՛րս, իմացե՛ք՝ նա, ով հավաքել է դրանք, ճշմարտապես կործանել է իր հոգին»:

Եվ դարձյալ՝ արտաքին իմաստասերներից մեկը գրում է մի իշխանի մասին, որն այրվում, տոչորվում ու խորովվում էր ագահության ու արծաթասիրության ախտից և զրկելով [ուրիշներին]՝ մեծ ցանկությամբ անընդհատ կուտակում էր: Ջաստվածները բարկացան նրա վրա և նրա տանը եղած ամեն բան ոսկի ու արծաթ դարձրին: Երբ նա ուզում էր որևէ

[12] Կող. Գ 5

[13] Մարկ. Ը 36

[14] Ղուկ. ԺԲ 20

բան ուտել, այն արծաթ էր դառնում նրա ձեռքերում: Ի վերջո նա սովամահ եղավ:

Անհուսությունն առավել չարագույն ու պատառող գազան է, քան վերը նշված չարիքները, որովհետև նա, ով հույս չունի, թե գոյություն ունի հարություն և բարի ու չար գործերի հատուցում, չի կարող բարիք գործել ո՛չ Աստուծո և ո՛չ էլ մարդկանց համար: Նա իրեն էլ չի խնայում և գործում է այն բոլոր չարիքները, ինչին հասու է լինում: Այդպիսին չի զղջում և չի խոստովանում իր մեղքերը. որովհետև շատերն են, որ երբ մեծագույն մեղք են գործում, հույսը կտրում են Աստծուց և չեն գալիս խոստովանության: Քանզի անհուսության դևը կուրացնում է նրանց միտքը և չի թողնում մտաբերել տերունական խոսքը, որ ասում է. «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածնե՛ր ու բեռնավորվածնե՛ր, և ես ձեզ կհանգստացնեմ»[1]: Եվ շատերն են հիշում խեղդվելու մասին և ինքնասպան լինում, որովհետև չար սատանան նեղսրտեցնում է շատ մեղք ունեցողին ու անհույս դարձնում, ինչպես Հուդային, որը չկարողացավ համբերել նեղսրտությանը, որ սաստիկ խղճմտությունից եկավ նրա վրա, և նա գնաց խեղդվեց ու սատկեց:

Սրան միանում են ուրացությունն ու անհավատությունը, որովհետև նմանապես չար են և սատանայի պատկեր. որովհետև ուրացողն ու անհավատը համարձակորեն ու աներկյուղ են մեղք գործում, ինչպես անբան անասունը: Քանզի եթե մարդը մեծ հավատով իր աչքերի առաջ չի տեսնում Աստծուն, հանդերձյալ աշխարհն ու դատաստանի Օրը, կգործի ամենայն չարիք, եթե իշխանների և դատավորների ահը չլինի նրա վրա: Տեսնում ենք նաև բազում տգետների, որոնք իշխաններից ու դատավորներից առավել են երկնչում, քան Աստծուց, և ակամա բարիք են գործում:

[1] Մատթ. ԺԱ 28

Հիրավի է գրված. «Անզգամն իր սրտում ասաց, թե գոյություն չունի Աստված»[2]: Եվ դարձյալ՝ «Անօրենն ասում է իր մտքում, թե իր աչքերի առջև Աստուծո երկյուղ չկա»[3]:

Դարձյալ՝ համախոհ է ասածներիս և սրանց սիրով կապվելով՝ միանում է նաև թովչությունը, որը ճշմարտապես հակառակ է Աստուծո հրամաններին, որովհետև Աստված հրամայեց, որ մարդկային ցեղը մշտապես մեծ թշնամությամբ, ոխակալությամբ ու ատելությամբ լցված լինի օձերի ցեղի նկատմամբ: Եվ պետք է համարձակորեն սպանել ու սաստիկ զզվանքով հեռանալ նրանց չարակերպ ու դառնագույն տեսքից: Եվ սա ճշմարիտ է, որովհետև օձը դարձավ սատանայի անոթ, բերան ու լեզու և [Աստծուց] պառակտելով՝ խաբեց, կործանեց մեր մայր Եվային ու նրա բոլոր սերունդներին: Եվ սա ստույգ է, որովհետև ամեն ոք, երբ օձ է տեսնում, զարհուրում ու սոսկում է նրա ահից, որովհետև սատանան իր զորությամբ միացած է օձերի ցեղին: Եվ այնպիսի սիրով են կապված միմյանց հետ, որ նաև ինքը՝ մեղքերի մայր սատանան, բոլոր սուրբերի կողմից որպես վիշապօձ դիտվեց ու անվանվեց:

Իսկ յուրաքանչյուր թովիչ ամենից առաջ սեր ու խաղաղություն է հաստատում սատանայի և ապա օձի հետ, որը մարմինն ու գործարանն է սատանայի: Եվ վերցնելով օձին՝ դևերի միջոցով աղաչում է և սիրով իր մոտ պահում թշնամի և ատելի էությունը: Եվ այս անողը դառնում է Աստծուն թշնամի ու ատելի: Եվ երբ այս գործերը հաստատվում են որևէ մեկի մոտ, այնժամ նա համարձակորեն մեղքեր ու անօրենություններ է գործում, որովհետև իր կամքով սիրեց սատանայի սիրեցյալին: Դրա համար բոլոր Աստվածաշունչ գրքերը կախարդի հետ հավասարապես դատեցին թովչին,

[2] Սաղմ. ԺԳ 1

[3] Սաղմ. ԼԵ 2

որովհետև նրա գործակիցն ու ընկերն է, և միապես գործակից են սատանային:

Ուստի, Աստուծո սիրելի ընտրյալնե՛ր, մեզ պետք է և պատշաճ է ամեն ժամ լիաբերան փառավորել մեր Արարիչ Հիսուս Քրիստոսին՝ Հոր Բանին, որ եկավ և ցույց տվեց մեզ Իր մեծությունն ու ողորմությունը: Եվ մեզ ամեն ինչում գիտուններ դարձրեց ու լուսավորեց՝ իմանալու այստեղինն ու այնտեղինը: Ապա հիրավի մենք պարտավոր ենք ամեն ժամ հիշել Աստուծո՝ մեզ համար գործած անբավ երախտիքը և մեզ խոստացած հանգիստը, որը անհաս է մարդկային մտքին: Եվ որքան հնարավոր է, փախչենք բոլոր մեղքերից և սրբությամբ ու առաքինությամբ ապրենք այս կյանքում, որ Աստուծո Որդին մեզ հանգստյան տեղ տա, երբ գա դատելու մարդկանց որդիներին, և դասի մեզ անմարմին զվարթունների հետ միասին իր բոլոր ընտրյալ անդրանիկների հետ, որ նրանց հետ անլռելի ձայնով արժանավոր օրհնություն, գոհություն ու փառաբանություն վերառաքենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԵ. Կռապաշտության և կախարդության մասին

Կռապաշտությունը անթիվ չարիքների ու բազում անօրենությունների սկիզբն ու մայրը եղավ մարդկային ցեղի համար և հույժ հեռացրեց նրան Աստծուց: Եվ արդ, ո՛ւշ դարձրու, ո՛վ քրիստոսասեր իշխան, և կպատմենք սրա մասին, ինչպես վերևում փոքրիշատե պատմեցինք այլևայլ մեղքերի տեսակների մասին, որոնք գործվում են աշխարհում:

Ասում են՝ կռապաշտության սկիզբը դրվեց Բաբելոնում: Երբ Աստուծո Հոգին քանդելով կործանեց աշտարակը, հիմնիվեր տապալեց այն, բաժանեց մարդկանց լեզուները և ցրեց նրանց չար միաբանությունը, այդ ժամանակ զորավոր հսկա Բելը Բաբելոնում հիմնեց թագավորական աթոռ: Անցավ որոշ ժամանակ, և վախճանվեց մի ոմն թագավորի որդի: Թագավորը շատ սգաց իր որդու վրա, և նրա շողոքորթ և մարդահաճ ծառաները ներկերով նկարեցին նրա որդու պատկերն ու մատուցեցին նրան: Նա տեսավ որդու նկարը, շատ ուրախացավ և մխիթարվեց դրանով: Այն մեծ պատվով դրեցին դանձարանում և անուշահոտ խունկ [ծխեցին] ու երկրպագություն մատուցեցին դրան: Թագավորը մտավ, նայեց պատկերին, և սուգը իսկույն հեռացավ նրա սրտից:

Արդ, նրանք մահացան ու հեռացան այս աշխարհից, նրանցից հետո եկան ուրիշները և, սովորելով ու խրատվելով նախնիներից, նույնն արեցին իրենց որդիների ու եղբայրների համար: Հետո շատերն սկսեցին այդպես անել: Որոշ ժամանակ էլ անցավ, և չար սատանան գողացավ մարդկանց միտքը: Պիղծ դևերը, մտնելով այդ պատկերների մեջ, առաջոք խոսում էին տգետ մարդկանց հետ: Եվ մարդիկ ավելի ու ավելի էին պատվում ու ծառայում պատկերներին և կամաց-կամաց մոռացան Աստծուն: Եվ պատկերագործության սովորությունը հույժ բազմացավ Բաբելոնում: Հետո դևերն առաջոք սկսեցին արհավիրքներ ու կախարդություններ գործել այնտեղից: Իսկ սատանան ահ ու երկյուղ էր տարածում մարդկանց սրտերում, որպեսզի արիությամբ պատկերներն իբրև Աստված պաշտեն:

Եվ մարդիկ սկսեցին սովորել կախարդություն, հմայություն ու գետնակոչություն: Սովորեցին նաև կախարդները և իրենց պաշտել էին տալիս, իսկ մահվանից հետո կանգնեցնում էին նրանց պատկերներն ու պաշտում: Եվ այսպես կամաց-կամաց չարը տարածվեց ողջ մարդկության մեջ, և չմնաց որևէ շարժուն բան, որ չպաշտեցին մարդիկ. անգամ՝

ախտերը և կանանց ու անասունների ամոթույքի մարմիններ-ը: Եվ Ադամի որդիները հույժ հեռացան Աստծուց: Իսկ սա-տանան ջանում էր ամեն տեսակի չարիք պատճառել մարդ-կանց՝ կարծելով, թե Աստուծո հանդեպ է անում այս ամե-նը, ինչպես վատ ծառան, որը չարությամբ ապստամբելով թագավորի դեմ՝ բռնում ու չարչարում է թագավորի ծառա-յին՝ համարելով, թե թագավորին է չարչարում ու նեղում:

Արդ, բառերը չեն բավականացնի՝ պատմելու այն չա-րիքը, որ սատանայի առաջնորդությամբ գործեցին մարդիկ կռապաշտության ժամանակ: Սակայն մի փոքր՝ ծովից վերց-րած մի կաթիլի չափ, կպատմենք չար գործերի մասին, որ-պեսզի դրանցով նաև այլ բաները հայտնի դառնան լսողնե-րին:

Պարսից աշխարհում օրենք սահմանեցին, թե ամեն մի որ-դի, երբ դառնա հասուն տղամարդ, առաջին հերթին պղծու-թյամբ պիտի շնանա իր մոր հետ և հատուցի սերմը իր մո-րը, որտեղից որ ծնվեց, և հետո միայն ուրիշին կնության առնի: Տե՛ս, թե մարդիկ անասուններից որքան ավելի չար եղան: Ձիերն անգամ, որ հույժ ախտասեր են, հրաժարվում են իրենց մայրերից:

Թե այլ ինչ պիղծ աղտեղություններ էին գործում նրանք, չենք համարձակվում ասել, որ չապականվի լսողների միտ-քը:

Աղեքսանդրիա քաղաքում կար մի մարդ, որը կուռքե-րի քահանա էր և նրանց չար օրենքների գիտակ: Սակայն հավատալով ճշմարիտ Աստծուն՝ հրաժարվեց կուռքերից ու դարձավ եպիսկոպոս: Նրա անունն էր Դիոնեսիոս (ոչ թե Աթենացին, այլ Աղեքսանդրացին): Իսկ չաստվածնե-րի քահանաները՝ նրա նախկին գործընկերները, նախատե-լով գրում էին նրան ու ասում. «Ինչո՞ւ թողեցիր քո հա-րազատ չաստվածներին»: Իսկ նա գրեց նրանց ու ասաց.

«Դուք լավ գիտեք, որ սուտ է կռապաշտությունը, լի ամեն տեսակ աղտեղություններով, և մարդկանց որդիներին չկա դրանից ոչ մի օգուտ, այլ միայն անբավ կորուստ: Գիտեմ, որ լավ գիտեք նաև հնդկական հռչակավոր և պայծառու-թյամբ զարդարված այն մեհենատունն ու տաճարը, տեսել եք, որ տաճարի պատին կան ներկերով նկարված չաստված-ների պատկերներ, ուր տղամարդիկ և կանայք մերկ ու խայ-տառակ կանգնած են դեմ դիմաց: Եվ բացված է կանացի իգական ամոթույքների անդամը, և տղամարդկանց առնա-կան ծննդական ծածուկ անդամը բաց կանգնեցված է կանա-ցի իգական անդամի հանդեպ: Եվ ներկերով այնպիսի ձևեր են տվել պատկերներին, որ չաստվածները կարծես կամենում են խառնակվել միմյանց հետ: Այս ամենն արել են անօրեն կուռքերի պաշտոնյաներն ու սպասավորները, որպեսզի երբ ժողովուրդը գա կուռքերի, այսինքն չաստվածների տաճա-րը՝ զոհելու, տոնելու կամ երկրպագելու, և տեսնի չաստված-ներին այսպիսի խայտառակ և լիրբ վիճակում, սովորելով չաստվածներից՝ համարձակ գրգռվի չար ախտից, անասուն-ների պես խառնակություն գործի և վավաշոտ ու չար ախ-տով պաշտի չաստվածների աղտեղությունը, որովհետև դա է արժանի նրանց և չաստվածներին: Եվ արդ, ասացե՛ք ինձ՝ ի՞նչ աստվածպաշտություն են այսպիսի չար գործերը, և կամ ինչո՞ւ եք պարտադրում ինձ՝ կրկին վերադառնալու իրենց չաստվածներին և պաշտելու նրանց, որոնցից ինձ ազատեց Քրիստոս Իր գալստյամբ»:

Արդ, բավական է այսքանը, որ Դիոնեսիոսն ասաց կռա-պաշտության աղտեղության մասին, այլևս չշաղախենք մեր բերանն ու ձեր լսելիքը՝ կռապաշտության անքանակ աղտե-ղությունների մասին պատմելով:

Իսկ այս ամենն անում էր սատանան՝ կախարդանքնե-րով ու սուտ խոստումներով խաբելով մարդկանց: Ինչպես

պատմում է Կիպրիանոսը. «Տեսա, և ահա հույժ չարատեսիլ էր կռապաշտության դևը, որն ուներ ուլունքներ, գործում էր արհավիրքներ և խաբում մարդկանց»: Ինչպես որ այժմ էլ նրա աշակերտները գալիս են և քաղաքներում չար վիշապի շնչով առաջոք ինչ-ինչ խաղեր ու բազում արհավիրքներ գործում՝ զարմացնելով ամեն մեկին, ով տեսնում է այն:

Կռապաշտության սիրելի որդին ու գործակիցը կախարդությունն է, որը ծածուկ միավորություն է սատանայի հետ: Եվ նրա ծառան առաջին կռապաշտների նման է: Սակայն կախարդները հայտնապես ասում են. «Քրիստոնյա ենք», որովհետև երկնչում են թագավորներից ու իշխաններից, բայց պետք չէ հավատալ նրանց, որովհետև ստությամբ կեղծավորվում են մարդկանց աչքի առաջ: Նրանցից կան ոմանք, որոնք ագահությունից են ընկնում այս ախտի մեջ, որպեսզի ունեցվածք դիզեն, կեսն էլ խաբվում է տգիտությամբ [և] չիմանալով ուսանում չարը, մյուսներն էլ՝ աղքատության պատճառով, որովհետև ոչ թե ըստ մարմնական կարիքների, այլ ըստ սովորության են մնում նույն չարիքի մեջ, թեպետև գիտեն, որ սատանայի գործ է: Քանզի անհնար է, որ կախարդը կարողանա չնչին իսկ կախարդություն անել առանց սատանայի ու նրա շնչի:

Գիշերով գնում են նրա մոտ, դավանում և միանում հոգով, մարմնով ու ձեռագրով՝ հրի մեջ այրվելու նրա հետ: Եվ ապա նրանց տալիս է շնակերպ դևեր, որոնք ենթարկվում են նրանց հրամանին, որ իրենց միջոցով առաջոք կախարդություններ անեն: Ինչպես Կինովպասը, որի հրամանի տակ ինը բյուր դևեր կային, և Կիպրիանոսը, երբ կռապաշտ էր, Նիկիտեն ու Սիմոն կախարդը:

Կախարդները միավորված են սատանայի հետ, սակայն, գալով քրիստոնյաների ժողովին, բացայայտ ասում են, թե՝ քրիստոնյա ենք. այսպես էին անում Մանին, Մարկիոնը, Կիրնթոսը, Բասիլիդեսը, Եպրոկատեսը, Գորգիանոսը, Մոնտանոսն ու պիղծ Բարդիծանը: Սրանց մի մասը եպիսկոպոսներ էին, իսկ մյուսները կարգավորներ էին ձևանում, սակայն համառորեն կապված էին կախարդության ախտերին:

Քանզի Մոնտանոսը Տարսոն քաղաքի եպիսկոպոսն էր՝ հույժ ծերացած ու լցված կախարդական արվեստով: Նա իր մոտ պահում էր երկու պոռնիկ կին, որոնց հետ միշտ աղտեղանում էր շնությամբ և ասում. «Ես մխիթարիչ հոգին եմ, որ Վերնատանը իջա առաքյալների վրա»: Նրա մասին Գրիգոր Աստվածաբանն ասում է. «Մոնտանոսը չար հոգու մեջ էր»: Նույնպես էլ մյուսները, որոնց հիշեցինք վերևում, սատանայի անոթներ էին:

Հետո մի հին ձեռագրում գտանք, ուր ասվում էր. «Կիլիկիացիների երկրում՝ Փռուգիայի մոտ՝ ծովեզրին, հույժ դժվարամատչելի մի մացառուտ անտառ կա՝ լի չարակերպ ու դժվարանցանելի ժայռերով: Այդ ժայռերի մեջ կար մի մեծ գյուղ, որտեղ կային երկու կանայք՝ ամեն տեսակ կախարդությունների վարդապետներ: Եվ շատերն էին գալիս նրանց մոտ՝ սովորելու սատանայական գործեր: Նրանց կոչում էին պեպուզանք, իսկ նրանց աշակերտներին՝ պեպուզիանոսներ: Սրանք առաջոք անթիվ գործեր էին կատարում դևերի միջոցով»: Պատմում են, որ սատանան այնտեղ էր դրել իր աթոռը: Սրանցից բազում չարիքներ մնացին կանանց սեռի, ինչպես նաև տղամարդկանց մեջ: Խաբելով՝ մեկը մյուսին սովորեցնում են ծրարագործության (կախարդագիր) և այլ սատանայական փաթեթների ուսումը և այժմ էլ կործանում տգետներին այդ նույն չարիքով և [կկործանեն] մինչև աշխարհի վերջը: Նաև կարևոր է իմանալ հետևյալը. սատանան կռապաշտությունը կախարդությամբ, աստղաբաշխությամբ (աստղագուշակություն) և ճակատագրությամբ էր հաստատում, և այնտեղից է, որ մնաց մարդկանց մեջ այս չար ախտը:

Կռապաշտությունն ու կախարդությունը ծառի արմատներն են, իսկ դրանց ոստերն ու շառավիղներն են դեղատվությունը, հատընկեցությունը, ձեռնածությունը, լուսնագիտությունը, աստղաբաշխությունը, օրը չար անվանելը և սրանցով որևէ բան ասելը կամ անելը, կենդանակերպերին նայելով բախտագուշակություն անելը, որևէ դժբախտություն կամ մեկի ճակատագիրը գուշակելը, թե չարի կպատահի կամ բարու, ախթարացույցերը քննելը և աստղահմայությամբ մարդկանց տարիների թիվը ծննդաբանելը. և այլևայլ ծրարներ՝ ինչ-որ հանգուցակներ, լեզվակապեր, քաղցրադեղեր և ինչ-որ անասնակապեր, որոնք գայլակապեր են կոչվում: Նաև կապում են տղամարդուն, որը թուլանալով՝ չի կարողանում մերձենալ կնոջը: Եվ ուրիշ անթիվ հնարներ, որոնք արժանի չհամարեցինք նշել այս գրքում, ովքեր մեծ բռնությամբ, բազում տանջանքներով ու ջանքերով դուրս հանվեցին Աստուծո Եկեղեցուց: Ընտրյալ առաքյալների դասերն ու սուրբ հայրապետները Աստուծով խստորեն նզովեցին նրանց, ովքեր խորհում, կատարում կամ ուսուցանում են այդպիսի բաներ:

Բայց ե՛կ և տե՛ս, թե այժմ՝ մեր իսկ ժամանակներում, կախարդների ձեռքով Աստուծո Եկեղեցում որքա՜ն չարիք է գործվում:

Քանզի սկզբից ի վեր այս է Աստուծո սովորությունը, որ աշխարհում կատարվող անառակ մեղքերի պատճառով ցասում է բերում ու խրատում մարդկանց, որպեսզի հիշեն Իրեն ու դուրս գան մեղքերից. աղքատացնում է, հիվանդացնում, տարաժամ մահ սփռում, [բերքի] նվազություն ու խստագույն սով առաքում, թույլ տալիս դիվահարություն ու հանկարծակի այլևայլ պատուհասներ տալիս աշխարհին, որպեսզի մեզ ակամա դուրս հանի չարից: Եվ ով գոհանալով համբերի վշտերին ու նեղություններին, Աստված կքավի նրա հանցանքները: Առավել ևս՝ ով դիվահար է և համբերում է աղոթքով, պահքով ու սրբությամբ, նա երանելի մարտիրոսների պսակին կարժանանա Աստուծո կողմից, թեպետև մահանա չար դևից՝ ջրում, հրից կամ մի այլ որոգայթից: Սակայն այժմ տեսնում ենք, որ դիվահարները փախչում են Եկեղեցուց, Խաչից, Ավետարանից, քահանայից, աղոթքից ու պահքից, որն Աստված որպես դեղ հրամայեց այս ախտերի դեմ:

Եվ առհասարակ գրոհելով գնում են կախարդների մոտ ոչ միայն տգետ ու ռամիկ մարդիկ, այլև առաջնորդներն ու քահանաները հոժար կամքով գնում են դյութողների ու կախարդների մոտ, որով իսկ հեռանում են Աստծուց: Եվ ոչ թե միայն դիվահարության պատճառով են գնում, այլև հենց այնպես, թեպետ այնտեղ մարդկանց համար օգտակար ոչինչ չկա: Անմտությամբ վիճակափորձվում և բախտախոսվում են կախարդների կողմից, նաև գիր ու ինչ-որ ծրարներ են վերցնում նրանցից ու ամեն բանում դիվական շունչը օգնություն են համարում, իսկ Աստուծո օգնությանը չեն ապավինում: Ինչպես որ Իսրայելի արքա Սավուղն արեց, երբ գնաց վհուկների մոտ՝ բախտ հարցնելու, որի համար Աստված հարվածեց ու սպանեց նրան:

Եվ երբ դիվահարները գնում են կախարդների մոտ, [կախարդն] ասում է. «Քաջքակալ ես և ոչ թե դիվահար, քանի որ ոչ թե դև, այլ ոմն աղեկ մանուկ է քեզ պատահել սիրո համար և խփել ու շփոթեցրել է քեզ խռովեցնելու համար: Այժմ դու անհո՛գ եղիր, որովհետև քեզ շուտով կբժշկեմ ավելի լավ, քան Խաչը, Եկեղեցին և Աստված»: Եվ ասում է. «Պահք մի՛ պահիր, որդյա՛կ, մի՛ աղոթիր, այլ կե՛ր ու խմի՛ր, որպեսզի Աստված հեռանա քեզնից, և սատանան քեզ մերձենա»: Եվ տգետները հոժարությամբ են հանձն առնում կախարդների ասածները: Հետո կախարդները գնում են իրենց վարդապետ սատանայի մոտ ու աղաչում են. «Մի որոշ ժամանակով քո

չար դևը հանի՛ր այս մարդուց, որ եկավ քո կամքին, որպեսզի մարդիկ հավատան ու գան մեզ մոտ, իսկ մենք էլ քո գնդերին կմիավորենք նրանց»: Եվ նա լսում է կախարդին ու մի որոշ ժամանակով հանում է դևին: Սակայն կան դևեր, որոնք վերադառնում են նույն դիվահարի մոտ, և կան, որ չեն վերադառնում: Ո՞վ գիտե, թե որքան է չար սատանայի խաբեությունը՝ մարդկանց կորստյան մատնելու համար: Քանզի, արդարև, վա՛յ է Ադամի սերունդներին. թե ի՛նչ է լինելու վերջին օրերին: Եվ ապա դիվահարներից պահանջում են բերել խունկ, ձեթ, հաց, գինի, երկաթ և ջուր, որոնք հայտնապես տանում ու սեղան են դնում դևերի համար և սիրով, աղով ու հացով կապում դիվահարին սատանայի հետ: Լույս են դնում և խունկ ծխում դևերին, փոխանակ ճրագ և խունկ մատուցելու Աստծուն: Նաև դևերին հացակից և սեղանակից են անում նրան, փոխանակ Աստուծո հացին ու սեղանին, իսկ ջուրը [դնում են] ավազանի ջրի փոխարեն: Եվ այսպես շատերին են կործանում ծածկաբար: Եվ մեծագույն և չար կորուստն այն է, որ չարաչար երդվում են ու ասում. «Աստծով և Նրա սուրբերով ենք անում այս ամենը»: Եվ մարդկանց ահից Աստուծո անունը դնում են սատանայի վրա, իսկ Աստուծո սուրբերի անունն էլ՝ Սադայելի դևերի վրա և ի ցույց մարդկանց հիշատակում են Աստծուն, բայց կանչում սատանային, որի հետ միավորված են: Ձայնում են Աստուծո սուրբերին, բայց ծածկաբար առաջ են բերում չար չնական դևերին:

Նրանք բացահայտ և համարձակորեն գործում են քրիստոնյաների մեջ և մարդկանցից ահ չունեն, որովհետև հոգևոր առաջնորդները զբաղված են անհոգությամբ և չեն խրատում ըստ կանոնների և չեն կոչում առ Աստված՝ քաղցրությամբ հորդորելով նրանց դեպի բարին, հուսադրելով առ Աստված և հեռացնելով չարից: Եվ դարձյալ՝ չեն սպառնում խստությամբ հալածել և դառնորեն խրատել նրանց՝ խաբելով և կամ ամբողջությամբ այրելով, որպեսզի մյուսները վախենան և չմտաբերեն, որ Աստված պիտի դատի իրենց: Քանզի ըստ մարգարեի. «Տեսուչ կարգեց նրանց»[1]: Արդ, զոհում են գիրուկն ու դեղերով չեն բուժում հիվանդին և չեն նմանվում այն առաջնորդներին, որոնք իրենց արյունը հեղեցին Քրիստոսի հոտի համար: Նաև թագավորների գործակալները, մեծամեծ իշխաններն ու գավառապետներն ամենևին հոգ չեն տանում, և ոչ մի խստություն չկա նրանց դեմ: Զեն էլ մտաբերում այս կործանարար չարիքը, որը գործում են նրանք, չեն հալածում, չեն խրատում նրանց. և նրանք, ովքեր ունեն իշխանություն և չեն ջանում ու չգիտեն, թե Աստված կարողներից է պահանջում կատարելը, կդատվեն այնպես, ինչպես դատվելու է նա, ով թաքցրեց քանքարը: Քանզի ում շատ տրվեց, շատ կպահանջվի նրանից: Նրանք չեն նմանվում նախկին իշխաններին, ովքեր իրենց արյունը հեղեցին սուրբ հավատի ու սուրբ Եկեղեցու, ինչպես նաև տկար ու տգետ ժողովրդի համար:

Արդ, որքան հնար է, ատենք բոլոր մեղքերն ու անօրինությունները և արագորեն փախչենք նրանց հոտից: Եվ ուրիշներին արիաբար խրատենք, որպեսզի անհուսությամբ չմնան մեղքերի մեջ: Բայց առավել ևս ատենք կախարդներին ու դյութողներին և բնավ չմոտենանք նրանց: Եվ հանձն չառնենք նրանց խաբեբա խոսքերը, դիվաշունչ ծրարներն ու հնարները, որպեսզի մեր բոլոր խոսքերն ու գործերն Աստծով լինեն կյանքում և մահվան ժամանակ: Նաև որքան կարող ենք, խրատենք և այլոց, որ հեռանան նրանցից ու նրանց պիղծ աղանդից, և օգնենք տկարներին, որ տգիտաբար չմոլորվեն, որպեսզի այստեղ բոլորս Աստուծո կամքով բարվոք առաքինությամբ ապրենք սրբության մեջ և հանդերձյալում

[1] Երեմ. Զ 17

անպատմելի բարիքներին արժանավոր լինենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ, Որի հետ օրհնյալ է ամենակալ Հայրը կենդանարար ու ազատիչ Սուրբ Հոգով հանդերձ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԶ. Շնության, պոռնկության, արվամոլության և անասնապղծության մասին

Ահա՛ դառնատեսակ չարիքը, կործանարար անունը, սատանայական համբավն ու սանդարամետական գործը: Առավել ծանրագույն է սա, քան երկաթը, և ավելի դաժանահոտ, քան [հոտած] ուղեղը: Շունչն է սա չար վիշապի և նրա անօրեն սրտի ծնունդը:

Դարձյալ ե՛կ հոգեպատում գրվածքներով նկարագրենք այս չար ախտերի կերպերն ու որպիսությունը, ինչպես որ ծանոթացանք այլ անօրենությունների հետ: Նախ կարևոր է իմանալ, որ նախկինում շատերը կործանվեցին այս ախտերից, իսկ շատերն էլ կորչելու են հետո, որովհետև մարդու մոտ սա բնական է և ոչ թե օտարամուտ, ինչպես նաև մարդկանց ծննդյան, աճման ու որդեծնության պատճառն է: Պոռնկության դևը առավել, քան բնական անհրաժեշտությունը, հորդորելով ջերմորեն թուլացնում է, հեշտացնում և գցում շնության ու այլանդակ աղտեղության մեջ: Արդ, ժամանակն է քննելու այս դիվական ախտերի տեսակները:

Շնություն է կոչվում այն, որ ծածուկ, երկնչելով ու մեծ ամոթով է լինում, [մարդը] երբեմն կարողանում է մտնել կնոջ մոտ և շնանալ, իսկ երբեմն էլ ահից ու ամոթից չի կարողանում: Կգա ժամանակ, և նա դյուրությամբ դուրս կգա մեղքերից, որովհետև ամոթով էր:

Պոռնկություն է կոչվում այն, որ լրբությամբ ու աներկյուղ է գործվում: Իսկ լիրբն առավել է ատում Աստծուն, նման նրան, ով վերցնում է կեղտն ու դնում իր տանը. ահա լրբացավ, պոռնկացավ ընդդեմ [գործեց] Աստուծո կամքի, որը չեն հրամայում Եկեղեցու կանոնները: Նայի՛ր խորհրդիս և իմացի՛ր. միթե՞ չէր կարող Աստված բազում կանայք ստեղծել մեր Հայր Ադամի համար, սակայն Ադամի կողից միայն Եվային ստեղծեց և տվեց նրան: Այդ պատճառով էլ Եկեղեցու կանոնները սահմանեցին երկրորդ կին ապաշխարությամբ առնել: Իսկ երրորդ պսակ երբեք չես կարող գտնել աստվածային Գրքերում. նզովվում է այդպիսի պսակը, նաև Եկեղեցին ու քահանան, որը պսակում է, որովհետև պղծում է Եկեղեցին ու օրհնության պսակը: Ավելի լավ կլիներ, եթե [կնոջն] իր տուն տաներ անպսակ, որը թեպետև ճշմարիտ պոռնկություն է և Աստծուն ատելի, բայց կգա ժամանակ, և նա, ում վրա չկա երրորդ պսակի նզովքը, կարող է դյուրությամբ ելնել մեղքից: Իսկ նա, ով իր մտքում պսակի համար արդար է համարում կնոջը, չի կարողանում հեշտությամբ բաժանվել և մյուս քրիստոնյաների պես համարձակվում և պսակվում է [երրորդ անգամ]՝ այդպիսով պոռնկանալով ու լրբաբար հակառակվելով Աստծուն, նզովվում է: Քանզի Աստվածաշունչ Գրքերի սովորությունն է հանդգնորեն և լրբաբար գործված ամեն մի չար մեղք պոռնկություն անվանել: Ինչպես Եսավին են պոռնիկ անվանում, որը մի քիչ կերակուրի հետ վաճառեց առաջնեկությունը:

Նաև մարգարեն շուն է անվանում Երուսաղեմը, որովհետև [այնտեղ] ծածուկ կուռքեր էին պաշտում: Եվ Սամարիան է պոռնիկ անվանում, որտեղ հայտնապես և համարձակորեն պաշտում էին կուռքերին՝ ըստ այն խոսքի. «Քարի ու փայտի հետ էր շնանում Երուսաղեմը, իսկ Սամարիան պոռնկում էր լրբաբար»[1]:

[1] Երեմ. Գ 9

Շնության մեջ էլ մեծ և փոքր կա. երբ կույսը շնանում է կույսի հետ, ավելի թեթև է, որովհետև շատ ծարավ էին: Ավելի ծանր է տղամարդու համար, որովհետև հմուտ էր գործի մեջ և ծարավ չէր: Եռապատիկ ծանր է նրա համար, ով շնանում է մի կնոջ հետ, որի ամուսինը կենդանի է: Առավել ծանր է, երբ կենդանի են [մեկի] ամուսինը և [մյուսի] կինը, բայց նրանք շնանում են:

Բայց կա ասածներից տասներեթ անգամ առավել չար, պիղծ և ճշմարտապես նզովքի արժանի շնություն, երբ այրն ու կինը, որոնց Աստուծո օրենքով արդար պսակ է հասել (որ ամուսնությունը լինի սուրբ և պարկեշտ անկողնում՝ ըստ սուրբ առաքյալի հրամանի), թողնում են [իրենց] սուրբ պսակն ու, դիվական սիրո չար ախտով շնանալով, պոռնկությամբ [ուրիշ կին են] առնում, տանում տուն կամ մի այլ տեղ՝ դուրս գալով Աստուծո հրամաններից ու օրհնություններից: Իսկապես շնությունը սատանայական սիրո գործ է և դժոխքի դռների բանալի: Ովքեր շնանում են և չեն զղջում, անշեջ գեհենի ժառանգորդներ են: Ահա՛ մարդիկ, որոնք գտնում են հաց, բայց խոզի պես կերակրվում են աղբով: Ահա՛ մարդկանց այն տեսակը, որն ունի մաքուր ջուր, սակայն ուրախությամբ ըմպում է մահացու ճահճաջուրը, որի մեջ կան զեռուններ, որոնք ժահահոտ աղբի մեջ կենդանանում են, իսկ անուշահոտ յուղի մեջ՝ սատկում: Թեպետ սրանք ունեն ոչխարի մաքուր և անարատ կաթը, բայց վերցնում և ցնծությամբ ըմպում են շան արյունը, որովհետև նրանց արդար պսակն ու անկողինը անարատ կաթն է, իսկ անուշահոտ յուղը՝ հստակ ջուրն ու մաքուր հացը: Ով թողնելով իր անարատ ու արդար պսակը՝ բաժանված է պահում կնոջը և շնանում է, կամ [ուրիշ կին] առնելով՝ բերում է տուն, նրա անկողինը շան արյուն է, չար և ժահահոտ աղբ, հույժ և իրապես մահացու տղմոտ ցեխ: Այստեղ չարժե [ավելորդ անգամ] հիշել, որ

դա ստուգապես հակառակ է Աստծուն ու Նրա օրենքներին, նաև ատելի է հրեշտակներին ու Նրա բոլոր սուրբերին:

Եթե նրանք նույն բանի մեջ առանց զղջալու վախճանվեն, կժառանգեն անվերջանալի տանջանքները:

Կարգավորները, որոնք կամովին գլորվում են լույսի աստիճանից, ինչպես Ադամը՝ դրախտից, գրկվում են մեծ ու ցանկալի պատվից, հեռանում Աստծուց և Նրա շնորհներից. կին են առնում և իրենց լրբությամբ գայթակղեցնում տեսնողներին: Նրանց համար ավելի լավ կլիներ, եթե Ավետարանում հիշված ծանր քարը կախված լիներ նրանց պարանոցից, և սատկեին ծովի խորքերում, քան թե գայթակղեցնեին որևէ մեկին: Սրանք առաջին մարդու նման տվեցին անգին մարգարիտն ու վերցրին ժահահոտ աղբը: Աստվածային առաքյալը գրում է. «Բոլոր մեղքերը, որոնք գործում է մարդը, նրա մարմնից դուրս են, իսկ ով շնանում է կամ պոռնկանում, իր մարմնի ներսում է աղտեղանում»[2]: Եվ դարձյալ գրում է՝ զարմանալով. «Քրիստոսի անդամներն առնելով՝ պոռնկի անդամնե՞ր եք դարձնում. որովհետև ով մկրտվում է, Քրիստոս է հագնում: Դուք Աստուծո տաճար եք: Իսկ նրան, ով մեղքով ապականում է Աստուծո տաճարը, Աստված կապականի անշեջ հրում»[3]: Եվ մի՛ տրտմեցրեք Սուրբ Հոգուն, որով մկրտվեցիք սուրբ Ավազանում և փրկվեցիք անեծքների կապից: Արտաքին իմաստունները ևս, որոնք թեպետև կռապաշտ էին, սակայն շնության և պոռնկության ախտը երեքգլխանի գիշատիչ չար գազան անվանեցին և ասացին. «Նա դժոխքի դռնապանն է: Գլուխներից մեկը շան գլուխ է, իսկ պոչով շողոքորթում է քաղցր հեշտությամբ, որ մարդկանց գցի պոռնկության մեջ:

Մյուս գլուխը վիշապօձի է. շնության ախտը դյուրությամբ է մտնում ամեն մեկի մեջ, որովհետև հեշտացնող է և ողորկ, ինչպես օձ, որն իր կաշվի ողորկության պատճառով

[2] Ա Կոր. Զ 18

[3] Ա Կոր. Զ 15

դյուրությամբ է մտնում նեղ ճեղքերը: Օձին որևէ մեկը մեծ բռնությամբ անգամ չի կարող ետ քաշել ճեղքից, որովհետև ողորկ կաշին հակառակվում է և չի թողնում: Նմանապես էլ շնությունից և այլ մեղքերից բռնությամբ ոչ ոք չի կարող դուրս գալ, որովհետև հեշտասիրությունը դիմադրում է և թույլ չի տալիս:

Մյուս գլուխն էլ առյուծի է. թեպետև նրա կամ ուրիշ հեշտացնող մեղքերի իշխանությունից դուրս գալու համար ջանքեր թափես, նա առյուծի պես կմռնչա և կզարհուրեցնի քեզ, իսկ հեշտությունն իր ժանիքներով կողակի և թույլ չի տա քեզ դուրս գալ մեղքերից և դժոխքից»:

Գալիս և նույն չարիքին է միանում արվամոլությունը: Թեպետ միանման ախտեր են սրանք, բայց սա շնությունից առավել չար, ստուգապես սատանայական ախտ է, որովհետև դուրս է մարդկային բնությունից և անպիտան որդեծնության համար, ի տարբերություն կանացի իգական անդամի, որն Աստված ստեղծեց մարդկանց աճման համար: Քանզի սատանան, որքան կարողանում է, հնարներ է [մտածում], ջանում է ավելի մեծ չարիքներ գործել տալ մարդկանց, որ նրանք հույժ հեռանան Աստծուց: Դրա համար էլ հնարեց, ջանաց և Ադամի որդիների մեջ սերմանեց արվամոլությունը Աստուծո հրամանին հակառակ: Աստված ստեղծեց կնոջ ծննդական անդամը և օրհնությամբ մարդկանց հրամայեց բազմանալ: Սակայն տե՛ս բանսարկուի չարության արվեստը, թե որտեղից սկսեց այս անտանելի չարիքը: Պատմում են, թե Կայենի զավակների մեջ կար մի կին, որը դարձավ սատանայի անոթ. սատանան խառնակվեց նրա հետ և նրա միջոցով մարդկանց սովորեցրեց արվամոլություն: Այդ կինը դժվարածին էր և որպեսզի չչարչարվի ծննդաբերելիս, իր ամուսնուն սովորեցրեց անբնականը և սոդոմականը գործածել իր չար ախտը բավարարելու համար և ոչ թե ծննդական որովայնը:

Եվ որովհետև հնարավոր չէ, որ աշխարհում գործվող չարիքը թաքուն մնա, մարդիկ այս չարիքի մասին լսեցին, սովորեցին նրանցից և սովորեցրեցին շատերին: Կամաց-կամաց տարածվեց այն: Տղամարդիկ սովորելով՝ թողեցին իրենց կանանց անկողինը, ու տղամարդը տղամարդու հետ էր գործում այս խայտառակությունը: Եվ իգանալով՝ միմյանցից կրկին փնտրում էին փոխադարձը, ինչպես աստվածային առաքյալը արվամոլների մասին գրում է իր ճառում: Հետո տարածվեց ախտը, և Աստուծո որդիները, որոնք Սեթի որդիներն էին, խառնակվեցին Կայենի որդիների բարքերին:

Գրքերում գրված է, թե Աստուծո դրախտի առջև գտնվող մի լեռան վրա հինգ հարյուր տարի բնակվեցին և երկար ժամանակ արվամոլությամբ զբաղվեցին Ադամի որդիները՝ դառնալով առավել վատթար, քան անասունը: Ապա, թողնելով այն, սկսեցին կանանց հետ վարվել անասունի պես, որովհետև ընդհանուր դարձրին կանանց: Գրված է, որ քսան տղամարդ միաժամանակ մի կնոջ հետ շնանում էր լրբությամբ: Սա պակասեցրեց որդեծնությունը: Աստված տեսավ նրանց գործերն ու հույժ տրտմեց: Եվ քանի որ ետ չէին դառնալու իրենց մեղքերից, Նա վավաշոտ ախտի պատճառով ջրհեղեղի գեջ ջրով կործանեց նրանց: Ջրհեղեղից հետո բարձրացավ աշտարակը, հիմն ի վեր փլվեց այն, տապալվեց, և Ադամի որդիները ցրվեցին երկրի երեսին: Այնուհետև սատանան եկավ Սոդոմ և Գոմոր, նրանց այլ քաղաքներն ու սովորեցրեց նախկին արվամոլությունը: Եվ այնքան բազմացրեց չարիքը, որ նույնիսկ մոռացան կանանց, ու պակասեց նրանց ծնունդը: Այդ մասին մի իմաստուն ասում է. «Եթե Լյուրիկեն, Եւրոպան, Ասիան և Եթովպիան համագործակցեին Սոդոմի ու Գոմորի հետ և սովորեին նրանց աղտեղի, պիղծ ու անօրեն գործը, կպակասեր աշխարհից որդեծնությունը, և մարդկային ցեղը շատ կնվազեր»:

Այս ամենն հասավ Աստուծո ականջին: Սրտագետ Աստված գիտեր, որ նրանք ետ չեն դառնալու չարիքից, իջավ երկիր և եկավ Աբրահամի մոտ, իր երկու հրեշտակներին էլ ուղարկեց Սոդոմ՝ Ղովտի համար: Եվ Սոդոմի տղամարդիկ եկան կուտակվեցին Ղովտի դռան մոտ և պահանջում էին Ղովտից նրա մոտ եկած հրեշտակներին, որովհետև մարմնավոր հյուրեր էին կարծում նրանց, քանզի Սոդոմի և Գոմորի անօրեն սովորությունն այն էր, որ եկած հյուրին չարչարում էին սոդոմական պիղծ ախտով: Որպեսզի հավատաս խոսքերիս, թող քեզ վկայություն լինի այն, որ Ղովտը [հրեշտակների փոխարեն] իր երկու կույս աղջիկներին էր տալիս նրանց ձեռքը՝ նրանց չար և անօրեն ախտերը բավարարելու համար: Իսկ նրանք չհավանեցին ու չվերցրեցին նրա դուստրերին:

Նաև հայրապետներից մեկի մոտ գրված գտանք. «Որովհետև նրանք չարաչար ցանկացան հրեղեն, անմարմին հրեշտակներին, Աստված իրավամբ վերին հուրը, որտեղ բնակվում են հրեղեն հրեշտակները, անձրևի նման տարածեց ու թափեց նրանց վրա և իսպառ ջնջեց նրանց չար հիշատակը: Հրով կործանվեցին Սոդոմը, Գոմորը, Անդիման, Սաբայիմն ու Սեգովրը՝ այս հինգ քաղաքներն իրենց գյուղերի ու քաղաքների հետ միասին: Բայց նրանց չար գործն ու դառը հիշատակն աշխարհում չպակասեց, այլ Սոդոմի դառնատես չար տունկը օրըստօրե գնալով աճում է ողջ երկրի երեսին և պտուղ տալիս, իսկ Գոմորի անօրեն ողկույզը մահացու պիղծ վիշապների գինի է պատրաստում, որը տնկեց սատանան՝ Ադամի սերունդներին կործանելու համար»:

Վա՜յ մեզ, եղբայրնե՛ր, ավա՜ղ և շա՜տ եղուկ մեր լսելիքին, որովհետև ահա մի գործ, որը հույժ ատեց Աստված, ահա մի գործ, որը պետք է իսկապես այրել, կատաղած գազանի պես սատկացնել. կամ կտոր-կտոր անելով աշխարհից ջնջել նրան, ով կմտադրվի այն գործել:

Արդ, այս պիղծ ախտի դասակից եղբայրը, որը ճշմարտապես միանում է սրան, անասնապղծությունն է: Երբ չար սատանան տեսավ, որ ջնջվեցին Սոդոմն ու նրա պիղծ ընկերները, և աշխարհում թեթևացավ նրանց անօրեն գործը, սկսեց [սերմանել] այն, ինչ սերմանել էր նախկինում, և տնկելով՝ բուսեցրեց ու աճեցրեց անասնապղծությունը Փյունիկեում, Հրեաստանում, Պաղեստինում, Գալելիայում և Երուսաղեմի շրջակա այլ գավառներում: Եվ այնտեղ հույժ բազմացավ անասնապղծության չար ախտը, որը, ինչպես Սոդոմի ու Գոմորի դիվական գործը, հույժ ատելի է Աստծուն և Նրա բոլոր սուրբերին: Քանզի սա էլ է օտար և հեռու մարդկային բնությունից:

Այս չար ախտերի պատճառով Աստված խլեց նրանց այնտեղից և այնտեղ տնկեց Իսրայելի տասներկու ազգերին՝ Մովսես, Աբրահամ, Իսահակ և Հակոբ նահապետների ժողովրդին, երբ նրանց հանեց Եգիպտոսից: Նրանցից էլ մարմնավորվեց Քրիստոս, ընտրվեցին առաքյալները և մարգարեները: Այս չար հանցանքների համար Աստված՝ Մովսեսին, իսկ Մովսեսն էլ ժողովրդին ասաց. «Ամեն մարդ, որ կկենակցի անասունի հետ, պետք է այրվի կամ քարկոծվի»[1]: Նույնպես էլ՝ «Պետք է քարկոծվի կինը, որը կկանգնի անասունի առջև»[2]: Պատմում են, որ մի թագուհի, որի անունն էր Պերսեփոնա, ցանկացավ և չար մեքենայությամբ կանգնեց անասունի առաջ:

Դարձյալ՝ պատմում են նաև մեծ քաղաք Նինվեի թագուհի վավաշոտ Շամիրամի մասին, թե նա Հայոց Արա թագավորի մասին լսեց, որ շատ գեղեցիկ է և տեսքով նման Ադամին՝ առաջին մարդուն: Եվ որովհետև ախտասեր կին էր, ցանկացավ Արային և նրա հանդեպ բորբոքվեց դիվական սիրո ախտով: Նա պատվիրակներ առաքեց Հայաստան՝ Արա

[1] Ելք ԻԲ 19

[2] Ղևտ. ԺԸ 29

Գեղեցիկի մոտ, որ գա և պոռնկի իր հետ: Արան նախատեց Շամիրամին: Բայց Շամիրամը, չկարողանալով տանել վավաշոտ ցանկությունը, մեծ զորքով ելավ և եկավ Հայոց աշխարհ՝ Արա Գեղեցիկի վրա: Նրան պատվով ու աղաչանքով կանչեց, որ գա և կատարի իր գարշելի ու պիղծ ցանկությունը: Ըստ երևույթին Արան սրբասեր էր և դրա համար կրկին մերժեց Շամիրամին: Եվ Շամիրամը պատերազմ սկսեց Արայի դեմ: Կռվի մեջ զինվորները չճանաչելով՝ սպանեցին Արա Գեղեցիկին: Թագուհին շատ խռովվեց, որովհետև զորքերին պատվիրել էր, որ նրան կենդանի բերեն իր մոտ: Եվ բերել տվեց մեռած մարմինը և երեք օր արտասվելով՝ աղոթում էր չաստվածներին, որ կենդանացնեն նրան, մինչև որ Արայի մարմինը հոտեց և նեխեց: Շամիրամը շինեց հույժ զարմանալի մի քաղաք: Եվ բարձրանալով՝ նայում էր իր զորքին և հրամայում ամեն գիշեր երկու գեղեցիկ երիտասարդ բերել իրեն՝ իր ախտալից անձի ցանկության համար, իսկ առավոտյան հրամայում էր սպանել նրանց, այսպիսով հույժ նվազեցնում էր զորքը: Այս տեսնելով և իմանալով՝ նրա որդիները չարաչար սատկացրին նրան:

Արդ, պոռնկական ախտը այսպիսի չարիք է և աճում է օրեցոր՝ կործանելով բոլոր արարածներին: Այն հույժ ատելի է Աստծուն: Դրա մասին Կիպրիանոսն ասում է. «Տեսա պոռնկական դևին, որը զազրատեսակ էր, արնաներկ, շարավագույն ու փրփրատեսակ, նրանից ժահահոտություն էր բուրում»:

Սիրելինե՛ր, վա՜յ Ադամի որդիներին: Ահա՛ շաղախեցինք մեր բերանն ու ձանձրացրինք մեր լսելիքը անախորժ, դիվական ախտերի մասին պատմություններով, չշարունակենք դրանք, քանի որ անվերջնալի են, և ո՞վ կարող է ճառել դիվամոլ ցանկությունների աղտեղության մասին, որ եղել են աշխարհում: Բայց վնասակար չէ այսպիսի չարիքների մասին դարձյալ լսելը, որովհետև այդ բանն իմանալով՝ անդադար գոհություն ենք մատուցում Աստծուն, Որն Իր գալստյամբ մեզ ազատեց ու սրբեց այսպիսի աղտեղություններից: Ուստի, Աստուծո՛ որդիներ, մշտապես հիշենք Աստուծո երախտիքն ու պարգևները, որ տվեց մեզ, և փութով փախչենք պոռնկական անտանելի ախտից, սրբենք մեր անձերը աղտեղի ցանկություններից, որպեսզի այստեղ սրբությամբ մաքրվեն մեր սրտերը, իսկ հանդերձյալ աշխարհում կարողանանք տեսնել Աստծուն. և անլռելի ձայնով օրհնենք համագո և անբաժանելի Ամենասուրբ Երրորդությանը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԷ. Զրկանքի, գողության և վաշխառության մասին

Արդ, պետք է և վայել է մեզ, ո՛վ վսեմախոհ և քրիստոսասեր իշխան, Աստուծո հոգեպատում մատյաններից քննել և իմանալ նաև այս չարագլուխ ախտերի մասին, որովհետև սրանք էլ անօրեն վիշապի, բանսարկու թշնամու ստեղծածներն են, և բազմաթիվ մարդիկ սրանց միջոցով են ընկնում դժոխք: Սրանք երեք եղբայրներ են՝ մի հորից, և միանման է սրանց անօրենության գործը: Բոլոր Աստվածաշունչ գրքերը նզովում ու պարսավում են սրանց, միշտ խրատում են և ուսուցանում մեզ, թե ամեն ոք, ով զրկելով ձեռք բերածից է ողորմություն տալիս, ոչ թե հաշտեցնում, այլ բարկացնում է Աստծուն: Ինչպես այն մարդը, որն սպանեց թագավորի որդուն և որովհետև շատ աղաչեց, թագավորը ներեց նրա մեղքը: Իսկ նա ամեն օր թագավորի մոտ էր տանում նրա որդու արյունաթաթախ հանդերձը, և թագավորը, տեսնելով այն, հիշում էր իր որդուն, և խոցվում էր նրա սիրտը:

Ի վերջո բարկացավ և հրամայեց սպանել նրան: Նույնն է

անում Աստված նրանց, ովքեր զրկում են աղքատին գողությամբ կամ վաշխով և կամ զրկանքի [այլ տեսակով] և ողորմություն են տալիս:

Երբ արհամարհում են աղքատին, զրկում, չեն վարձատրում գործի դիմաց և կամ իզուր տուգանք են վերցնում նրանից, նա դառնապես հառաչում է և ասում Աստծուն. «Տե՛ս, որ նստած ես քերովբեների մեջ և նայում են անդունդներին»: Սրա մասին է գրում Եսային. «Ձեզնից զրկվածն աղաղակում է, և ձեր հնձողների բողոքը հասավ զորությունների Տիրոջ ականջին»[1]: Իսկ Դավիթն ավելի բացահայտորեն է ասում. «Մեծ և փոքր զրկանքի համար Աստված կհատուցի ահեղ Ատյանում»[2]: Տեսնում ենք, որ Աստված այստեղ քիչ է հատուցում, եթե այնտեղ էլ չհատուցի, եթե չկա հարություն և ոչ էլ դատաստան, ապա վա՛յ նրանց, ովքեր հանիրավի չարչարվեցին ու շատ զրկանքներ կրեցին: Քա՛վ լիցի, իսկապես գոյություն ունի ամեն ինչի համար հատուցում: Աստված ներում է, որ մարդիկ այստեղ քավեն իրենց մեղքերը:

Գողության մասին դարձյալ գրում է Եսայի աստվածաբան մարգարեն. «Ձեր իշխանները գողակից են գողերին, իսկ ձեր վաճառականները գինուն ջուր են խառնում»[3]: Ամեն մի գող պիտի ժառանգի Գեեզիի անեծքը:

Դարձյալ՝ Հուդան էլ գող անվանվեց կենսապատում սուրբ Ավետարանում:

Արդ, մարգարեն տեսավ մի հրեղեն երկսայրի գերանդի՝ մանգաղի նմանությամբ, որն ուներ հինգ թիզ լայնություն և տասը թիզ երկարություն: Այն արագաթև արծվի պես սլանում էր օդի միջով, նրանից ցայտում էին ահեղ ու զարմանալի հրի ճառագայթներ: Մարգարեն զարմանքով հիացավ և ասաց. «Տե՛ր, ո՞ւր է գնում այս գերանդին»: Եվ հրեշտակն ասաց. «Գողերի ու ավազակների տները, որպեսզի այստեղ և հանդերձյալում կտրի, խողխողի ու այրի նրանց»[4]: Տե՛ս, սիրելի՛ս, սա՛ է գողերի հատուցումը: Երբ Հեսուն կործանեց Երիքովը, Աքարը գողացավ ոսկի լեզու և այլ անոթներ, և զարկվեց Աստուծո բանակը, մինչև Աստուծո հրամանով գտան գողին ու քարկոծեցին նրան իր ողջ ընտանիքի հետ միասին, ապա Աստուծո ցասումը վերացավ բանակից[5]: Բազմատեսակ և մեծ ու փոքր է գողությունը, պետք է բոլորից էլ հրաժարվել, որպեսզի սովորելով դրանք՝ չկործանվեք, քանի որ սաստիկ չարագույն գազան է այս ախտը: Գող կոչվեց սատանան, որովհետև գողացավ Եվայի միտքը և կործանեց նրան: Նմանապես այժմ էլ, շատերի միտքը գողանալով, կործանում է նրանց: Եվ հիրավի են ասում, որ գողությունն առավել չար [մեղք] է, որովհետև [դրանով] բազում անմեղ հոգիներ են գայթակղվում և կասկածով լցվում: Իսկ այլ մեղքերում չի լինում այսպիսի գայթակղություն:

Այս մեղքին հավասար է տոկոս [վերցնելը], որին վաշխառություն են անվանում: Մարգարեն գրում է. «Վա՛յ նրան, ով իր արծաթը կամ մի այլ բան [փոխ է տվել] և վաշխով ու տոկոսով ետ պահանջել»[6]: Որովհետև [այդպիսին] Աստծուն հակառակ է գործում, քար է ծնում և մեղք է ավելացնում մեղքերի վրա: Գամիրքի մեծ սյուն Բարսեղը վաշխը բազմագլուխ գազան անվանեց, որովհետև օձի պես գալարվելով՝ պատում է [վաշխով] տվողի մարմինն ու հոգին և կործանում է նրանից ծնված երեք կամ չորս սերունդներին:

Բայց դու տե՛ս այս ախտի առավել չար լինելը. սա ստուգապես անօրենների գործ է, որոնք հույս չունեն առ

[1] Ես. Ե 8-9

[2] Սաղմ. ՃԲ 6

[3] Ես. Ա 22-23

[4] Զաք. Ե 1-4

[5] Հեսու Է 1-26

[6] Եզեկ. ԺԸ 13

Աստված: Սատանան այն սերմանում է ոչ միայն տգետ մարդկանց, այլ նաև քահանաների մեջ, որոնց հրամայվեց աղ և լույս լինել Աստուծո ժողովրդի համար: Եվ սա գործել է տալիս արծաթասիրության (որն հավասար է կռապաշտության) ագահ ախտը. այն էր, որ կործանեց Հուդային ու զրկեց նրան Աստուծո Որդու փառքից:

Եվ եթե նա, ով տեր է մեծ հարստության, և արդար վաստակից ողորմություն չի տալիս, չի կարող մտնել Աստուծո արքայություն, ապա նա, ով այսպիսի զրկանքներ գործած է մահանում, ի՞նչ պատասխան պիտի տա Աստծուն: Զնայած մարմնով կենդանի, բայց հոգով մեռած է ամեն մի մեղավոր: Գրված է. «Աստուծո առաջ լավ է մեկ արդարը, քան բյուրավոր անդարձ մեղավորները»:

Կան մարդիկ, որոնք նեղության մեջ գտնվող աղքատին դահեկան են տալիս հացի, գինու և այլ կարիքների համար, իսկ հետո նեղում են նրան՝ պահանջելով. «Այսքան գինի և այսչափ ցորեն տուր մի դահեկանի դիմաց»: Սա ծածուկ վաշխառություն է, որն ավելի ծանրագույն [մեղք] է, քան այն, երբ բացահայտորեն են վաշխ վերցնում: Կան [մարդիկ], որոնք գրավ են վերցնում և պահում են աղքատների սեփականությունը. սա նույնպես հավասար է վաշխառության, որովհետև գաղտնի է սատանայի որոգայթը և գաղտնի կերպով էլ կործանում է մարդկանց որդիներին: Այս երեք ախտերը՝ գողությունը, վաշխառությունը և զրկելը զրկանք են կոչվում:

Կաշառք [վերցնելը] նույնպես զրկել է [նշանակում], որի մասին նշեցինք վերևում և բազում մեջբերումներ արեցինք Գրքերից սրա՝ չարիք լինելու մասին: Կատարյալ չար և անօրենություն են զրկելն ու մաքս վերցնելը, որը բաժ են կոչում, այսինքն՝ բաժինք, բայց անիրավ և ոչ թե օրինական, որն ագահությունից դրդված սահմանեցին նախկին թագավորները: Նրանք գնացին, սակայն նրանց չար գործի պտուղը մնաց ի հիշատակ նրանց: Եվ հիրավի, չար զրկանք է այս, և պիղծ է հիշատակը նրա, ով սահմանեց այն, որովհետև նա աշխատանքի ժամին աշխատողների մեջ չէ, այլ նստած է ճանապարհների եզրին և անամոթաբար բաժին է պահանջում ճանապարհորդներից:

Եվ թեպետ խոստովանությունն ու արտասուքը ջնջում են բոլոր մեղքերը, երբ մեղավորը ետ է դառնում և դուրս գալիս մեղքերից, սակայն զրկելու մեղքը ոչ ոք չի կարող քավել: Եվ պատճառն այն է, որ մեղքերն ավելի առաջ է գնում առ Աստված, քան մարդը, որ գործեց այն. եթե նա հատուցի մեղքի դիմաց, [մեղքն] այլևս չի աճի: Եվ երբ մեղավորը զղջում և ապաշխարում է, ջնջվում են մեղքերը, թեպետ իրենից առաջ գնացին առ Աստված: Եթե այլ տեսակի մեղք գործողներ մահանում են առանց զղջալու, մեղքերը չեն աճում, այլ մնում են նույնությամբ մինչև դատաստանի Օրը: Իսկ զրկանքը նոր, չար տունկ է, որ մարդը տնկում է, կամ էլ սովորեցնում ուրիշներին չար գործել. մարդը մեռնում գնում է, իսկ մեղքերը հետո գալիս, գործվում են աշխարհում մինչև Քրիստոսի Գալուստը, բազում վաշխերով աճում և պտղաբեր ծառի պես նորանոր պտուղներ են տալիս: Թվում է՝ սրա համար ասաց առաքյալը. «Կան մեղքեր, որոնք ավելի առաջ են գնում դատաստան, և կան, որոնք հետո են գալիս»[7]:

Իսկ զրկողի թողությունն այն է, որ վերցրածը վերադարձնի նրան, ում զրկել է, և ոչ թե [միայն] խոստովանությունը: Կան շատ հարուստ իշխաններ, որոնք մահանալիս այդպես են անում, և Աստված ընդունում է, որովհետև բարության մաս է:

Տե՛ս, թե ինչ եղավ Զակքեոսին. Տերը, որից սարսելով՝ թաքնվում էին սերովբեները, մտավ Զակքեոսի տուն և նս-

[7] Ա Տիմ. Ե 24

տեց մեղավորների մեջ: Զակքեոսը պատմեց իր գործի մասին, իսկ Տերը լուռ էր, իսկ երբ ասաց. «Ունեցվածքիս կեսը կտամ աղքատներին՝ որպես ողորմություն իմ մեղքերի դիմաց, և եթե որևէ մեկին զրկել եմ, քառապատիկ կհատուցեմ», մեր Տերն ասաց. «Այսօր փրկություն եղավ այս տանը. այժմ սա համարվեց Աբրահամի որդի, որովհետև այսօրվանից հեռացավ կործանարար ժանտաթզենուց, որի վրա բարձրացել էր՝ որպես իր չարությունների գագաթին և անօրենությունների ճյուղերին»[8], այն չար թզենուց, որի ասեղներով կարկատված տերևով ծածկվեց նախաստեղծ Ադամը, և որը իր ներքո ծածկել էր Նաթանայելին:

Արդ, զրկանքը զրկանք է, ինչպիսին էլ որ լինի, և եթե այն դեռ զրկողի տանն է, և նա գնում խոստովանում է իր մեղքերը և կարծում է՝ ապաշխարեց, երբ խոստովանեց. Աստված չի ընդունում նրա դարձը, որովհետև մեղքը դեռևս չի հեռացել նրանից, այլ կենդանի մնում է տանը: Երբ այդպիսին խոստովանում և հեռանում է մեղքից, շուտով թողություն է ստանում, իսկ եթե չի հեռանում մեղքից, թեպետ խոստովանի էլ, թողություն չի ստանա: Նա, ով խոստովանում է, սակայն վերցրածը պահում է տանը, անօգուտ են նրա ջանքն ու վաստակը. նա նմանվում է այն շանը, որը վերադառնում է իր փսխածին:

Տե՛ս այլ ավելի զարմանալի բան, քան սա է. մեծ աստվածաբան Գրիգոր հրաշապատում վարդապետը Եկեղեցու «Ի յերգս պայծառ» ճառում մարդկանց կոչ էր անում ժամանակին մկրտվել, որովհետև մինչև ծերություն չէին մկրտվում, որ շատ հեշտանային մեղքերով, որ հետո՝ մահվան ժամին, մկրտվեն ու սրբվեն: Շատ էր պատահում, որ չէին հասցնում մկրտվել և քրիստոնյա դառնալ, որովհետև մահը հանկարծակի էր գալիս նրանց վրա: Իսկ նրանց, ովքեր գալիս էին մկրտության, սակայն պահում էին վերցրածը, նա ասում էր. «Ինչ՞ օգուտ քեզ, որ գալիս մկրտվում ես, այլ մեղքերիդ

[8] Ղուկ. ԺԹ 1-9

թողություն ստանում, իսկ վերցրածդ չես վերադարձնում նրան, ում զրկեցիր: Թեպետ անբավ են սուրբ Ավազանի շնորհները, բայց սրբում ու ջնջում են այն մեղքը, որը գործեցիր առաջ, սակայն զրկելու մեղքդ չի ջնջում, որովհետև [զրկելով ձեռք բերածդ] դեռ քո տանն է՝ քեզ մոտ»:

Տեսնո՞ւմ ես՝ որքան [մեծ] չարիք է զրկելը և ավելի դառը, քան արբեցողությունն ու դիվահարությունը: Ուստի, աղաչո՛ւմ եմ, մեծագույն ջանքերով և հոժար սրտով փախե՛ք զրկելուց, առավել, քան բոլոր մեղքերից: Նաև մեր արդար աշխատանքի վաստակից շատ ողորմություն տանք, որպեսզի ահեղ Օրը արժանի լինենք Աստուծո ողորմությանն ու տեսությանը և բոլոր սուրբերի հետ փառավորենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԸ. Ոխակալության, ատելության, մախանաքի, բարկության, նախանձի և այլ բազում մանր մեղքերի մասին, որոնք Սուրբ Գրքերում կոչվում են շնչական[9]

Ոխակալությունը մեծագույն չարիք է և վիթխարի գազան: Այն ճշմարտապես սատանայի գործ է, որովհետև առաջին ոխը նա պահեց և մարդուն հանեց դրախտից: Տերը հիրավի դատապարտում է ոխակալին, թե՝ «Թողություն չունի դատաստանի Օրը, որովհետև գործակից է չարին»: Բոլոր զգայական ու հոգևոր մեղքերի մայրը ոխակալությունն է, որովհետև ոխակալը մախում է եղբորը, հակառակվում է, գրգռվում: Իսկ ով ոխակալ չէ, նման է Աստուծո Որդուն. չի նախանձում, չի գրգռվում, չի մախում, քեն ու վրեժ չի փնտրում, նաև չի ատում որևէ մեկին, այլ Աստուծո սիրով սիրում է իր եղբորը և չարի փոխարեն բարի է հատուցում,

[9] Բնագրում՝ շրջականք:

ինչպես պատվիրեց մեզ Աստված: Այս շնչական մեղքը, թեպետև փոքր է թվում, սակայն կատարյալ չարիք է, երբ որևէ մեկը գործում է այն ու չի զղջում: Քանզի Քրիստոսը սահմանեց. «Ով մեղք է գործում, ծառա է մեղքին»[1]*: Ուրեմն, ով փոքր մեղք է գործում, փոքր մեղքի ծառա է: Սակայն թե՛ մեծին, թե՛ փոքրին ծառայող ամեն ոք միապես ծառա է կոչվում: Նա նման է այն հմուտ որսորդին, որին առյուծները չկարողացան սպանել, և երբ նա անհոգ ննջեց, եկան տկար աղվեսներն ու անզոր ճագարները և սպանեցին նրան: Նմանապես էլ մենք, եթե մեծ մեղքեր՝ շնություն, սպանություն կամ մի ուրիշ ծանրագույն մեղք չգործեցինք, այլ միայն բամբասեցինք, խեղկատակեցինք, հեգնեցինք, մախացինք, ատեցինք, ահա, Աստուծո՛ սիրելիներ, չսպանվեցինք առյուծից, այլ տկար աղվեսներից: Քրիստոս ասաց. «Ամեն մի դատարկ խոսքի համար հաշիվ պիտի տաք դատաստանի Օրը»*[2]*:*

Ով հանիրավի բարկանում է իր եղբոր վրա, մարդասպան է:

Ով նայում է անամոթաբար, չնացավ աչքով: Առաքյալը դատապարտում է բամբասողին ու չողոքորթին, իսկ Տերը դատաստանի արժանի է համարում [եղբորը] հիմար և տգետ ասողին[3]*:*

Հակառակությունն ու գրգռությունն այն են, որ [մարդ] միշտ խռովարար է լինում և հորդորում է ուրիշներին աղաղակ ու խռովություն բարձրացնել, իսկ ինքը հեռու է մնում:

Ով ատում է եղբորը, մարդասպան է[4]*:*

Մախանքն այն է, որ ծածուկ ոխով այրվում և ծխում են մտքում, ինչպես կրակը հարդի տակ:

Նախանձն այն է, որ երբ տեսնում են մեկի բարիքը, խեղդվում և հույժ տրտմում են, ինչը հակառակ է Աստծուն:

Զարակնելն ու հաչաղելն այն են, որ երբ Աստված ընկերոջն ունեցվածք է տալիս, հույժ խոցվում են և չեն կամենում տեսնել կամ լսել եղբոր մասին:

Այս ախտերը, որոնց մասին խոսեցինք, ծնում են ոխը, մախանքը և նախանձը, որովհետև միանման են սրանք և նույն գործն են կատարում:

Առաքյալը բամբասողին դասեց պոռնիկի ու մարդասպանի հետ և հանեց արքայությունից, որովհետև առաջին չարիքը քսությունն ու բամբասանքն են, որովհետև սատանան օձի միջոցով Եվայի մոտ բամբասեց Աստծուն:

Կատարյալ չար է նա, ով նախատելով բամբասում է եղբորը: Մարիամն էլ նախատելով բամբասեց Մովսեսին, և Աստված բորոտ դարձրեց նրան ու ասաց. «Ի՛նձ բամբասեցիր և ոչ թե Մովսեսին»[5]*: Թեպետ նա արդարացիորեն բամբասեց, որովհետև ասաց. «Եթովպացի կին առավ», և այդպես էր, բայց նախատելով բամբասեց: Ուստի բնավ պետք չէ չարախոսել որևէ մեկին կամ նախատասեր լինել, որ սատանան չուրախանա: Թույլ մի՛ տուր որևէ մեկին քեզ մոտ բամբասել, մի՛ ընդունիր մահացու չար դեղը քո լսելիքում, ինչպես քո մայր Եվան արեց, որ չմեռնես հոգով, ինչպես նա մեռավ, և չարաչար չբորոտվես, ինչպես Մարիամը:*

Սուտ վկայողը Հուդայի գործակիցն է, որովհետև այն, ինչպես նաև մատնությունն ու ընկերոջ դեմ որոգայթ լարելը, սպանություն է:

Երդվելն արգելեց Քրիստոս և թույլ չտվեց որևէ բա-

[1] Հովհ. Զ 34

[2] Մատթ. ԺԲ 36

[3] Մատթ. Ե 22

[4] Ա Հովհ. Գ 15

[5] Թիվք ԺԲ 1-10

նով, անգամ գլխի մազով երդվել[6], որովհետև վատն այն է, որ երդումն ուրացությամբ է լինում: Դրա համար էլ [Տեր-ը] ընդհանրապես հրաժարեցրեց [երդվելուց]: Վա՛յ մեզ, եղբայրնե՛ր, ո՞վ կարող է փրկվել, որովհետև բազում անգամ երդվում և երդումն ուրանում է ամեն մեկը: Եվ սուտը շատ է, քան ճիշտը:

Անողորմների բաժինը, պարգևն ու վիճակը հայտնի են. այդ մասին փոքր-ինչ նշեցինք ողորմածների վերաբերյալ ճառում, որովհետև սատանան անողորմ է և անողորմների հետ կլսի. «Հեռացե՛ք Ինձնից»:

Սպանությունը մեծ կորուստ է, որովհետև Տերը բանսարկուի մասին վկայում է, թե ի սկզբանե մարդասպան է, որովհետև մեղքով սպանեց Եվային: Կայենը եղավ երկրորդ մարդասպանը, որովհետև սպանեց Աբելին՝ իր եղբորը, և բացեց նոր, չար ու դառնատեսակ դուռն աշխարհում: Կամովի [գործած] սպանությունը խիստ չար ու ծանր լուծ է, երկաթի բեռ: Ակամա [գործածն] ավելի թեթև է, քան կամավորը: Պատերազմում սպանելն ավելի թեթև է, քան այն, որ ծառա են առնում ու սպանում: Բայց եթե հնար լիներ, ավելի լավ կլիներ չսպանելը, որովհետև սրա ծանր լինելու պատճառով է աղոթում մարգարեն և ասում. «Փրկի՛ր ինձ արյունից, Աստվա՛ծ իմ»[7], և ապա՝ «Կցնծա իմ հոգին Քո արքայության մեջ»[8], և դարձյալ ասում է. «Զգնացի նրանց արյունոտ ժողովներին. որտեղ արյուն է հեղվում, խիստ սաստիկ է խղճի խայթը»[9]: Դրա համար նաև Եկեղեցին է միշտ աղոթում և ասում. «Փրկի՛ր մեզ արյունից, որ իշխանություն ունես հոգիների և մարմինների վրա»:

Ապա խկապես վա՛յ մարդկային ցեղին, քանզի, հիրավի, անթիվ իզուր արյունահեղություններ են տեղի ունենում աշխարհում: Ի՞նչ պիտի պատասխանեն ահեղ դատաստանի Ատյանում, քանզի ասաց Նոյին. «Ձեր արյունը բոլորից կպահանջեմ»[10]:

Եվ ցորենի, գինու և այլ պետքերի ազնիվ վաճառողը չէ, որ նզովվում է աստվածային Գրքերում, այլ նա, ով արծաթի սիրո համար ագահությամբ ջանում է նվազեցնել ընդունված և Աստուծո կողմից սահմանված [չափից] ավելի, լինի քիչ, թե՝ շատ: [Այսպիսով], ով սահմանված չափից նվազեցնում է կամ թերակշռում, նա նզովված է Սուրբ Գրքում, որովհետև ագահության ախտն է դրդում նրան այդ անել:

Հավասարապես զրկել [է նշանակում] և՛ լեռներում հափշտակելը, և՛ տանը կամ գյուղում գողանալը, և՛ մաքսը, և՛ վաշխը, և՛ կաշառքը, և՛ իզուր տուգանքը, և՛ մշակի վարձը չտալը: Սրանց հավասար է ժլատ վաճառքը, երբ մեկը նվազեցնում է չափը կամ կշիռը:

Առավել չար է և աստվածային Գրքերում նզովվում է նա, ով կիրակի օրը չի մեծարում և չի պատվում. Աստված կդատապարտի նրան, որովհետև աստվածային Գիրքը թագավորական և տերունական օր անվանեց այն, որովհետև Աստված նրանում սկսեց արարչագործությունը և նրանում ստեղծեց լույսը, հրեշտակներին ու վերին երկինքը: Նաև՝ կիրակի օրը ժողովրդին հանեց Եգիպտոսից: Եվ կիրակի օրը Բեթղեհեմում Կույսից ծնվեց Ինքը՝ Հոր Բանը՝ Հիսուս Քրիստոսը, և կիրակի օրը հարություն առավ մեռելներից և քանդեց դժոխքի գոյացությունը: Կիրակի օրը Նա պիտի դա երկնքի ամպերով և մեզ հարություն պիտի տա մեր գերեզմաններից: Եվ պիտի տա իր սիրելիների վարձքը վերջին կիրակի օրը, երբ լրանա յոթ դարը: Սա պիտի լինի ութերորդ դարասկզբի առավոտյան այն ժամին, երբ [մեր Տերը] հարություն առավ գերեզմանից: Սա այն դարն է, որը չի անցնելու հավիտյան,

[6] Մատթ. Ե 34-37

[7] Սաղմ. Ծ 16

[8] Սաղմ. Ծ 16

[9] Սաղմ. Ծ 16

[10] Ծննդ. Թ 5

այլ մնալու է անսպառ, նաև ցերեկ և գիշեր չի լինելու այն-տեղ: Ապա հիրավի աստվածային Գրքերից մեզ հրամայվեց, որ պատվենք կիրակի օրը որքան կարող ենք, և որքան թույլ է տալիս ժամանակը:

Կիրակի օրը մարմնով հանգստանանք վեց օրվա աշխա-տանքից, նաև մեր հոգին հանգստացնենք՝ խոստովանելով վեց օրվա մեղքերը: Այդ օրը նաև Գրքերով մխիթարվենք եկեղեցու դռանը, որովհետև երեք Ավետարանները, որոնք ընթերցվում են կիրակի օրը, նախանշում են երեք փողերը. Յուղաբերից Ավետարանը նախանշում է առաջին փողը, երբ կենդանիներին կմահացնի, իսկ ընտրյալ արդարներին հա-րություն կտա և կդարձնի Վերին Երուսաղեմի ժառանգորդ-ներ: Առավոտյան Արձակման Ավետարանը խորհրդանշում է միջին փողը, որը հարություն կտա բոլորին: Իսկ Ճաշու Ավե-տարանը նախանշում է դատաստանը, երբ Դատավորը կբաղ-մի զարմանագործ և անձեռակերտ Աթոռին և կասի Ադամի սերունդներին՝ եկե՛ք, կամ՝ գնացե՛ք և այլն: Ապա իրավացի կերպով գրվեց. «Ով իր ծուլության պատճառով մնա տանը և չլսի երեք Ավետարանների ձայնը, այնպիսին չի լսի փողի ձայնը»: Իսկ նա, ով առողջ է մարմնով ու կատարյալ՝ հասա-կով և առանց մեծ պատճառի նախքան Պատարագի [ավար-տը] ճաշակում է որևէ բան, կամ էլ ծուլության պատճառով չի գնում Պատարագի, նզովքներով փակված է կանոնական հրամաններով:

Դրա համար, աղաչո՛ւմ եմ, պատվեցե՛ք կիրակի օրը և փախե՛ք նզովքներից, որոնք գրվեցին նրանց համար, որոնք չեն պատվում այն: Բայց դու, ո՛վ եղբայր, տե՛ս գերագույն և հրաշափառ կիրակի օրվա պատիվն ու ահեղ լինելը, որով-հետև հոգեշունչ գրքերը հրաման չեն տալիս ծնկի գալ այդ օրը՝ ճակատը գետնին հասցնելով, ինչպես անում ենք վեց օրերին, այլ երկրպագել Աստծուն ոտքի վրա՝ մի քիչ խո-

նարհվելով և մատների ծայրը միայն գետնին հասցնելով:

Ապա տե՛ս, թե նա, ով առանց խորություն դնելու մարմ-նի օրենքներով է գործում կիրակի օրը, ինչպես մյուս օրերին, որքան նզովքներով է կապվում Աստվածաշունչ Գրքում:

Ձծնրադրելու պատճառն այս է. մեր հայր Ադամը, չա-րից խաբված, ընկավ անեծքների այս աշխարհը գերակատար բարձունքներից: Նույն օրինակով էլ մենք մեր մոր որովայնից գլխիվայր ենք ծնվում և ընկնում երկիր՝ նմանվելով մեր հայր Ադամին: Քանի որ մանուկը մոր որովայնում ոտքի վրա է, գլուխը՝ վերևում, իսկ վերջին ամսին իրեն ստեղծող Աստու-ծո հրամանով շրջվում է գլխիվայր: Եվ խոնավ, խավարային բանտում նրան կենդանի է պահվում թաղանթապատ: Գլու-խը որովայնի դռան մոտ է, և ամեն օր փնտրում է ելքը: Դրա համար աստվածային Գրքերը նզովում են նրան, ով այդ ժա-մանակահատվածում ամուսնությամբ մերձենում է իր կնոջը, որովհետև վնասակար է, և շատ է պատահում, որ մանու-կը խեղդվում է: Եվ առաջին պատճառի համար, որ Ադամը գլխիվայր ընկավ երկիր, մենք նույն խորհրդով վեց օր ծունր ենք դնում Աստծուն և գլուխը գետին հասցնում, իսկ կիրա-կի օրը չենք խոնարհվում գետնին, այլ ոտքի վրա ենք երկր-պագում Աստծուն, որովհետև Քրիստոս հարություն առավ մեռելներից կիրակի օրը և մեզ ոտքի հանեց մեղքերի կործա-նումից և կռապաշտության կորստից. Նրան փառք այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԺԹ. Պղծախոսների մասին, որոնք հայհոյում են Աստծուն

Պղծախոսն առավել չար գազան է, քան դառնաշունչ վիշապօձը, որի մահաբեր թույնը իր չար ժանիքների մեջ է: Քանզի առաջին վիշապի դառնագույն և պիղծ թույնն

է բնակվում նրա լեզվի վրա: Քանզի չար հայհոյությունը, որ կար քարը իժի կոկորդում ու բերանում, գալիս բնակվում և հանգչում է պղծախոսի բերանում ու շրթունքներին: Անիծյալ օձը, որ չարաչար բնակվեց մեր մայր Եվայի սրտում և խորհուրդներում, սողալով գալիս և սողոսկելով ու հույժ ցնծալով՝ տեղավորվում է պղծախոսի մտքում և հոգում: Այն անճոռնի և հաղթանդամ վիշապը, որը մահացու դեղերով լցրեց իր ականջները և փոխանակ փաթաթվելու կործանարար թզենուն՝ պինդ փաթաթվեց մեր նախամայր Եվայի պարանոցին ու լանջին, կրկին գալիս ու անբաժան կերպով փաթաթվում է պղծախոսի կրծքին ու պարանոցին: Ահա՛ ավելի վատթար կորուստ, քան Եվայի խաբվելն է, որովհետև նա բացահայտ չանարգեց Աստծուն, այլ միայն չհնազանդվեց Նրա հրամաններին, իսկ պղծախոսն անարգում է Աստծուն և չի զարհուրում դողալով: Դրա համար աստվածային Գրքերը հերձվածողների հետ դասեցին նրան, որն առավել չար ու ծանրագույն մեղք է, քան շնությունն ու գողությունը: Քանզի ամեն մի մեղք գործելիս փափկանում ու պարարտանում է մեր մարմինը, իսկ պղծախոսի հայհոյությունը ոչ մի օգուտ չի բերում մարմնին, այլ հույժ ծանր բեռ է հոգու համար: Ապա հիրավի գրվեց. «Դժոխքի հրեղեն հատակում պղծախոսների բերանները լցված կլինեն որդերով, որոնք միշտ կուտեն՝ այրելով ու մորմոքելով նրանց, որովհետև Աստուծո պատկերակցին անարգելով՝ գազանի պատկեր դարձրեցին: [Նույնն է սպասում] նրանց, ովքեր չար նախատինքներով անարգում են երեսն ու ճակատը, որը մեռոնով է դրոշմված, որովհետև երեսների հետ անարգում են Խաչն ու Մեռոնը»: Իսկ Փրկիչը հրամայեց. *«Ով ձեզ անարգում է, Ինձ է անարգում»*[1]: Որովհետև Քրիստոս Իր անունով մեզ կոչեց և քրիստոնյաներ անվանեց: Եվ՝ *«Եթե մեկը սրբությամբ Ինձ*

[1] Ղուկ. Ժ 16

ճաշակի, նա կբնակվի Իմ մեջ, և Ես՝ նրա մեջ»[2]: Եվ առաքյալն ասում է. *«Ովքեր մկրտվեցին ի Քրիստոս, զգեստավորվեցին Քրիստոսով»*[3]:

Տեսնո՞ւմ ես՝ որքան չար ու աններելի անօրենություն է պղծախոսությունը: Քանզի քրիստոնյային անարգելուն պես անարգանքը բարձրանում է առ Քրիստոս: Իսկ ինչպե՞ս թողություն կունենա նա, ով անահ ու անընդհատ անարգում է Աստծուն:

Կռապաշտության ժամանակներում այրում էին նրան, ով անարգում էր կուռքին: Եվ Աստված Մովսեսին ասաց. «Նույնպես և դո՛ւք արեք [Աստծուն անարգողների հետ]»: Դեպք եղավ, երբ մի մարդ անարգեց Աստծուն, և Մովսեսը քարկոծելով՝ այրեց նրան: Այնուհետև ուրիշ ո՞վ կհամարձակվեր անարգել Աստծուն:

Արդ, եթե հնար և կամ ժամանակ լիներ, որ երբ մեկն անարգեր Աստծուն, քարկոծեին կամ այրեին նրան, թերևս ոչ մեկը չէր համարձակվի նման չար հայհոյություն [գործել]:

Բայց վա՛յ մեզ, որովհետև ահա՛ անտանելի չարիք է, երբ ամեն բերան աներկյուղ ու համարձակ անարգում է Աստծուն: Եվ սա դարձավ ընդհանուր [երևույթ], ինչպես այլ անօրենությունները, որոնք կատարվում են աշխարհում: Եվ չկա մեկը, ով քննելով՝ հոգա խափանել այս անկարգ գործը:

Երկնայինները զարմացան Աստուծո իմաստության վրա և հիացան սքանչանալով, թե ինչպես է Աստված անձրև տալիս կամ դալարեցնում բույսն այնտեղ, ուր Աստծուն ուղղված անարգանքների ձայն է լսում:

Աստուծո՝ մարմնով աշխարհ գալուց առաջ բազում և անթիվ էին մարմնավոր և շնչավոր մեղքերը, սխալներն ու հայհոյությունը: Սակայն երբ աշխարհում ծագեց աստված-

[2] Հովհ. Զ 57

[3] Գաղ. Գ 27

գիտության լույսը, Տիրոջ կողմից հրամայվեց. «Այո՛ այո լինի, և ոչը՝ ոչ»[4]: Դրանից հետո մարդիկ համարձակվեցին և, քիչ-քիչ ստեղծելով անարգանքի առիթներ, սկսեցին հայհոյել դստերը, մորը, կնոջը և ապա մարդկային պատկերը: Վերջինիս հետ էլ աշխարհում սառեց ու ցամաքեց սերը, և մարդիկ թուլացան հավատից և Աստծուն դարձրին անարգանքի առարկա:

Վա՜յ մեզ և եղո՛ւկ Ադամի բոլոր սերունդներին, որովհետև միայն քրիստոնեության անունը մնաց մեր մեջ, իսկ բարի գործերն ու աստվածպաշտությունը հեռացան մեզնից: Եվ առավել խիստ վտանգավոր է մեզ համար, երբ մեր պարզ ու հստակ լեզվով մարդիկ հայհոյալից խոսքեր են ասում: Քանզի չար մշակ սատանան քրիստոնյա ժողովրդի մեջ ցանեց հերձվածի որոմը և տեսավ, որ հերձվածը չարմատացավ հայոց ազգի, ինչպես և այլ քրիստոնյա ազգերի մեջ: Եվ հնարեց ու ջանաց վրեժխնդիր լինել: Եվ ծածկապես մեր ազգին սովորեցրեց մի այլ գործ, որը հավասար է կորստյան հերձվածին: Քանզի հերձվածողներն ասացին. «Հայրն անսկիզբ չէ», մեկն ասաց. «Որդին հավասար չէ Հորը», իսկ մյուսը, թե՝ «Հոգին հավասար չէ Որդուն»: Եվ մի այլ մեկը, թե՝ «Տերը առաջոք չրջեց աշխարհում և ճշմարտապես չէր մարդացել»: Մի ուրիշն էլ, թե՝ «Մարիամը չծնեց Աստծուն, այլ սոսկ մարդու», և այլ անթիվ հայհոյություններ ու հերձվածներ, որոնք գրեցին հերետիկոսները: Սակայն այս ամենը չարմատացավ մեր ազգի մեջ: Եվ բանսարկուն մեր ազգին սովորեցրեց պղծախոսության հայհոյությունը: Եվ ամեն օր համարձակորեն անարգել է տալիս Աստծուն, հայհոյում է հրեշտակին ու քահանային: Իսկ նա, ով անարգում է Աստծուն, ո՞ւմ է արդյոք կամենում պաշտել: Զարմանալի է այս. պաշտես Աստծուն ու դառնալով անարգես Աստծուն: Արդ, ասա՛ ինձ՝ ի՞նչ բանի համար Աստված շնորհակալ լինի

[4] Մատթ. Ե 37

քեզնից՝ Իրեն անարգելու և նախատելո՞ւ, թե՞ պաշտելու և երկրպագելու համար:

Ո՛վ մարդ, ինձ թվում է՝ դու նման ես այն խելագար հիմարին, որը գնաց թագավորի մոտ և երկրպագեց նրան, իսկ հետո, ոտքի կանգնելով թագավորի դիմաց, լի բերանով թքեց նրա երեսին: Եվ մերձակաները սրախողխող արեցին նրան: Արդ, այսպես կլինի նրա հետ, ով պաշտում է Աստծուն և հետո դառնում անարգում է Նրան: Բայց պատահում է նաև, որ Աստված բարկանում է բոլոր մեղքերի համար և ժամանակ առ ժամանակ ցասում է բերում [աշխարհի վրա]:

Պղծախոսության համար [Աստված] առավել շատ պատուհասներ է բերում աշխարհին՝ սով, անժամանակ մահ և այլն: Եվ եթե ետ չդառնանք ու չապաշխարենք, ապա վերջին օրը հրով կդատի մեզ: Իսկ պղծախոսության բացատրությունն այս է. երբ մեկը անարգում է Աստծուն հայհոյությամբ, Աստուծո առջև հիշվում է արարածների մեղքը, այդ ժամանակ շարժվում են Աստուծո աթոռները, որոնք բազմաչյա քերովբեներն ու սերովբեներն են, որոնք ջանում են հրեղեն սրով ջնջել մարդկային ցեղը, իսկ ներող և համբերող Աստված սաստում է նրանց, որ հանդարտվեն [և սպասեն] մինչև դատաստանի Օրը, որովհետև անեզր է Նրա քաղցրությունը, և շատ է ցանկանում մեր դարձը:

Ուստի, աղաչո՛ւմ եմ ձեզ, նայենք ահեղ Ատյանին և թոթափվենք բոլոր մեղքերից, առավել ևս փախչենք պղծախոս հայհոյությունից: Եվ մյուսներին էլ խստորեն խրատենք, որ չհայհոյեն Աստծուն: Աստծուց [դրված] պարտավորություն կա իշխանների վրա, որոնք իշխանություն ունեն սաստելու, խրատելու, պարտադրելու ու հանդիմանելու բոլոր նրանց, ովքեր գտնվում են իրենց իշխանության ներքո, որպեսզի պղծախոսությամբ չհայհոյեն Աստծուն:

Առավել ևս մեծ պարտավորություն կա հոգևոր առաջ-

նորդների վրա, որ հոգ տանեն հոտին և ամեն ժամ, մշտապես ուսուցանեն ամեն տեսակ արդարության և բոլոր մեղքերի մասին, որպեսզի աշխարհի բոլոր իշխաններն ու առաջնորդներն այստեղ բարի օրինակ լինեն, և [մենք] հանդերձյալ աշխարհում անվախճան բարի հանգիստը ժառանգենք մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որն օրհնյալ է ամեն ինչում, հավասար Հորը և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Ի. Տասը թվի մասին, որ կատարյալ և խորհրդավոր թիվ է՝ լցված աստվածային գերակատար իմաստությամբ

Եվ որովհետև Աստուծո շնորհով աստվածային պատվիրաններից ըստ մեր տկար մտքի կարողության քաղելով՝ փոքրիշատե ծանոթացանք բարու և չարի տեսակներին, բե՛ր, ո՛վ աստվածային իշխան, քննենք նաև աստվածային պատվիրանների տասը թվի մասին, որովհետև այն կատարյալ թիվ է և իր մեջ ունի թաքուն ամբարված բազում խորհրդական և աստվածային իմաստներ: Եվ կատարյալ հավատով սկսենք մոտենալ այս գերագույն և սրբազան խորհրդի նշանակությանը: Եվ Աստված, որ խոստացավ տալ Իրենից խնդրողներին, կտա նաև մեզ խոսքի իմաստություն՝ ի շահ բոլոր լսողների և հօգուտ մեր ողորմելի անձերի: Իսկ ամեն բանից առաջ բարվոք է իմանալ այս, որ առաջին թիվը Աստուծո օրինակն է: Որովհետև Աստված կոչվում է Սկիզբ և Մայր բոլոր ստեղծվածների, որովհետև անգոյից ստեղծեց նրանց, և չկա ոչինչ Նրանից առաջ: Նմանապես էլ առաջին թիվն է բոլոր թվերի ծնողը, և նրանից առաջ չկա մեկ այլ թիվ: Եվ ինչպես բոլոր ստեղծվածները առաջացան և ի հայտ եկան Մի Աստծուց, նմանապես էլ բոլոր թվերը մեկից սկսվեցին,

երևացին և անհաշիվ բազմացան: Եվ որովհետև Աստված ծայրագույն Լույս է, և Ինքն էլ գոյացրեց լույսը, իսկ լույսից ստեղծեց անմարմինների դասերը, ու լույսից լույս երևաց, այսպես էլ մեկ թիվ է լույս մարդկանց մտքի մեջ, որովհետև սրանից հայտնվեցին մյուս թվերը, որոնցով կենցաղավարվում է մարդկանց կյանքը աշխարհում:

Այսպես նաև առաջին դարում Աստուծո լույսով պայծառացան հոգին ու միտքը մեծն Ենովքի, որն Ադամից հետո յոթերորդն էր: Նա ձգտեց լուսեղեն դրախտին, որի մասին լսեց Ադամից, մտավ պահքի լույսի մեջ և կենդանի մարմնով վերափոխվեց մշտնջենավոր լույսի մեջ:

Մեկ թիվը բարի լույս է, ինչպես ասացինք, և լույս է, ինչպես առաջին արարչությունը, և կոչվում է միաշաբաթ, օր է թագավորական և աստվածային յոթնադարյան կյանքի: Նրա մեջ գոյացավ լույսը, որովհետև օրը լույս է թարգմանվում: Եվ ըստ կարգի երևացին Արարչի նաև մյուս գործերը: Նաև՝ նա է մայրը բոլոր մնացած օրերի:

Իսկ երկու թիվը գալով՝ նախ խորհրդանշում է Ադամին և ապա՝ Ադամին ու Եվային: Քանզի Ադամն Աստծուց ստեղծվեց որպես երկու մարդ՝ երկու նյութերից, այսինքն՝ հոգի և մարմին: Քանզի առաքյալը հոգին կոչում է ներքին, իսկ մարմինը՝ արտաքին մարդ[1], որոնք միմյանց հակառակ են, որը մեր փորձով իսկ տեսնում ենք ամեն օր: Սակայն մարդը մի բնություն կոչվեց և ոչ թե՝ երկու:

Եվ ինչպես միակը ծնեց երկուսին և բաժանեց, և երկուսը անախտ ելավ մեկից, այնպես էլ Արարչի հրամանով բաժանվեցին և ելան Ադամը և Եվան՝ որպես կատարյալ անախտ մարդիկ: Եվ երկու թվի խորհուրդը բազում բաներում է երևում. մենք ունենք երկու տեսանելիք և երկու լսելիք: Նաև մեծամեծ լուսատուները երկնքում երկուսն են: Եվ Տե-

[1] Բ Կոր. Դ 16

ը երկու-երկու էր առաքում իր աշակերտներին: Երկուսն են Կտակարանները, և երկուսն է կյանքը՝ այս, որի մեջ ապրում ենք, և հանդերձյալը: Երկուսն են մարգարեները, որ Թաբոր լեռան վրա վկայեցին Հիսուս Քրիստոսին, իսկ Հայրն ու Հոգին՝ Հորդանանում: Նաև երկրորդ դարում Աստուծո հրամանով ջուրը սպանեց և մեջտեղից վերացրեց չարիքը: Իսկ Նոյը Աստուծո հրամանով նավավարություն սովորեց և ելավ տապանից, և Աստված նորից բույսերով ու տունկերով արարչագործեց աշխարհում և հաստատության ուխտ կնքեց Նոյի հետ: Իսկ ջրերը վերադարձան իրենց տեղերն ու հաստատվեցին աշխարհում: Եվ Նոյը՝ երկրորդ Ադամը՝ այս մարդկության հայրը, որովհետև բարվոք է երկու թիվը, ելավ մեկից և հաստատվեց, ինչպես նաև արարչության երկրորդ օրը, որ բաժանվեց և դուրս եկավ միաշաբաթից, որովհետև այս ընթացքում սահմանվեց երկնքի հաստատությունը, և վերին ու ներքին ջրերը բաժանվեցին:

Իսկ երեք թիվը հույժ կատարելագույն և բարի է, քանի որ գեղեցկազարդ կերպով Սուրբ Երրորդության խորհուրդն է ցույց տալիս: Երեք է այս թիվը, և երեք են նաև Աստվածության Անձնավորությունները՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի: Եվ ինչպես որ մի թվի մեջ երևացին Իրենց Երեք Անձերով, այսպես էլ Հորից երևաց Որդին՝ ծննդյամբ, և Հոգին՝ անընդհատ ու անսպառ բխմամբ: Ամեն ինչով Հորը հավասար Երեք կատարյալ Անձեր՝ մի անբաժանելի Բնությամբ: Եթե Մեկը պակաս լինի Երրորդությունից, նվաստ, անկատար և անշուք կմնա Աստվածությունը:

Երեք թիվը նմանվում է նաև մարդ արարածին, որովհետև մարդն ինքը հոգի, մարմին և միտք է: Եթե մեկը պակասի, ապա մարդը կդադարի կատարյալ լինելուց, բայց կատարյալ Երրորդությունը ստեղծեց մարդուն կատարյալ երեքից: Հայրը մեզնից պահանջում է սուրբ և անաղարտ պահել մեր մարմինն Իր բնակության համար՝ չշնանալ, չպոռնկել, չսպանել, չգողանալ, որն օրինադրեց Մովսեսին պահքերով, աղոթքներով, աշխատելով ու ողորմությամբ: Որդին հրամայում է մաքուր պահել մեր հոգին Իր բնակության համար՝ չլինել ո՛չ ոխակալ, ո՛չ բամբասող, ո՛չ նախանձ, ո՛չ մատնող, ո՛չ երդվող, այլ մնալ օրհնություններում, բարի խոսքերում ու հոգեշահ խրատներում: Իսկ Սուրբ Հոգին կամենում է, որ սուրբ և հստակ պահենք մեր միտքը Իր բնակության համար՝ ո՛չ հպարտ լինել, ո՛չ ամբարտավան, ո՛չ ագահ, ո՛չ իզուր խռովվող, այլ խոնարհ, լսող և հեզ, որովհետև Հոգին հեզություն է:

Եվ ինչպես որ երկուսը ծնվեց մեկից, իսկ երեքը՝ երկուսից, նմանապես Եվան ծնվեց Ադամից, իսկ Սեթը՝ Եվայից ու Ադամից: Արդ, անհաշիվ աճեցին մարդիկ, իսկ թվերն էլ՝ անսպառ: Նաև երրորդ դարում փլվեց աշտարակը, ու խափանվեց մարդկային չար խորհուրդը: Եվ ցրվեցին մարդկանց որդիները, ու մարդկանցով զարդարվեց ողջ աշխարհը:

Եվ որովհետև այսքան բարի է երեք թիվն ու մեծափառ, դրա համար անթերի խոստովանենք Սուրբ Երրորդությունն ու բոլոր բարի առաքինություններով զարդարենք մեր անձերը: Ինչպես արարչության երրորդ օրը երկիրը զարդարվեց պես-պես բույսերով, տունկերով, ծաղիկներով, նաև Աստուծո հրամանով Ադենի դրախտը զարդարվեց զանազան ծաղիկներով ու տունկերով:

Զորս թիվը նույնպես իր մեջ ամբարված ունի խորհուրդի անսահման հոգեշահ և ցնծալից իմաստներ:

Առաջինն այն է, որ Աստված ոչէից ստեղծեց նախ տարերքների բնությունը և նյութը և ապա՝ տարերքները՝ հուրը, հողը, օդը և ջուրը: Եվ հետո իրար հակառակ տարերքները խառնեց միմյանց, կապեց սիրով և սրանցից ստեղծագործեց բոլոր արարածներին:

Ունի նաև չորս գետերի խորհուրդը, որոնք բխում էին Ադենի դրախտում: Նաև աշխարհն է քառաթև, և չորսն են կենդանիները, որոնք կրում են Աստվածության աթոռը: Բազում է չորսի խորհուրդը. նաև Աստված հրամայեց, որ տապանակը քառակուսի պատրաստեն մեծ խորհուրդի պատճառով, իսկ նրա վրա՝ չորս օղամանյակներ, որոնց միջոցով քահանաները կվերցնեն տապանակը:

Նաև՝ Քրիստոսի չորս Ավետարանները աշխարհի չորս կողմերում, որոնցով սուրբ Եկեղեցին արժանապես կրում է Հիսուս Քրիստոսին, ինչպես որ քահանաները՝ տապանակը:

Եվ ինչպես մի թագավոր հույժ մեծարեց չորս թիվն ու քառյակ կոչեց այն, որովհետև տեսավ, որ չորսն են տարերքները, և չորսն են առաքինությունները, որոնք ունի մարդը, և նրա աշակերտները չորս տարրերի վրա երդվեցին: Եվ Հակոբ նահապետը իր չորրորդ որդուն տվեց Աստուծո օրհնությունը և անճառելի խորհուրդը, որ Քրիստոսով էր ամբողջանալու, քանզի ասաց. «Ռուբե՛ն, իմ զորությո՛ւն և առաջնե՛կ իմ որդիների, ջրի նման մի՛ եռա երկրի վրա, որովհետև պղծեցիր քո հոր անկողինը: Ղևիին և Շմավոնին չընդունեց իմ անձը, որովհետև չար էր նրանց բարկությունն ու ցասումը, որ ջարդեցին սիկիմացիներին»: Գալով չորրորդին՝ ասում է. «Հուդա՛, քեզ կօրհնեն քո եղբայրները. բազմեցիր և ընջեցիր, ինչպես առյուծն ու առյուծի կորյունը»[2], *իսկ մնացածին նորոգի՛ր քեզ հետ, և ճշմարտապես կկատարվի Քրիստոսով:*

Նաև՝ չորսն են առաքինությունները, որ Աստված սահմանեց մարդու համար, երբ ստեղծեց նրան, որոնք են՝ խոհականությունը, որը բանական [ոլորտինն] է, արիությունը, որը սրտմտական [ոլորտինն] է, ողջախոհությունը, որը ցանկական [ոլորտինն][3] *է, նաև՝ արդարությունը: Իսկ այս գոհացողական է, որը բանականն է մեր մեջ, որպեսզի բանականությամբ անդադար հրեշտակներին հավասար օրհնաբանենք մեր Արարչին և չբամբասենք, չխեղկատակենք, որպեսզի այլ բան չգա բանականության հետ, ինչպես չար պղծախոսությունը:*

Եվ արիության գործն է, որ քաջապես և արիաբար ջանանք բարի գործերում, որը հաճելի է Աստծուն, և մեծ պատերազմով բարկանանք օձի ու մեղքերի վրա և ոչ թե՝ մեր եղբայրների: Բարկությունը դռնապահ դարձնենք չարիքի և մեղքերի դեմ, ինչպես շունը, որը պահում է իր տիրոջ ունեցվածքը: Իսկ ցանկականի գործն է, որ միշտ ցանկանանք Աստծուն և Նրա բարիքները և մեր բոլոր խորհուրդներն ու գործերը ուղղենք վեր՝ դեպի աստվածայինը և անախտ կյանքը: Եվ չցանկանանք ո՛չ աշխարհը, ո՛չ էլ մարմնի ախտերը, որովհետև դրանք սիրողները ոչինչ չշահեցին:

Եվ արդարության գործն է, որ արդար կշռով մեզ առաջնորդի դեպի բարին, որովհետև կառապանը, որ կողմ կամենում է, ուղղում է կառքի սանձերը: Նմանապես էլ արդարությունը ղեկավարում է խոհականին, արիականին ու ցանկականին և միշտ նրանց ընթացքն ուղղում է վեր՝ դեպի աստվածայինը, և թույլ չի տալիս խոտորվել մեղքերում:

Եվ այսպես, Ադամը դրախտում զարդարված էր չորս առաքինություններով, և նա Աստուծո կառքն էր ու հանդիստը: Իսկ երբ խախտեց և Աստուծո հրամանները չպահեց, չար վիշապ-սատանայի կառքն ու բնակարանը դարձավ: Մինչև որ աշխարհ եկավ նախկին կառավար Աստված և մարդուն վերադարձրեց առաջին պատիվը: Որովհետև չորրորդ դարում Աբրահամին Իսահակի մասին ավետիս տրվեց, որն ամբողջացավ Քրիստոսով: Քանզի անմատույց և մշտնջենավոր Լույսը հավաքվելով՝ ծածկվեց Մարիամ Աստվածածնի սուրբ և մաքուր արգանդում: Եվ այնտեղից առ մեզ ծագեց Աստված՝ մեր երեսաց Լույսը:

[2] Ծննդ. ԽԹ 3-9

[3] Գրաբար տեքստում բացթողում կա. բացակայում է ցանկական ոլորտի առաքինությունը:

Ինչպես նաև արարչության չորրորդ օրը երեք օրերի լույսը, որ ցիր ու ցան էր, Աստուծո հրամանով հավաքվեց և կոչվեց արեգակ, լուսին ու աստղեր:

Նաև հինգ թիվ է հույժ խորհրդավոր. այն խորհրդանշում է մարդկանց հինգ զգայարանները, որոնք են՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք և շոշափելիք, և մեզ խրատում նրանցով գործել միշտ բարին: Նրանց գործունեությունը հետևյալն է:

Տեսանելիքով նայել արարածներին և օրհնել Արարչին, զվարճանալ ու զարմանալ Արարչի մեծագործության վրա, երբ նայում ենք երկնքի լուսատուներին, պտղատու զանազան ծառերին, գեղեցիկ ծաղիկներին, անթիվ կենդանիներին ու մարդկանց գեղեցիկ դեմքերին: Եվ պետք չէ նայել արատով, աղտեղությամբ, նախանձով կամ չարակնությամբ:

Լսելիքով հոժարակամ լսել Աստուծո հրամանները և հավանել Նրա օրենքները, ընդունել Նրա խրատները, որոնք վերաբերում են արքայությանը, դժոխքին, բարի և չար գործերին: Եվ մեր լսելիքը չտրամադրենք չար խոսքերին, բամբասանքին, խեղկատակությանը, աղտեղություններին ու դուսանական երգերին, որոնք դևերի կոչնակներն են և ցանկասեր ախտերի գրգռողները:

Հոտոտելիքով զգալ հանդերձյալ կյանքի բուրմունքն ու Աստուծո օրենքների համը և բարին հոտոտել, ինչպես աշակերտները Թաբոր լեռան վրա հոտոտեցին անմահական և աստվածային բուրմունքը: Եվ արժան չէ հոտոտել իգական մահացու խորհուրդների ու զանազան մեղքերի չար հոտը, որոնք թունավորում են մեզ ու դարձնում դժոխքի ժառանգ:

Ճաշակելիքով մանրամասն ճաշակել, քննել և միշտ պարզաբանել Աստուծո հրամաններն ու օրենքները և կոկորդում հոգոց հանել Աստուծո խոսքի պարարտության համեղությունից, ըստ Գրքի, որն ասում է. «Քո խոսքերը ավելի քաղցր են, քան մեղրը, որ հասնում է մարմնիս քիմքին ու կոկորդին»[4]: Եվ դարձյալ՝ «Ինչպես մարմնական ճաշակելիքս ուրախանում է ճարպի պարարտություններից, այնպես էլ Քո պատվիրաններից պարարտացան հոգուս քիմքն ու ճաշակելիքը, և իմ շուրթերը ցնծացին ու բանական հոգուս միջոցով օրհնաբանեցին Քեզ, Աստվա՛ծ»[5]:

Ճաշակելիքով պետք չէ պարարտացնել որովայնը և բազմածախ և անուշահամ կերակուրներով պոռնկացնել ճաշակելիքը, ավելի հեշտացնել ու թշնամի դառնալ Քրիստոսի Խաչին՝ ըստ առաքյալի հրամանի:

Շոշափելիքով, որը մեր ձեռքերն են, վաստակել և ողորմություն տալ՝ դանձել Աստուծո մոտ, և ըստ մարգարեի՝ ձեռքերը վեր բարձրացնելով՝ աղոթել Աստծուն և աղաչել, որ ազատի մեզ անչեջ հրից[6]: Մեր ձեռքերը չմեկնենք գողության, զրկելու, հարվածելու, սպանելու և մարմնի փափկություն շոշափելու, որ բոլոր աղտեղությունների դուռն է:

Եվ սրանք մեր հինգ պատուհաններն են, որոնցով մեր մեջ մտնում են բարին ու չարը, որոնց ընդունում ենք կամովին: Եվ սրանցով սողոսկելով՝ ներս է մտնում անիծյալ օձն ու առաջին գողը և զրկում մեզ աստվածային դանձից: Հիրավի մեր Տերը առակով մեղավորների բոլոր դասերին նմանեցրեց հինգ հիմար կույսերին, իսկ բոլոր ընտրյալ արդարների դասերին՝ հինգ իմաստուն կույսերին, որովհետև մարդկային հինգ զգայարաններով են գործվում չարն ու բարին: Ինչպես նաև հինգն [են այն] քաղաքները, որոնք Սոդոմի հետ այրվեցին հրով, սակայն մնում է նրանց չար հիշատակը: Նաև՝ հինգերորդ դարում Մովսեսը ժողովրդին անցկացրեց ծովը, տվեց մանանան և այլն: Նաև Հեսուն անցավ Հորդանանն ու

[4] Սաղմ. ՃԺԸ 103

[5] Սաղմ. ԿԲ 6

[6] Սաղմ. ԻԵ 2

տապալեց Երիքովը հիմն ի վեր: Եվ հինգշաբթի օրը մեր Տեր Հիսուս Քրիստոսը, աստվածացած մարմնով խոնարհվելով, Վերնատանը լվաց աշակերտների ոտքերը, որոնք բարձրացան, թռան երկինք և մտան Վերին Երուսաղեմ: Եվ այսպես բարի է հինգ թիվը, ինչպես արարչության հինգերորդ օրը, որի ընթացքում Աստուծո հրամանով ստեղծվեցին ծովի անքանակ ձկներն ու մեծամեծ կետերը: Եվ նույն ծովից անթիվ ու անհամար ձկներ թռան ու բարձրացան երկինք ու զարդարեցին այն:

Վեց թիվը նույնպես ցանկալի է և գեղեցկազարդ: Իր մեջ պարփակում է հանճարի խոսքը, որովհետև կատարյալ է և անդրադառնում ու կրկնում է ինքն իրեն լավագույն մասերով, որն ունի: Որովհետև եթե վեցը բաժանես երեք մասի, զույգ կդառնա՝ երկու-երկու, իսկ եթե երկու մասի բաժանես, երկու երեք կդառնա, որոնք հույժ խորհրդավոր թվեր են, ինչպես նշեցինք վերևում երկու և երեք թվերի մասին [խոսելիս]:

Իսկ երբ վեցը կրկնապատկես, կդառնա տասներկու, որը ցույց է տալիս հրեշտակների տասներկու գնդերը, որի մասին Տերն ասաց Պետրոսին, նաև՝ երկնքի տասներկու կենդանակերպերը և տասներկու ժամերը, որ ամբողջացնում են ցերեկն ու գիշերը, և տասներկու ամիսները, որոնք բովանդակում են ողջ տարին, և տասներկու մեծամեծ անդամները, որոնք մարդուն մարդ են ներկայացնում, նաև՝ տասներկու որդիները Հակոբ նահապետի և Զաղիմի տասներկու աղբյուրները, որոնք քաղցրացան Իսրայելում, և Ահարոնի վակասի տասներկու ակնաքարերը և տասներկու քարերը, որոնք Հեսուն վերցրեց Հորդանանից, և տասներկուսը, որ դրեց Հորդանանի հատակին. և տասներկու եղները, որ Սողոմոնի տաճարում էին, տասներկու առաքյալներին ու տասներկու մարգարեներին:

Նաև Սուրբ Երրորդության անունների տառերի քանակը տասներկուս է, և է այսպես՝ Հայր, Որդի, Հոգի:

Թե որքան խորհրդավոր է վեց թիվը, սովորի՛ր մեր ծնունդից, որովհետև երբ կինը տղամարդուց հղիանում է, երեք օրում սերմը որովայնում դառնում է արյուն, իսկ վեցերորդ օրը արյունից ծնվում է որդը՝ ըստ Դավիթ մարգարեի, որն ասում է. «Ես որդ եմ և ոչ թե մարդ»[7]: Եվ որովայնում քիչ-քիչ աճում է որդը, և ծլում են մարդու անդամները, իսկ քառասուներորդ օրը արու մանուկը կատարյալ է դառնում և ստանում է բանական հոգին: Նաև էգ մանուկն է այսպես լինում, ինչպես ասացինք, սակայն երկու քառասունքում: Քանի որ արու մանուկը ստեղծվում է աջ կողմում՝ լյարդի տակ, և լյարդի ջերմությունից անդամներով ամբողջանում է ավելի շուտ՝ քառասուներորդ օրը, և նույն օրն էլ առնում է բանական հոգին: Եվ նա, ով սրանից հետո որևէ հնարով սպանի մանկանը և վիժեցնի որովայնից, կատարյալ մարդասպան է: Որովհետև գրված է. «Միապես դատաստանի կգան քառասնամյա կատարյալ տղամարդն ու քառասնօրյա ստեղծվածը, որ վիժեցվեց, որովհետև միապես ունեն բանական հոգին»:

Իսկ էգ մանուկը ստեղծվում է ձախ կողմում՝ փայծաղի տակ, և փայծաղի հով սառնությունից նրա ստեղծումը երկարաձգվում է մինչև երկու քառասունք, և ապա ամբողջանում է և բանական հոգի է վերցնում:

Նաև՝ ոչ ավել, ոչ պակաս, այլ վեց է մարդկային շարժումը: Այսպես՝ դեպի վեր և դեպի վար, աջ ու ձախ, առաջ և ետ: Աստված մեզնից պահանջում է, որ այս վեց շարժումներն անարատ, ըստ Իր կամքի պահենք: Չհպարտանալ դեպի վեր բանսարկուի նման և ամբարտավան լինելով՝ կործանվել դեպի անդունդները, ինչպես նա: Նաև վայր չընկնել, դառնագույն մեղքերով չկործանվել և չիջնել սանդարամետները:

[7] Սաղմ. ԻԱ 7

Զխոտորվել աջ՝ բարի գործը ի ցույց դնելով մարդկանց առաջ, և կամ գովեստից հպարտանալ և զրկվել վաստակնե-րից:

Եվ չխոտորվել ձախ, երբեք ծուլությամբ անհոգ չմնալ, չհեռանալ բոլոր բարիքներից և չշաղախվել մարմնի ցանկու-թյունների և աշխարհային սիրո հետ:

Առաջ չխոտորվել, այսինքն՝ պետք չէ [կարողությունից] ավելի ջանալ առաքինության համար և սկսել այն, ինչը չես կարող գլուխ բերել: Մի՛ քննիր Աստուծո մասին ավե-լի, որոնք գրված չեն հոգևոր գրքերում: Եվ կամ առավել ջերմանալ և խղճմտությամբ զղջալ և սկիզբ դնել սաստիկ ապաշխարության, որը չես կարող տանել ու դիմանալ: Այլ ամեն կերպ ջանալով՝ արժանի է գնալ միջին ճանապարհով:

Եվ ետ չխոտորվել, այսինքն՝ {չլինի թե} բնավ չփութալ բարի գործեր անելու, այլ «Աստված ողորմած է» ասելով՝ ծու-լանալ և կամ ամենևին չընթանալ [պատվիրանապահությամբ] և չխորհել Աստուծո առաջին ու վերջին Գալստյան մասին:

Աստված մարմնով ծնվեց Կույսից վեցերորդ դարում և վեցերորդ օրը հարություն տվեց արդեն մարմնով հոտած Ղազարոսին՝ որպես օրինակ Ադամի և նրա սերունդների, որովհետև չար սատանան դեպի իրեն գրավեց մարդկանց վեց շարժումներն ու չարաչար մեղքերով պահում էր իր ըստ իր կամքի:

Եվ բարի է վեց թիվը, կարգավորված ու կատարյալ բա-րի՝ մասերով ու խորհուրդներով, ինչպես վեց օրյա արարչու-թյունը, որի ընթացքում Աստված ստեղծեց մարդուն, նրան դրեց դրախտում, և որի ընթացքում ձևավորվեցին երկինքն ու երկիրը: Քանի որ Ադամին տեր և թագավոր կարգեց դրախտում, դրա համար ուրբաթը ասվում է կազմություն, որովհետև հինգ օրվա գործը նրանով կազմվեց, որովհետև Աստված ամեն ինչ մարդու համար ստեղծեց: Եվ մարդը չէր

երևում և ստեղծված չէր, որ տեսներ արարածներին կամ գոր-ծեր և պատրաստեր և վայելեր նրանց, ինչպես եղավ հետո:

Նաև յոթը շատ ցանկալի թիվ է, գերակատար սուրբ Ավազան և առավելապես բարձրագույն է, որովհետև յոթը նման է անմայր միակի: Սա չի ծնվում որևէ թվից, և ոչ էլ այլ թիվ՝ իրենից:

Յոթ թիվը անսպառ ու անհասանելի մեկնեցին նախնի-ները: Նրանք այլաբանորեն իմաստությունն Աթենաս կոչե-ցին, որովհետև իբր թե Աթենասի ուղեղի միջից են գտել յոթ թիվը, երբ տապարով մեջտեղից կիսել են այն: Իբր այն դուրս է եկել Աթենասի (որն իմաստությունն է) ուղեղից:

Խոսքիս իմաստն այն է, որ մարդիկ մեծ չարչարանքով ու տառապանքով գտան իմաստությունը և վերցրեցին Աստ-ծուց: Եվ չկարողացան հասնել Աստծուն, քանի որ իմացան Աստծուն, բայց իբրև Աստված չփառավորեցին Նրան, այլ նանիր խորհեցին ու աստվածացրին արարածներին՝ ըստ առաքյալի, և առաջին օձի նման երկրի վրա սողացին[8]:

Նաև՝ յոթն էին Ադամի շնորհները, որոնք կորցրեց մեղ-քով: Յոթն էին Կայենի հանցանքները, յոթ էին նաև նրա պատիժները: Եվ Ադամից հետո յոթներորդը՝ Ենովքը, կեն-դանի մարմնով երկինք բարձրացավ:

Յոթն էին աշտանակները, և յոթն էին ճրագների բերան-ները:

Յոթ օր էր քավությունը, և յոթ օր՝ հանգիստը, և յոթի այլ անհամար խորհուրդներ, որոնք կան օրենքներում:

Ըստ Եսայու խոսքի՝ յոթ են հոգու զորությունները, որ մեզ համար ընդունեց ոչ մի բանի կարիք չունեցող Հիսուս և մեր մեջ բնակվեց:

Յոթ դար է աշխարհի կյանքը, որն այլևս չի աճի և չի բազմանա: Դրա համար իմաստունը գրում է. «Բաժի՛ն տուր յոթ

[8] Հռոմ. Ա 25

կյանքերին, նաև ութին»[9]: Այսինքն՝ աշխարհից վերցրո՛ւ մարմնիդ պետքերը և մարմնիդ անհրաժեշտ պետքերից ավելի մի՛ ձգտիր կերակուրի, ըմպելիքի, հանդերձի և արծաթի: Մերձեցի՛ր կնոջդ, բայց միայն որդեծնության համար, պարկեշտությամբ ու արդար անկողինով: Ոչ էլ ձգտիր թանկարժեք զգեստի ու կերակուրի, որ չհրամայեց Աստված, որը մարդիկ մեծ ջանքով և չարագյուտ արվեստով գտան: Վավաշոտ աղտեղությամբ մի՛ վարվիր կանանց հետ՝ լրբանալով շնությամբ, որը աստվածային սուրբ Կտակարանները նախատում են: Քանզի յոթն են չարիքները մեր թշնամու հոգում: Այսինքն՝ անսահման չարիքն իր մեջ ունի նաև յոթ զորություններ, որոնք բոլոր յոթ դարերի ընթացքում կամենում ու ջանում է սերմանել Ադամի որդիների հոգիներում և մտքերում: Իսկ մենք պարկեշտ լինենք և չմոռանանք ութերորդ դարը, որը հավիտենական կյանքի մուտքն է:

Եվ ահա՛ ավարտվեցին յոթ դարերը և տարան կանգնեցրին մեզ հանդերձյալ կյանքի դռան առաջ:

Բայց նաև արժան է իմանալ, որ այժմ մենք, թեպետ գիտենք Աստծուն ու Նրա կամքը, բայց բազմակերպ մեղքերով միշտ վշտացնում ենք Նրան: Դե տե՛ս, թե որքան են տրտմեցնում կամ հայհոյում Նրան հերձվածողներն ու անույս մեղավորները, անտանելի չարագործներն ու անհավատները, որոնք բնավ չճանաչեցին Աստծուն:

Յոթերորդ դարից հետո հարություն կլինի, և ամեն ոք ըստ իր վաստակի հարություն կառնի: Կդադարեն մարմնական խորհուրդներն ու աշխարհի գործերը, կվերանան մեղքն ու մահը: Եվ Աստված կհանգստանա յոթերորդ դարի լրմանը և այլևս չի տրտմի մեղքերի պատճառով, այլևս չի ստեղծի ու չի աճեցնի, որովհետև կավարտվեն այս աշխարհի գործերն ու սատանայի չարիքը, որն այժմ գործել է տալիս մարդկանց:

[9] Ժող. ԺԱ 2

Այսչափ մեծ ու հրաշագարդ է յոթ թվի խորհուրդը, նաև ցույց է տալիս այն, որ ասվում է յոթ օրվա արարչության մասին. *«Աստված Իր բոլոր գործերից հանգստացավ այդ օրը, երբ շաբաթ էր»*[10]: Քանզի շաբաթը թարգմանվում է հանգիստ:

Իսկ ութ թիվը հույժ ցանկալի է բոլոր սուրբերին, որովհետև ութերորդ դարի առաջին մուտքով կպսակվեն արդարները, իսկ մեղավորները տանջանքների կարժանանան:

Ապա հիրավի օրենքը հրամայում է ծնված մանկանը թլպատել ութերորդ օրը, որպեսզի մարմնի ծայրից ավելորդ մաշկը կտրելով՝ հեռացնեն, որովհետև ութերորդ դար մտնելիս կլինի դատաստանը և արդարների ու մեղավորների բաժանումը և կտրումը. մեղավորները մեռած մաշկի նման կկտրվեն արդարներից ու կբաժանվեն, աստվածային խոսքով կթլպատվեն և նրանց կասվի. *«Հեռացե՛ք Ինձնից»*, և այլն:

Ինը թիվը ցուցանում է անմարմինների ինը դասերը, որոնք անդադար փառաբանում են Աստծուն: Նրանց միանում են արդարների երամներն ու սերովբեների հետ ուրախալի ձայնով երգում անվախճան հարսանիքում և անճառելի ցնծության մեջ:

Տասը թիվը ավարտն է թվերի և նրանց գլխավորն ու թագավորը, այն ցույց է տալիս Աստվածությունը՝ Տեր և Թագավոր ամենայնի և Գլուխ: Եվ Նա՝ բոլորի Արարիչ Սուրբ և Համագո անբաժանելի Երրորդությունը, բազմած է անձեռակերտ աթոռին՝ ավելի վեր, քան երկինքների երկինքը՝ ինը դասերի գագաթին՝ անմահ երկնավոր անմարմին զվարթունների զորքերի անմատույց լույսում ու անմերձենալի խորանում, որն անտեսանելի է արարածներին:

Եվ դարձյալ՝ տասը թիվը ցուցանում է Ադամից հետո տասներորդին՝ Նոյին, որն աշխարհի երկրորդ հայրն է, նաև՝ Աբրահամի տասը փորձանքները, Եգիպտոսում [կրած] տասը

[10] Ծննդ. Բ 2

պատիժները, Աստուծո տասը պատվիրանները, որ տրվեցին Մովսեսին, Աստուծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի տասը երանիները Ավետարանում (մեկը Դավիթ մարգարեինն է՝ Քրիստոսի մարմնավոր հորը) և մարմնի տասը զգայարանները, հինգը՝ հոգու, հինգը՝ մարմնի:

Նաև տե՛ս տասերի անվախճան խորհրդի մեծությունը, որ երբ տասը բազմապատկում ես տասով, ստանում ես հարյուր կատարյալ թիվը, եթե հարյուրն ես բազմապատկում տասով, ստանում ես հազար, և եթե հազարը բազմապատկում ես, ստացվում է բյուր: Ապա անհատնում և անհաշիվ բարձրանում է մինչև հազարների հազարը և բյուրերի բյուրը: Սա առավել մեծ խորհուրդ ունի, որովհետև բացահայտում է Աստծուն օրհնաբանող հոգեղենների, հողեղենների, հրեղենների ու լուսեղենների անթիվ և անեզր բազմությունը՝ ըստ մեծն Դանիելի, որն ասում է. «Տեսնում էի, և ահա՛ նստեց Հինավուրցը, իսկ անթիվ հազարներ կային Նրա շուրջը, և անսահման բյուր բյուրեր պաշտում էին Նրան»[1]:

Եվ արդ, ճառիս խորհուրդը անմոռաց պահենք մեր աչքերի առջև ամեն ժամ և հեռանալով՝ փախչենք աշխարհի բոլոր մեղքերից ու մարմնական ցանկություններից: Միշտ բարին գործենք և երանական կյանքն ակնկալենք: Եվ որչափ որ կենդանի ենք մարմնով, հավատով և հույսով կապվենք մեր հույս Հիսուս Քրիստոսին, որպեսզի աշխարհից դուրս գալուց հետո արժանավոր լինենք դասվելու անմահ սուրբ հրեշտակների զորքերի հետ, որոնք օգնեցին մեզ՝ հասնելու ճառիս խորհրդին Հիսուս Քրիստոսի շնորհներով. և նրանց հետ անլռելի ձայնով Աստուծո անճառ և լուսավոր առաքաստում օրհնաբանելու, գովելու ու փառավորելու Համագո և Ամենասուրբ անբաժանելի Երրորդությանն այժմ և հավետ և անսպառ ժամանակներում, որը պիտի գա, հավիտյանս հավիտենից. ամեն:

[1] Դան. է 9-11

ԻԱ. Աստուծո Որդու՝ երկնքի ամպերով փառավոր գալստյան, նրա ահեղ և անաչառ Դատաստանի և աշխարհի վախճանի մասին

Քանզի մի փոքր ծանոթացանք մեղքերի ու անօրենությունների տեսակներին, թե որտեղից սկսվեցին կամ ինչպես են կործանում մարդկանց, նաև տասը թվերի (որ կատարյալ են) խորհուրդների իմաստներին, կրկին ուշադրությունդ բե՛ր, ո՛վ վսեմախոհ և քրիստոսասեր իշխան, կապի՛ր աստվածային Գրքերի խոսքերին, որպեսզի ըստ մեր կարողության քննենք անճառելի Գալուստը, ահագդու և անաչառ Դատաստանը, որը վերջին գիշերը լինելու է Երուսաղեմում, և որն սպասում է բոլորին: Նրան քաջ հմուտ ու ծանոթ են Ադամի ողջ սերունդները՝ մեծերն ու փոքրերը, քարոզում և միշտ ակնկալում են տեսնել այն: Ընտրյալ արդարները անձկությամբ փափագում են Նրա Գալուստը, որպեսզի վայելեն Նրա բարի խոստումները, իսկ անզեղջ մեղավորները, երբ հիշում են այն, նախատելով պարսավում են, որովհետև գիտեն, որ տանջվելու են Նրա հայտնվելու Օրը:

Մեր Տերը Իր Գալստյան նշանն հայտնեց ու ասաց. «Կտեսնեք Մարդու Որդուն զորությամբ ու բազում փառքով երկնքի ամպերի վրայով գալիս»[2]: Աստուծո՝ Կույսից մարմնանալուց հինգ հարյուր տարի առաջ մեծն Դանիելը Բաբելոնում տեսավ Նրա վերջին ահեղ Գալուստը և ասաց. «Տեսնում էի, և ահա՛ դրվեցին աթոռներ, և բազմեց Հինավուրցը»[3]: Նաև՝ «Տեսա, ահա՛ գալիս էր երկնքի ամպերի վրա, ինչպես Մարդու Որդին, և հարություն առան մեռելները երկրի հողից»[4]:

Տեսնո՞ւմ ես ստույգ մարգարեությունը, թե ինչ զարմանալի է, որովհետև նույն մարմնով, որը Քրիստոսն առավ

[2] Մատթ. ԻԴ 30

[3] Դան. է 9

[4] Դան. է 13

սուրբ Կույսից, չարչարվեց և մեռավ, հարություն առավ և համբարձվեց, նրանով էլ գալու է երկնքի ամպերով, հայրական անճառելի փառքով և անմարմինների անթիվ զորքերով, որ նույնիսկ երկինքը թափուր կմնա անբավելի լուսեղեն դասերից: Եվ կգա ամպերով, որովհետև Աստուծո սովորությունն է ամեն տեղ երևալ ամպով: Նայի՛ր երկրավոր ամպին, որ գոյանում է օդից, երևում է Աստուծո հրամանով և դարձյալ ծածկվում: Հույժ ցանկալի է այն գարնանը, երբ բարձանում է լեռներից վեր, երբեմն էլ ուժգին փայլում ճառագայթակերպ արեգակի լույսից, երբ դեզ-դեզ կուտակվում են իրար վրա և հեռաստանից երևում բլուր-բլուր, մեկը մյուսի վրա գալով՝ խտանում և թանձրախիտ ծառացած երևում իբրև բամբակների կույտեր՝ ավելի սպիտակագույն, քան ձյունը, որը խաղտում է իրենց նայող մարդկանց միտքն ու աչքը: Արդ, եթե այս առարկայական ամպն այսպես հույժ ցանկալի է ու զարմանալի, ապա տե՛ս, թե այն, որ աստվածային ամպ է և Աստուծո լույսով է պայծառացած՝ յոթնապատիկ զարդարված հրակերպ ջահավոր լույսով, ինչպես արեգակ Աստուծո բոցեղեն զորքերի մեջ, որքա՜ն ցանկալի և անճառելի է նրա խորհուրդը հողեղեններին: Դրա համար Աստված ամպի մեջ երևաց Մովսեսին և ամպի մեջ խոսեց Հոբի հետ, և այն լուսավոր և զարմանալի ամպն էր, որ ցույց տվեց Թաբոր լեռան վրա: Նույն ամպով համբարձվեց և նրանով էլ գալու է երկնքով: Եվ ի պատիվ արդարների՝ գերազանց լույսով լցված նույն ամպը կտա նրանց վերջին Օրը, որի վրա կբազմեն ընտրյալ արդարներն ու կբարձրանան հանդիպելու Քրիստոսին՝ ըստ առաքելական խոսքի: Այդ նույն ամպի մեջ անպատմելի և զարմանալի փառքով բազմած՝ կերևա Տերը: Նրան կշրջապատեն բոլոր երկնային զորքերն անհամար հազարներով և անթիվ բյուրերով, որոնք քաղցր ձայներգությամբ կգեղգեղան Աստուծո օրհնաբանություններ: Եվ կդղրդան աշխարհի հիմքերը նրանց ահագին գոչյունների ձայնից ըստ այնմ՝ «Կլսվեն հրեշտակապետների ձայները»: Եվ արդ, ի՞նչ միտք կարող է բովանդակել, և կամ ո՞ր լեզուն [կարող է] ճառել Աստուծո Որդու անհաս, ահեղահրաշ, սոսկալի ու սարսափելի Գալստյան մասին: Քանզի մարդ սոսկում և զարմանում է, երբ թագավոր է գալիս մեծ ու հոյակապ քաղաք. նախապես զարդարում են քաղաքի արտաքինն ու փողոցները, իսկ հետո մարդկանց բազմությունը դուրս է գալիս դիմավորելու թագավորին՝ շարքեր կազմած, զանազան երգերով, փողերի, սրինգների և այլ գործիքների ձայներով, նաև մարդկանց գոչման աղաղակներով: Խնջույք, ճայթյուններ, բազում դղրդոցներ և թագավորի թիկնապահ զորքերի որոտող ձայներ: Եվ այդ պահին արեգակի ճառագայթները պայծառ աստղերի պես երփներանգ փայլեցնում են սաղավարտները, զրահները, երկրային սրերն ու նիզակի տեգերը, ոսկեզօծ ու արծաթազօծ պատմուճանները: Եվ այնքան ազդու է լինում հրաշալիքը, որ վախկոտ ու հիմար ռամիկները թմրում են հիացմունքից, իսկ երեխաները դողում և խիստ սարսափում են:

Արդ, եթե սուտն ու ոչինչը՝ աշխարհի փառքն ու մեծությունը, որ այսօր կա, իսկ վաղը չի երևալու, որը նման է սարդոստայնի, աղբի մեջ եռացող որդերի կամ քնի մեջ տեսած երազի, այսքա՜ն զարմանալի է թվում տեսնողներին, ապա տե՛ս և հասկացի՛ր, թե [ինչ կլինի], երբ հույժ պայծառակերպ երևան երկնավոր և անմահ թագավորությունը և Քրիստոս թագավորը՝ նստած լուսազարդ ու աստվածատեսակ ամպերի վրա: Նրա երեսի լույսից կհալվեն երկինքն ու երկիրը, ինչպես մոմը կրակի առաջ, արեգակից պայծառ անթիվ լուսեղեն զորքեր կլինեն նրա շուրջը, իսկ Հայրն ու Հոգին անսպառ և անսահման փառքով Նրա հետ բազմած կլինեն այն անձեռակերտ աթոռին, որոնց փառքի սաստկու-

թյունից կսարսեն երկնային զորքերը, կսոսկան ու կթաքնվեն սերովբեները, որովհետև չէին տեսել Աստուծո փառքը: Բայց սրանից է նրանց գոյությունը, այժմ էլ փառքերի լույսից դողում և ծածկում են իրենց երեսները: Տեսնելով, թե ինչպես են սարսում ու դողում բոլոր հրեշտակները, տե՛ս, թե հողեղենները ի՞նչ կկրեն այնժամ և կամ ի՞նչ կպատասխանեն:

Եվ ապա լույսի հրաբորբոք և ճառագայթաձև փայլից ու ահռելի որոտից կդողան լեռներն ու բլուրները և կհալվեն ու կհավասարվեն դաշտերին: Կշարժվեն անդունդներն աշխարհի հիմքերով հանդերձ, և կհնչի փողը, որը հրեշտակապետի ձայնն է, ու կասի. «Վե՛ր կացեք, ննջեցյալնե՛ր, որոնք Ադամից եք, ահա՛ գալիս է Նա, Ով ձեզ ստեղծեց»: Եվ Աստուծո զորությունը, որ ոչնչից ստեղծեց արարածներին,խառնվելով՝ կմիանա հրեշտակապետի ձայնին ու սլացիկ արագությամբ կանցնի մինչև անդունդները և կշարժի բոլոր ստեղծվածներին, ակնթարթային հրաշապես նորոգմամբ ստեղծելով՝ կկենսագործի մարդկանց հող դարձած մարմինները: Այն ժամանակ աշխարհից կլսվի առավել դառնագույն ձայն, որովհետև հասավ իր ծննդյան ժամանակը, նման կնոջ, որը հույժ սաստկագույն գոչում է ծննդաբերելու ժամանակ երկունքի ցավերից: Ապա Աստուծո ակնթարթային հրամանով երկիրը կծնի Ադամի որդիներին, և մարդկային ցեղը կհառնի հողից, ինչպես ծաղիկները գարնանը՝ զանազան գույներով՝ յուրաքանչյուրն իր արմատների վրա: Նմանապես էլ ամեն մարդ կդառնա ըստ իր արած գործերի: Եվ հրեղեն ծովը երկնքից, անդունդներից և ամեն կողմից հանկարծակի կծածկի բոլոր արարածներին ջրհեղեղի չափով, որը եղավ Նոյի ժամանակներում: Եվ հրեղեն ծովի մեջ կծածկվեն թե՛ արդարները, թե՛ մեղավորները: Եվ եթե արդարները փոքր-ինչ պակասություն ունենան, այն էլ հուրը կմաքրի՝ ըստ Տիրոջ հրամանի, որ ասում է. «Ամեն բան կրակով պիտի աղվի»[5]: Իսկ արդարները, ջրեղեն ծովի լույսն ու թեթևությունն առնելով, «կբարձրանան լուսեղեն խմբերով Քրիստոսին հանդիպելու»[6]՝ ըստ առաքելական խոսքի: Եվ հրեշտակները կընտրեն արդարներին և նրանց պատվով կբարձրացնեն ըստ Տիրոջ հրամանի՝ «Կհավաքվեն Նրա ընտրյալները»[7]:

[5] Մարկ. Թ 48

Եվ այն ժամանակ այնտեղ չի երևա ո՛չ հպարտ թագավորը, ո՛չ բարձրամիտ իշխանը, ո՛չ թագուհին՝ բազում ախտերի տիկինը, վավաշոտ ու հեշտասեր մարմնի սնուցողը, ո՛չ հպարտ և շահասեր առաջնորդը, որը ճեմում էր աստվածաբար, ո՛չ բարձրագահ գիտնականը՝ պերճացած տգետ ժողովրդի մեջ. չի ճանաչվի ո՛չ կին, ո՛չ տղամարդ, ո՛չ տեր և ո՛չ ծառա, այլ միայն արդարները կփայլեն առավել պայծառ, քան արեգակը՝ ըստ Փրկչի խոսքի:

Եկե՛ք քննենք, ո՛վ աստվածասեր, թե այդ ժամանակ ո՞ւր կլինեն վավաշոտ ու ախտասեր մարմնաբույծները, ո՞ւր կլինեն արբեցող և հիմարացած գինեմոլները, որոնք այժմ շվայտանում են զեխությամբ, և նրանք, որոնք կուռքի պես պաշտում են իրենց որովայնը, և նրանք, որոնք սիրում են գուսանական երգերն ու չար խնջույքները: Ու՞ր են այն ժամանակ աշխարհակալ, մեծամեծ ու փառավոր իշխանները, որոնք աստվածաբար վարվում էին իրենց կամքով: Ու՞ր են դյուցազուն և անվանի կայսրերը, հռչակավոր և բարձրագահ թագավորները, որոնք ավելի ծառայել ու պաշտել են տալիս իրենց անձերը, քան Աստծուն, Որն ստեղծեց իրենց: Արդ, այնտեղ չեն երևում, որևէ տեղ հայտնի չեն անուններ-ը, առաջ չեն բերում նրանց ու չեն մեծարում, չեն սարսում և դողում նրանցից, ինչպես այժմ:

Ու՞ր են ջահակալները, տիգավորներն ու սուսերավորները, որոնք նրանց առաջ են. բոլորը խափանվեցին, որովհետև

[6] Ա Թես. Դ 16

[7] Մատթ. ԻԴ 31

սուտ և ունայն երազների տեսիլք են և չեն հայտնվում ոչ մի տեղ: Եվ այս ինչպե՞ս եղավ: Որովհետև Տերը հրամայեց. «Այն ժամանակ կծագեն արդարներն ինչպես արեգակ Աստուծո արքայության մեջ»[8]: Իսկ հետո դուրս կգան անդունդներից հրեղեն վիշապները և, ինչպես ասացինք դժոխքի մասին ճառում, կշարժվեն հրամած ծովի մեջ, կլինեն մեծամեծ, ինչպես լեռները, և նրանց բերանից կրակի գետեր կհոսեն: Կշրջեն հրեղեն ծովում և կգտնեն այն մեղավորներին, որոնք ծնեցին նրանց իրենց իսկ դեճ ցանկությամբ և զղջմամբ չսատկացրին նրանց: Եվ կվերցնեն նրանց իրենց դառնատեսիլ ժանիքներով ու հույժ չարաչար կտանջեն նրանց հավիտյան, և նրանք մահ չունեն: Ըստ այն հոգեղեն գրքի, երբ ննջեցյալին դնում են գերեզման, քահանան նրա վրա կարդում է. «Քո ցանկությունն անցավ, որովհետև հող դարձար, բայց չի մեռնում որդը, որին ծնեցիր մեղքերով ու անօրեն ցանկություններով անշեջ հրի մեջ»:

Սրանից հետո գետի նման աշխարհից դուրս կելնի թանձրագույն, մրախառն, խավարային ու այրող հուրը՝ մեղավորներով ու հրեղեն վիշապներով հանդերձ՝ ըստ Փրկչի բարձրագույն հրամանի, որ ասում է. «Հանե՛ք նրանց արտաքին խավարը»[9]: Եվ ապա՝ ըստ Հովհաննես ավետարանչի աստվածային տեսիլքի. «Քրիստոսի հետ խաչված անդրանիկ կատարյալ սուրբերի հոգիները կկազմեն լուսավոր, մեծ, զարմանալի ու փառավոր աթոռ, որի վրա կբազմի Քրիստոս Դատավորը և նրանցով կդատի բոլոր արարածներին՝ ասելով. «Սրանք էլ ձեզ պես մարմնավոր կարիքների ներքո էին, սակայն դուք ինչո՞ւ չնմանվեցիք սրանց»:

Այս այն խոսքն է, որ հրամայում է մեր Տերը. «Կնստեք տասներկու աթոռների վրա՝ դատելու Իսրայելի տասներկու ցեղերին»[10]: Արդ,

[8] Մատթ. ԺԳ 43

[9] Մատթ. ԻԵ 30

[10] Ղուկ. ԻԲ 30

այսպես է նրանցով դատելու աշխարհը, որովհետև Քրիստոսն է միայն Դատավորը և ուրիշ ոչ մեկը՝ ո՛չ առաջին արդարներից և ո՛չ էլ վերջին ընտրյալներից:

Արդ, Հովհաննես ավետարանիչը տեսավ և ասաց Նոր Երուսաղեմի, Երկնավոր քաղաքի, Գառան Հարսի, արդարների հոգիների մասին, որոնք նորոգեցին իրենց անձերը ջերմ արտասուքով ու այլ առաքինություններով և դարձան Աստուծո բնակության քաղաք: Քանզի Աստված առավել ցնծալով բնակվում է արդարների հոգիներում, քան քերովբեական կառքում, որովհետև հարսնացան և սրբությամբ միացան Նրան: Եվ հույժ ահեղ փառքով Քրիստոս Դատավորը կբազմի զարմանագործ աթոռին՝ Գողգոթայի վրա, որտեղ խաչի [մահվամբ] անարգեցին Նրան: Եվ այն ժամանակ հողեղեններն ու հրեղենները կսարսափեն՝ դողալով Նրա առաջ: Եվ նրանք, ովքեր մեծ կամ փոքր մեղքերով դրվել էին գերեզման (որոնց Հովհաննես ավետարանիչը մեծ ու փոքր մեռյալ է կոչում)[11] նույնպես կհառնեն ու կկանգնեն Նրա առաջ սարսափելով: Եվ ամեն մարդ գիտուն վարդապետ կդառնա և կընթերցի իր [գործած] չարիքների ու բարիքների գիրն ըստ Գրքի, որ ասում է. «Նա ատյան նստեց, և գրքերը բացվեցին»[12]:

Այն ժամանակ կմիանան մարդն ու իր գործերը, և որևէ տեղից օգնական կամ բարեխոս չի լինի: Եվ անհավատներն ու անհույսները, խաչ բարձրացնողներն ու անզեղջ մեղավորները դառնապես կողբան ու լաց կլինեն այն տիեզերական հրապարակում, թաքնվելու տեղ կորոնեն ու չեն գտնի՝ ըստ ավետարանչի խոսքի: Քանզի բոլոր արարածները, որոնք երկինքներից էլ վեր են, որոնք անդունդներից էլ ներքև են, և նրանք, որոնք երկնքի ներքո են և երկնքից դուրս, առհասա-

[11] Հմմտ. Հայտն. Ի 12

[12] Դան. է 10

բակ բոլորը համեմի սերմի մի հատիկի նման կլինեն Աստուծո ամենատես աչքի առջև: Այս ամենը կկատարվի Երուսաղեմում, ուր չարչարեցին [Նրան], որպեսզի խաչ բարձրացնողները տեսնեն Նրա ահեղահրաշ ու զարմանալի փառքը: Եվ հերձվածողները, մյուս անդարձ մեղավորները, ինչպես նաև անհավատները, որոնք անարգում են Նրան, կամաչեն հավիտենական ամոթով և վայ կտան իրենց անձերին:

Եվ այն ժամանակ կտեսնեն Նրա տեգով խոցված կողը և բևեռների հետքերն ափերի մեջ ըստ գրվածի՝ «Կնայեն Նրան, Ում խոցեցին»[13]: Եվ նա, ով չար մեղքերով իր անունը ջնջեց Կյանքի Գրքից ու արտասուքով կրկին չնորոգեց գիրն ու անունը, կմտնի կրակե լիճը սատանայի հետ[14], ինչպես տեսավ Հովհաննես ավետարանիչը: Այդպես նաև այժմ է պատահում. զինվորներին աշխատավարձ կամ ռոճիկ տալու ժամանակ, ում անունը գրված չէ թագավորների և իշխանների գրքում, նրան աշխատավարձ չեն տալիս, որովհետև նրա անունը չգտնվեց թագավորի գրքում:

Ըստ մարգարեի. «Այն օրը մեղավորների համար չար գիշեր է, խավարամած ու մառախլապատ»[15] և նրանց մշտնջենավոր ողբի և սուգի սկիզբը: Իսկ արդարների համար այն օրը բարի է և գերազանց լույս, ինչպես նաև նրանց անճառ ու հավիտենական հանգստի սկիզբը: Մեղավորների դասերը մեծ ամոթով գլուխները խոնարհած [կկանգնեն], որովհետև կտեսնեն, որ անդունդներից հուրն ու հրեղեն որդը եռում են իրենց համար: Եվ կհոսեն հրեղեն գետերը, կհորդեն բոցեղեն հեղեղները, և կծավալվի ծովացած հուրը: Հույժ զարհուրելի ճայթյուններ ու դղրդյուններ, ամեն կողմից անսպառ փայլատակումներ ու անպատմելի հրաձգություններ, լուսեղեն զորքերի ձայներ, Դատավորի ահարկություն և այլ անպատմելի հրաշքներ կլինեն այնտեղ: Եվ այս տեսնելով՝ մեղավորները վայ կտան իրենց անձերին:

Իսկ ընտրյալ արդարների դասերը բարձրագլուխ ու համարձակ կկանգնեն մեծ պարծանքով, ցնծալից բերկրանքով, որովհետև կտեսնեն բացված առագաստը և իրենց համար պատրաստված հարսանիքը, նորոգված ու ճառագայթաձև փայլող անթառամ պսակը և իրենց դիմաց՝ քաղցրահայաց Թագավորին, լուսեղեն անմարմիններին՝ գովելիս ու փարվելիս իրենց, Փեսային՝ ուրախացած, խոստումը ձեռքին և լուսեղեն ամպը հարդարած: Նրանք կխայտան զանազան ուրախություններով, որովհետև Տերն ու Դատավորը արդարների դասերին ասում է. «Եկե՛ք, Իմ հավատարիմ զինվորնե՛ր, որ ատեցիք աշխարհը, սպանեցիք բոլոր ախտերը և ձեր մարմինը խաչեցիք: Արդ, ուրախությամբ մտե՛ք Իմ Հոր լուսեղեն առագաստը, տեսե՛ք Իմ անսահման փառքը և վայելե՛ք Իմ անսպառ հանգիստը»:

Բայց ինչպես կշեռքով, Դատավորը արդար կդատի յուրաքանչյուրին, մինչև [անգամ] խորհուրդներն ու խոսքերը, որոնք չի խոստովանել: Ըստ այնմ, որ ասում է. «Կդնեն արդարության կշեռքը»[16]: Իսկ Տերն ասում է. «Դատարկ խոսքերի համար հաշիվ եք տալու»[17], և՝ «Իմ դատաստանն արդար է»[18], և՝ «Այնտեղից դուրս չես գա, մինչև չվճարես վերջին գրոշը»[19], այսինքն՝ փոքր մեղքերինը, որոնց վճարը խոսքով է:

Աստուծո սիրելինե՛ր, Նրա անարատ Արյունով գնվածնե՛ր և Նրա ավետյաց ժառանգնե՛ր, տեսե՛ք և խորհեցե՛ք, որովհետև այս ահեղ դատաստանից ու տիեզերական զարմա-

[13] Հովհ. ԺԹ 34

[14] Հայտն. ԺԹ 20

[15] Հոբ Գ 4

[16] Հոբ ԼԱ 6

[17] Մատթ. ԺԲ 36

[18] . Հովհ. Ե 30

[19] Ղուկ. ԺԲ 59

նալի Ատյանից սոսկացին բոլոր սուրբերը և խաչ բարձրացրին իրենց անձերը: Ուստի, աղաչո՛ւմ եմ, ըստ մեր կարողության ջանանք նաև մենք և հույժ փախչենք աշխարհի սիրուց և մահվան ու դատաստանի Օրը միշտ պահենք մեր աչքերի առջև, ինչպես նաև մեծ ջանքով ու արագությամբ գործենք բոլոր առաքինությունները՝ ըստ Աստուծո կամքի, որպեսզի այստեղ ապրենք խաղաղությամբ, իսկ հանդերձյալում արժանավոր լինենք Աստուծո անճառելի բարիքներին բոլոր ընտրյալ արդարների երամների հետ, որոնք անդրանիկների դասերն են, մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ, Որին վայել է փառք, պատիվ և իշխանություն Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյաս հավիտենից. ամեն:

ԻԲ. Նեռի ծննդյան, գալիք դառը ժամանակների և նրա սատակման մասին

Եվ արդ, ըստ մեր տկարության չափավոր ճառեցինք Աստուծո Որդու Գալստյան և Նրա անաչառ դատաստանի մասին, որը լինելու է Երուսաղեմում: Դարձյալ ե՛կ և բե՛ր քո միտքը, ո՛վ քրիստոսասեր իշխան, որպեսզի սկսենք և քննենք աստվածային Գրքերը. սուրբերն Աստուծո Հոգով ավելի վաղ տեսան ու պատմեցին Նեռի չարությունների ու դառը ժամանակի նեղությունների մասին: Քանզի նաև մեծ շահ ու պարգև է մեզ և շատ օգուտ՝ նրանց, ովքեր դեռ պիտի գան աշխարհ, երբ բազում անգամ քննենք Նեռի մասին [ասվածը] և կրկին ու կրկին պարզենք նրա չարությունը, որպեսզի նախքան նրա գալուստը այն հայտնի լինի Ադամի սերունդներին, որ մարդիկ տգիտաբար չկորչեն: Այս պատճառով էլ Աստուծո կամքով Հոգին հայտնեց ընտրյալ

սուրբերին, և նրանք շատ բաներ խոսեցին ու գրեցին Նեռի պղծության մասին, որպեսզի [ամեն ոք], ով ծնվելով աշխարհ է գալիս, լսի նրա ամբարշտության մասին, լի բերանով ցավագին նզովքներ ու դառնագին անեծքներ արձակի նրա ետևից, նախատի նրա ծնունդն ու կորստյան որդի կոչի նրան, որովհետև չար է նրա հիշատակը մարդկանց հոգիներում: Եվ սատանան կմիանա նրա հոգուն. Աստվածաշունչ Գրքերը սատանայի որդի և մարմին են քարոզում նրան: Եվ արդ, նրա օրինակներն ու կարապետները բազում են աշխարհում ըստ առաքյալի խոսքի՝ «Նեռերը բազում են աշխարհում», որովհետև ամեն ոք, ով չի հավատա Հիսուս Քրիստոսին, ստուգապես Նեռ կկոչվի: Նաև ով մարդկանց չարաչար նեղություններ հասցնի, ճշմարտաբար Նեռ կկոչվի: Ինչպես այժմ քրիստոնյաներին տագնապով մեծ նեղություն են պատճառում Հագարի ու այլ ազգերի անօրեն որդիները, որոնք դիվախառն Մուհամեդի և նրա անիծված հոր՝ սատանայի աշակերտներն են:

Զրույցը պատմում է, թե Անտիոքոսն իր դժնյա ու չար բարքով նման էր Նեռին: Նաև պիղծ Հուլիանոսը հույժ նմանվեց նրան և վերցնելով՝ հաստատապես իրեն միացրեց նրա անունը, գործն ու հոգին:

Արդ, բազում սուրբեր շատ բան գրեցին Նեռի չար անօրենությունների մասին՝ հեռվից սկսելով և խոսքը դեպի նրան տանելով՝ ցույց տալու համար նրա դառնագույն պղծությունը:

Արդ, գրքերում գտանք սուրբերից մեկի ասածը. «Նեղության ժամանակ, երբ մոտ կլինի օրերի վախճանը, Կիլիկիայի Տավրոս լեռան մոտ Աստուծո հրամանով կնստի հայոց մի թագավոր՝ այրի կնոջ որդի: Նա կլինի իմաստուն այր, բայց ամենաաղքատ թագավորը, կհաղթի անօրեններին, և նրա համբավը ահարկու կլինի շրջակա բոլոր երկրների վրա, ուր

էլ որ հասնի: Նա կունենա գազանի անուն՝ Լևոն, այսինքն՝ առյուծ: Այդ ժամանակ քրիստոնյա ազգերը սաստիկ կնեղվեն անօրենների անբավ հարկերից ու անսահման զրկանքներից և, նրան ապավինելով, կփախչեն կգան նրա աշխարհը, կկուտակվեն այնտեղ և կբնակվեն նրա մոտ, որովհետև Աստված նրան տեղապահ կկարգի քրիստոնյաների վրա: Նրանք կվերականգնեն հին ժամանակների ավերակները և կկառուցվեն անառիկ պարիսպներով դղյակներ: Եվ Աստված ոչինչ չի պակասեցնի նրա աթոռից, մինչև հեթանոսների, այսինքն՝ անօրենների ժամանակի լրանալը: Եվ կբարձրանա արիական ազգը, և կվերցնեն հույների թագավորական քաղաք Բյուզանդիոնը, որը Կոստանդնուպոլիսն է, իսկ հետո՝ ժամանակը լրանալուն պես, կգրավեն նաև Երուսաղեմը»: Եվ այնպես մանրամասն և ճշգրիտ է պատմում մեր քրիստոսատեսակ թագավորների մասին, կարծես մեր ժամանակների մասին պատմի: Եվ՝ «Երբ արիական ցեղը գա, մեր երկրի զորքերը դուրս կգան ու կխառնվեն նրանց բանակին»: Ինձ թվում է՝ այս գերության մասին է ասում, թե Երուսաղեմը կազատեն ծառայությունից, և կգա բարի ժամանակը: Բայց միայն Աստծուն է հայտնի:

Եվ՝ «Անօրենները, ինչպես ծովի ավազ, կգան և կկուտակվեն ընդդեմ արիական ազգի, և կլինի շատ մեծ կոտորած, մինչև որ քրիստոնյա զորքերը հույները կկտրեն, բայց հետո Աստված հաղթություն կտա, և կկոտորեն անօրենների ու կճզմեն նրանց, ինչպես սատկած մորեխների բազմություն: Եվ ինչպես անօրենները նեղել ու գերել են քրիստոնյաներին պես-պես չարչարանքներով, յոթնապատիկ վրեժ կառնեն նրանցից՝ չարչարելով նրանց սովով, գերությամբ, հալածելով և ծառայեցնելով իրենց: Եվ Հայոց թագավոր կնստի Տրդատի ցեղից և կթագավորի երկար օրեր, կխաղաղանա երկիրն ու դրախտի պես ամենալից կլինի: Հավատքը կպայծառանա, և մարդիկ առանց չարչարանքի կգործեն արդարություն ու սրբություն: Եվ այն ժամանակ ճանապարհորդները գերեզմանների մոտով անցնելիս ձայն կտան ննջեցյալներին և կասեն. «Վա՜յ և շատ ավա՜ղ, որ չհասաք այս բարի ժամանակներին»: Բայց գրված է. «Հիսուն տարի չեն գա բարի օրեր»: Ասվում է նաև, թե առաջին տարին, երբ բարի թագավորը կկոտորի անօրեններին և կհալածի նրանց, Բյուզանդիոն գերի կտանի մի տարեկան Նեռին, որն էլ կդաստիարակվի այնտեղ, կսովորի կախարդություն և կմեծարվի թագավորներից՝ հաջողակ դարձած: Դարձյալ ասվում է, թե այս բարի թագավորը նրա մորը, որը լինում է Դանի ազգից, գերության է տարած լինում Հրեաստանից Բյուզանդիոն: Եվ մի ֆռանկ զինվոր, տեսնելով նրան, չար կրքոտ սիրով տոփում է նրա հետ և կնության է առնում նրան: Նա կույս է լինում, իսկ տղամարդը՝ կնատ, թույլ ու չեզոք և չի կարողանում ամուսնական գործով միավորվել կնոջ հետ: Սակայն երբ տղամարդը աղտեղանում է նրա հետ, կինը հղիանում է, բայց կույս է մնում, և ծնելու ժամանակ սրով պատռում են նրա որովայնը:

Խոսքիս վկա է սուրբ Գրիգորի թոռ սուրբ Ներսեսը, որն իր մարգարեության մեջ Նեռի մասին ասում է. «Նա կծնվի պիղծ կույսից ցերեկով, և նրա ծնվելուն պես կլինի սաստիկ երկրաշարժ, կդողան աշխարհի հիմքերը, կխավարեն արևն ու լուսինը, աշխարհի վրա և վերին եթերում կլսվեն վայի, ողբի և լացի ձայներ: Եվ նա ներսում որովայն չի ունենա, որով կերակուրը մտնի: Կլինի տղամարդ, և նրա կերակուրը կանանց կաթը կլինի, և բազում կանանցից կերակրվելով՝ կմեռցնի նրանց»: Ինձ թվում է՝ տեսնողն այս բանն այլաբանորեն է ասում Նեռի մասին և նմանեցնում է նրան անհաղ տգրուկ սատանային, որը նրա հայրն է, որովհետև նա ծծում է մարդկային ցեղի բոլոր աղտեղի գործերն ու բնավ

չի հագենում և չի ասում, թե՝ բավականացա: Կհասունանա և կմեծարվի թագավորների կողմից, և նրան զորավար կնշանակեն: Եվ կավարտվեն բարի ժամանակները, որովհետև լրացան կյանքի օրերը: Նաև լուսինը իր լրումին կհասնի և կավարտվի՝ ո՛չ կմաշվի և ո՛չ էլ կաճի ի պետս աշխարհի, որն Աստված սահմանել էր նրա համար: Եվ խաղաղությունն աշխարհից կսկսի վերանալ, ինչպես Դավիթ մարգարեն է գոչում Քրիստոսի գալստյան մասին. «Նրա օրոք արդարություն և խաղաղություն կտիրի, մինչև լուսնի վախճանը»[1]: Եվ այն ժամանակ առավել ևս կպակասի մարդկանց հավատքը, կվերանա իմաստությունը, կցամաքի սերը, և աշխարհում համարձակորեն կգործվի մեղքը: Եվ բոլոր արարածները սասանելով՝ կվրդովվեն, ջրի ու կերակուրի նվազություն կլինի: Եվ մարդիկ ուրախությամբ ու ցնծությամբ կամաց-կամաց սկիզբ կդնեն կռապաշտության. այս է չար թզենու ոստերի բողբոջումը և նրա պիղծ տերևների ցցվելը, որը Տերը, խաչի վրա չարչարվելով, ցամաքեցրեց: Եվ ըստ Հովհաննես ավետարանիչի տեսիլքի՝ «Աստուծո թույլտվությամբ, ինչպես անթիվ մորեխներ, անդունդներից դուրս կգան դևերը»[2] և ուժգին ու զորավոր մեղքերի պատերազմներով կխավարեցնեն մարդկանց որդիների հոգիներն ու մտքերը, որոնք անգամ Աստուծո անունը չեն կամենա լսել, որպեսզի համարձակ գործեն բոլոր մեղքերը, որովհետև սատանան կտեսնի, որ եկել հասել են իր կորստյան ժամանակները: Այն ժամանակ բացահայտ պատերազմի դուրս կգա մարդկանց որդիների հետ: Կհավաքի իր բոլոր չար իշխաններին, կկանչի շնական ու պիղծ ախտերի դևերին և երբ հավաքի նրանց, հանդես կգումարի և նոր պատերազմներ կսովորեցնի նրանց: Ողբալով լաց կլինի նրանց առաջ, վայ կտա իր անձին, կքաջալերի իր պիղծ զորքերին ու խավարասեր իշխաններին և

[1] Սաղմ. ՀԱ 7

[2] Հայտն. Թ 3

խոնարհված կաղաչի նրանց ու կասի. «Ահա՛, իմ որդինե՛ր ու ժառանգորդնե՛ր, չտապեցե՛ք դուրս գալ աշխարհ՝ մարդկանց մոտ, արիաբար ջանացե՛ք ծածուկ ու բացահայտ միջոցներով, խորտակեցե՛ք մարդկանց և հորդորեցե՛ք նրանց դեպի բոլոր մեղքերը և մեզ հետ միասին ժառանգակիցներ դարձրեք անշեջ հրի: Այ՛ս է վերջին մարտը, և ա՛յս է վերջին կռիվը, որովհետև ավարտվեց ժամանակը: Վա՛յ մեզ, որովհետև հարությունը կգա, և այլևս չենք կարողանա կործանել մարդկանց, որովհետև կվերանա մամնական կարիքն ու մեղքը: Արդ, Ադամի որդիներից շատերին կործանեցիք, բայց մեծ մասին չկարողացաք խափանել, որովհետև ծույլ էիք և արիաբար չպատերազմեցիք չար կռվի ժամանակ: Այժմ պաղատո՛ւմ եմ ձեզ, այդպես մի՛ ծուլացեք, այլ գործադրեցե՛ք բոլոր հնարները, մեքենայություններն ու ծածուկ սլաքները մարդկանց դեմ և կործանեցե՛ք մեղավորներին, որովհետև մեր ձեռքից գնաց աշխարհը, ու ամեն բան ավարտվեց: Մի՛ նեղեք մեր մտերիմներին և նրանց մեջ մի՛ հապաղեք, որովհետև անհավատները, հերձվածողներն ու անզեղջ մեղավորները, նաև նրանք, ովքեր կատարում են մարմնի ցանկությունները, սրանք բոլորը մերն են, հանգի՛ստ թողեք նրանց: Այլ գնացե՛ք սուրբերի ու արդարների մոտ և զայրացրե՛ք, հուսահատեցրե՛ք, շարժեցե՛ք ախտը, տաքացրե՛ք, գրգռե՛ք, դրդեցե՛ք սպանության և այլ անքանակ չարիքներ գործել տվե՛ք նրանց»: Արդ, այս ամենը և առավել, քան այս բաները, չար բանսարկուն՝ անիծյալ վիշապը, կասի իր զորքերին ու զորապետներին: Իսկ ինքը կգնա կմիանա Նեռի հոգուն պիղծ ու աղտեղի կույսի արգանդում, որն էլ կդարձնի իր գործելավայրը, որպեսզի նրա միջոցով կործանի մարդկանց որդիներին:

Եվ արդ, մեր Տերը ծնվեց սուրբ Կույսից, կործանեց սատանային և վերացրեց նրա պիղծ թագավորությունը: Իսկ

սատանան ամեն կերպ կջանա Նեռին նմանեցնել մեր Քրիստոս Աստծուն: Քանզի ինչպես ասացինք, Նեռը կծնվի պիղծ կույսից և երբ դառնա հասուն տղամարդ, բանսարկուի միջոցով, որը միացած է նրա հոգուն, կսկսի կեղծավորել մարդկանց աչքի առաջ, կլինի բարեսեր ու կարգասեր, արդարադատ, կհսկի որբերին ու այրիներին, կլինի ողորմած, խոնարհ, հեզ, համբերող, աստվածասեր և Աստուծո օրենքներին, աղոթքներին ու պահքերին նախանձախնդիր: Եվ այս ամենը սուտ կձևանա մարդկանց աչքի առջև, կկեղծավորի, որովհետև նա ճշմարտապես գայլ է, որը ստությամբ ջանում է ծածկել իրեն դառան մորթով, որովհետև սուտ է նաև նրա հայր սատանան, որը միացած է նրա հետ, հույս է տալիս նրան և այնպես է ջանում ու կեղծավորում, որ նրա համբավի համար յուրաքանչյուրը կձգտի նրան, և կասեն. «Երանի՜ նրան աշխարհի թագավոր դարձնեին»:

Եվ ապա այս չար ժամանակներում Կոստանդնուպոլսում երեք տարի կնստի Ընծուկ անունով մի թագավոր, որը կլինի աղքատ: Երբ սա մեռնի, թագավորությունը հանկարծակի կբաժանվի տասը գավազանի՝ տասը թագավորների միջև. մեկը Նեռը կլինի, նա կսպանի նրանցից երեքին, իսկ մնացածին կհնազանդեցնի ու ինքը կթագավորի նրանց վրա, ինչպես Դանիելը տեսավ «փոքրիկ եղջույրը, որը բուսավ գազանի գլխին՝ տասը եղջյուրների մեջ, և արմատախիլ արեց նրանց»[3], որովհետև վերացան թագավորությունները, և միայն հռոմեացիները մնացին: Եվ նա էլ վերացվելու է Նեռի կողմից՝ ըստ գազանների [տեսիլքի], որը տեսավ Դանիելը, և ըստ առաքյալի՝ թեսաղոնիկեցիներին ուղղված թղթի. «Երբ մեջտեղից կվերացվի նա, ով այժմ նրան ետ է պահում, պիտի հայտնվի անօրենը, որին Տեր Հիսուսը պիտի կործանի Իր բերանի շնչով»[4]:

[3] Դան. է 8

[4] Բ Թես. Բ 7-8

Բայց Նեռի անունը մեզ տեսակ-տեսակ ներկայացրին նաև սուրբերը: Սուրբ Ներսեսն ասում է, թե նրա անունը Հռաիմ է, նրա հոր անունը՝ Հռոմելաս, իսկ մոր անունը՝ Մելետինե: Եվ որ՝ նա կծնվի Քորազինում և կդաստիարակվի Բեթսայիդայում, որոնց մեր Տերը «վա՛յ»[5] ասաց: Եվ թագավոր կնստի Կափառնայումում, որի մասին Հիսուս Քրիստոսն ասաց. «Դու, Կափառնայո՛ւմ, մինչև դժոխք կիջնես»[6]: Եվ դարձյալ՝ նրա անունը կկոչեն Իմեգ օձ, որը թարգմանվում է խավարի վիշապ և կորստյան մարդ: Եվ դարձյալ այլ տեղում ասվում է. «Նրա անվան թիվ է վեց հարյուր վաթսունվեց»[7]: Սրանք կատարյալ թվեր են, և այս թվերով նրա անունը թարգմանվում է Շատինոս կամ Անթաստ: Ինչպես որ կատարյալ է այս թիվը, նույնպես սրա նեղությունն ու չարիքը դառնագույն են և մեծ, քան բոլոր նեղությունները, որոնք եղան մարդկանց վրա աշխարհի սկզբից ի վեր: Դարձյալ՝ «Նեռի անունը լատիներենում Լամպիտեստիան է ասվում, որը՝ Բենեդիկտոս, որն էլ թարգմանվում է՝ օրհնված և կամ թե՝ օրհնված ես»:

Եվ, ինչպես վերը նշեցինք, չարը ջանում է նմանվել Քրիստոսին ու հափշտակել օրհնյալ Աստուծո ճշմարիտ անունը, որպեսզի դրանով կործանի մարդկանց: Քանզի նա հրեաներին կասի. «Ես եմ Քրիստոսը, Որը գալու էր»: Դրա համար էլ Գիրքը նրան Դերաքրիստոս է կոչում, այսինքն՝ սուտ Քրիստոս և ոչ թե ճշմարիտ: Եվ Կոնստանդնուպոլսից նա կճանապարհվի դեպի Երուսաղեմ: Եվ նրա ահեղ համբավը կտարածվի ողջ աշխարհով, իսկ հետո քիչ-քիչ կսկսի բացահայտվել չարիքը, որը ծածկված էր կեղծավորությամբ: Եվ նախ իր չարիքները կսկսի՝ այսպես ասելով. «Ես եմ Քրիստոսը, որ գալու էի աշխարհ»[8]: Կնստի Աստուծո եկեղեցում և իրեն

[5] Ղուկ. Ժ 13

[6] Ղուկ. Ժ 15

[7] Հայտն. ԺԳ 18

[8] Բ Թես. Բ 4

երկրպագել կտա իբրև Աստված: Կնստի տաճարում ու կհայ-հոյի բարձրյալ Աստծուն: Այս ամենի մասին Դանիելն ասաց. «Տեսնում էի փոքրիկ եղջույրը, որը ելավ տասը եղջույրների մեջ և արմատախիլ արեց նրանց»[1]:

Բաներ կխոսի Բարձրյալ Աստծու մասին: Հրեաները, որոնք ջհուդներն են, կլսեն նրա համբավը, ու նրանց ամբողջ ազգը կգա ու կհավաքվի նրա մոտ: Կերկրպագեն նրան, խայտալով կցնծան նրա առաջ ու կգոչեն՝ ասելով. «Հորթերի պես արձակվեցինք Մովսեսի օրենքների կապերից, որովհետև լրացավ ժամանակը, ու կատարվեց գիրը. բարձունքներից խոնարհվեց Քրիստոսն ու իջավ մեզ մոտ: Ավա՜ղ, շատ ուշացար ու վշտացրիր մեզ, վա՜յ առաջին հայրերին, որոնք չկարողացան քեզ տեսնել: Եվ ո՞վ կտար այս ավետիսը ննջեցյալներին, որոնք Աբրահամի զավակներն են ու Մովսեսի ժողովուրդը»: Արդ, նրանց մասին առաքյալը գրեց. «Մոլորվածները ակնկալում են մոլորվածին»[2]:

Իսկ նա կսկսի նորոգել օրենքն ու տաճարը: Եվ մեղքերի ծնունդ Ղովտի որդիները՝ մովաբացիներն և ամովնացիները, որոնք Սեիր լեռան մոտ են և ամբողջ Եգիպտոսում, նախօրոք կգան ու կհավաքվեն նրա մոտ, ըստ Դանիելի խոսքի. «Կկուտակի Եգիպտոսում բազում հողաբլուրներ և կավերի նրանց»[3]: Եվ անօրենները, որոնք սպասում են իրենց մոլորապետ Մուհամեդին, անթիվ հազարներով կգան և կհավաքվեն նրա մոտ, որովհետև կկարծեն, թե նա է իրենց առաջնորդը: Եվ այլ անթիվ իշխաններ ու աշխարհների թագավորներ կգան ու կհավաքվեն նրա մոտ, որովհետև ամբողջ աշխարհում սաստիկ կհնչի նրա համբավը:

Եվ միայն Խաչի պաշտոնյաները կճանաչեն նրա չարիքն

[1] Դան. Է 8

[2] Բ Տիմ. Գ 13

[3] Դան. ԺԱ 15-19

ու հույժ կհեռանան, կթաքնվեն նրա երեսից՝ ըստ Հովհաննես ավետարանչի տեսիլքի, որն ասում է. «Տեսա, և ահա՛ սուրբ քաղաքը բաժանվեց երեք մասի»[4]: Քանզի երեք բաժին կլինի աշխարհը, և երկուսը միանգամից կմիանան նրան ու կենթարկվեն նրա կամքին: Նրա համբավը կտարածվի, և կդողա ու կսասանվի աշխարհը: Եվ ծովի ավազի պես անթիվ հազարներ ու բյուրբյուրեր կգան կհավաքվեն նրա մոտ: Կլինի երաշտ, սով, և կսկսեն ցամաքել աղբյուրները նրա թագավորության ժամանակ, կփոշիանան ծառերն ու բույսերը, որովհետև երկինքն ու երկիրը կդառնան ինչպես երկաթ ու պղինձ, և հացը կպակասի աշխարհից: Գրված է. «Կգա ամայության չար ժամանակը», այսինքն՝ տգիտության, որովհետև քչերը միայն կլինեն, որոնք ծանոթ կլինեն Աստուծո անվանը: Նույնն է ասում նաև մեր Տերը. «Մարդու Որդին գալով՝ կգտնի՞ արդյոք երկրի վրա հավատ»[5]: Եվ բոլոր կողմերից կսկսվեն վիշտ ու տառապանք, այնպիսի նեղություններ, որ չեն եղել աշխարհի սկզբից մինչև նրա ավարտը: Այն ժամանակ բոլոր քրիստոնյա ազգերի առաջնորդներն ու գիտնականները կտեսնեն սա ու աստվածային Գրքերով կճանաչեն, որ ահա՛ եկել հասել է աշխարհի վախճանը, և որ իսկապես դա է կորստյան որդին: Ապա, միմյանց ձայն տալով, կգան կհավաքվեն անթիվ հաշվով նրանք, ովքեր քաջ ծանոթ կլինեն Աստծուն և հմուտ կլինեն Նրա բոլոր պատվիրաններին, կընթերցեն Աստուծո գրքերը: Եվ յուրաքանչյուրը կքաջալերի իր ընկերոջը: Առաջ կգան և հապշտապ կհորդորեն միմյանց, կմռնչան ի խորոց, կտագնապեն անդամներով: Այն ժամանակ կգոչեն առյուծաբար, կհարձակվեն վարազաբար և կթռչեն արագավազ ինձերի պես: Մեկ առ մեկ առաջ կգան և կասեն. «Ահա՛, եղբայրնե՛ր, հասավ բարի ժամանակը, քաջությամբ ջանանք,

[4] Հայտն. ԺԶ 19

[5] Ղուկ. ԺԸ 8

որպեսզի ստանանք մարտիրոսական պսակը»: Եվ կգան Նեռի մոտ անհամար բազմության մեջ և կթքեն նրա վրա, աստվածային սուրբ Գրքերով կնզովեն ու կհանդիմանեն նրան: Իսկ այն կորստյան պիղծ որդին զանազան չարչարանքներով կխայտառակի նրանց և հետո միայն սրով կսպանի: Այն ժամանակ աշխարհից կվերանան գիտնականները, և այն պիղծն ավելի կճոխանա իր չարության մեջ: Սակայն բարեգութ Աստված անտես չի անի մարդկային ազգին, այլ կառաքի Ենովքին ու Եղիային, որ գան և քարոզեն աշխարհում, շրջեն մարդկանց մեջ ու ասեն. «Մի՛ հավատացեք դրան, որովհետև դա սուտքրիստոսն է՝ կորստյան որդին և սատանայի ժառանգը: Համբերե՛ք մի քիչ և կհասնեք փրկությանը. բազում են նեղությունները, բայց դռան մոտ է Քրիստոսը, և անճառելի՝ Նրա հանգիստը»:

Այն ժամանակ ծովը կնեխի, որովհետև կմեռնեն նրա մեջ գտնվող կենդանիները: Եվ չար ու գարշելի հոտից կապականվեն մարդկանց դեմքերը, ու զորություն չի մնա նրանց մեջ: Եվ մարախի պես կույտ-կույտ կմեռնեն մարդիկ սովից ու ծարավից: Նեխվելով կհոտեն քաղաքների փողոցներն ու հրապարակները, և ոչ ոք չի լինի, որ թաղի նրանց: Եվ այս անվախճան նեղությունների ու տառապանքների հետ միասին վայրի անապատներից մարդկանց մեջ դուրս կգան չարատեսք գազաններ, դառնագույն այլակերպ ու մահաթույն գիշատիչ սողուններ, որոնք անտես էին մարդկանցից, կուտեն մեռելներին և սովորելով՝ կսկսեն կենդանի մնացածներին էլ ուտել և կպատառոտեն նրանց, և չի լինի որևէ մեկը, որ օգնի նրանց:

Այն ժամանակ սարսափելի արհավիրքներ կլինեն լեռներում ու շեներում: Ահ ու երկյուղ սոսկալի, անդունդներից ու ծովից որոտումներ ու զարհուրելի ձայներ, և ամեն կողմից՝ սոսկալի որոտումներ: Այնժամ վա՛յ Ադամի սերունդներին այդ տառապանքների պատճառով:

Կցամաքի ծովը, և կսարսափեն բոլոր արարածներն ու կհիանան՝ զարմանալով նրա խորության վրա, ինչպես նաև՝ մեծամեծ գազաններից, որոնք կերևան, կգան կետերի հետ միասին:

Այն ժամանակ անթիվ զորքեր ու երիտասարդների բազում գնդեր կգան, կհավաքվեն միասին ու կտարուբերվեն երկրի վրա, ինչպես ծովի ալիքներ, ու սաստիկ սովի անչափ նեղությունից կուտեն միմյանց: Մայրը կուտի իր սիրելի որդուն, եղբայրը՝ իր ցանկալի եղբորը: Եվ չկա լեզու, որը կարողանա ճառել այդ ժամանակի ծանր վշտի մասին: Քանզի չքնաղ կույսերը, գեղեցկատես թագուհիներն ու փափկասուն տիկնայք համարձակորեն դուրս կգան հրապարակ, և չի լինի որևէ մեկը, որը կցանկանա նրանց: Թագավորական պայծառ պատմուճանները, պիտանի արծաթն ու ցանկալի ոսկին, մեծարժեք ակներն ու դժվարագյուտ մարգարիտներն ընկած կլինեն հրապարակներում, ինչպես անպիտան աղբ, և չի լինի մեկը, որ նայի դրանց, որովհետև սովը կսաստկանա, և ծարավը կտանջի: «Վա՛յ և եղո՛ւկ» կլսվի ամեն տնից, իսկ փողոցներում կլինեն սասանում ու ցավի ողբ: Այն ժամանակ կհավաքվեն սիրուն իշխանները թագավորների մոտ, բարեմիտ աղախինները՝ թագուհիների, ցանկալի որդիները՝ իրենց ծնողների մոտ և, միմյանց գիրկ ընկնելով, կողբան դառն արտասուքով սենյակներում ու հրապարակներում, և շատ վայ ու ավաղ կասեն նրանց ցանկալի սիրելիները, ապա ընկնելով՝ կմահանան: Իսկ իմաստունները կփախչեն ու կթաքնվեն խոր ձորերում ու ժայռերի ծերպերում, գերեզմանների փորվածքներում ու խորագույն վիհերում և կասեն. «Լավ է մեռնել այստեղ ու լինել Աստծունը, քան թե տեսնել Նեռին ու խաբվել նրա պատրանքներից, որովհետև հոյժ չար են նրա մեքենայությունները»:

Քանզի մեր Տերն ասում է. «Բոլոր հնարներով կմոլորեցնի արդարներին»[6]: Եվ զրույցը պատմում է. «Եփրատ գետի եզերքներին գտնվող մեծամեծ ու դժվարամատչելի ժայռերում կթաքնվեն մարդկանցից շատերը և կազատվեն նրա չարիքներից: Իսկ դևերը սուտ մարգարեների հետ միասին կշրջեն աշխարհում, կգտնեն թաքնվածներին և վերցնելով՝ կբերեն Նեռի մոտ: Զկա լեզու, որը կարողանա պատմել չար խաբեությունները, որոնք կգործի: Քանզի հուր կիջեցնի երկնքից, կթռչի օդի մեջ, ծովի վրա լեռ ցույց կտա՝ թռցնելով այս ու այն կողմ: Կքայլի ծովի վրայով, նրա խորքերից բլուրներ կբարձրացնի ու հարություն կտա մեռելներին: Մարդկանց առաջոք հաց ու ջուր կտա, բայց [դրանք մարդկանց] որևէ օգուտ չեն տա: Այս և նման այլ նշաններ կանի առաջոք և կկործանի մարդկանց որդիներին ստությամբ, դևերի խաբեությամբ և կերպարանափոխությամբ, ինչպես այժմ էլ գալիս են նրա կարապետները, քաղաքների հրապարակներում խաղեր են առաջոք ցուցադրում և զարմացնում են դիտողներին:

Կգան նրանք, որոնք հավանեցին նրան, ու կաղաղակեն. «Մեռնում ենք սովից ու ծարավից»: Իսկ նա կտկարանա նրանց առաջ ու բացահայտորեն կասի. «Ոչինչ չունեմ»: Բայց դարձյալ սուտ հույսերով կխաբի և կմխիթարի նրանց: Իսկ ովքեր կճանաչեն նրա խաբեություններն ու չեն հավատա, նա, դառը չարչարանքներով նեղելով, կսպանի նրանց: Եվ ովքեր կամովին կհավանեն նրան ու կերկրպագեն նրա աթոռին ու պատկերին և դավանանքով կմիանան նրան, նա դրոշմով կկնքի նրանց, որպեսզի չկարողանան դուրս գալ իր գրքից[7] և կամ ուրանան ու նզովեն իրեն: Եվ այս է նրա պղծության նշանն ու կործանման խորհրդի դրոշմը. աջ ձեռքով բուրվառով խնկարկել և երկրպագել կտա իր առաջ, առաջոք հրեղեն պսակ կդնի մարդկանց ճակատին ու դրանով կսպանի նրանց, ովքեր կդավանեն իրեն»:

Եվ դարձյալ ասվում է. «Նրա անվան գիրը վեց հարյուր վաթսունվեց է»[8], իսկ սա թարգմանվում է՝ ուրանում եմ: Եվ նա այս չար գրով կդրոշմի ու կկնքի իր սիրելիների ճակատն ու աջ ձեռքը, որովհետև նրան աստված կդավանեն և կուրանան ճշմարիտ Աստծուն, ինչպես կռապաշտներն էին անում և տանջում մարտիրոսներին՝ ասելով. «Ուրացե՛ք խաչված Աստծուն»: Այս ողջ խաբեություններն ու նեղությունները կտեսնեն Իսրայելի որդիները, հրեա ազգն ու Հակոբ նահապետի զավակները, ստույգ կճանաչեն ու կասեն. «Սա Դերաքրիստոսն է և ո՛չ թե ճշմարիտը, որին մենք ակնկալում էինք»: Եվ ապա կհավաքվեն նրանք, գոչելով վայ կասեն և շատ եղուկ ու ավաղ կտան իրենց անձերին, որ չճանաչեցին ճշմարիտ Քրիստոսին, Որին իրենց հայրերը խաչի մահվամբ դատապարտեցին:

Այն ժամանակ կվերցնեն մարգարեների Աստվածաշունչ գրքերն ու կգան նրան ընդառաջ, պարսավելով կնախատեն նրան, սուտ, կորստյան որդի և սատանայի բնակարան կկոչեն նրան և չարաչար կհանդիմանեն՝ գոչելով բարձր ձայնով: Ու կհավատան ճշմարիտ Քրիստոսին, որին խաչեցին իրենց իսկ անօրեն հայրերը: Նեռը, դառը կտտանքներով չարչարելով, կսպանի նրանց: Իսկ Աստված մարտիրոսական արյամբ կպսակի նրանց: Այս մասին է գրում Հովհաննես ավետարանիչը. «Տեսա, և ահա՛ Հակոբ նահապետի տասներկու ազգերի որդիներից, ամեն ազգից տասներկու հազար կնքված, կգան ու կվկայեն. «Քրիստոսն է ճշմարիտ Աստվածը, Որին խաչեցին մեր հայրերը»: Եվ վստահ հավատով կմեռնեն Նրա համար»[9]: Եվ կավարտվեն այն դառն օրե-

[6] Մատթ. ԺԳ 22

[7] Նկատի ունի 666 թիվը:

[8] Հայտն. ԺԳ 18

[9] Հայտն. է 4-8

ը՝ նրա իշխանության երեքուկես տարին: Այն ժամանակ անօրենը բռնի կերպով կբերի Ենովքին ու Եղիային և, չարաչար կտտանքներով նեղելով, կսպանի նրանց, որովհետև շատ համարձակորեն կհանդիմանեն նրան: Իսկ այն ժամանակ առավել ևս կբորբոքվի նրա չարությունը, որովհետև կասեն. «Տեսե՛ք, ահա՛ հինավուրց կենդանի վկաները չկարողացան ճողոպրել նրա ձեռքերից, այլ բռնեց ու սպանեց նրանց»: Աստվածատես ու պատվական ծերունիներն անթաղ ընկած կլինեն երեք օր: Իսկ երեք օրից հետո կենդանության հոգին կմտնի նրանց մեջ, և նրանք, հարություն առնելով, հրեղեն ամպերով կբարձրանան երկինք: Եվ հետո՝ ուրբաթ օրը, հանկարծակի կծագի տերունական խաչը՝ յոթնապատիկ ավելի պայծառ, քան արեգակը: Կգալարվի ջրամած կամարը մագաղաթի պես, և կերևա լուսեղեն երկինքը հրեղեն եթերով հանդերձ:

Եվ այն ժամանակ կլսվեն անմարմին զորքերի ձայներ ահեղ ու սոսկալի բարբառով, և նրանց հնչումից կշարժվեն երկրի հիմքերը: Իսկ խաչի լույսից կծածկվեն արեգակն ու լուսինը, և ամբողջովին կանհետանա նրանց լույսը: Եվ եկեղեցիների խաչի մասունքները հանկարծակի կցոլան ու կմիանան խաչի լույսին, որը երկնակամարում է: Ոչ թե քարն ու փայտը և կամ այլ նյութերը կբարձրանան, այլ՝ օրհնությունն ու փառքը, լույսն ու զորությունը և անճառելի խորհուրդը: Եվ այն ժամանակ կկատարվի Տիրոջ կողմից ասվածը. «Բոլոր նեղություններից հետո երկնքում կերևա Մարդու Որդու նշանը»[10], *որը լուսեղեն խաչն է:*

Եվ արդ, ամեն թագավորի գալուստ իր նշանն ունի: Նեռի թագավորության նշանը մեղքերի համարձակությունն է և չար ժամանակը: «Իսկ Իմ գալստյան կարապետն ու նշանը խաչն է: Եվ դուք որևէ մեկով չխաբվե՛ք և չմոլորվե՛ք: Եվ

[10] Մատթ. ԻԴ 29-30

այն ժամանակ մեղավորները և անհավատները կողբան խաչի երևմամբ. այս ազգ կլինի երկրին», - հրամայում է Տերը:

Այն ժամանակ կդողան, կողբան և սարսափահար կապշեն Նեռն ու նրա պաշտոնյաները, ինչպես նաև՝ սատանան իր դևերով:

Եվ Աստվածության անբավ զորությունն ու լույսը կմիանան խաչի լույսին: Եվ խաչի ճառագայթից բորբոքված՝ կայրվի աշխարհը յոթնապատիկ ավելի ուժգին, քան բորբոքված հնոցից: Կշարժվեն աշխարհի հիմքերը, կգոչեն անդունդներն ու սանդարամետները և, բացելով իրենց երախը, կկլանեն սատանային, Նեռին ու նրա պաշտոնյաներին, որովհետև նրանք արժանի չեն տեսնելու Աստծուն՝ զարմանալի փառքով գալիս, և ոչ էլ Նրա արքայությունը, որպեսզի կատարվի Դավթի երգը. «Զեռ գա կամ կանգնի ամբարիշտները դատաստանին և ոչ էլ մեղավորները՝ արդարների հավաքի մեջ»[11]: *Եվ այն ժամանակ կկատարվի առաքյալի գրվածքը.* «Տեր Հիսուսը կսատկացնի նրանց Իր բերանի Հոգով»[12]:

Եվ խաչի լույսը կմնա երեք օր: Եվ նրանք, ովքեր լի են մեղքերով, «վա՜յ» կգոչեն ու կիսամահ կլինեն նրա ահից:

Իսկ արդարները կցնծան, որովհետև կճանաչեն, որ այն իրենց լույսն է, պսակն ու պարծանքը: Մինչև ծնվի վերջին մանուկը՝ դուրս եկած որովայնից, որպեսզի լրանա հաշիվն արքայությունում՝ ըստ Սուրբ Գրքի, որովհետև թիվ ու հաշիվ կա նրանց, որոնք ընտրյալներ են և ժառանգելու են արքայությունը: Այս մասին վկայում է նաև առաքյալը՝ ասելով. «Աշխարհի ստեղծումից առաջ մեզ ընտրեց»[13]:

Եվ ապա վերջին մանկան ծնվելուն պես կիրակի օրը՝ առավոտյան ժամին, երբ Տերը հարություն առավ մեռելներից, հանկարծակի կհնչի փողը: [Սա կլինի] յոթերորդ դարի

[11] Սաղմ. Ա 5
[12] Բ Թես. Բ 8
[13] Եփես. Ա 4

ավարտը և ութերորդ դարի սկիզբը, որը կոչվում է Մեծ Օր, որովհետև գիշերն այլևս չի կարող փոխարինել նրան: Հանկարծակի Տերը կերևա բարձունքներում լուսեղեն ամպով ու երկնային զորքերով: Հետո կհնչի փողը, իսկ այդ ժամանակ աշխարհում շատերը կենդանի կլինեն և փողի գոչելուն պես կմեռնեն ու ակնթարթորեն հարություն կառնեն, որը չեն կարող զգալ արագությունից: Եվ կլինի համընդհանուր հարություն, ինչպես նշեցինք Գալատյան ու Հարության ճառում: Ուստի, աղաչո՜ւմ եմ ձեզ, սիրելինե՛րս, այս ամենն իմանալով՝ քարոզեցե՛ք աշխարհում Նեռի պղծությունը: Եվ որքան կարողանաք, գրավո՛ր կերպով թողեք աշխարհում, որպեսզի լսեն հայրերն ու սովորեցնեն իրենց որդիներին: Եվ որքան հնարավոր է, մի՛ ձանձրացեք բարի գործերից, երբեք մի՛ հանեք ձեր մտքից Տիրոջ երևալու Օրը և Նրա անճառ հանդիստը, որպեսզի սրբությամբ մնանք այստեղ, իսկ այնտեղ ժառանգենք երանական կյանքը բոլոր սուրբերի հետ նույն մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որն օրհնյալ ու փառավորյալ է Հոր և Ամենասուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԻԳ. Ծուլության, մեղքերի համարձակության ու բարու նվազության մասին

Եվ արդ, որովհետև բարերար, խնամող ու մարդասեր Աստուծո կամքով ու Նրա մեծապարգև ողորմությամբ աստվածային Գրքերից փոքր ի շատե ծանոթացանք բարու և չարի տեսակներին, տասը թվին, Բան Աստուծոգալստյանը, Դատաստանին, Նեռի անօրենությանն ու նրա սատակմանը, այժմ, ո՛վ բարեսեր, մենք պետք է քննելով տեսնենք նաև մեր ապրած ժամանակներում [տարածված] ծուլությունը, առաքինության նվազումը և ամեն տեսակի մեղքերի սաստկացումը:

Բայց առաջին հերթին քննենք ու տեսնենք աշխարհամասերը, հետո կրկին կգանք մեր խոսքին, որտեղ որ կանգ առանք:

Առաջին իմաստունները, որոնք կռապաշտ էին, կլիմներ արեցին, այսինքն՝ յոթ մասի բաժանեցին ողջ աշխարհը: Մի բաժինը կոչեցին Վերին Հայք՝ Վրաց տնից, Դարբանդի դռնից մինչև Սինա անապատը, որտեղ Մովսեսը բերեց ժողովրդին, նաև Եդեսիայից, որն Ուռհան է, մինչև Կոստանդնուպոլսի սահմանները:

Մյուս բաժինը Պարս կոչեցին, դեպի վեր՝ Խուժիստան, ավելի ներքև ձկնակերների աշխարհն էր՝ բազում գավառներով, որտեղ լեռներից ծովն իջնող գետերի շատության պատճառով բոլորը ձկներով են կերակրվում: Նրանց մաշկը ոչխարի բրդի նման է, որովհետև մարմնի մազերը աճելով՝ ծածկում են նրանց: Պատմում են, որ նրանք կանանց հետ վարվում են անասնաբար, որովհետև մեկ կին չէ, որ հասնում է տղամարդուն, այլ բոլոր կանայք ընդհանուր են:

Մյուս բաժինը Բաբելոնն է՝ բազում գավառներով. արևելյան կողմում խորանում է ընդհուպ մինչև աշխարհի մթությունը և հարավային կողմում՝ մինչև անօրենների բարբաջած Մահմեդի գերեզմանը, իսկ առավել խորքերում անծանոթ գավառներ են:

Մյուս բաժինն է Ներքին Արաբիան, Եթովպիան և Վերին Հնդկաց աշխարհը: Պատմում են, թե դա թզուկների և մերկ իմաստունների աշխարհն է, և այդ այն գավառն է, որտեղ սովորաբար կանայք են թագավորում: Եվ այսպիսին է նրանց կենցաղն ու ծնունդը. տարին մի անգամ, իմանալով ժամանակը, բարձրանում են լեռները, որոնք շրջապատում են իրենց գավառները: Եվ գալիս են այդ սահմաններում բնակվող երիտասարդներն ու այնտեղ միավորվում ամուս-

նությամբ: Եվ ով հղիանում է, ծննդաբերելիս աղջկան պահում է, իսկ տղային՝ սպանում: Այս մասում են հրագույն սուտակ և կանաչագույն դահանակ պատվական քարերը, որոնց մասին աստվածային Գիրքն ասում է. «Գտնվում են Լատա գետի մոտ», և այնտեղ է Սկյութը, իսկ հյուսիսի կողմից խոր անապատն է, որտեղից բերում են պատվական քարը, որը կոչվում է լիգյուրոն:

Նաև պատմում են, թե թագավորները սահմանների դժվարության ու հեռավորության պատճառով մահապարտներին են ուղարկում այս քարը որոնելու: Եվ մահապարտները գալով՝ դառ են մորթում, միսը բարձր քարակարկառներից գցում են խոր ձորերի ու խավար վիհերի մեջ: Արծիվները, որոնք բնակվում են շրջակա ժայռերում, մսի հոտից իջնում են անդունդները և, վերցնելով միսը, տանում են վերև: Թանկարժեք քարը կպած է լինում մսին: Եվ երբ արծիվներն ուտում են միսը, մահապարտները հեռվից հետևում են և նշան դնում տեղում, [ապա] գնում գտնում են ակնաքարերը:

Արդ, այս ակնաքարերը խորհրդանշում են արդարների հոգիները, իսկ դառան միսն ու արծիվները մեր Տեր Հիսուս Քրիստոսի խորհուրդն են կրում, որն իջավ խավարային դժոխքն ու հանեց, ազատեց այնտեղից արդարների հոգիները:

Մյուս բաժինը Եգիպտոսն է, նրանից ավելի ներքև Ներքին Հնդկաց աշխարհն է, որտեղից բերում են պղպեղ ու այլ համեմունքներ, մաղձաղեղեր, անփուտ սև փայտ, այսինքն՝ երենոս, և այլ անուշահոտ փայտեր, նաև փղոսկր: Այն ձգվում է մինչև Այրված Գոտի կոչված լեռը, որը մոտ է Արևելքին: Պատմում են, թե այնտեղ չկա դալար բույս, և մարդ չի բնակվում նրա սահմաններում: Այս մասերում կան մեծամեծ գազաններ, որոնք հույժ չարաժանիք են, գիշատիչ և մարդ չտեսած: Կան հաղթանդամ ռնգեղջյուրներ ու մեծամեծ փղեր: Իսկ մարդիկ արեգակի տապի պատճառով սև են: Պատմում են, թե այնտեղ կան գավառներ, որտեղ մարդիկ հանդերձ չունեն, մերկ են և միայն ծածկում են ամոթույքները: Իսկ նրանց կերակուրը ոչխարի կաթն է: Եվ այս մասերում էր, որ Տոպազ քաղաքի քարհատները գտան թանկարժեք քարը, որը կոչվում է տպազիոն և, չճանաչելով այն, ցածր գնով ակնաքարը տվեցին աղբաստրացի վաճառականներին: Իսկ նրանք էլ տարան հնդիկների թագուհուն: Եվ նա գնեց ակնաքարն ու այն կապեց իր թագին: Նմանապես էլ հրեաները չճանաչեցին իրենց Տիրոջը՝ անկյունի Վեմին՝ տպազիոն պատվական քարին՝ Հիսուս Քրիստոսին, և մի քանի արծաթով վաճառեցին Նրան: Սակայն Աստուծո Եկեղեցին ու քրիստոնյաների դասերը գնեցին Հիսուսին՝ Հոր Բանին, և կապեցին իրենց գլխին:

Եվ մյուս բաժինը Իսպանիան է, որը սահմանակից է Հռոմին և ավելի արևմուտք բազում գավառներով ձգվում է մինչև Մեծ ծովը: Եվ Հռոմի արևելյան կողմում ու հարավում կան բազում կղզիներ, ինչպիսիք են Կարդեոնը, Սիցիլիան, Պատմոսը, Վռենիսը, Տյուրոսը և բազում այլ կղզիներ: Եվ այնտեղ Եգիպտոսի կողմից՝ հնդիկների նավահանգստի դիմաց, կա մի մեծ կղզի: Այնտեղ կա մի բարձր լեռ, որտեղ այլազգիները կտրում են պատվական քար, որը կոչում են զմրուխտ: Դրա համար վայրը կոչում են Զմրուխտի լեռ:

Եվ մյուս մասն ընդգրկում է Մեղոնիան և Հելլադան՝ մերձ Բյուզանդիայի սահմաններին: Ծովանման Դանուբոս գետի այն կողմում ռուզներն են, իսկ նրանից ավելի խորքերում, որտեղից բերում են թանկարժեք ձկների ժանիքներ ու շատ թանկարժեք ջրային կենդանիների մորթիներ, [նրանք են], որոնց խունդուզներ են կոչում: Հյուսիսային կողմում բուլղարներն ու ղպչաղներն են՝ չարադեմ ու գարշակեր,

ծույլ ու միանգամայն անյույս և անաստված ցեղեր են:

Եվ արդ, աշխարհի բոլոր բաժիններից առավել գովեցին մեր բաժինն ու լավագույն կոչեցին: Քանզի տղամարդիկ միջահասակ են, օրենքների ու զոհերի գիտակ, իսկ կանայք շատ չարադեմ և կատակապատկեր չեն, ոչ էլ՝ հույժ պայծառ պատկերով, ոչ էլ՝ լիրբ ու ախտեր շարժող, ինչպիսիք իսպանացի կանայք են: Իսկ գազանները շատ վայրագ, խիստ ու գիշատիչ չեն, ինչպես պատմում են Հնդկաստանի գազանների՝ վագրի և այլ չարատես գազանների մասին: Մեզ մոտ կան բազում գեղեցիկ անասուններ ու զանազան ու վայելուչ թռչուններ: Եվ կերակրվում են անուշահամ ընտիր հացով, անհամար մրգերով ու մեղրահամ բանջարներով. արդ, այս ամենը մեր նախնիներն ասացին:

Ապա, ե՛կ նոր ու վերջին ժամանակներս և տե՛ս բարիքները գավառների, որոնք մեր բաժնում են:

Զրույցը պատմում է, թե Աստված մարդուն Երուսաղեմի Սիոն լեռան վրա ստեղծեց ու դրեց դրախտում: Ինչպես Գիրքն է ասում. «Մայր է կոչվում Սիոնը, և մարդը նրա վրա ծնվեց»[1]: Սա նախկինն էր, իսկ վերջին ժամանակներում Սիոն լեռան վրա՝ Երուսաղեմում, Բանը ծնվեց մարմնով սուրբ Կույսից և այնտեղից էլ համբարձվեց: Եվ մեզ համար ճանապարհ հարդարեց և բացեց երկինքը, որը փակել էր Ադամը: Եվ կգա այնտեղ, կնստի Գողգոթայում և կդատի բոլոր արարածներին: Այս բաժնում երևացին սուրբ մարգարեներն ու քարոզեցին Քրիստոսի ծնունդը կույս Մարիամից, և մեր այս բաժնից ծագեցին սուրբ առաքյալները՝ տարածելով աստվածային լույսը ողջ տիեզերքով մեկ և հալածեցին կռապաշտության խավարը:

Եվ այս յոթ վիճակներից, որոնց բաժանվեց աշխարհը, չորսը չճանաչեց Աստծուն և ոչ էլ՝ Նրա օրենքները: Իսկ

[1] Սաղմ. ՁԶ 5

երեք բաժիններից մեկը Մուհամեդի ժողովուրդն է, որոնք աստվածաճանաչ եղան, սակայն շատ ավելի լավ կլիներ, եթե ընդհանրապես չիմանային Աստծուն, որովհետև ինչպես արժանի էր, չճանաչեցին Նրան, այլ խեղդվեցին ծովեզերքում, բայց կորան ծովում խեղդվողների պես: Իսկ մյուսներն էլ եղան հերձվածողները, որոնք տեսակ-տեսակ հայհոյությամբ անարգեցին Աստծուն ու Նրա գալուստը: Եվ նրանց համար ավելի լավ կլիներ, եթե ընդհանրապես չլսեին Նրա գալստյան մասին, քան թե այն, որ լսեցին, հավատացին և դարձյալ հայհոյեցին և հայհոյում են այն:

Իսկ մի բաժինն էլ մնաց ուղղափառ ստույգ աստվածապաշտներին և Համագոյական Սուրբ Երրորդության ճշմարիտ դավանողներին, որոնք անգայթակղելի հոգով ու մտքով խոստովանողներն են Բան Աստուծո մարդեղության, ինչպես վայել է Աստծուն, ինչպես որ վկայվեց առաքյալների ու մարգարեների, սուրբ հայրապետների ու սուրբ Եկեղեցու ուղղահավատ վարդապետների կողմից:

Սակայն նաև սրանց է շարժում չար սատանան և թույլ չի տալիս բարիք գործել, որովհետև. «Առանց գործի հավատքը մեռած է»[2], և արծիվն էլ մի թևով չի կարող երկինք բարձրանալ:

Եվ եթե մենք այս սուրբ և ուղիղ հավատով, որ ունենք, կարողանանք բարիք գործել, կլինենք ճշմարիտ երանելիներ: Բայց վա՜յ մեզ, Աստուծո՛ սիրելիներ, որովհետև աշխարհում նվազեց բարեգործությունը, և բազմացավ [կեղծ] գիտությունը: Այժմ ամեն մեկն Աստուծո օրենքների վարդապետ է և քարոզող: Եվ նա, ով քարոզում է ուրիշներին, իսկ ինքը ընդհանրապես հեռու է այդ ամենից, ինչ ուսուցանում է, նման է գուսանի և ո՛չ թե վարդապետի:

[2] Հակ. Բ 20, 26

Գրված է. «Հիսուս գործում էր և ապա՝ ուսուցանում մյուսներին»: Վա՜յ մեզ, եղբայրնե՛ր, որովհետև ծուլացանք, որը բոլոր մեղքերի պատճառն է, և հեռացանք Աստուծո օրենքներից բոլորս՝ մեծ ու փոքր, այր ու կին, իշխան ու աղքատ, տգետ ու գիտնական, քահանաներ ու ժողովուրդ: Քանդվեց պահքի պնդությունն, ու նզովքների կապը հույժ ամրացավ մեր գլխին: Հեղգացանք ու հեռացանք աղոթքներից և զրկվեցինք Աստուծո հետ խոսակցությունից: Մեր մեջ հանդգնեցավ չնությունը, իսկ պոռնկությունն առավել չարաչար անպատկառացավ ոչ միայն աշխարհականների ու զինվորականների, այլև հոգևորականների ու քարոզողների մեջ: Քանզի անհամար են կարգընկեցներն ու պատվակորույսները, շնորհատյացներն ու աստվածամոռացները, որոնք շրջում են համարձակաբար ու մոլորեցնում են շատերին՝ մեծապես գայթակղելով մարդկանց: Վա՜յ մեզ, աստվածասե՛ր իշխան, որովհետև անթիվ է գողությունն, ու անսահման՝ զրկանքները, բազում՝ տոկոսներն, ու բազմապատիկ՝ կաշառքները, անպատմելի՝ կեղծավորությունն ու արծաթասիրությամբ աճած ագահությունը:

Վա՜յ մեզ, ցանկալի՛ եղբայր, որովհետև արմատացավ սուտը, և հաստատվեց անհուսությունը, պիղծերի կողմից գովաբանվեց ոխակալությունն, ու բարի համարվեց արբեցողությունը: Ատելությունը հասնելով՝ բռնեց մեզ, իսկ սերը, որը գլուխն է բարիքների, հույժ հեռացավ: Եվ այլ անբավ անօրեն մեղքերի տեսակներ սկզբնավորվելով՝ հորդորվեցին: Եվ այս ամենը լրբաբար գործվում է աշխարհում:

Նաև հայտնվեցին հեշտաքարոզ վարդապետներ, կաղախոսներ և ուրիշներ, որոնք թողեցին Տիրոջ սահմանած օրենքները: «Հզոր և ողորմած Աստված» են ասում, բայց շատերին են կործանում, որովհետև այնպիսի բաների մասին են խոսում, որոնք մարմաջեցնում է մարդկանց լսելիքը, այսինքն՝ զվարճացնում, որի մասին առասպելների կործանող Պողոս առաքյալն է խոսում, և ըստ սուրբ Գրքերի՝ «Մարդիկ թուլացան հավատքից»:

Թագավորների ու իշխանների վրա դրված պարտականություն կա՝ կասեցնել անօրենությունը, բարի օրինակ լինել լավագույն գործերի, խրատել իշխանությամբ և հորդորել դեպի բարին, որովհետև Աստված դատաստանի Օրը ա՜յս պիտի պահանջի իշխանություն ունեցողից:

Տե՛ս նաև կռապաշտ թագավորներին, թե որքան տառապանքների էին ենթարկում և նեղում սուրբ մարտիրոսներին՝ ասելով. «Զոհեցե՛ք կուռքերին, որ աստվածները չբարկանան մեզ վրա»:

Նաև մեծն Տրդատ թագավորը, երբ դեռ կռապաշտ էր, այսպես էր գրում և ասում. «Ինչպես տանտերն է [խնամք տանում] տանն ու որդիներին, այնպես էլ մենք ենք խնամք տանում մեր աշխարհին ու մարդկանց հոգիների փրկությանը, որ աստվածները չբարկանան մեզ վրա»:

Եվ տե՛ս, թե նոր՝ աստվածպաշտության ժամանակներում Աստված մեծամեծերից որքան է պահանջում բարի գործեր ու հայրական խնամք: Քանզի արդարադատությունն ու սրբությունն են, որ հաստատում են թագավորությունը, զարդարում են գահը բարեգործությամբ և գովելի դարձնում Աստուծո առաջ, ինչպես որ գրում է Տիտոսը՝ հռոմեացիների թագավորը. «Այսօր թագավորեցինք, որովհետև բարիք գործեցինք»: Նաև Սավուղը քառասուն տարի թագավորեց, բայց Գիրքն ասում է. «Երկու տարի թագավորեց»[3], որովհետև այն երկու տարում միայն բարիք գործեց:

Ապա հիրավի գրվեց. «Հզորներից ավելի հզորն են պահանջում», նաև՝ «Ում շատ շնորհվեց, նրանից շատ կպահանջեն»[4]: Եվ այս ստույգ է, որովհետև, երբ գլխավորը չփոթվում է և ինչ-ինչ մեղ-

[3] Ա Թագ. ԺԳ 1
[4] Ղուկ. ԺԲ 48

քեր է գործում, ապա ռամիկ ժողովուրդը համարձակորեն է նույն չարիքը գործում, որովհետև հույժ ծանր է ղեկավարի հանցանքը:

Սովորի՛ր Հին Օրենքից, որ եթե իշխանը կամ քահանայապետը մեղանչում էր, և այն նույն մեղքով ամբողջ ժողովուրդն էր մեղանչում, միանման էր մեղքի թողության զոհը՝ որքան գլխավորի, նույնքան էլ ժողովրդի համար: Դրա համար ղեկավարի վրա դրված պարտականություն կա, որ ինքը արդարություն գործի և մյուսներին էլ դեպի բարին հորդորի, որպեսզի ուրիշի մեղքերի հետ չդատվի ահեղ Դատաստանին: Եվ հոգևոր առաջնորդները, որոնց Աստված վերակացու կարգեց ժողովրդին, նաև գլխավորներ են ու Քրիստոսի հոտի հովիվներ, աշխարհի լույս և մարդկանց անմահության աղ: Նրանք կոչվում են և են եպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանաներ, կանչվեցին Աստծուց ի պետս բոլորի, նստեցին առաքյալների աթոռներին ու վերցրին նրանց իշխանությունը, [սակայն] ծուլացան, նստեցին անհոգ և չեն խնամում Քրիստոսի հոտը, չեն սաստում և չեն հանդիմանում, չեն մխիթարում և չեն կանչում քաղցրությամբ: Եթե չաղլիկ պատառ է պատահում, այն են միայն ուտում, իսկ հիվանդին, որ տկարանում է, անտեսում են, ինչը սաստիկ նախատում է մարգարեն, իսկ Տերը քանքար թաքցնողներ է կոչում նրանց և չարաչար պարտավորեցնում է: Նաև բոլոր հոգեշունչ Գրքերը դատապարտում են նրանց: Եվ դարձյալ՝ կան ոմանք, որոնք բռնությամբ նեղում են աղքատներին ու ագահաբար հափշտակում են նրանց ունեցվածքը: Այսպիսով մեծապես գայթակղեցնում են տգետ մարդկանց և պատճառ դառնում Աստուծո անվան ու հոգևոր դասի հայհոյության, որը տեսանք և տեսնում ենք մեր աչքերով: Եվ փոխանակ առաջնորդելու՝ կործանում են շատերին:

Բայց այս ամենը գործել է տալիս ագահ արծաթասիրության ախտը՝ այն ախտը, որը կործանեց պիղծ Հուդային: Եվ չգիտեն, որ ըստ մարգարեի խոսքի՝ Աստված նրանցից է պահանջելու բոլոր նրանց արյունը, ում չզգուշացրեցին դուրս գալ մեղքերից, և չնմանվեցին նախկին սուրբ հայրերին, որոնք մեռան Քրիստոսի հավատքի համար: Այլ բոլորս դարձանք անհամ ու անպիտան աղ և տգետներին՝ ոտնակոխ, ինչպես ճանապարհի աղը: Եվ արդ, որևէ մեկը թող չկարծի, թե այս բամբասելով ենք ասում, քա՛վ լիցի, որովհետև բամբասանքը մեծ չարիք է Աստուծո առաջ: Եվ ըստ Հոբի՝ «Ո՞ր մարմնավոր մարդն է, որ կարող է արդարանալ Աստուծո մոտ, թեև ծնված ու աշխարհում մեկ օր ապրած լինի»[5]: Քանզի ես էլ մեկն եմ այժմ ծնվածներից՝ բազում ախտերի տակ կքած և առավել, քան շատերը, խաբված չարից ու հեռացած Աստուծո օրենքներից: Ապա ինչպես մարդիկ և սառած ժամանակներն են թելադրում, այն ենք պատմում արգահատելով և ոչ թե նախատանքով բամբասելով, բայց ավա՛ղ և վա՛յ մեզ, որովհետև ձմեռային ժամանակներն անցան, սակայն բարիքների ծաղիկը չի երևում: Եվ չկա մեկը, որը կարողանա գործել կատարյալ բարիք, թեպետև դնի սկիզբը, ինչպես որ Տերն ասում է. «Սառեց երկիրը, և սկսվեց բանսարկուի պիղծ թագավորությունը, որովհետև նշանն այստեղի՛ց ճանաչիր, որ ծուլացան մարդիկ, և հայտնապես հանդգնեց մեղքը»: Սա է նրա իշխանության սկիզբը: Եվ որքան օրերն անցնեն, այնքան բազմանալու է չարիքը, ու քիչ-քիչ աճելու է մեղքը: Բայց նա, ով կՀանա ու մի փոքր բարիք կգործի այս ցուրտ ժամանակներում, Աստված առավել կուրախանա և բազում վարձք կտա նրան, որովհետև ցանկանում է մեր դարձը դեպի Ինքը: Աստված շատ է սիրում նրան, ով խոստովանությամբ ու արտասուքով ապաշխարում է իր մեղքերն ու անօրենու-

[5] Սաղմ. ՃԽԲ 2

թյունները: Եվ արդ, ո՜վ քրիստոսասեր իշխան Պաղտին, այս մասին մինչև այստեղ բավական է, որովհետև հանդգնեցինք և ձեռնարկեցինք այս աստվածային գործը, որը վեր էր մեր կարողությունից: Քանզի ես ինքս դեռ շատ անհրաժեշտություն ունեմ ուսման և ուրիշներից խրատներ ընդունելու, բայց քո եղբայության սերն ու գութը և մեծ իշխանությանդ հրամանները հորդորեցին, որ սկսեմ: Իսկ դու քաղցրությամբ ու սիրով ընդունի՛ր այս, ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոս ընդունեց այրի կնոջ լուման: Եվ ցանկությամբ ու սիրով պահի՛ր այս քեզ մոտ քո ունեցած իշխանության ողջ փառքից ու մեծությունից առավել: Քանզի աշխարհիս փառքն ու մեծությունն անցողիկ են, ինչպես խոտի ծաղիկը, բայց այս կմնա մշտնջենավոր, և սրա փառքը կլինի քեզ համար կյանքի պաշար և քեզ հետ կգա հավիտենական կյանք, որովհետև սա ստույգ Աստուծո գանձարան է, Նրա լուսազարդ օրենքների քաղաք ու Աստուծո ձեռքով տնկած դրախտ: Եվ վստահ եմ Աստուծո ողորմածությանը, որ սրանով կլուսավորի հոգիդ, որովհետև գրասեր ես: Գիտեմ նաև, որ սրանով շատերին կլուսավորես: Եվ իմ Աստված Հիսուս Քրիստոս բազմապատիկ կճոխացնի քո հոգին ու միտքն աստվածային գործերով, ինչպես բարի ու պարարտ հողում: Եվ եթե մեկը ցանկանա արտագրել այս, դու օգնի՛ր նրան ու հորդորի՛ր, որպեսզի քո և քո ննջեցյալների համար բարի հիշատակները բազմանան այս աշխարհում: Քանզի այս գիրքը քո հիշատակն է, որովհետև քո միջոցով գրվեց այն: Եվ Աստված թող բարի ծառաների կարգին դասի քեզ, որոնք շատ բազմացրին քանքարը, թող ընջի քո ննջեցյալների բոլոր մեղքերը և քեզ քո հարազատ եղբայրների հետ միասին երկար ժամանակ թող խաղաղությամբ պահի իր կամքով, որ բարի հիշատակով օգնական լինեք ննջեցյալներին, նաև՝ Հոբի նման՝ որբերի ու այրիների հայր, աղքատների իրավարար և Աբրահամի նման՝

օտարասեր: Նաև մի՛ մեղադրիր, որ գեղջուկ բառով ու խոսքով գրեցինք այս: Գիտեմ՝ դու իմաստուն ես և կամենում ես նուրբ, ուղիղ և խորունկ խոսք, բայց ես հնարավորին չափ պարզեցրի սրա բառերը, որպեսզի տգետները նույնպես լսեն ու օգտվեն սրանից, և որպեսզի չձանձրանան լսողները: Զցանկացա այս շարունակել երկար պատմություններով, որոնք կան աստվածային Գրքերում, այլ մի փոքր ծաղկաքաղ արեցի Աստուծո օրենքների պատվիրանների ծաղիկներից, ինչպես, օրինակ, մեկը մի կաթիլ է վերցնում օվկիանոս ծովից և կամ մի շիթ՝ անհուն անձրևից: Դրա համար էլ չսկսեցի երկրի ստեղծումից և չգրեցի, թե ինչպես Աստված ոչէից գոյացրեց բոլոր ստեղծվածներին, լույսից՝ հրեշտակների դասերը, տարերքներից՝ ողջ աշխարհը և հողից՝ մարդուն. և թե ինչ խորհրդով դրեց նրան դրախտում, և կամ թե ինչպես [մարդը] դուրս եկավ դրախտից, և կամ ինչ տեղի ունեցավ մինչև չար ջրհեղեղը, ու ջրհեղեղից հետո եղած անկարգությունները. թե որքան ապրեց Նոյը, և կամ ինչու շինվեց աշտարակը, և կամ թե քանի բաժին վերցրին Սեմի որդիները, և կամ թե քանի սերունդ եղավ նրան, և նրա ազգից ծնվեց մի իշխան, որը չմիաբանվեց աշտարակաշինությանը: Եվ դրա համար Աստված պատվեց նրան ու նրա ազգից ծնվեց մարմնով: Եվ կամ թե ըստ կարգի՝ ինչեր գործվեցին Աբրահամի, Իսահակի, Հակոբի, Հովսեփի, Մովսեսի, Հեսուի օրերում, և որ սրանց օրինակը մոտ է Քրիստոսին: Նաև այն ժամանակների թագավորների պատերազմների մասին, նույնպես և՝ Իսրայելի դատավորների, Սամվելի, Սավուղի, Դավթի, Սողոմոնի, Եզեկիայի, Մանասեի, Աքաաբի ու այլ թագավորների, թե որքան պատերազմեցին: Լինում էր, որ հաղթում էին, և լինում էր, որ գերեվարվում էին: Եվ թե աստվածատես մարգարեները որքան նահատակվելով ճգնեցին՝ Զաքարիան, Ովսիան, Մաղաքիան, Աբդիուն, Ամովսն ու Միքիան, Երեմիան,

Եսային, Եղիան, Եղիսեոսը և մնացած բոլորը, մինչև եկավ ու մարդացավ Աստուծո Որդին: Եվ կամ թե ինչքան նեղություններով ու դառն արտասուքով առաքյալները շրջեցին աշխարհում, նաև նրանց մահվան ու նրանց հետևողների մասին: Եվ կամ թե ինչեր գործվեցին Հռոմում, որից հետո այնտեղ իշխեց Հռոմելասը՝ ֆռանկների հայրն ու առաջին իշխանը: Եվ կամ թե ինչու և ինչպես սկսվեց ու Հռոմում դրվեց մեծագույն կայսրի գահը, և որ առաջինը Գայեոսն էր, որն էլ կոչվում էր Հուլիոս, իսկ հետո՝ Օգոստոսը, որի ժամանակներում էլ Բեթղեհեմում սուրբ կույս Մարիամից ծնվեց մեր Տերը: Դեկոսն ու Ներոնը, Վաղերիոսն ու Տրայանոսը, Նումերիոսն ու Մաքսիմիանոսը, Դեոկղետիանոսն ու Մաքսենդեսը, սուրբ Կոստանդիանոսն ու պիղծ Հուլիանոսը, մեծն Թեոդոսն ու հույժ վատագույն Մարկիանոսը, Զենոնն ու Անաստասը, Հուստիանոսն ու Հերակլը, Մորիկն ու Մանիլը և ուրիշներ, որոնց մասին գրի չառանք, ավելի քան հիսուն կայսրեր նստեցին Հռոմում ու Կոստանդնուպոլսում, որը Բյուզանդիոնն է: Եվ թե որքան բաներ կատարվեցին նրանց օրերում չար կամ բարի, կամ [ինչ] հերձված, եկեղեցու հալածանք և կամ պատերազմներ [եղան], այդ մասին չգրեցինք:

Եվ կամ ինչու Քամն անիծվեց Նոյի կողմից, և նրա որդիներն աշխարհի որ բաժինը վերցրին, և կամ թե քանի ազգեր դուրս եկան նրանից և բազմացան երկրի երեսին: Եվ կամ թե քանի ազգ դուրս եկավ Հաբեթից՝ Նոյի կրտսեր որդուց, որը մեր հայրն է: Եվ թե քանի ազգեր ու լեզուներ բաժանվեցին, և քանի աշխարհներ ու կղզիներ ժառանգեցին: Եվ կամ թե ինչ գործեց մեր հայր Հայկը, որը Հաբեթի որդիներից էր, և որի անունով մենք Հայք կոչվեցինք: Հայկը՝ ցանկալի ու գեղեցկապատկեր, հաստաբազուկ ու լայնաճակատ մեր հայրը, խարտյաշ ու գանգրահեր էր: Քանզի երբ

լեզուները բաժանվեցին, ու փլվեց աշտարակը, Բելը Բաբելոնում չինեց թագավորական գահ, և ինքը կամեցավ միայնակ թագավորել մարդկանց վրա: Իսկ մեր հայր Հայկը, վերցնելով մեր ազգն ու տոհմը՝ մոտ չորս հարյուր հոգի, որովհետև քիչ էին մեր նախնիները, և փախչելով Բելից՝ ամրացավ հյուսիսային կողմում՝ Վերին Հայքում, որը Մեծ Հայք են կոչում: Եվ Բելը, որը նստել էր Բաբելոնում, չկարողացավ Հայկին ենթարկել իր հպատակությանը: Եվ որովհետև այն ժամանակ չէին սովորել ձիու վրա պատերազմել ու կռվել, Բելը, հավաքելով հիսուն հազար պատերազմող տղամարդկանց հետևակներ, եկավ բարկությամբ, ինչպես ծովի ալիքներ, որ ջնջի մեր ազգը: Իսկ Հայկը հազար հոգով դուրս եկավ ընդդեմ նրա. թեպետ քիչ էին, բայց քաջ այրեր էին: Եվ Բելն իր գնդով եկավ ավելի շուտ, քան զորքը: Իսկ Հայկն էլ իր գնդով ելավ ընդդեմ նրա: Բելը հագել էր կրկնակի տախտակի նման թանձր երկաթներ ետևից ու առջևից, որովհետև գիտեր մեր հոր բազկի թափը: Բելն ուներ նաև խիստ սոսկալի նիզակ իր ձեռքին, իսկ մեր հայր Հայկը գալիս էր լայնալիճ պնդակազմ աղեղով: Բելը գոչեց Հայկի վրա, որովհետև հսկա էր և չար վիշապի նման ցանկանում էր կլանել մեր հորը: Իսկ Հայկը՝ մեր լայնաճակատ հայրը, ուժ տվեց բազկին, լայնալիճ աղեղից նետ արձակեց և խփեց Բելի կրծքին, որը, պատուհան բացելով, անցավ խրվեց գետնի մեջ շատ զորավոր կերպով, և երկաթի թանձրությունը չխանգարեց նրան: Այսպիսով, ընկնելով սատկեց հսկա և մսաբլուր Բելը, և ազատվեց մեր ազգը:

Եվ կամ ինչ արեցին Թորգոմի [որդիները], այսինքն՝ Հայկի աթոռը, որովհետև հայերը Թորգոմի որդիներ ու տուն կոչվեցին նրա գործած քաջության համար: Եվ կամ ինչ հրաշալի քաջություններ և հաղթություններ գործեց նրանից հետո Ամրիկը (Արամը), որովհետև բոլորը մեր ազգին նրա

անվամբ կոչում են արմեններ: Եվ թե՝ երբ պակասեցին հայոց թագավորները, և ընկավ նրանց թագավորությունը, և Աբրահամի ազգից թագավորներ եկան Հայք, և չորս որդիների սերնդից, որոնք ծնվեցին նրա համար Քետուրից, առաջինն Արշակն էր, նրանից հետո՝ Վաղարշակը, Արտաշես ընտիրն ու քաջ Տիգրանը, Երվանդն ու Արա Գեղեցիկը[1], Աբգարն ու Սանատրուկը, Խոսրովն ու հետո Տրդատն ու Գրիգոր Լուսավորիչը, որոնք Աբրահամի ցեղից են, ըստ Աստուծո հրամանի, որն ասաց. *«Աբրահա՛մ, քեզնից կծնվեն ազգերի թագավորներ, որովհետև դու միայն ջանացիր ու գտար Աստծուն»*[2]: Իսկ Տրդատից հետո [եկան] մյուս Արշակն ու Խոսրովը, Պապն ու Վռամշապուհը, որի օրոք էլ Աստուծո շնորհներով գտնվեց հայոց գիրը, նաև սուրբ Վարդանանք՝ քաջ ու անվանի, ընտիր նահատակներ Եկեղեցու սուրբ հավատի համար: Տե՛ս, թե այս թագավորների ժամանակներում որքան գործեր, պատերազմներ ու հալածանքներ եղան, որոնք գրի չառանք, որովհետև բազում վիպասաններ ու իմաստուն պատմագիրներ հայտնվեցին աշխարհում և անթիվ գրքեր գրեցին ու թողեցին ի հիշատակ նախկին անցած գործերի, որոնք եղան այս աշխարհում:

Եվ կամ թե որքան գործեր ու պատերազմներ եղան Բաբելոնում Նաբուգոդոնոսորի, Դարեհի, Կյուրոսի և այլ թագավորների օրոք: Եվ կամ թե՝ որքան թագավորներ նստեցին Եգիպտոսում ու ինչ գործեցին նրանք: Քանզի տասը Պտղոմեոս արքաներ նստեցին այնտեղ ու շատ փարավոններ, որոնցից մեկը ընկղմվեց Կարմիր ծովում: Իսկ Պտղոմեոսներից մեկը հավաքեց աշխարհի բոլոր գրքերը:

Եվ կամ թե ինչ կատարվեց Մակեդոնիայում, որտեղից դուրս եկավ Աղեքսանդրը և գրավեց աշխարհի երեք բաժինները:

[1] Ըստ Մովսես Խորենացու Արա Գեղեցիկը մեծն Արայի որդին է և նրա անունն այս շարքում ճիշտ չէ վկայակոչված *(ԽԿ)*:

[2] Ծննդ. ԺԵ 6

Եվ այլ անսպառ գրույցների շատախոսություններ ու բազում պատմություններ, որոնք գրվել են նախնյաց կողմից ծովի ավազներից ավելի: Եվ նրանց մեջ կան, որ հոգևոր են, կան, որ մարմնավոր են, նաև կան, որ հոգևորն ու մարմնավորը խառնված են միմյանց: Բայց դրանք ջանասիրաբար ընթերցողների համար շահ են և գիտություն, որովհետև մեծ բարիք է, երբ մեկը կարդում է բոլոր գրքերն ու նրանցով ճանաչում բոլոր արարածներին, նաև՝ ինչ կա աշխարհում ու հանդերձյալ կյանքում, և փառաբանում է արարիչ Աստծուն: Քանզի տգետը կույր է կոչվում. ավելի լավ է աչքով կույր լինել և ոչ թե մտքով, որովհետև կույրը զուրկ է արեգակի լույսից, իսկ տգետը՝ Աստուծո ճառագայթից ու գիտության լույսից, որովհետև ո՛չ այս կյանքը կարող է իմանալ և ո՛չ էլ հանդերձյալը: Աշխարհում չկա ավելի մեծ բարիք, բազում գանձ ու անգին մարգարիտ, քան գիտությունն է: Քանզի ավելի լավ է լինել մարմնով աղքատ, բայց ճանաչել ու իմանալ երկրավորն ու երկնավորը, քան թե՝ ամբողջ աշխարհի թագավոր, բայց տգետ ու մտքով կույր: Քանզի աշխարհն ու նրա մեծությունը կանցնեն, բայց գիտությունը կմնա միշտ: Եվ այն է ճշմարիտ բարին ու հաստատուն մեծությունը, որովհետև թե՛ մերկանալիս, թե՛ մեռնելիս չի բաժանվում մարդուց, այլ գնում է նրա հետ:

Ապա, հիրավի, գրասերն ու ուսումնասերը աստվածասեր է կոչվում: Քանզի գրված է. *«Արդարի բերանը խոսում է արդարություն»*[3], և՝ *«Երանելի է նա, ում բերանից Աստուծո օրենքը չի հեռանում»*[4], որովհետև Աստված նրա մեջ է և չի հեռանում: Ուստի մենք էլ լի բերանով օրհնենք և բարեբանենք Համագո և Ամենասուրբ Անբաժանելի Երրորդությանը, որն Իր լույսի գիտությամբ լցրեց մեզ և լուսավորեց մեր միտքը, որով իմաստուն

[3] Սաղմ. ԼԶ 30

[4] Առակ. ԻԹ 18

դարձրեց մեզ և հուսադրեց և՛ այս աշխարհի նկատմամբ, և՛ այն, որ գալու է, և աստվածացրեց մեզ սուրբ Ավազանով ու Հիսուս Քրիստոսի խաչի չարչարանքներով: Եվ իմացանք, թե որտեղից ընկանք կամ ում միջոցով, կամ ինչու ոտքի կանգնեցինք և կամ ուր ենք գնալու այս կյանքից հետո: Եվ արդ, նախ հրեղենին հողին կապեց և արձակեց, որովհետև պատճառ գտավ, և դարձյալ առավել ևս կապելու է[1]: Արդ, չափ ու սահման կա ամեն ինչին, որովհետև աչքը տեսնելով չի հագենա, ոչ էլ ականջը՝ լսելով, և ոչ էլ լեզուն՝ խոսելով: Եվ երանի՜ նրան, ով գիտե ժամանակով ու չափով առաջնորդվել: Եվ դրա համար երբեք մի՛ դադարեք սուրբ Գրքերի ընթերցումից, այլ առավել մեծ փութո՛վ ջանացեք Աստուծո օրենքների հույսով օր ու գիշեր, քան մնացած բոլոր բարեգործությունները, որպեսզի այստեղ լուսավորվի մեր միտքն Աստուծո գիտության լույսով, իսկ այնտեղ պայծառանանք բոլոր սուրբերի հետ Հոր, Որդու և Սուրբ Հոգու եռյակ լույսի և մի բնության երանական ու գերազանց լույսով, Որ օրհնյալ է այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԻԴ. Աղերս և պաղատանք առ Աստված ողջ աշխարհի համար

Եվ արդ, որովհետև քո միջոցով սկիզբ դրվեց այսպիսի աստվածային գրքերի, ո՛վ վսեմափառ, աստվածամերձ, բարձրագահ, թագավորազարմ և քրիստոսասեր իշխան Պաղտին, բազմակրկին անդրադարձությամբ բե՛ր քո աստվածապաշտ միտքը, որ այս աստվածային մատյանի և հոգևոր երգի ավարտին Աստծուն առաքենք աղաչանքի և պաղատանքի խոսքեր ողջ աշխարհի ու ննջեցյալների համար, որովհետև

[1] Նկատի ունի դիվային ուժերին, որոնք նախապես արարվել էին որպես լուսո հրեշտակներ *(ԽԿ)*:

Նա աղոթքներ է կամենում և ցնծում է առավել, քան բյուրավոր գառներից ու զվարակներից, որոնք զոհում են Նրա համար: Քանզի ոչինչ չի կարող այնպես ուրախացնել Աստծուն, ինչպես ընդհանուրի օգուտը:

Մեր քրիստոսապսակ թագավորին իր իշխանների հետ, ինչպես նաև մեզ միմյանց հանդեպ սիրո՛վ պահիր: Եվ երկար օրեր ու տարիներ խաղաղ կյանքով ապրեցրո՛ւ այս կյանքում և բարձրաբազուկ ու հաղթո՛ղ դարձրու նրանց անօրենների ու բոլոր թշնամիների վրա, նաև Հին Գրքի խոսքը կատարի՛ր նրանց համար. «Օգնի՛ր մեկով հազարին և երկուսով տասը հազարին սպանել»[2]: Սրբություն ու բարեգործությո՛ւն տնկիր սրանց սրտերում և ահեղ Ատյանը միշտ տարածի՛ր նրանց աչքի առջև: Իսկ ծուլությունն ու մարմնի հեշտասիրությունը բոլոր մեղքերով հանդերձ հալածի՛ր նրանցից: Գլխավոր հայրապետ կաթողիկոսին, եպիսկոպոսներին ու քահանաներին հեզ, խոնարհ և առանց շահախնդրությա՛ն պահիր: Ագահ արծաթասիրությունը հալածի՛ր և նրանց սրտում ողորմածությո՛ւն սերմանիր: Բարի օրինակ և անգայթակղելի՛ դարձրու նրանց, նաև մեծ քարից, որը կախվելու է պարանոցից, փրկի՛ր: Կուրացածներին՝ լույս և մեղքերով նեխած աշխարհիս աղ [դարձրու], պատրաստի՛ր սրանց աղոթքի, սուրբ եկեղեցու գործերի ու Քեզ ծառայելու համար անսայթաք և առանց գայթակղությա՛ն պահիր: Եվ ովքեր Քո շնորհներից պարգև վերցրած՝ դարձյալ Քեզ կմատուցեն, նրանց ձեռնադրությունն ու մկրտությունը լույսո՛վ զարդարիր: Պսակը պարկեշտ անկողնով սո՛ւրբ պահիր: Սուրբ Պատարագը թող հաճելի և ընդունելի լինի Քեզ: Եկեղեցու վարդապետներին ուղիղ հավատով առաքելական օրենքներում պնդակա՛զմ զարդարիր, անաչառ քարոզողնե՛ր դարձրու և փրկի՛ր նրանց պորտաբույծ կյանքից: Շնորհի՛ր աճեցնել

[2] . Բ Օր. ԼԲ 30

գիտության քանքարն ու հաջողի՛ր մարդկանց առաջ խոսքի արծաթը դնել սեղանին: Չար մշակի վարձքից ու քանքարը թաքցնելու հանդիմանությունից ազատի՛ր: Հատող սրից փրկի՛ր ու ապահովի՛ր արտաքին խավարից: Մաքո՛ւր պահիր որովայնապարար ու պորտաբույծ հաճույքներից և ազատի՛ր մարմաջով լի մարմնական հեշտաքարոզ մտքերից: Պատսպարի՛ր խորհուրդները՝ կրելու Քո խաչը, շնորհի՛ր հետևել Քո ոտնահետքերին, առաջնորդի՛ր՝ ձրի վերցրածը ձրի էլ վերադարձնելու: Շնորհի՛ր նրանց հեռու մնալ գայթակղեցնող կանանցից: Պարգևի՛ր, պահպանի՛ր՝ Աստուծո անվանակցության պարգևները վերցնելու, բարիք գործելու և ուրիշներին սովորեցնելու, նրանց մտքում պատկերի՛ր ու տպավորի՛ր: Եկեղեցու երաժշտապետներին հեզության հոգով զարդարիր և հպարտության եղջյուրից փրկի՛ր: Դասակի՛ց դարձրու սերովբեներին, արի՛ և արթո՛ւն պահիր եկեղեցու դռանը, քաջալերի՛ր աղոթքների ու ծառայության, հորդորի՛ր ուսման և ժառա՛նգ դարձրու ժիր մշակներին: Փրկի՛ր ագահությունից ու անձնական փորձություններից և պարգևի՛ր նրանց անճառելի բարին: Տե՛ր Հիսուս Քրիստոս՝ ճգնավորների բարի՛ Առաջնորդ, որոնք լեռներում են, առաջնորդի՛ր ու մաքրի՛ր, առանց կեղծավորության հորդորի՛ր նրանց Քո սիրով, որ միշտ բազկատարած աղոթեն աշխարհի համար, և քաջալերելով՝ զորացրո՛ւ նրանց: Մնափառությունը, աշխարհի սերն ու մարմնական ցանկությունը հալածի՛ր նրանց մտքից. ահավոր բարքերն ու տեղից տեղ փոխվելը թվացյալ ցնորքներով հանդերձ հերքի՛ր նրանց հոգուց. սուտ տեսիլքներից, դիվախաբ լինելուց փրկի՛ր նրանց. նաև որովայնի անժուժկալությունից ազատի՛ր նրանց. դիվական ձանձրույթից, անհոգ ծուլությունից, չար նեղսրտությունից, խառնակիչ հայհոյությունից պահպանի՛ր նրանց. պիղծ ոխակալությունից, հրախառն մախանքներից, նախանձից, չար լուրից ու բարբաջանքից և ավելորդաբանությունից փրկի՛ր նրանց: Այս կյանքը հեռացրո՛ւ նրանց մտքից, նաև հանդերձյալ աշխարհն ու ահագին Ատյանը միշտ պահի՛ր մեր աչքերի առաջ: Նաև վանական կուսակրոն քահանաներին, Տե՛ր Հիսուս Քրիստոս, սրբելով՝ մաքրի՛ր միտքն ու հոգին աշխարհի ախտերից և մարմնի պիղծ ցանկություններից. նաև պոռնկական պիղծ դևերին հալածի՛ր աստվածային հրեղեն գավազաններով, քնկոտությունից ու չար լեզվից, որովայնամոլությունից ու ոխակալությունից և բանսարկուի բոլոր հրախառն ծածուկ նետերից պաշտպանի՛ր նրանց, փրկի՛ր ագահության ու բարկության բոլոր մեղքերից և խորհուրդներից պահի՛ր նրանց: Որպեսզի կատարյալ բարի գործերով, սերտ և հաստատուն հավատով, անշեղ մտքով ու մաքուր խորհրդով մերձենան Աստուծո Որդու Մարմնին ու Արյանը՝ ի շահ իրենց անձերի, ի փրկություն ապրողների և ի թողություն ննջեցյալների: Տե՛ր Հիսուս Քրիստոս, մահվան օրը, անաչառ Արյունն ու սոսկալի բեմն անմոռաց հաստատի՛ր նրանց սրտերում: Եվ ովքեր աշխարհից գան և կրոնավորեն, նրանց հաստատո՛ւն պահիր սիրո, հույսի, հավատքի և բոլոր բարեգործությունների մեջ, ժուժկա՛լ դարձրու նրանց, Տե՛ր Հիսուս Քրիստոս, նաև նրանց մտքից մաքրի՛ր նախկին վարքի հիշողությունը, որն ունեին աշխարհում. աղոթքներում՝ անդբաղ, առանց ագահությա՛ն պահիր նրանց, հանդերձյալ աշխարհը, ահագին Ատյանը, անաչառ դատաստանն ու երանական ցնծությունը հաստատի՛ր ու ամրացրո՛ւ նրանց մտքի մեջ:

Նաև Քո ողջ ժողովրդին՝ տղամարդ թե կին, ծեր թե մանուկ, երիտասարդ թե կույս, բանսարկուի բոլոր մեքենայություններից ու պատրանքներից Աստուծո Հոգով անարա՛տ պահիր հոգով ու մարմնով:

Նաև ողջ աշխարհս պտղատու ծառերով ու բույսերով, անասուններով ու թռչուններով օրհնի՛ր և աճեցրո՛ւ Քո ժո-

ղովրդի օգտի, պետքերի ու կարիքների համար:

Նաև կուսությունը սուրբ ու հստա՛կ պահիր և մաքրի՛ր ախտերի խտտանքից ու ապականագործ մեղքերից պահպանի՛ր նրան: Իսկ ամուսնությունը սոդոմական չար խառնակությունից ու ավելորդ աղտեղությունից պարկեշտացրո՛ւ և միայն որդեծնության օրհնության համա՛ր շնորհիր նրանց, երբ գան իրար մոտ՝ միավորվելու: Եվ նրանց կամքով, ճիշտ ժամին ըստ նրանց աղոթքների՛ պարգևիր: Իսկ մանուկը նրանց որովայնում բարվո՛ք ստեղծագործիր ու անարա՛տ հասցրու ծնունդին: Ծնողի բնության կապը կակղացրո՛ւ և մահու չափ դառը ծննդական ցավից ազատի՛ր ու փրկի՛ր Դու: Տե՛ր, գիտեմ, որ Քո ստեղծածներն ենք, և Դու ես մեզ ձեռակերտում կանանց որովայնում ու դնում Քո Աչը մեզ վրա: Եվ խոնավ, խավար բանտում անարա՛տ պահիր Քո ստեղծածներին, որովհետև ահեղ և զորավոր ես. և Քեզ փա՛ռք ամեն ինչում: Իսկ ծնված մանկանը Ավազանի շնորհներով Հոր որդեգրությանը և անվախճան կյանքի ժառանգությանը՛ արժանացրու: Շնացողներին, պոռնիկներին ու այլ անասելի աղտեղի գազրագործներին հուսահատությունից և չար մեղքերից հանի՛ր, սիրո հրո՛վ ջերմացրու և զղջման հոգի՛ առաքիր նրանց: Հպարտին խոնարհեցրո՛ւ, իսկ արբեցողին պահեցո՛ղ դարձրու: Զրկողին ու անողորմին, վաշխառուին ու գողին, ավազակին ու կախարդին, թովչություն գործողին ու սպանողին, մատնողին ու երդմնահարին, ուրացողին ու անհույսին, բոլոր տեսակի մեղավորներին ու չարագործներին, որոնք սուրբ Ավազանի ծնունդ են, ո՛վ Աստուծո Հոգի, ազատի՛ր մեղքերի ծառայությունից ու սատանայի որդեգրությունից և զղջման հոգի՛ ուղարկիր նրանց վրա Քո հարավային քաղցր շնչով ու փափկացրո՛ւ նրանց խստացած սրտերը: Հոգեվարքն ու գերեզմանի դուռը, անշեջ գեհենն ու անքուն որդը, թանձր խավարն ու ցուրտ սառնամանիքը,

Հիսուսի երևման Օրն ու տիեզերական հրապարակը, ինչպես նաև մնացած ամեն բան միշտ երևացրո՛ւ և դի՛ր նրանց մտքի աչքերի առջև:

Երկնավո՛ր Հայր, ազատի՛ր գերվածներին և փրկի՛ր բանտարկվածներին, նավորդներին բարվո՛ք առաջնորդիր և ծովի ալիքներից փրկի՛ր, ճանապարհորդներին անխռով իրենց աշխարհն ու ժառանգությանը՛ վերադարձրու, ազատի՛ր դիվահարներին, առողջացրո՛ւ հիվանդներին և այլ ախտերով տառապողներին փորձանքներից փրկի՛ր, համբերողներ ու իմաստուններ դարձրու իրենց վշտի պահին: Շնորհի՛ր աղքատներին համբերության սուրբ վարք, շնորհի՛ր փարթամացած մեծատուններին ողորմած, բարի ու գթառատ հոգի, նաև պարգևի՛ր կատարյալ սեր աղքատների ու ճանապարհորդների նկատմամբ: Նաև բոլոր Քո անարատ ձեռքով ստեղծվածներին Քո կամքի՛ն դարձրու ողորմությամբ ու սիրով: Եվ դառը ցավերը բոլոր մեղքերի, որոնք գործվեցին ամբողջ աշխարհում, որոնք գործվում են առաջին մարդուց մինչև վերջինը, այս ամենը գցի՛ր, ամրացրո՛ւ և կապի՛ր սատանայի գլխով ահեղ Ատյանում սուրբ Աստվածածնի ու բոլոր արդարների բարեխոսությամբ, որովհետև չարը սովորեցրեց մեղքերն ու գործել տվեց աշխարհի սկզբից ի վեր: Ողջ մարդկային ցեղին առանց մեղքերի՛ պահիր ու Քո անսահման բարիքներին հաղորդ ու ժառանգո՛րդ դարձրու: Որովհետև ամեն ինչում գթած ես, մարդասեր և ողորմած, Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստված բոլոր ստեղծվածների, որ և ամեն ինչով հավասար ես Հորը և Սուրբ Հոգուն: Որ իմ հայր Ադամի և նրա բոլոր սերունդների համար խոնարհվեցիր հայրական ծոցից և մտար կույս Մարիամի որովայնը, մարդացար, կամովին խաչ բարձրացար և ջնջեցիր անբավ պարտքերը Քո թշնամիների, իմ հայր Ադամի ու մայր Եվայի, ինչպես նաև նրանց մյուս՝ Քեզ ատող որդիների: Եվ փրկեցիր առաջին

անեծքներից ու բոլորին ազատեցիր, ինչպես նաև ինձ՝ Քո մյուս ստեղծածների հետ միասին, որովհետև ես նույնպես իմ հայր Ադամի չար անեծքների կապանքների մեջ էի:

Եվ արդ, դրա համար աղաչո՛ւմ եմ Քեզ, եթե մեկը մահու չափ մեղք գործի և կամ խորհի մեղանչել, ով որ փորձել է նենգություն իմ հանդեպ, և կամ ով էլ պիտի փորձի, քանի դեռ աշխարհում եմ, և ով բամբասեց ու պիտի բամբասի, և ով նենգեց ու պիտի նենգություն գործի, ջնջի՛ր նրանց հանցանքներն ու թողությո՛ւն տուր նրանց այս անօրենություններին: Որ թեպետև չար գևը բարկացնի ու նզովքներ տա արտահայտելու և կամ ակամա այլ չար խոսքեր, աղաչո՛ւմ եմ, Տե՛ր, մի՛ լսիր ինձ այն չար ժամին, որովհետև բռնադատում է չարը: Այլ ա՛յժմ լսիր, երբ աղաչում եմ, և թողությո՛ւն տուր բոլորի մեղքերին, ովքեր իմ դեմ մեղք գործեցին:

Քո ամենահաղթ զորությամբ արմատախի՛լ արա իմ սրտից ոխակալությունն ու ատելությունը, մախանքն ու նախանձը, ամեն տեսակի խեթն ու մնացած բոլոր դիվական սերմերը: Քո ողորմությամբ, Տե՛ր, հեռացրո՛ւ իմ անձից պոռնկական դևի ցանկասեր ախտն ու անձնական կյանքի սերն ու փառքը, որովհետև հող եմ ու մանր փոշի և անասուն եմ համարվում Քո առաջ: Նախ՝ եթե չփրկեիր, և դարձյալ՝ եթե չօգնես, ակնթարթորեն իմ անձը կիջնի դժոխք: Տե՛ր, սովորեցրո՛ւ ինձ՝ կատարել Քո կամքը, ինչպես նաև սերմանի՛ր իմ սրտում Քո ողջ բարիքները: Եվ եթե թողնես, կջնջվեմ, թե հեռանաս, կընկղմվեմ, եթե թողնես, կկործանվեմ, թե չմխիթարես, կվրդովվեմ, թե չհաստատես, կհուսահատվեմ, իսկ եթե պահես, կկանգնեմ, թե խնամես, կնորոգվեմ, եթե գաս, կհաստատվեմ, թե մխիթարես, կհուսապնդվեմ ու կցնծամ սրտով:

Ամեն բանում Դու ես իմ փախուստի տեղն ու ապավենը: Դու հո՛գ տար ինձ, Աստվա՛ծ իմ Հիսուս Քրիստոս, և Քեզ կհանձնեմ իմ ողջ կյանքը հոգով ու մարմնով: Իսկ ամեն ոք, ով ծնունդից մինչև այժմ և մինչև մեր՝ աշխարհից դուրս գալը մեզ բարի աչքով ու խնամքով է նայել և կամ նայում է դայակությամբ, կերակրելով, ընծայելով, ողորմությամբ, աղոթքների բարի խոսքերի հանձնարարմամբ, Տե՛ր Հիսուս Քրիստոս, նրանց մեկի փոխարեն հարյուրապատի՛կ հատուցիր այստեղ և հանդերձյալում Քո անճառելի փառքի՛ն [արժանացրու]. իմ ծնողներին, որոնք դառը վշտերով ծնեցին ինձ, ինչպես նաև մեծ տառապանքներով կերակրեցին և գորովագութ [սիրով] կարեկցում էին ինձ, բոլորի Տեր՝ Հիսո՛ւս Քրիստոս, որ մարմնով ծնվեցիր սուրբ կույս Մարիամից, Քո Մոր և Քո բոլոր սուրբերի բարեխոսությամբ ջնջի՛ր նրանց կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ [գործած] բոլոր հանցանքներն ու մեղքերը Քո ողորմությամբ. ինչպես նաև իմ բոլոր ազգականներին, գիտություն ուսանողներին ու բարի գործողներին:

Եվ ինձ՝ տառապյալիս ու ողորմելիս, որ անունով եմ միայն գովաբանվում մարդկանցից և բարի երևում, բայց ոչ՝ Աստուծո առաջ, որովհետև հույժ հեռացել եմ Աստծուց, փրկի՛ր մեղքերի որոգայթից և ազատի՛ր օտար չարավալից հանցանքների մասնակցությունից: Եվ ըստ իմ կարողության չափի թույլատրի՛ր, որ փորձություններ գան ինձ վրա, և Դու զորացրո՛ւ այդ պայքարի մեջ և ավելի՛ հեռացրու ինձանից: Ադամի բոլոր սերունդներին, ինչպես նաև ովքեր ծնունդ են սուրբ Ավազանի, ովքեր մեզնից առաջ էին, և ովքեր մեր ժամանակակիցն են, ինչպես նաև ովքեր պիտի գան մեզնից հետո՝ մինչև փողի հնչելը, փրկի՛ր բոլորին, Տե՛ր Աստված՝ ամենայնի՛ Արարիչ, անքուն որդերից ու անշեջ գեհենից, դաժան սառնամանիքներից, դառնակսկիծ տանջանքներից, թանձր խավարից ու անհանգիստ տարտարոսից: Նաև մեզ, ինչպես նաև նրան, ով խնդրեց գրել այս գիրքը, անճառելի

բարիքներին արժանավո՛ր դարձրու Քո բոլոր սուրբերի հետ, որ օրհնյալ ես Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Հիշատակարան

Ես՝ «ողորմելի Վարդան», փգեթա գիրանականների մեջ և «պորին»՝ կրոնավորների մեջ, գրեցի այս աստվածաբնակ բառերը աստվածասեր թագավորական իշխան պարոն Պաղտի-նի խնդրանքով: Դան՝ աղաչո՛ւմ եմ, մի՛ մեղադրեք այս հիմար գրվածքի համար, որովհետև այս էր մեր կարողությունը: Եվ որքան հասու՝ եղավ մեր միտքը, Աստո՛ծ «ողորմությամբ հավատացինք Աստո՛ծ օրենքներից ու՝ գրեցինք այսպես: Եվ սա հո՛յժ ծանր եղավ մեզ, որովհետև երկու՝ տարի է, որ բա-զո՛ւմ աշխարհներո՛ւմ եղանք և շրջեցինք գրքերը, որով-հետև բո՛ւռն է մարմնի կարիքը, երբ պակասո՛ւմ է: Որովհետև հալածվեցինք մեր հայրենի կալվածքից՝ Այս-րիսի երկրից և Տլո՛ւ գավառից, ու՝ եկանք Այգեկ: Իսկ Աստված քարի հա-ջողեց մեր բոլոր գործերն ու՝ մարմնի պետքերը: Այս ամենը հավատացի նախկինո՛ւմ «երդածից»: Եվ «կոեցինք այս գործը և ավարտեցինք աստվածաբնակ և ցանկալի Այգեկ անապատո՛ւմ, աստվածընկալ և հրաշալան սո՛ւրբերի՝ սո՛ւրբ Միհոնի և սո՛ւրբ Կարապետի հովանու՝ տակ և սո՛ւրբ «ւիրիս առաջնորդ տեր Կոստանդին արքասո՛ւն եպիսկոպոսի առաջնորդությամբ, որը ընտրեց երիտասարդ էր, «ակայն «դացել էր առաքելական աս-տիճանը: Այս հայոց թվականի ՈԿԱ (1212) տարին էր: Եվ Կիլիկիայո՛ւմ հայոց թագավորն էր Լևոն Ա-ին՝ էրիս-տոսասակ և ահարկու՝ անօրենների վրա և անվանի էր Վերին Հայքո՛ւմ, նաև՝ ղրավոր հալածող էր անօրենների: Եվ ԻԴ (24) տարի է, որ անօրենները գերել են Երուսաղեմը, և վե-րացել է հայերի թագավորությունը, և արքական աղգը Կոս-տանդնուպոլսի մոտ է: Դան՝ այս տարի վախճանվեց տեր Դավ-իթը, որը էնչ տարիներ կաթողիկոս եղավ Աղվանքո՛ւմ:

Հիշատակարան

Ես՝ «ողորմելի Վարդան», փգեթա գիրանականների մեջ և «պորին»՝ կրոնավորների մեջ, գրեցի այս աստվածաբնակ բառերը աստվածասեր թագավորական իշխան պարոն Պաղտի-նի խնդրանքով: Դան՝ աղաչո՛ւմ եմ, մի՛ մեղադրեք այս հիմար գրվածքի համար, որովհետև այս էր մեր կարողությունը: Եվ որքան հասու՝ եղավ մեր միտքը, Աստո՛ծ «ողորմությամբ հավատացինք Աստո՛ծ օրենքներից ու՝ գրեցինք այսպես: Եվ սա հո՛յժ ծանր եղավ մեզ, որովհետև երկու՝ տարի է, որ բա-զո՛ւմ աշխարհներո՛ւմ եղանք և շրջեցինք գրքերը, որով-հետև բո՛ւռն է մարմնի կարիքը, երբ պակասո՛ւմ է: Որովհետև հալածվեցինք մեր հայրենի կալվածքից՝ Այս-րիսի երկրից և Տլո՛ւ գավառից, ու՝ եկանք Այգեկ: Իսկ Աստված քարի հա-ջողեց մեր բոլոր գործերն ու՝ մարմնի պետքերը: Այս ամենը հավատացի նախկինո՛ւմ «երդածից»: Եվ «կոեցինք այս գործը և ավարտեցինք աստվածաբնակ և ցանկալի Այգեկ անապատո՛ւմ, աստվածընկալ և հրաշալան սո՛ւրբերի՝ սո՛ւրբ Միհոնի և սո՛ւրբ Կարապետի հովանու՝ տակ և սո՛ւրբ «ւիրիս առաջնորդ տեր Կոստանդին արքասո՛ւն եպիսկոպոսի առաջնորդությամբ, որը ընտրեց երիտասարդ էր, «ակայն «դացել էր առաքելական աս-տիճանը: Այս հայոց թվականի ՈԿԱ (1212) տարին էր: Եվ Կիլիկիայո՛ւմ հայոց թագավորն էր Լևոն Ա-ին՝ էրիս-տոսասակ և ահարկու՝ անօրենների վրա և անվանի էր Վերին Հայքո՛ւմ, նաև՝ ղրավոր հալածող էր անօրենների: Եվ ԻԴ (24) տարի է, որ անօրենները գերել են Երուսաղեմը, և վե-րացել է հայերի թագավորությունը, և արքական աղգը Կոս-տանդնուպոլսի մոտ է: Դան՝ այս տարի վախճանվեց տեր Դավ-իթը, որը էնչ տարիներ կաթողիկոս եղավ Աղվանքո՛ւմ:

Եվ արդ, աղաչո՜ւմ եմ բոլորիդ, ովքեր կարդան այս, աղո՛թք արեք աստվածասէր իշխան պարոն Պաղտինի համար, որպէսզի Աստված խաղաղութեամբ պահէ նրան իր հարատեւ եղբայրներով հանդերձ, և թողութի՛ւն շնորհէ նրա բոլոր ննջեցյալներին, որպէսզի Աստված ների նրանց հանցանքները:

Հիշեցե՛ք նաև աղորմելի Վարդանիս, որը շարադրեց այս, և իմ ծնողներին ու եղբայրներին և ազգականներին. և ովքեր հիշեն մեզ, ովքեր այստեղ հիշատակվեցին, Աստված թողութի հիշի նաև յեր ննջեցյալներին, և Նրան փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՐԱՏ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Առաջին հրատարակության Ներածությունը 9

Վարդան վարդապետի խրատը բոլոր քահանաների և ժողովրդին 21

Վարդան վարդապետի խրատը Չորեքշաբթի և ուրբաթ օրերի խորհրդի վերաբերյալ 27

[Քառասնորդական պահքի մասին] 30

Վարդան վարդապետի խրատը հոգին ավանդելու օրվա մասին, երբ հոգու աստվածաշեն տաճար մարմինը քակտվում է, և հոգին ու մարմինը միմյանցից բաժանվում են 36

Դարձյալ սուրբ Վարդանն ասում է 44

Դարձյալ քարոզ և պատվիրան Վարդան վարդապետից 47

Վարդան վարդապետի խրատը զրկանք պատճառելու մասին 49

Վարդան վարդապետի խրատը կախարդների մասին 51

Վարդան վարդապետի խրատը լեզվանիության և անզգամության մասին 53

Վարդան վարդապետի խրատը շնացողների և զանազան մեղքերի վերաբերյալ 57

Հպարտների և ոխակալների մասին 61

Խրատ սիրո մասին 62

Խրատ մեղավորներին 64

Հոգեշահ խրատ նորընծա քահանաներին 67

ԽՐԱՏՆԵՐ

Առաջին հրատարակության նախաբանը 73

Ա. Սուրբ Երրորդության ուղիղ դավանություն գոհաբանական խոսքով և աղաչանք-աղերսանքով՝ մեր գործերի հաջողության և անթերի ու կատարյալ ուղղությամբ [նպատակին] հասնելու համար 79

Բ. Թագավորազն և քրիստոսակիր մեծ իշխան պարոն Պաղտինի նամակը՝ ուղղված ի պատասխան գերիմաստ Վարդան վարդապետի թղթի 80

Գ. Նույն Վարդանի թուղթը. գովաբանական խոսք իշխանի խոնարհության մասին 82

Դ. Վերին Երուսաղեմի և արդարների անճառելի խնդության ու հանգստի մասին 85

Ե. Հոգիների մասին, թե ինչպես են ապրում, և կամ ինչպիսին է նրանց հանգիստը 101

Զ. Բարի գործերի մասին, թե որոնք են և որքան 108

Է. Աղոթքի մասին, որովհետև հույժ ընդունելի է Աստծուն 110

Է. Աղոթքի մասին, որովհետև հույժ ընդունելի է Աստծուն 118

Թ. Աղքատության և խոնարհության մասին 124

Ժ. Ողորմության, սիրո և գթության մասին 137

ԺԱ. Խոստովանության, զղջման և ապաշխարության մասին 144

ԺԲ. Դժոխքի և նրա չար ու դառը տանջանքների մասին 150

ԺԳ. Մեղքերի մասին, թե որոնք են և որքան 159

ԺԴ. Որովայնամոլության, արբեցողության, ագահության, արծաթասիրության, անհուսության, ուրացության, անհավատության ու թովչության մասին 170

ԺԵ. Կռապաշտության և կախարդության մասին 178

ԺԶ. Շնության, պոռնկության, արվամոլության և անասնապղծության մասին 188

ԺԷ. Զրկանքի, գողության և վաշխառության մասին 197

ԺԸ. Ոխակալության, ատելության, մախանաքի, բարկության, նախանձի և այլ բազում մանր մեղքերի մասին, որոնք Սուրբ Գրքերում կոչվում են շնչական 203

ԺԹ. Պխծախոսների մասին, որոնք հայհոյում են Աստծուն 209

Ի. Տասը թվի մասին, որ կատարյալ և խորհրդավոր թիվ է՝ լցված աստվածային գերակատար իմաստությամբ 214

ԻԱ. Աստուծո Որդու՝ երկնքի ամպերով փառավոր գալստյան, նրա ահեղ և անաչառ Դատաստանի և աշխարհի վախճանի մասին 229

ԻԲ. Նեռի ծննդյան, գալիք դառը ժամանակների և նրա սատակման մասին 238

ԻԳ. Ծուլության, մեղքերի համարձակության ու բարու նվազության մասին 254

ԻԴ. Աղերս և պաղատանք առ Աստված ողջ աշխարհի համար 270

Հիշատակարան 279

Բովանդակություն 281

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ - Է

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

Ա. ԽՐԱՏ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Բ. ԽՐԱՏԵՐ

Հրատարակչության տնօրեն՝ Եզնիկ Արք. Պետրոսյան
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա Մայիլյան
Էջադրումը՝ Հրատարակչական բաժնի
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2008

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

Աշխատերի համար